75 [illegible] :

10267
V 2q III.
424
424

[illegible]
[illegible] :

Ա

241
[illegible]

120-[illegible]

8980.-57

2000

8136-57

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԱՒՈՐԱԿԱՆԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ։

Շարադրեցեալ ՚ի Հայր Ռոտրիկվէց Ալփոնսոս քահանայէ Յիսուեան կարգէն։

Եւ Թարգմանեցեալ ՚ի Հայկական բարբառ ՚ի Պետրոսէ Սրբ̃պետէ Թիւֆլիզեցւոյ ՚ի վաղնջուց ժամանակաց։

Եւ յանձնարարութ̃բ Նորին սրբագրեցեալ մեծաւ աշխատու̃բ ՚ի Մխիթարայ Վարդապետէ Սեբաստացւոյ, Աբբայ հայր կոչեցելոյ։

Եւ տպագրեցեալ ՚ի Հայրապետութե̃ Տն̃ Ղազարու Հայոց Կաթուղիկոսի։

Յամի Տն̃. 1741։ Դեկտեմ. 6։

՚Ի ՎԵՆԵՏԻԿ
՚ի տպարանի Անտոնի Բորթոլի։
Հրամանաւ Մեծաւորաց։

241
ը



Ո՛վ սբ. Անտոն հայր մեր բարի, ընդ դէմ
դիւաց ըմբիշ արի. Թագաւորութիւնն մինչ
մեզ լարի, կամ զայն խնդրեմ ինձ զ՚ք վէրի:

ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՅԱՂԱԳՍ ՈՒԽՏԻՑ
ՔՈՒԹԵՆԱԿԱՆԱՑ ԿՐՕՆԻ:

Եւ յաղագս մեծագունից բարեաց
որք գան 'ի նոցին:

ԳԼՈՒԽ. Ա:

Թէ կատարելութիւն կրօնաւորին կայանայ 'ի կատարեալ
պահպանութեան ուխտիցն՝ Աղքատութեան, Ողջա-
խոհութեան, և Հնազանդութեան,
զոր առնէ:

ՆԱԽ ՔԱ՛Ն ԶԸՆՁԵռելն մասնաւորաբար զիւրաքանչիւրոց այսոցիկ ուխտից. ասասցուք զիր ինչ հասարակ շուրջ զնոքօք:

Որոց առաջինն է, զի երեք ուխտքս այսոքիկ են միջոցք սկզբնականք, զորս ունի կրօնն առ 'ի ստանալ զկատարելութիւն: Ասէ սուրբն Թովմաս, թէ կրօնաւորն է 'ի կացութեան կատարելութեան. և վադապետութիւնս այս է հասարակ վարդապետաց և սրբոց, ընկալեալ 'ի սրբոյն Դիոնեսիոսէ Արիսպագացւոյն : Բայց ոչ կամին ասել սուրբ վարդապետքն, թէ յորժամ եղանի ոք կրօնաւոր, իսկոյն եղանիցի կատարեալ, այլ թէ խոստանայցէ դիմել առ կատարելութիւն : Ուստի ասէ փառաւոր սուրբն Թովմաս, * Կրօնաւորն ոչ դաւանի զինքն գոլ կատարեալ, այլ դաւանի դիմել առ կատարելութիւն ‖ : Կրօնաւորն ոչ առնէ զդաւանութիւն, որպէս թէ իցէ արդէն կատարեալ, որպէս դաւանի եպիսկոպոսն. քանզի առ 'ի մտանել ուրուք 'ի կացութիւն եպիսկոպոսական՝ պահանջի նախընթաց կատարելութիւն, զի իցէ արդէն կատարեալ. բայց յաղագս կացութեան կրօնաւորին ոչ է հարկաւոր, թէ նախընթաց լիցի կատարելութիւն, այլ բաւական է, թէ եղանիցի կատարեալ յետոյ : Եւ յոյժ բարեպէս առնէ սուրբն Թովմաս զայս տարբերութիւնս 'ի մէջ կացութեան կրօնաւորի, և եպիսկոպոսի բանիւքն Քրիստոսի փրկչին մերոյ, որ գրի 'ի յաւետարանի. քանզի մինչ ետ Քրիստոս զխրատն աղքատութեան կամաւորի՝ զոր դաւանի կրօնաւորն, ոչ ենթադրէ, թէ նա որում տայ, իցէ արդէն կատարեալ, այլ թէ եղանի կատարեալ, եթէ պահիցէ զխրատն զայն : Զի ոչ ասէ՝ արդէն կատարեալ ես դու, երթ, և վաճառեա զինչս. այլ ասաց, Եթէ կամիս կատարեալ լինել : Բայց յորժամ կամեցաւ զՊետրոս առնել Նախագահ, եհարց ցնա՝ ոչ միայն՝ եթէ սիրես զիս, այլև եթէ սիրես զիս առաւել քան զայլս ամենեսեան. և զայս արար ոչ միայն միանգամ, այլև երիցս անգամ, առ 'ի ծանուցանել մեզ զսէրն, և ընդ մեծ կատարելութիւնն, որ առ կացութիւն նախագահութեան պահանջի : Ուստի որպէս կացութիւն եպիսկոպոսին, այսպէս և կրօնաւորին, են կացութիւնք կատարելութեան. բայց զանազանաբար, քանզի կացութիւնն եպիսկոպոսական ենթադրէ զկատարելութիւն, և ո՛չ տայ զկատարելութիւն · բայց կացութիւն կրօնաւորին ո՛չ ենթադրէ զկատարելութիւն, այլ խոստանայ տալ զայն յետոյ ։ Ո՛չ ես պարտաւանդեցեալ դու խնդրոյն լինել կատարեալ՝ յորժամ եղանիս կրօնաւոր · բայց պարտաւանդեցեալ ես հառաջել առ կատարելութիւն · ունիլ զհոգս զնմանէ · և ջանալ ունիլ զնա ։ Եւ առաքերեն առ այս զայն՝ զոր ասէ սուրբն Հերոնիմոս, * Կրօնաւորն ո՛չ կարէ կատարեալ լինել ՚ի հայրենուջ իւրում և ո՛չ կամիցին կատարեալ գոլ, է յանցանք ‖ ։ Կրօնաւոր ոք, որ յոյժ սիրէ զհայրենիսն, և է յոյժ յեցեալ ՚ի յազգականսն, ո՛չ ընթանայ ընդ բարի ճանապարհ հասանելոյ ՚ի կատարելութիւն ։ Եւ ո՛չ կամիցին գոլ կատարեալ, և ոչ ջանալն, և ոչ հոգալն վասն այսորիկ՝ է յանցանք ՚ի նմա ։ քանզի նուաղի յայնմիկ, զոր պարտի, և պարտաւանդեցեալ է առնել ըստ կացութեան իւրում ։ Եւ սուրբն Եւսեբիոս Եմիսենացին ասէ, * Գալն յանապատ, է ծայրագոյն կատարելութիւն, բայց յանապատի ո՛չ կեալն կատարելապէս՝ է ծայրագոյն դատապարտութիւն ‖ ։ Մեծ իր է մտանել ՚ի կրօնն · բայց նա որ զկնի լինելոյն կրօնաւոր ո՛չ ջանայ լինել կատարեալ, կայ ՚ի մեծի վտանգի անկանելոյ ՚ի դատապարտութիւն ։ Եւ սուրբն Թովմաս ասէ, թէ կրօնաւորն որ ոչ ջանայ լինել կատարեալ, և ոչ պարապի ՚ի յայս, է այնպիսին կեղծաւորեալ կրօնաւոր · քանզի ո՛չ ջանայ, և ո՛չ հոգայ զայն, զոր դաւանի, և վասն որոյ եմուտ ՚ի կրօնն ։ Հարկ է զի կեանքն համաձայնիցի ընդ անուանն, և կատարելութիւն երևիցի ՚ի գործս ։

Արդ՝ միջոցքն, զորս ունի կրօնաւորն ստանալոյ զկատարելութիւն, են երեք ուխտքն կութենականք, զորս ուխտեմք, այսինքն աղքատութիւն, ողջախոհութիւն, և հնազանդութիւն ։ Եւ սուրբն Թովմաս պարզաբանէ զայս յոյժ բաբեից. և ասէ, թէ երեք կերպիւ կարէ նկատել կացութիւն կրօնին ։ Նախ ըստ որում է կրթութիւն իմն առ 'ի դիմել առ կատարելութիւն. և յաղագս այսորիկ հարկ է 'ի բաց մերժել զայն ամ, որք կարեն արգելուլ, և կալծուլ զմիտսն 'ի պարապելոյ բոլորովին 'ի սէրն Այ. յորում կայանայ կատարելութիւն ։ Արդ՝ են երեք իրք, որք զայս արգելուն, նախկինն է ստացուածս բարեաց արտաքնոց, և արգելումն այս 'ի բաց բառնի ուխտիւ աղքատութեան ։ Երկրորդ արգելումն է ցանկութիւն զգայականաց հեշտութեց. և այս 'ի բաց բառնի ուխտիւ ողջախոհութեան ։ Երրորդ արգելումն է անկարգութիւն կամաց մերոց. և այս 'ի բաց բառնի ուխտիւ հնազանդութեան ։ Երկրորդաբար կարէ նկատել կացութիւն կրօնի ըստ որում է կացութիւն յոյժ հանգիստ և հանդարտ. և անքոյթ և ազատ 'ի զբաղմանց. և 'ի հոգացողութենէ իրացն աշխարհիս. ըստ որում ասէ սբն Պօղոս, 1. Կորն. 7. 32. կամիմ, դի անհոգ իցէք ։ և առ այս անհոգութիւն ժամանեալ լինի երիւք ուխտիւքս այսոքիւք ։ Քանզի զբաղմունք, և անհանգստութիւնք այսոքիկ յառաջագայեն սկզբնաւորաբար յերից իրաց, այ̃, 'ի յընչից, և այս 'ի բաց բառնի ուխտիւ աղքատութեան. 'ի կառավարելոյ զինչս և զընտանիս, և այս 'ի բաց բառնի ուխտիւ ողջախոհութեան. 'ի տրամադրութենէ իւրեանց, և գործոց իւրոց, այ̃ թէ յորպիսի իրս պարտ իցէ պարապիլ, որպիսի պաշտօն, կամ տեղի պատշաճի իւրեան, և զբաղումն այս 'ի բաց բառնի ուխտիւ հնազանդութեան, որով ոք դնէ զինքն 'ի ձեռս մեծաւորին, որ է փոխանորդ և տեղակալ Այ, որպէս զի առնիցէ զնմանէ զայն, որ հաճոյ թուի իւրեան ։ Երրորդաբար կարէ նկատել կացութիւն կրօնի իբր որում է ողջակէզ մի, որոյ միջնորդութբ անձն ոք ընծայէ զինքն ամբողջաբար, և զամ ինչս իւր Այ, և այս եղանի կատարելապ̄ երիւք ուխտիւքս այսոքիւք ․ քանզի համայնք բարիք , զորս աստ ունիմք մեք , ՚ի յերիս ցեղս վերածին ։ Ոմանք են բարիք արտաքինք , զոր օրինակ , ինչք և հարստութիւնք , և այսոքիկ մատուցանին ԱՅ հրաժարելով ՚ի նոցանէ ՚ի ձեռն ուխտի աղքատութե̅ ։ Ոմանք են բարիք , և հեշտութիւնք մարմնաւորք ։ և այսոքիկ մատուցանին ԱՅ հրաժարելով յայնց ՚ի ձեռն ուխտի ողջախոհութե̅ ։ Ոմանք են բարիք ներքինք հոգւոյ , և այսոքիկ մատուցանին ԱՅ ուխտիւ հնազանդութե̅ , որոյ միջնորդութ̅ բարեկարգեմք զկամս մեր , և զիմացականութիւն մեր տալով զայնս ՚ի ձեռս առաջնորդին , և ստորարկելով զնոյնս նմա իբրու տեղակալին ԱՅ ։ Ուստի յայս կողմանէ նկատելով , երեքեանք ուխտքս այսոքիկ , զորս ԱՅ ընծայեմք , են սկզբնական միջոցք , զորս ունի կրօնն առ՚ի ստանալ զկատարելութիւն ։

Պատմի ՚ի ժամանակագիրս նուաստագոյն կարգին , այսինքն սրբոյն Փրանչիսկոսի , թէ յաւուր միում Քս̅ փրկիչն մեր երևեցաւ երանելոյն Փրանչիսկոսի , և հրամայեաց նմա , զի առնիցէր զերիս մատուցմունս ։ Եւ որ Փրանչիսկոս պատասխանեալ ասաց ․ Տր̅ արդէն գիտես դու , զի զիս բոլորովին մատուցի քեզ ․ և եմ ես բոլորովին քո , և զայլ ոչինչ ունիմ յաշխարհիս , եթէ ոչ զզգեստս զայս , և զչուանս զայս ընդ մէջս ածեալ , որք և են քոյք , զինչ այլ կարեմ մատուցանել ես անչափ մեծութե̅ քում ։ Կամիմ Տր̅ իմ ունել զմի այլ սիրտ , և զմի այլ հոգի առ ՚ի մատուցանել ևս զայնս քեզ ․ և որովհետև հրամայես ինձ մատուցանել քեզ , տուր ինձ զիր իմն առ՚ի մատուցանել քեզ , և հնազանդել քեզ ։ Յայնժամ ասէ Տրն̅ ցնա , արկ զձեռն քո ՚ի ծոց քո , և զոր ինչ գտցես անդ , զայն մատո ինձ ․ զոր մինչ արար սրն̅ Փրանչիսկոս, եգիտ 'ի ծոց իւր զդրամ մի ոսկեղէն այնքան գեղեցկագոյն, մինչ զի ոչ երբէք տեսաւ յաշխարհի այնպիսի․ և տարածեալ զձեռն վաղվաղակի մատոյց զայն Տն։ Զնոյնն հրամայեաց Տր երկիցս, և երիցս, և հնազանդելով նբն Տն, երկիցս և երիցս եհան 'ի ծոցոյ իւրմէ զդրամս նմանս առաջնոյն․ զորս և մատոյց Տն։ Եւ Տրն մեր յայտնեաց նմա, թէ երեքեան մատուցմունքն այնոքիկ նշանակէին զհնազանդութիւն ոսկեղէն, զաղքատութիւն մեծագին․ և զողջախոհութիւն գեղեցկագոյն։ Ասէ նբն Փրանչիսկոս, թէ Տրն մեր վասն ողորմութեն իւրոյ տուաւ ինձ զշնորհս զայս, զի զայսոսիկ երիս ուխտս պահիցէի այնքան կատարելապէս, մինչ զի 'ի պահելն զնս խիղճ մտաց իմոց ոչ յանդիմանիցէր զիս զիրէ իմեքէ։ Արդ՝ մատուսցուք և մեք ուրեմն Այ զերիս ուխտս զայսոսիկ այնպիսաբար, մինչզի զիրէ իմեքէ ոչ յանդիմանեսցէ զմեզ խիղճ մտաց մերոց շուրջ զպահպանութե նց։ Երանի է նմա, որ կարիցէ ասել՝ ոչ միայն ընդ նբյն Փրանչիսկոսի, այլև Է սրբոյն Յոբայ։ Ոչ յանդիմանեաց զիս սիրտ իմ յամս կենաց իմոց։ Յոբայ 27․ 6։

ԳԼՈՒԽ․ Բ։

Յաղագս ո՞յր պատճառի լինին, և հաստատին այսոքիկ 'ի յերեքն ուխտից։

Արդ ասել պք, թէ ո՞յր աղագաւ լինի այս ուխտիւք․ քանզի անձն ոք կարէ պահել զաղքատութի, զողջախոհութիւն, և զհնազանդութի առանց ուխտից։ Այսմիկ պատասխանէ յոյժ բարեպէս նբն Թովմաս, և համայնք Ածաբանք ասելով, թէ հարկաւոր էր, զի այս 'ի մէջ կրօնի եղանիցին ուխտիւք․ քանզի հաւիտենականաբար 'ի յուխտս կայանայ կրօնն, և 'ի նոցանէ ածանցի կատարելութիւն : Եւ եթէ այս ոչ եղանիցէր ուխտիւք, ոչ լինէր կրօն, և ոչ կացութիւն կատարելութ : Եւ պատճառ սորին է, զի կացութիւն կատարելութ պահանջէ զպարտաւորութիւն յարակայական առ իւր կատարելութ․ քանզի ձայնս այս՝ կացութիւն, առէ զինքենէ զիւր իմն կայուն, հաստատ, և մնայական․ զի ոմն առեալք զպսակէ, թէ է կացութիւն ամուսնական մի կապակցութ յարակայականի, զոր առնին ընդ իւրեանս․ սմին հանգոյն ևս առ 'ի կալ ումեք 'ի կացութ կատարելութ, է հարկաւոր պարտաւորութ յարակայական առ կատարելութիւն, և զայս պարտաւորութիւս գործեն ուխտքն 'ի կրօնի : Ասէ սրն Թովմաս, թէ այս է տարբերութիւն 'ի մէջ հոգաբարձու քահանայից, և եպիսկոպոսաց, զի եպիսկոպոսունքն են 'ի կացութ կատարելութ, և նոքա ոչ․ քանզի հոգաբարձուքն ոչ պարտաւորին մի հոգաբարձութ հոգւոց ուխտիւ, և ոչ պարտաւորութբ յարակայիւ, այլ կարեն թողուլ զհոգս հոգւոց՝ յորժամ կամին թողուլ․ իսկ եպիսկոպոսունքն են 'ի կացութ կատարելութ, զի ունին զպարտաւորութիւն յարակայական առ պաշտօնն հովուական, և ոչ կարեն թողուլ, եթէ ոչ հրամանաւ, և իշխանութբ պապին : Արդ՝ այս է ևս տարբերութիւն 'ի մէջ կատարելութ աշխարհականաց, և կրօնաւորաց : Կարէ լինիլ թէ յաշխարհի աշխարհական ոք լիցի կատարելագոյն քան զկրօնաւոր ոք․ բայց սակայն աշխարհականն այն ոչ է 'ի կացութ կատարելութ, և կրօնաւորն է 'ի կացութ կատարելութ․ քանզի կատարելութին աշխարհականին ոչ է հաստատեցեալ ուխտիւք, որպ կատարելութին կրօնաւորին, և այսպ ոչ ունի զհաստատութիւն, և զկայունութիւն 'ի բարիս, զոր ունի կրօնաւորն ըդ կրաւանց կացութ իւրոյ։ Աշխարհականն այսօր է ողջախոհ, և ունի զբարի յառաջադրութի. և 'ի վաղիւն դառնայ յետս. բայց կրօնաւորն թէպէտ ոչ է կատարեալ, սակայն է 'ի կացութե կատարելութե. քանզի է կապեցեալ և պարտաւորեցեալ առ այն յորակայականօք ուխտիւք իւրացն պատկանեցելոց առ կատարելութին, և ոչ կարէ դառնալ յետս։

Ուստի յաճախ միում հարցեալ եղև ոմն ոք, եթէ կարէ՞ ոք կալով յաշխարհի ունել ըզ շնորհս ՍՀ, և զկատարելութի. առ որ պատասխանեաց՝ թէ այո՝։ ասաց ևս ոմն, թէ մանաւանդ կամիմ ունել զմի միայն տաղանդն շնորհաց 'ի մէջ կրօնի, քան թէ զտասն տաղանդս 'ի մէջ աշխարհի։ քանզի շնորհն 'ի մէջ կրօնի գերաբար պահպանի, և աճի. զի 'ի նմին մարդն կենայ արտաքոյ զբաղմանց, և շփոթմանց աշխարհի, որ է գլխաւոր թշնամի շնորհաց։ Բարի օրինակն եղբարց հոգևորաց զարթուցանէ և մղէ զնեղ առ առաքինութիւն, և առ կատարելութին. և են այլք բազումք ևս, որք օգնեն առ այս։ Իսկ 'ի յաշխարհի գտանի հակառակն սոցա։ Ուստի շնորհն այն, զոր աշխարհական ոք ունի յաշխարհի, դիւրաւ կորնչի, և մեծաւ դժուարութե պահպանի։ Յորմէ մակաբերի (ասէ ոմն այն) թէ բարեգոյն է ունել զփոքրագոյն շնորհ, որ իցէ ապահով, և պահպանեցեալ այսքանիւք, և մեծագունիւք ցանկապատօք՝, որք աճեն 'ի մէջ կրօնի, քան թէ ունել զբազում մեծագոյնս հանդերձ յայտնի վտանգաւ կորուսանելոյ, որպէս պատահի յաշխարհի։

Դաստուստ կարէ ճանաչել փորձուածն ոմանց նորաւարժից. որոց թուի թէ նաև յաշխարհի կարեն ունել զժամանակ աղօթելոյ, և առանձնանալոյ, որպէս 'ի կրօնի, և լինել բարի օրինակ այլոց։ Դևն խաբէ զնս առ 'ի բառնալ

նալ 'ի նոցանէ զայն, զոր ունին, և հանել զնա 'ի կրօնէ ։ Կարէ ոք յաշխարհի լինել յոյժ ջերմեռանդ · խոստովանիլ զմեղս յամենում եօթներեկի, աղօթել և փախչիլ 'ի յաւթից մեղաց առ 'ի պահել զողջախոհութի̃ն · բայց քան զի մնայ ազատութ̃, և ոչ պարաւանդի պարաւանդութ̃բ յարակայականաւ, պատահին նմա բազում չփոթմունք, և արգելմունք · 'ի միում ամուր թողու զաղօթքն · 'ի միւսում ամուր թողու զխոստովանութիւն ։ 'ի միում ամուր տարացնդի կենցաղավարելով ընդ այլսն, և 'ի միւսում ամուր կորուսանէ զա̃մ ինչ ։ Զայս տեսանեմք զօրհանապազ 'ի ձեռն փորձառութե̃ ։ Բայց կրօնաւորն ոչ կարէ թողուլ զայսոսիկ իրս, և ոչ յետս դառնալ 'ի կատարելութե̃ կացութե̃ իւրոյ, յորում եդին ուխտքն, որք են երեք առասանքն այնոքիկ, և կապանքն, զորոց Հոգին Սր̃ ասէ, Ժողով. 4. 12. Առասան երեքկուղի ոչ վաղվաղակի խզեսցի ։ Ուստի երեք ուխտքս այսոքիկ են այնք, որք առնեն՝ զի այս եղանակ կենաց լիցէ կրօն և կացութի̃ կատարելութե̃ ։ Եւ ասեն Սր̃քն, թէ առաքեալքն կրթեցեալք 'ի Քնէ սկսան յինքեանս պահել զուխտս զայսոսիկ · և նոքա արկին զհիմն կրօնի · և յայնժամ ընծայեցին զինքեանս Քի̃ ուխտիւք · յորժամ թողեալք զա̃մ հետևեցան նմա ։ Եւ 'ի ձեռն աւանդութե̃ զոր ընկալան նոքա 'ի Քնէ, այժմ կայ, և 'ի գործ ածի 'ի յընդհանրական եկեղեցւոջ, զի կրօնաւորքն նուիրիցեն Ա̃յ երիւք ուխտիւքս այսոքիւք ։

* * *

ԳԼՈՒԽ. Գ.

Յաղագս այլոց բարեաց, և օգտութեանց, զորս ունի ընդ ինքեան պարտաւորութիւն ուխտիւք:

ԲԱՑ յայնցանէ՝ որք ասացան, ունին ուխտքն յինքեանս զայլ իմն ևս կարի օգտակար, և պիտանաւոր, և է այս. զի այն՝ որ եղանի ուխտիւ է առաւել գովելի, և առաւել կարողագոյն, նաև արդիւնաւորագոյն առաջի Այ քան զայն, որ եղանի կամաւորաբար առանց ուխտից: Եւ սրբն Թոմաս բարւոք ցուցանէ զայս 'ի ձեռն երից պատճառաց: Առաջին պատճառն է, զի ուխտն է գործ կրօնի, որ է մեծագոյն. և գերազանցագոյն առաքինութի քան զամ առաքինութիւնս բարոյականս, և քան զայլ ամ գործ այլոց առաքինութեց: Զի գոլով գործքն կրօնի սրբազանք, են պատարագք պաշտամանն Այ, նուիրեցեալք, և խոստացեալք Այ: Այսպէս պահքն, որ է գործ ժուժկալութե. եղանի ևս գործ կրօնի, և հետևաբար է գործ արդիւնաւոր յերկուց կողմանց՝ վն զօրութե նոյն պահոցն, և վն գոլոյ գործ կրօնի: Եւ հասարակաբար զամ զոր առնեմք վն հնազանդութե, շահիմք զերկուս արդիւնս. զմի վն նոյնոյ գործոյն. և զմի այլ վն հնազանդութե. և այսպէս արդիւնաւորիմք առաւել 'ի գործս, քան թէ առնելով զայնս կամօք մերովք առանց հնազանդութե, և ուխտից: Այս առաւել բարւոք իմանի ներհակաւն իւրով: Զի ոչ մինչ մեղանչէ ոք ընդդէմ ուխտին ողջախոհութե, առնէ զերկուս մեղս մահացուս. զմի մեղք ընդդէմ ողջախոհութե, և ընդդէմ վեցերորդ հրամանին. առնէ ևս զմի այլ մեղք մեծագոյն սրբապղծութե ընդդէմ ուխտին, զոր ուխտեաց: այսպ ևս յորժամ պահէ զուխտն ողջախոհութե՟, շահի զերկուս արդիւնս, մի արդիւնքն է առաքինութե՟ն ողջախոհութե՟, և պահպանութե՟ն հրամանին Ա՟Յ. և մի այլ մեծագոյն արդիւնքն է վճարումն ուխտին, զոր ուխտեաց Ա՟Յ, որ է գործ առաքինութե՟ կրօնի: Այս պէս է և յայլս ուխտս:

Երկրորդ պատճառն՝ վ՟ն որոյ առաւել արդիւնաւորի ոք ուխտիւ, է այս. զի առնէ առաւել, տայ առաւել, և ընծայէ առաւել Ա՟Յ նա, որ ընծայէ Ա՟Յ զիւր ի՟ն ուխտիւ քան զնա՝ որ առնէ առանց ուխտի: քանզի ոչ միայն տայ զայն, զոր առնէ, այլև տայ զայն առաւել քան զոր ոչ կարէ տալ, որ է յոյժ առաւել. զի մատուցանէ Ա՟Յ զազատութիւն իւր, քան զոր զայլ ոչինչ աւելի կարէ մատուցանել: Յոյժ բարի է թողուլ զի՟մ ինչ վ՟ն Ք՟ի. բայց ուխտիւն աղքատութե՟ ոչ միայն թողու մարդ զինչս, զորս ունի, այլև թողու զկարելն ունել, և պահել, որ է յոյժ աւելի: Տայ Ա՟Յ զծառն պտղովք իւրովք հանդերձ, որ է նմանակերպութե՟ գեղեցկագոյն ն՟րյն Անսելմոսի, զոր ն՟րն Թովմաս առբերէ առ՚ի պարզաբանել զիւր զայս այսուկերպիւ, և ասէ թէ տայ և առնէ առաւել նա, որ ընծայէ ումեք զնոյն ծառն հանդերձ համայնիւք պտղովք իւրովք, քան զնա, որ միայն քաղէ զպտուղն, և զայնս առաքէ նմա, պահելով զծառն վ՟ն իւր: Նոյնգունակ՝ կրօնաւորն տայ Ա՟Յ զծառն պտղովք հանդերձ: Աշխարհականքն տան Ա՟Յ զպտուղս ծառոյն, ի՟ զոմանս գործս բարիս, բայց ոչ մատուցանեն զծառն, ի՟ զինքեանս, այլ պահեն ինքեանք վ՟ն իւրեանց: Բայց կրօնաւորն մատուցանէ զինքն զծառն, և զպտուղսն, ըզգործսն, զքաղձանս՝ և զազատութե՟իս. նաև զի՟մ իւր Ա՟Յ: Կրօնաւորն ոչ ևս է ինքն իւր. ոչինչ մնայ ինքեան տալոց Ա՟Յ. զի զի՟մ ինչ եա նմա ։ Սրբն Բօնաւէնթուրա տայ զայլ նմանակերպութ, և ասէ ․ զի որպ առաւել տայ նա, որ ոչ միայն տայ զկերպարանս իւրն, այլև տայ զիսկութ նորին, այսպէս և կրօնաւորն՝ որ ընծայէ զինքն Այ ուխտիւք, տայ առաւել՝ և մատուցանէ զմեծագոյն պատարագ զինքենէ ․ քանզի տայ ոչ միայն զգործս իւր, այլև ըզկամքն, և զոչկարելն առնել զայլ իր ․ և այսպէս տայ Այ զկերպարանսն, և զիսկութիւնն ։ Երրորդ պատճառն՝ վն որոյ մեծապէս արդիւնաւորի իրն արարեցեալ ուխտիւ, քան զայն, որ եղանի առանց նր, է այս ․ զի որպ բարութիւն արտաքնոց գործոց ծնանի սկզբնաւորաբար ՚ի կամաց ․ որքան կամքն եղիցի բարեգոյն, այնքան բարեգոյնք եղիցին գործքն, որք ՚ի նմանէ յառաջագային ։ Արդ՝ յայտ է այս, զի որքան առաւել բարի կամքն մնայ կայուն, և հաստատուն, նաև յարամնացական, այնքան առաւել եղիցի բարեգոյն ․ քանզի այսպէս եղիցի առաւել հեռի ՚ի յանկմանէ ՚ի յայն, զոր յանդիմանէ իմաստունն ասելով ․ Առակ ․ 13 ․ 14 ։ Կամի և ոչ կամի ծոյլն ։ Եւս արիստոտէլ համարի զայս մի ՚ի թէութեց առաքինութ ասելով ․ * Զի հաստատաբար, և անշարժաբար գործիցէ ‖ ։ Արդ՝ զայս առնէ ուխտն, զի տայ զհաստատութի, և զյարակայութի ՚ի գործս բարիս, և առնէ զայնս առաւել կատարեալս ։ Որպ հակադարձաբար ասեն Ածաբանքն, թէ նա՝ որ յամառեալ կայ ՚ի մեղս, մեղանչէ առաւել ծանրապէս քան զնա, որ մեղանչէ վն տկարութ մարդկայնոյ, կամ յաղթեցեալ ՚ի կրից ոմանց ․ վն զի ունի զկամս առաւել սևեռեցեալ, և առաւել արմատացեալ ՚ի չարիս ։ և կոչեն զայն, մեղք ընդդէմ Հոգւոյն սրբոյ ։ Այսպէս ուրեմն առնել զգործս բարիս հաստատուն, և բացորոշեցեալ կամօք ՚ի բարիս, է իր առաւել կատարեալ, և առաւել արդիւնաւոր ։

Առակցեմք եւ այժմիկ, և ասեմք. եթէ նկատեմք 'ի միոյ կողմանէ զտկարութիւն մեր, և 'ի միւս կողմանէ զլրութիւն, և զկատարելութիւն դիւին 'ի փորձելն զմեզ, թուի թէ ոչ կարէցէր գտանիլ դեղ այնպիսի յարմարագոյն առ 'ի առողջացուցանել զտկարութիւն մեր, և առ 'ի վանել զզօրութիւն ընդդէմ դիւին, որպիսի է պարաճանդելն զմեզ Այ ուխտիւքս այսքիւք. քանզի որպէս նա, որ ըղձայ պսակիլ ընդ հարստագունի աղջկան ումեք, յորժամ տեսանէ զաղջիկն զայն պսակեցեալ ընդ այլում ումեք, իսկոյն կորնչի յոյսն, և չքանայ դիտաւորութիւն. այսպէս եւ մինչ տեսանէ դեւն, թէ ոք հարսնացեալ է Այ միջնորդութեամբ ուխտիցս այսոցիկ, կորուսանէ զյոյսն իւր քարշելոյ զնա առ իւր աշխարհի, և բազմիցս զմ այսորիկ թողու փորձել զնա. զի երկնչի թէ փորձութիւն իւր ոչ առ այլ ինչ 'ի գործ ածիցի, եթէ ոչ առ 'ի առաւելագոյն յաւելուլ զպսակն, և փոխանակ օգտին, զոր բանիւ խոկայր, արտահանիցէ զկորուստ ։

. ԳԼՈՒԽ. Դ.

Յաղագս, թէ վասն ո՞յր պատճառի աստուածաբանքն երկրորդ մկրտութիւն, և մարտիրոսութիւն կոչեն զգործողութիւն զայս, որով ոք տայ զինքն կրօնի միջնորդութեամբ երից ուխտիցս այսոցիկ ։

Այնքան մեծի արժանաւորութեան, և արդեանց 'ի յաչս Այ գործողութիւն այն, որով ոք տայ զինքն բոլորովին Այ միջնորդութեամբ երից ուխտիցս այսոցիկ կրօնի, մինչզի Աստուածաբանք, և ոմանք ասեն, թէ այսու տանանի թողութիւն ամենից մեղաց ։ Ուստի եթէ ոք յետ ուխտելոյն առժամայն մեռանիցի, իսկոյն ելանայ 'ի յերկինս առանց անցանելոյ ընդ քաւարանն՝ հանգոյն նմա, որ իսկոյն զկնի մկրտութեան մեռանի : Վ՟ն որոյ ս՟րբն Հերոնիմոս, ս՟րբն Կիպրիանոս, ս՟րբն Բոնաւենտուրա կոչեն զայս երկրորդ մկրտութիւն : Եւ այս ոչ իմանի յաղագս ներողութեան · քանզի զայս լիակատար ներողութիւն ունին նորավարժքն յառաջնում իսկ աւուր, յորում ընդունեցեալք լինին, և տրի ն՟ց զգեստ կրօնաւորական 'ի խոստովանելն, և 'ի հաղորդելն նոցա : Բայց այն միւսն ոչ է միայն զօրութ՟ ներողութեան, այլև զօրութ՟ նոյն գործոյն · որ է ը՟ս ինքեան յոյժ գերազանց, և վեհագոյն · և ը՟ս ինքեան առանց ներողութեան իմիք է վճարողական վ՟ն ամ՟ պատժոց, որք պարտին մեղաց : Եւ առ 'ի հաստատել զայս՝ առբերեն վարդապետքն զայն, որ ընթեռնանի զսրբոյն Անտոնիոսէ : Զի 'ի տեսլեան թուէր սրբոյն Անտոնիոսի, թէ հրեշտակք տանէին զնա 'ի յերկինս · և դևքն ընդառաջ ելանէին նմա · և ջանային արգելուլ զելումն նր՟, ամբաստանելով զնա 'ի վ՟ր ամանց մեղաց, զորս յաշխարհի էր գործեալ · բայց հրեշտակքն պատասխանեալ ն՟ց դիւային, եթէ ունիք զիր իմն ամբաստանելոյ, զոր արարեալ իցէ զկնի ելանելոյն սորա կրօնաւոր, ամբաստանեցէք զսա · ապա թէ ոչ՝ մեղքն այնք, զորս գործեաց յաշխարհի, արդէն թողան սմա · և վճարեաց վասն ն՟ց, և վերջացոյց զպարտն զայն՝ մինչ եղև կրօնաւոր · և այսու զամօթի հարան դևքն : Ասէր մարգարէն Դանիէլ ցնաբուգոդոնոսոր արքայն, Դան. 4. 24: Զմեղս քո ողորմութ՟բ քաւեսջիր : Արդ՝ եթէ տանելով ոք զողորմութ՟ի 'ի մասանց ընչից իւրոց, այսպէս վճարէ վ՟ն մեղաց իւրոց, ապա որքան առաւել վճարեսցէ նա, որ տայ զանձն · վ՟ն զի է առաւել տալն և թողուլն զանձն, քան թէ տալ միայն զինչ ինչ : * Բարի է տնտեսութ՟ի ջամբել զինչս աղքատաց · բայց բարեգոյն է գիտաւորութ՟ի հետևելոյ Ք՟ի, համանգամայն տալ

և աղքա

և ազատեցեալ 'ի զբաղմանց՝ կարօտիլ ընդ Քսի ‖ : Այսպէս ասէ սբն Հերոնիմոս ընդդէմ վիճիլանցիոսի հերետիկոսին : և ցուցանէ զայս վկայութ̃բն Քսի, որ ըստ գրեցելոյն յԱւետարանի, ասէ . Մատթ. 19. 21: Եթէ կամիս կատարեալ լինել, երթ՛ վաճառեա՛ զինչս քո, և տո՛ւր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ : Ուրեմն է մեծագոյն կատարելութեն թողուլն զամ̃ ինչ, և համանգամայն հետևիլ Քսի : Եւ սբն Գրիգորիոս ասէ 'ի վր̃ Եզեկիելի, (զոր և առբերէ սբն Թովմաս) թէ աշխարհականք, որք պահեն զինչս իւրեանց, և տան զմասն ինչ աղքատաց, մատուցանեն Այ̃ զպատարագ յընչից իւրեանց, զի տան զիր իմն Այ̃, և ինքեանք մնան իրօք իւիք : Բայց կրօնաւորն, որ մնայ առանց իրի իմիք, և հրաժարի յամենից իրաց վն̃ սիրոյն Այ̃, մատուցանէ Այ̃ զողջակէզ, որ առաւել է քան զպատարագ : Զի թողու վն̃ Այ̃ ոչ միայն զամ̃ ինչսն, այլև զինքն : Թողու զկամս և զիմացականութեն իւր միջնորդութ̃ ուխտին հնազանդութե . զմարմին իւր ուխտիւ ողջախոհութե : և պարտի միշտ կալ ուրանալով, և մահացուցանելով զինքն վն̃ սիրոյն Այ̃ . զի այս է կեանքն կրօնաւորի : Յա̃մ ժամ զմահն Յսի 'ի մարմնի մեր կրեսցուք : 2. Կորն. 4. 10:

Տեսանի ևս գերազանցութեն և կատարելութեն գործոյս այսորիկ այսու : Զի թէպէտ ոք ուխտեալ իցէ երթալ 'ի Հռոմ, և յԵրուսաղէմ . տալ աղքատաց զամ̃ ստացուածս իւր, զորս ստանայցէ . ծառայել 'ի հիւանդանոցի զամ̃ աւուրս կենաց իւրոց . ձաղել զինքն խարազանաւ զօրհանապազ . պահել հացիւ և ջրով միայն . զգենուլ զքուրձ և զխարազն, և առնել զայլ ամ̃ իր . այսպիսին կարէ մտանել 'ի կրօն . և անդ դադարեսցին համայնք պարտաւորութիւնք, և համայնք ուխտք այնոքիկ փոխարկեսցին 'ի յայն, ա̃յ 'ի վեր բարեգոյն,

ևսուս

8136-57

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм.ССР

և առաւել հաճոյ Ա՟յ, և առաւել կատարելագոյն այսպէս բացայայտի յիրաւունս կանոնականս, և այսպէս իմանան ա՟մ վարդապետք:

Վերջապէս է այնքան մեծ, և այնքան վեհագոյն գործս այս, որով մարդ նուիրէ, և տայ զինքն բոլորովին Ա՟յ երիւք ուխտիւքս այսոքիւք, մինչ զի ո՟մքն զկացութի կրօնաւորական բաղդատեն մարտիրոսութե. և ասեն, թէ մարտիրոսութի կրօնաւորաց ոչ է կարճագոյն հանգոյն այլոց մարտիրոսաց, այլ յարակայական, և երկարամեայ: Ուստի ասէ ս՟բն Բեռնարդոս. Թէպէտ ՚ի յաչս մարդկան ոչ թուի այնքան ահարկու մարտիրոսութին կրօնաւորական, որ՟պ անիւքն, ածելիքն, երասանքն, և հուրն այլոց մարտիրոսաց. սակայն երկարամնացութ՟բ առաւել դժուարակիր, և վշտալի է մարտիրոսութին կրօնաւորաց: քանզի մարտիրոսութին այլոց մարտիրոսաց միով հարմամբ սրոյ կատարիւր. բայց մարտիրոսութի կրօնաւորաց ոչ վերջանայ միով բաղխմամբ, այլ զօրհանապազ, և միշտ պարտիս մարտիրոսանալ, մահացուցանելով զքեզ ՚ի պատիժս, ՚ի վարկման, և բեկելով զկամս և զդատողուի քո՝ ը՟ ասացելոյ մարգարէին, Վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք որպէս զոչխար ՚ի սպանումն: Սաղմ. 43. 22: Զի առ ա՟մ իրս պարտինք դոլ պատրաստ որպէս ոչխարքն ՚ի սպանումն: Եւ որ՟պ մարտիրոսքն ոչ ընտրէին ինքեանք կամաւ իւրեանց զտանջանս, և զկերպ մեռանելոյ, որ պարտիւր տրիլ ինքեանց, այլ կային պատրաստ և տրամադրեցեալք ընդունելոյ զա՟մ տեսակս տանջանաց, որք տալոց էին ն՟ց. այս՟պ եւս պարտ է կրօնաւորին հանգոյն մարտիրոսի կալ պատրաստ, և տրամադրեցեալ վ՟ս ա՟մ կերպ մահացուցման:

Գ.րդ՝ ասեն ո՟մքն, և սրբազան ժողովքն,

թէ ո՟պ մարտիրոսքն առնուն զթողութիւն ա՟մ մեղաց իւրեանց, և երթան ուղղակի 'ի յերկինս առանց անցանելոյ ընդ քաւարանն, և որ ոք աղօթէ վ՟ն մարտիրոսաց, անարգէ ըզ մարտիրոսս, ըստ այնմ, * Անարգէ զմարտիրոս, որ աղօթէ վ՟ն նորա ||։ Այնու զի է գործ յոյժ վեհագոյն, և գերագանց, զորմէ ասէ Ք՟ս փրկիչն մեր, թէ ոչ ոք ունի զմեծագոյն սէր, քան զնա, որ տայ զկեանս իւր վ՟ն բարեկամին. զի այլ ոչինչ մնայ տալոյ ։ Այսպէս և 'ի ձեռն ընծայմանս այսորիկ, որով ոք տայ զինքն Ա՟Յ 'ի կրօնի ուխտիւք յարատեւականօք, վա՟ն գոլոյն գործ այսքան գերագանց, և վեհագոյն, զի տայ զա՟մ, զոր կարէ տալ Ա՟Յ, և զոչինչ ունի աւելի տալոյ, առնու զթողութիւն ամենից պատժոց մեղաց, և մնայ այնպ՟ս, ո՟պ թէ առնուցուր ըզ մկրտութիւն, և որպէս թէ լինէր մարտիրոսացեալ. և վ՟ն այսորիկ բաղդատեն ս՟ւքն զկրօնն մկրտութեան, և մարտիրոսութեան, զի յոյժ համաձայնին նոքին ։

ԳԼՈՒԽ. Ե։

Յաղագս թէ ազատութիւն կրօնաւորաց ո՛չ 'ի բաց բառնի, և ո՛չ նուազի ուխտիւք, այլ մանաւանդ եղանի առաւել կատարեալ։

Կարէ ասել ոմն, թէ բարւոք տեսանեմ ես, զի տալով ոք զինքն Ա՟Յ այսոքիւք ուխտիւք, ունիցի զհամայնս զայսոսիկ բարիս, և զօգուտս. բայց թուի, թէ 'ի վախճանի կորուսանէ մարդ զազատութիւն, և զոկի 'ի նմանէ. և այն զի ազատութիւն է այնքան մեծ բարի, մինչ զի ո՛չ ունի զգին, և ո՛չ ըզ փոխարէն. ո՟պ ասաց ոմն. * Ո՛չ բարւոք վաճառի համայնիւք ոսկւովք՝ ազատութիւն ||։

Աւ

Առ այս պատասխանէ տ͞րն Թովմաս, և ասէ, թէ պարտիս դու, որ զայս ասես, զի ո՛չ բառնի ազատութիւն, այլ եղանի առաւել կատարելագոյն: Եւ հաստատէ այսպէս. զի գործ ուխտից է բևեռել, և հաստատել զկամս մեր 'ի բարիս, ո͞պ զի լիցէ առաւել հեռի 'ի դառնալոյ յ͞ս կրունկս, որ ո՛չ բառնայ, այլ մանաւանդ առնէ առաւել կատարեալ զազատութիւն ըստ կերպի իւրում: Ըստ որում 'ի յԱծ, և 'ի յերանեցեալս, որք ո՛չ կարեն մեղանչել, այս ո՛չ բառնայ զազատութիւն ն͞ց, այլ մանաւանդ ազատութի ն͞ց է կատարելագունեղ: Եւ առաքեալքն, որք եղեն հաստատեցեալք 'ի շնորհս, և ո՛չ կարէին մեղանչել մահացուօրէն, վ͞ն այսորիկ ո՛չ կորուսին զազատութին, այլ այսու առաւել կատարեալ եղեն. զի առաւել բևեռեցան, և հաստատեցան 'ի բարիս, որոց սակս ստեղծեցեալ եղև նոյն ազատութին: Եւ այս է, զոր ասէ Հայրն մեր 'ի Թղթոյն հնազանդութե այսմ: Մի՛ թուիցի ձեզ, թէ լիցէ սակաւ պտուղ անձնիշխան կամաց ձերոց կարելն ձեր վերադարձուցանել զնոյն անձնիշխան կամս 'ի ձեռն հնազանդութե նմա, որ ետ զայն ձեզ: քանզի յայսմիկ ո՛չ կորուսանէք զնա, այլ մանաւանդ առնէք զնա կատարելագոյն, զի համակերպէք զնա ընդ կատարեալ կանոնի ա͞մ բարւոյ կամի և դատողութե, որ է յաւիտենական բարութի, և իմաստութի, որոյ թարգմանիչն է մեծաւորն, որ 'ի տեղւոջ նորա կառավարէ զձեզ:

Այս առաւել բարեպէս հաստատի այնու, զոր ասէ տ͞րն Անսելմոս:* Մեղանչելն ո՛չ է ազատութի, ո՛չ ևս մասն ազատութե. մեղանչելն է մանաւանդ ոչ կարել, քանթէ կարել: Զի որ ոք առնէ զայն, որ ինքեան ոչ է պատշաճ, որքան առաւել զայս կարէ առնել, այնքան առաւել ծախորդութին, և թիւ-

րուքութիւն կարեն առնել ընդդեմ նր || : Կարելն մեղանչել, և կարելն չարաչար 'ի գործ ածել զազատութիւն ոչ է կատարելութիւն, այլ է անկատարութիւն, և Թշուառութիւն : Այս ոչ է կարողութիւն, այլ է տկարութիւն, և Թուլութիւն : Կամիս տեսանել զայս յայտնապէս (ասէ սրբն Օգոստինոս) * Ամենակարողն զայս միայն ոչ կարէ առնել, զի ոչ կարէ ստել || : Գոլով Ած ամենակարող, զայս միայն, ջ̃ ստել, և մեղանչել ոչ կարէ : Այնքան առաւել անօրէնութիւն և Թշուառութիւն զկարողութիւն ունին 'ի վ̃ր մեր, որքան առաւել կարող եմք մեղանչել, և ունիլ զմեղս : Ուրեմն որքան առաւել հեռանամք յայսմանէ, այնքան բևեռեմք, և հաստատեմք զկամս մեր 'ի բարիս, և առաւել կատարեալ առնեմք զնա · Եւ զայս առնեմք ուխտիւք, պարտաւանդելով զմեզ նոքօք առ բարին, և առ բարեգոյնն : Ուստի աղաղակէ սրբն Օգոստինոս, և ասէ : * Երջանիկ է հարկաւորութիւն, որ առ բարեգոյնս մղէ : Մի զղջանար յաղագս ուխտելոյն քո, այլ մանաւանդ ուրախ լեր, զի ոչ է պատշաճ քեզ առնել զայն, զոր առնիցէիր հանդերձ վնասու քով, եթէ ոչ իցէիր ուխտեալ || : Եթէ ասիցիւր քեզ, թէ անցանելով դու ը̃ այս ճանապարհ, կամ ը̃ այն դուռն, կորնչիցես, կամ դահավիժեսցես, թերևս ոչ իցէր վ̃ն քոյ մեծ բարութի · եթէ ոք փակիցէր ըզ դուռն զայն, կամ խափանիցէր զճանապարհն, ոպ̃ զի թէև կամիցէիր դու, ոչ կարիցէիր կորուսանել զքեզ ը̃ այնս, կամ դահավիժել : Արդ՝ եթէ դու կորուսանելոյ իցես զքեզ, այս պատահիցի քեզ չարաչար 'ի կիր արկանելով զկամս քո, զի ասէ սրբն Բեռնարդոս, * Դադարիցի կամապաշտութիւն, ոչ ևս եղիցի դժոխք || : Ուրեմն որքան առաւել արդելեցեալ և փակեցեալ եղիցի ճանապարհն կամաց քոց, ոպ̃ զի մի չարաչար 'ի կիր արկանիցես զազատութիւն քո , այնքան առաւել մեծագոյն բարի արարեցեալ լիցի քեզ : Ուստի ստորադրելն զկամն քո վեհագունին քում ՚ի ձեռն ուխտին հնազանդութեան , ոչ է կորուսանել զազատութիւն , այլ առնել զայն կատարեալ, և ձուլել ՚ի մաքրագոյն ոսկի հնազանդութեան , և կամացն Ա՟յ :

Վարդապետս ոմն մեծ առակցէ այսմիկ զիր մի, որ արժանի է , թէ բարւոք ծանիցի , և առէ թէ ոչ միայն ոչ նուազի ազատութիւն ուխտիւք, այլ մանաւանդ ունի զմեծագոյն ազատութիւն նա, որ պարաւանդի Ա՟յ նուէրք , և ստորադրի հնազանդութեան , քան զնա , որոյ սիրտն ոչ կարէ զօրել առնել զայս : Եւ զայս փորձեցուցանէ յոյժ բարեպէս . քանզի ազատութիւն կայանայ ՚ի լինել մարդոյ իշխող և տէր ինքն ինքեան : Արդ՝ առաւել տէր և իշխող է ինքեան նա , որ ուխտէ , պարաւանդէ , և ստորադրէ զինքն հնազանդութեան , քան զնա , որոյ սիրտն ոչ զօրէ առնել զայս : Կեր պաճորեսցուք զօրինակ մի ուխտի ողջախոհութեան : Վա՛ այսորիկ ուխտես դու զողջախոհութիւն , զի թուի քեզ , թէ եղիցիս դու տէր քեզ ինքեան՝ շնորհօքն Ա՟յ առ ՚ի պահել զողջախոհութիւն : Եւ վա՛ այսորիկ աշխարհականն ոչ ուխտէ զողջախոհութիւն , զի թուի , թէ ոչ զօրէ սիրտ իւր կարել գոլ տէր ինքն ինքեան : Ահա տես , թէ ո՛վ դու որ ուխտես , ունիս զմեծագոյն տէրութիւն ՚ի վ՟ր քոյ , առ ՚ի առնել զայն՝ զոր կամիս , և զոր տեսանես գոլ քեզ պատշաճաւոր , զի առնիցես : Արդ՝ յայսմիկ կայանայ ազատութիւն . և այն միւսն ոչ է ազատութիւն , այլ է ստրկութիւն և ծառայութիւն , զի ոչ է տէր , այլ ծառայ , և գերի ախորժման իւրոյ՝ և հեշտութեան . որ շրջէ՝ և վերաշրջէ զնա . և տայ գործել զմեղս : Այս է , զոր բազում անգամ վերակրկնէ Ա՟ծաշունչն առաքեալ , Հռովմ. 7. 23: Գերեալ ընդ օրէնօքն մեղաց :

Եւ 2. Պետ. 2. 19. Զի որով իմիք յաղթիցի ոք, նորին և ծառայ է ։ Եւ տէ՟րն ասէ Յով. 8. 34. Ամ՟ որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց ։ Այսպէս ևս 'ի հնազանդութե՟ իմն ։ Վ՟ այսորիկ հպատակիս դու հնազանդութե՟ ուխտին, զի յուսաս, թէ շնորհօքն Ա՟Յ եղիցիս դու տէր և իշխօղ քեզ ինքեան առ 'ի հետևիլ կամաց մեծահորին, և ուրանալ զկամս քո ։ Այլ դք ոչ զգայ զայսպիսան տէրութի ունիլ ինքն 'ի վ՟ իւր, զի զօրիցէ սիրտ իւր առ 'ի ուրանալ զկամս իւր, և դնել միշտ ը՟ կամաց այլոց, հետևելով հնազանդութե՟, վ՟ այսորիկ կամի կալ 'ի տան իւրում, և ոչ իշխէ մտանել 'ի կրօն, ոչ ևս ուխտել զհնազանդութի ։ Ուստի ստորարկել զինքն հնազանդութե՟, և առնել զուխտս զայսոսիկ՝ է մանաւանդ նշան մեծագունի ազատութե՟, և գոլոյ իշխօղ ինքն ինքեան. է և հաստատութի ազնիւ և քաջայուն. և ոմ՟ իմաստունն խրատէ, և յորդորէ զմեզ առ այս ասելով, Սիրաք. 6. 25. Ա՛րկ զոտս քո յոտնակապս նր՟, և յանուրս նր՟ զպարանոց քո ։ Ընդկրեա՛ զուսս քո, և բարձ զնա, և մի՛ ձանձրասջիր 'ի կապանաց նր՟ ։ Ո՛հ թէ որքան երջանիկ է ոտնակապս այս, և շղթայքս, որք յԱծաշունչ գրոց ոչ կոչին շղթայք, այլ անուր. Եւ յանուրս նր՟ զպարանոց քո ։ Զի ոչ կապեն շղթայքս այսորիկ զպարանոցն, այլ զարդարեն զնա. զի ոչ են շղթայք երկաթիք, այլ ոսկեղէնք. ոչ են շղթայք գերեաց, այլ տեարց ։ Են անուրք ոսկեղէնք, որք ոչ տան զծանրութի նր՟, որք բառնան զնս՟, այլ զպատուին և զփառս ։ Եւ յոյժ հարկաւոր է իմանալ զայսոսիկ այսու կերպիւ, զի այսպիսաբար եղանի համեղ լուծն Քի՟, ոմ՟ ծանուցանէ Երանելին Սբն Ամբրոսիոս ասելով ։ * Լուծն Քի՟ է համեղ, եթէ զնա զարդ համարիցիս, ոչ եղիցի ծանրութի պարանոցի քում ‖ ։

ԳԼՈՒԽ .

Գ Լ Ո Ւ Խ · Զ :

Յաղագս մեծագունից բարեաց, որք գան 'ի կրօնէ, և յաղագս շնորհակալութեան, որով պարտականեմք Այ՝ յաղագս պարգեւաց նորա առ նոյն կրօնն :

◆

Հաւատարիմ է Այ, որով կոչեցայք յընկերութիւն Որդւոյ նր Յի Քի տն մերոյ : 1. Կորնթ. 1. 9: 'Ի մէջ այլոց իրաց, զորս ԱԾ Տրն մեր հրամայեաց որդւոցն Իէլի, յորժամ եհան զնս յԵգիպտոսէ, մին էր այս, զի յիշեսցեն զօրն, յորում արարեալ էր նց զայսքան բարերարութիւն և զշնորհս: Եւ զայս հրամայեաց նց այնքան գործունէութբ, մինչ զի հրամայեաց զի 'ի յիշատակ այսր շնորհիս տօնիցեն զզատիկ մի, որ մնայցէր զաւուրս ութն մեծաւ հանդիսիւ, ուտելով յայնմիկ զգառն մի մեծաւ արարողութբ 'ի յիշատակ այնորիկ, որ եղև զենեցեալ, յորժամ նոքա ելեն ազատեցեալք 'ի գերութենէ : Արդ՝ եթէ ԱԾ հրամայեաց զայս 'ի յիշատակ մարմնաւոր ազատութեն, զոր ընդունելով ոչ բարեգունացան. մեծ խրատունք է ուրեմն, զի տօնիցեմք և մեք զտօն 'ի յիշատակ աւուրն, յորում կարող և գթածագոյն ձեռն նր եհան զմեզ 'ի գերութենէ, յորում գտանիւր հոգին մեր. և եդ զնա 'ի ճանապարհի երկրին աւետեաց, ոչ երկրայնոյ, այլ երկնայնոյ : Ընթեռնումք զմէջ աբբայէն Արսենիոսէ, թէ տօնէր յամենում տարւոջ զօրն, յորում Տրն մեր արարեալ էր նմա զշնորհս զայս այսքան մեծագոյն, հանելով զնա յաշխարհէ. և տօնն՝ զոր տօնէր, էր այս, զի հաղորդիւր յայնմիկ աւուր, տայր զողորմութիւն երից աղքատաց, ուտէր զփոքր ինչ ընդեղէն խարշեցեալ, և թոյլ տայր, զի մտանիցեն յայնմիկ աւուր 'ի խուց նր՟ ամ՟ աւեղայք :

Երանելի մեծն Օգոստինոս առ այս պատճառաւ մեկնէ զայն, զոր Մովսէս ցփարաւոն ասաց, յորժամ կամէր փարաւոն, զի որդիքն Իէ՟լի զոհիցեն Այ՟ 'ի յԵգիպտոս, և ոչ ելանիցէին արտաքս առ 'ի զոհել: Չէ՛ հնար այդպէս լինել. Եթէ պղծութիւնս Եգիպտացւոց զոհիցեմք Տ՟ն Այ՟ մերում: Ելից. 8. 26: այ՟ է, Այս ոչ կարէ լինել, եթէ 'ի յԵգիպտոս զոհիցեմք, քանզի զոհելոց եմք զայնս իրս, զորս Եգիպտացիք պաշտեն փոխանակ Այ՟, զերինջ, զորթ, զգառն, և եղիցի գարշութիւն վն՟ նց՟, եթէ տեսցեն, թէ մեք զենումք զայնս, զորս նք՟ պաշտեն, և քարկոծ արասցեն զմեզ իբրև զհայհոյիչս : Հարկ է մեզ ելանել յԵգիպտոսէ, և երթալ յանապատ առ 'ի կարել զոհել զպատարագ Այ՟ ազատապէս: Այսպէս և մեք զոհելոց եմք և մատուցանելոց Այ՟ Տ՟ն մերում զայն, յորմէ գարշին, և զոր ատեն աշխարհականքն, այ՟ զաղքատութի՟, զմահացուցումն մարմնոյ, զհնազանդութի՟, զհպատակութի՟. զգուն խոնարհեալ, և արհամարհեցեալ, զբեկումն, և զուրացումն կամաց մերոց : Ո՛չ կարիցեմք զոհել զպատարագ Այ՟ յաշխարհի, և մատուցանել, զի աշխարհականքն քարկոծէին զմեզ ծաղրով զմեօք, և ոչ թողուցուին զմեզ կեալ, զի գարշին աշխարհականքն յերեսաց յայսցանէ և ծանակ առնեն զաղքատս, և զմարդիկս ցածունս և խոնարհս: Երթիցուք երեքօրեայ ճանապարհ յանապատ, և զոհեսցուք Տ՟ն Այ՟ մերում: Ելից. 8. 26: Տ՟րն մեր վն՟ անհնոյ բարութե՟ և ողորմութե՟, արար մեզ զնպաստ, և զշնորհ հանելով զմեզ յԵգիպտոսէ, և քարշելով ըզմեզ յանապատն կրօնի, ուր կարեմք երիւք ուխտիւքս այսոքիւք մատուցանել և պատարագել Այ՟ զամ՟ իրս զայսոսիկ արժանի ձեւօք : զի առա 'ի կրօնի այս է մեծ պատիւ, և մեծ փառք. և որք յայսմիկ առաւել յառաջա-

նայ, է առաւել վարկեցեալ. առաւել մեծ
համարեցեալ, և հաշուեցեալ:

Ո՞ւ 'ի բարւոք ճանաչել զպարաւանդութիւն, զոր ունիմք շնորհակալ լինելոյ զՏ՟նէ մերմէ յաղագս այսորիկ շնորհի, և բարերարութ՟ե, ասասցուք աստ համառօտաբար զոմանս բարեաց, և զգերազանցութ՟եց. որով ն՟րքն պարզաբանեն զմեծութի՟ն այնց: Երանելի ն՟րն Հերոնիմոս 'ի վ՟ր այնր տան սաղմոսին, ՁՕ: Որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց. լեզու՝ զոր ոչ գիտէր լուաւ: 'Ի բաց արար 'ի բեռանց զթիկունս նր. մինչէ զմեծագոյն շնորհն, զոր Ած արար մեզ հանելով զմեզ յեգիպտոսէ: որ է աշխարհս այս. ներկայացուցանելով մեզ զծառայութ՟ի, և զգերութի՟ն փարաւոնի, յորում գտանէաք. և զազատութ՟ի որդւոցն Այ՟, առ որ կոչեցեալք եղաք: Եհան զմեզ (ասէ ն՟րն Հերոնիմոս) և ազատեաց Ած 'ի լծոյ, և 'ի մեծագոյն ծանրութ՟ե: էաք ծառայք և գերիք փարաւոնի յաշխարհի: *Եւ հզօր ձեռամբ եհան զմեզ Տ՟ր յերկրէն եգիպտոսի, 'ի տանէ ծառայութ՟ե: Յորժամ էաք յեգիպտոս, շինէաք զքաղաքս փարաւոնի, զցեխ, և զաղիւս կրէաք. և բոլոր հոգին մեր խընդրէր զյարդս ‖: Խնդրէաք զյարդ, զոր հողմն տանի. և խնդրէաք զայն վ՟ն ուտելոյ, և եփելոյ զաղիւս: * Ոչ ունէաք զցորեան, ոչ ունէաք զհացն երկնային, որ 'ի յերկնից գայր. չեւս էաք առեալ զմանանայն յերկնից. և յոյժ մեծ էր բեռն, զոր ունէաք ‖: Ո՜հ թէ որքան ծանր բեռն է բեռն աշխարհիս: Ո՜հ թէ որքան մեծ է հոգն աշխարհի: Որքան ծանր աշխատանք առ 'ի ունել զկերակուր, կամ առ 'ի ունել զպաշտօն ինչ պատուելի: Եւ զկնի ունելոյն զայն, առ 'ի պահել զայն, և յառաջանալ նովաւ, որքան դժուարութիք գտանին, որքան հարցմունք, որքան քննութիք, և օրէնք աշխարհի պիտոյանան: Այսոքիկ

ու

ոչ յումեքէ ձանձրանային, եթէ ոչ յայնցանէ, որք առ այնս մերձենան : Իրաւի լուծ երկաթի է, և կարի ծանրագունեղ, զոր աշխարհականքն կրեն : ՚Ի բաց արար (ասրեմն) ՚ի բետանց զ՚Իշխանս նը : Եբարձ Ա՟ծ ՚ի թիկանց մերոց զծանրագոյն բեռն օրինաց, պարտաւանդութ՟եց, և նեղութ՟ե աշխարհիս․ նաև ըզլուծն երկաթի․ և եդ ՚ի վ՟ր թիկանց մերոց զլուծ թեթևագոյն․ և զբեռն յոյժ համեղ : Լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի : Մատ. 11. 30: Քարշեաց զմեզ Տ՟րն մեր յայնպիսի կացութի․ յորում ա՟մ ջանայցուք մեր լինելոցեն պարապել ՚ի ծառայել նմա :

Մ՟է առաքեալն Պօղոս ասէ զնոցանէ, որք յաշխարհի են ՚ի կացութ՟ե ամուսնութ՟ե : 1. Կորն. 7. 33: Որ կանամբին է հոգայ զաշխարհէս, թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում, և բաժանեցեալ է : Զի ամուսնացեալքն են բաժանեցեալք ՚ի բազում հոգս, և ՚ի ջանս, զի հոգացողք են զիրս աշխարհիս, զինչս, և զընտանիս : Այրն ջանալոց է հաճեցուցանել զկինն, և կինն զայրն․ զի են յոյժ բաժանեցեալք, և ոչ կարեն տալ զինքեանս Ա՟յ բոլորովին : Որ անկինն է՝ հոգայ զՏ՟ն, թէ որպէս հաճոյ լիցի Տ՟ն : Եւ կինն ոչ ամուսնացեալ, և կոյսն հոգայ զՏ՟ն, զի իցէ ս՟բ հոգւով, և մարմնով : Այլ՝ եթէ առաքեալն ասէ, թէ նոքա, որք կան ՚ի կացութ՟ե ողջախոհութ՟ե յաշխարհի, ա՟մ ջանին, և ա՟մ հոգն ն՟ց լինելոց է շուրջ զկերպիւ հաճոյանալոյ Տ՟ն․ և գալոյ ս՟բ մարմնով, և հոգւով․ ապա զինչ ասիցի զկրօնաւորաց․ զորս Ա՟ծ թեթևացոյց յամենից հոգոց աշխարհայնոց․ նաև յայնմանէ, որ հարկաւոր է մ՟ր ապրելոյ իւրեանց, ո՟պ զի գտցեն զա՟մ հոգս և զջանս իւրեանց ՚ի խորհրդել զայս, թէ ո՟պ հաճոյանայցեն Ա՟յ․ և ո՟պ եղիցին օրըստօրէ առաւել ս՟րբք : Փառաւոր ս՟րբն Օգոստինոս ասէ, թէ այս օրինակեցաւ, և նշանակեցաւ այնու պատարագաւ, զոր Աբրահամ մատոյց Այ̃ . որ էր երինջ մի , քօշ մի , և խոյ մի . նաև տատրակ մի , և աղաւնի մի . զերկրային կենդանիսն յօշեաց ը̃ մէջ . բայց ո՛չ յօշեաց զթռչունսն , այլ մատոյց զայնս ամբողջ : Ասէ սբն Օգոստինոս թէ երկրային կենդանեօքն նշանակին մարդիկ մարմնաւորք , և աշխարհաւորք . որք մասնատին և բաժանին ՚ի բազում մասունս , իսկ տատրակաւն և աղաւնեաւն , որք են թռչունք հեզք , և ո՛չ ունեն զչար ուժք , նշանակին մարդիկ հոգևորք , և կատարեալք , թէ լիցեն միանձունք , որք առանձնացեալք են ՚ի կենցաղավարութենէ մարդկայնոյ , և նշանակին տատրակաւ . և թէ լիցեն կենցաղավարօղք ընդ նմ̃ , որք նշանակին աղաւնեաւ , ո՛չ մասնատին , ո՛չ ևս բաժանին , այլ բոլորովին պատարագին ՚ի ծառայել Այ̃ ամբողջաբար : Արդ զայս շնորհս արար Տր̃ կրօնաւորաց , որք ամենեքեան ամբողջաբար մատուցանին պատարագ Այ̃ , և ողջակէզ : Ո՛չ ունիմք զառիթ բաժանելոյ , կամ մասնատելոյ զմեզ ՚ի յայլ հոգս , եթէ ո՛չ ջանալ և հոգալ , թէ ոպ̃ կարիցեմք օրըստօրէ առաւել հաճոյանալ Տն̃ : Առ այս վախճան ունիմք զողջախոհութն̃ , ոպ̃ զի ոչ ունելով զընկեր ամուսնութն̃ , որում հաճոյանալոց լիցիմք . ոչ ևս զընտանիս կառավարելոյ , այլ ամ̃ ջանք մեր լիցին շուրջ զկերպին եղանելոյ օրըստօրէ բարեգոյն , և առաւել կատարեալ . ոպ̃ ասէ սբն Պօղոս : Առ այս վախճան ունիմք զաղքատութն̃ , ոպ̃ զի միջնորդութբ̃ նորա թողուցումք զամ̃ հարստութիս աշխարհի , և զցանկութն̃ նր̃ . նաև զամ̃ հոգս , և զջանացողութիս , զորս ունին նոքա ընդ ինքեանց . որք են փուշք , ոպ̃ Քս̃ ասէ ՚ի սրբազան աւետարանի . զի խայթեն , և անհանգիստ առնեն զմեզ : Եւ ըստ սբյն Ամբրոսիոսի , բաժանեն հարստութիւնքն զմիտս , և զսիրտ : Առ այս վախճան առնեմք զուխտ հնազանդութեան, ոպ՟ զի միջնորդութ՟ նորա թողուցումք զմեզ ինքեանս, և զյատուկ կամս մեր, և զդատողութիւն առանց խորհելոյ զմէնջ, թէ զինչ լինելոց իցէ զմէնջ. քանզի մեծաւորն, 'ի ձեռն որոյ զմեզ յանձնեմք, որ է փոխանորդ Այ՟, յանձն էառ զայս հոգս. ոպ՟ զի մեք միայն խոկասցուք զայն, որ պատկանի առ յառաջադիմութ՟ն մեր:

Երանելին սրբն Հերոնիմոս 'ի վր՟ այնց բանից, զորս ասէ սաղմոսերգուն: Սաղմ. 133. 1. Ահա օրհնեսջիք զՏր՟ ծառայք Տն՟ ամ՟ր, որք կայք 'ի տան Տն՟ 'ի գաւիթս Այ՟ մերոյ: Ասէ թէ, ոպ՟ յաշխարհի աստ՝ ժամանակաւոր Տր՟ ոք ունի ըզ բազում ծառայս, որք ծառայեն նմա. և առնէ զպարբերութիւն 'ի մէջ նց՟. քանզի զոմանս 'ի նոցանէ միշտ պահէ 'ի տան, որք երթան միշտ ը՟ նմա. և զայլս առաքէ միշտ 'ի դաշտս և յագարակս: *Այսպէս եւ Ած՟ ունի ըզ բազում ընտանիս, զոմանս ունի առաջի երեսաց իւրոց, որք սպասաւորեն նմա. և զայլս ունի 'ի յագարակս ‖: Կրօնաւորքն (ասէ) են ծառայք, որք բնակեն 'ի մէջ տանն Այ՟. և միշտ կան առաջի նր՟. և խօսակցին զօրհանապազ ընդ նմա. այլ աշխարհականքն որք կան յաշխարհի, են ոպ՟ անձինք ռամիկք, և ծառայք ագարակականք: Եւ յաւել ասել. թէ ոպ՟ աշխատօղքն յագարակի, և ռամիկ ծառայքն յորժամ կամին խօսիլ ը՟ Տն՟ իւրեանց, և ը՟ ունիլ զիր իմն 'ի նմանէ, առնեն միջնորդ, և բարեխօս զընտանի ծառայս, որք միշտ ներկայք են Տն՟, և տեսանեն զնա, և կենցաղս վարեն ընդ նմա զօրհանապազ. Այսպէս եւ աշխարհականքն մինչ տեսանեն զինքեանս 'ի հարկաւորութ՟ իմիք, և կամին ընդունիլ զիր իմն յԱյ՟. դիմեն առ կրօնաւորսն, զի յանձնիցեն զն՟ս Այ՟. և աղօթիցեն վր՟ հարկաւորութ՟ նց՟. և դիմիցեն առ Ած՟ ոպ՟ ընտանիք, և նպաստաւորեցեալք. և 'ի ձեռն նց՟

տանիցէ Տր̃ նց̃ շնորհս : Դարձեալ՝ զի ոչ̃ ագարակական ծառայքն են, որք գործեն զանդս, վարեն, և բրեն, ոչ̃ զի այլքն վայելիցեն զպտուղս նց̃, որք կան 'ի պալատի ընդ Տն̃ իւրեանց · այսպիսիք են և աշխարհականքն ը̃ կրօնաւորսն : Զի նոքա աշխատին, խանջին, ժողովեն, և պահեն մեծաւ ջանիւ, և հոգունակութ̃ զպտուղս ագարակաց, ոչ̃ զի կրօնաւորքն ուտիցեն զայնս հանդարտաբար, և հանդստեամբ : Սբ̃ն Գրիգորիոս ասէ, թէ սոյնս նշանակիւր կենօք երկուց եղբարցն Յակոբայ, և Եսաւայ · զորոց Ածաշունչն ասէ · Ծննդ · 25 · 27 · Եղև Եսաւ այր հմուտ որսոյ, և մարդ երկրագործ · և յակոբ այր առանց պաճուճանաց ընդտանան : Եսաւ, որ երթայր յորս, և էր երկրագործ՝ (ասէ) թէ նշանակէր զաշխարհականս, որք զբաղեցեալք են, և տարացնդեցեալք 'ի յարտաքին իրս աշխարհի : Եւ յակոբաւ, որ էր այր առանց պաճուճանաց, և բնակէր 'ի տան, իմանին մարդիկ հոգևորք, և կրօնաւորք, որք կան միշտ առանձնացեալք յայլոց · և պարապին 'ի յոյն, որ վայելէ հոգւոց իւրեանց, և են սիրեցեալք, և գգուեցեալք յԱյ̃, ոչ̃ էր Յակոբ 'ի Ռեբեկայ մօրէ իւրմէ սիրեցեալ : Արդ՝ խորհեցուք աստ զմեծ նախախնամութիւն, զոր արար մեզ Տր̃ առնելով զմեզ այսքան վեհագոյն քան զաշխարհականս, զի նք̃ իցեն ոչ̃ ռամիկք, և գիւղականք, և մեք ոչ̃ որք պալատին արքունեաց, և ընտանիք տան իւրոյ : Կարեմք մեք բարւոք ասել զայն, զոր ասաց դշխոյն սաբայ, մինչ ետես զկարգն, և զհամաձայնութի̃ ծառայիցն արքային Սողոմոնի · Երանի արանց քոց, և ծառայից քոց, որք կան միշտ առաջի քո, և լսեն զիմաստութիւն քո : 3 · Թագ · 10 · 8 : Երջանիկ, և երանելիք են կրօնաւորքն, որք կան 'ի տանն Այ̃ · և խօսակցին ստէպ ը̃ նմա · և զմայլին իմաստութ̃ նր̃ :

Յայսմանէ կարեմք մակաբերել, թէ որքան կոյրք են նոքա, որք կարծեն, թէ արարեալք իցեն զմեծ իմն, զի թողին զաշխարհս․ և մտին 'ի կրօն․ և թուի նց, թէ Այ պարտական իցէ նց վն այսորիկ, որպ թէ զայս առնելով զբաղում իրս իցեն արարեալք վն նր : Մեծապէս խաբիս դու խոկալով զայս : Զի դու ես այն, որ ընկալար յԱյ զշնորհ և զբարերարութիւն յոյժ նշանաւոր և մեծագոյն, որովհետև նա եհան զքեզ յաշխարհէ, և ընտրեաց զքեզ վն տան իւրոյ ; դնելով զքեզ 'ի կացութե այսքան բարձրագունի : Դու ես այն, որ մնաս պարտական և պարաւանդեցեալ առ 'ի ցուցանել նմա զերախտագիտութիւն ; և առ 'ի ճանաչել նորապէս՝ երախտագիտութե զայսպիսի մեծ բարերարութիւն :

Եթէ թագաւոր ոք կոչիցէր զազնուական մի յապարանն իւր առ 'ի տալ նմա զպաշտօն իմն նախապետական, ազնուականն այն ոչ խոկայցէր, թէ արարեալ իցէր զմեծ իմն վասն թողլոյ զտունն և զհայրենին իւր․ ոչ ևս թագաւորն մնայցէր պարտական նմա, այլ մանաւանդ ճանաչիցէր մեծ նպաստաւորութե ինքեան զկամսն թագաւորին, թէ ծառայիցէր նմա, և զկոչելն նր զնա առ պաշտօնն այն : և 'ի կողմանէ իւրմէ համարիցէր զկոչումն իւր մեծ շնորհ, առակցելով նմա զայլս շնորհս զորս առնուցոյր 'ի թագաւորէն, առ 'ի գոլ երախտագէտ նմա : Արդ՝ այսպ պարտիմք առնել և մեք : Ոչ մեք ընտրեցաք զԱծ, այլ նա ընտրեաց զմեզ, և արար մեզ զնշանաւոր շնորհս զայս առաւել արդեանց մերոց :

Զինչ արդեօք տեսեր տէր 'ի մեզ, զի կամեցաւ մանաւանդ ընտրել զմեզ, քան թէ զեղբարս մեր, որք մնացին յաշխարհի : Զինչ արդեօք գոյր 'ի մեզ, որ քեզ կարիցէր հաճոյանալ․ Զիր իմն տեսեր 'ի մեզ Տր, զի ընտրեցէք զմեզ : ա՛րդեօք զիր իմն ըստ հաճոյից իւրոց ետես 'ի մեզ ԱԾ, զի ընտրեաց զմեզ : Բայց թերեւս ասիցէ ոք . քննեամ զայն, զոր ասես . զի ասեն ԱԾաբանք, թէ նախասահմանութեան Այ ոչ որ պատճառ 'ի կողմանէ մերմէ : Երանելին սբն Օգոստինոս բարւոք պարզաբանէ զայս նմանակերպութբ միով և ասէ : Եթէ անցանիցէ քանդակող, կամ հիւսն ոք ընդ լեառն մի, և տեսանիցէ անդ զկոճղ մի ծառոյ հատեցեալ, դնէ զաչս 'ի վր, զկայ առնու, զի հաճի ընդ ատեղն այն : այս ամ նշան է, թէ կամի առնել զիր իմն յայնմանէ . քանզի ոչ եդ զաչս 'ի յայն, ոչ եւ հաճեցաւ ընդ այն առ 'ի թողուլ այնպէս անտաշ և սոպռ՝ որպիսի էր . զի արհեստիւն իւրով ծանեաւ զայն, որ լինելոց էր 'ի նմին . * Արհեստիւն ետես, որ լինելոց է, և ընտրեաց զայն, զոր անտի առնելոց է յետոյ, այլ ոչ զայն, որ է այժմ || : Ասէ արհեստագործն . ա՜հ թէ որպիսի գեղեցիկ արձան է լինելոց 'ի ատեղանէ յայսմանէ : Այս է այն, զոր ընտրեաց . այս է այն, որ հաճոյ թուեցաւ նմա . այլ ոչ այն, որ էր ատեղն մի հաստ և տգեղ . այլ սիրեաց զգեղեցիկ և զկատարեալ արձանն, զոր առնելոց էր յետոյ 'ի նմանէ . * Այսպէս և ԱԾ սիրեաց զմեզ զմեղաւորս || : Սիրեաց զմեզ ԱԾ, ոչ որպէս զմեղաւորս . ոչ վասն այսորիկ սիրեաց զմեզ, զի մնացեմք փայտք չորացեալք, տգեղք, և անպիտանք, որպէս էաք իսկ . * Իբրեւ զփայտ անտաշ ետես զմեզ հիւսն, խորհեցաւ զշինուածն, որ առնելոց է || : Ընդ այս հաճեցաւ . այլ ոչ ընդ այն, որ էաք յառաջագոյն, յորժամ էաք փայտ չոր, սոպռ, և տգեղ . այլ սիրեաց զայն, որ եղանելոց էր յետոյ 'ի մէնջ : Զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն և հրաւիրեաց՝ կերպարանակիցս լինել պատկերի որդւոյ իւրոյ : Հռովմայ . 8 . 29 . Կամեցաւ առնել զքեզ պատկեր

մի

մէջ ; որ լիցէր յոյժ համակերպ բնականի որդւոյ իւրոյ, և յոյժ նման նմին. կամեցաւ առնել զքեզ պատկեր մի, որ նմանիցէր նոյն ինքեան ԱՅ։ Ընդ այս հաճեցաւ, և վն այսորիկ եդ շունչ 'ի քեզ. նաև վն այսորիկ ընտրեաց զքեզ։ Ո՛չ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի զձեզ. զի դուք երթայցէք, և պտուղ բերիցէք, և պտուղ ձեր կայցէ։ Յով. 15. 16։ Տե՛ս թէ զո՛րպիսի կատարեալ պատկեր կամեցաւ առնել 'ի քէն. և որքան նմանագոյն միածնի որդւոյ իւրոյ. զի ընտրեաց զքեզ վասն նոյն պաշտօնի, վն որոյ եկն որդին ԱՅ յաշխարհ. ապ զի շահեցես զհոգիս վն ԱՅ։

Ի վր ճլզ. Սաղմոսին, խօսելով նոյն մեծն Օգոստինոս առ այս առաջադրութիս, առնէ զգեղեցկագոյն զլուծաբանութիւն 'ի վր առաջնոյ տանն այնորիկ. Առ գետս Բաբելոնաց անդ նստաք, և լացաք, երբ յիշեցաք զՍիոն։ Ասէ՝ թէ գետքն բաբելոնացւոց են իրքն աշխարհիս այսորիկ անկայունք, և անցաւորք, որք ընթանան, և անցանեն փութով։ Բայց գոյ տարբերութիւն 'ի մէջ քաղաքացւոցն բաբելոնի, և քաղաքացւոցն եղէմի, զի ոմք կան 'ի մէջ գետոյն բաբելոնի զբաղեցեալք իրօք աշխարհիս և մեծաւ մրրկաւ, և վտանգօք. բայց միւսքն՝ որք կամին գոլ քաղաքացիք այնր եղէմի երկնայնոյ՝ տեսանելով և խոկալով ըզ վտանգն գետոյն բաբելոնիս այսորիկ, զհողմս. զմրրիկս, զալիս, զհոսումն, և զվերահոսումն նորա, ելանեն արտաքոյ նր. և ոչ կամելով մնալ յայնմիկ վտանգի, կան նստեալք առափին նր հանգոյն որդւոյն Իէլի, ասէ Օգոստինոս. * Տեսանեն զայսոսիկ, ոչ մնան 'ի գետոջն բաբելոնի, այլ նստին առ գետս բաբելոնի, և լան 'ի վր գետոյն բաբելոնի ||։ Արդ՝ սոքա են կրօնաւորքն, որք փախեան 'ի վտանգաց աշխարհիս, և կան նստեալք առեզր նորա լալով և սգալով։ Բայց վն ո՞ր իրի լամք և սգամք մեք: Նախ լամք (ասէ սբն Օգոստինոս) զաքսորանս մեր, Մինչ յիշեաք զՍիոն. զի տեսանելով զալիս՝ և զմրրիկս այսր գետոյս բաբելոնի, և յիշելով զսիոնն երկնային, որ է հայրենին մեր, ոչ կարեմք դադարել 'ի լալոյ և 'ի հառաչելոյ ասելով, * Ո՜հ սբ Սիոն, ուր ամ ինչ կայ, և ոչինչ հոսի, ո՞ արդեօք դահավէժ արար զմեզ աստ: Ընդէ՞ր արդեօք թողաք զարարիչն քո, և զընկերութիւն մեր ||: Ե՞րբ արդեօք տեսանեմք ազատս զմեզ յայսմանէ վտանգէ. ե՞րբ արդեօք դադարի աքսորանս այս. ե՞րբ եղիցուք ապահով. և ե՞րբ տեսցուք մեք զմեզ անդ:

Երկրորդ լամք (ասէ սբն) * զնոսա, որք յափշտակին ||: Ո՞ զորս յափշտակէ գետս այս: կան եղբարքն մեր 'ի մէջ այսր գետոյս բաբելոնականի, 'ի մէջ այսր մրրկախառն ծովու աշխարհիս, և քարշեցեալք յափշտակին 'ի նմանէ. քարշին 'ի հեղեղաց, բաղխին յալեաց, և 'ի քարաժայռից, և տատանին 'ի մրրկաց, և անդադար ընկղմին: Զօրհանապազ տեսանեմք զհազարս հազարաց ընկղմիլ, և անկանիլ հանգոյն ձեռան. ոպ ետես ոմն սբ հոգւով, զի ոպ ձիւնն իջանէ յերկիր՝ այնպէս իջանէին հոգիք 'ի դժոխս հանապազ: Արդ՝ ո՞ իցէ այն, որ ոչ լայցէ զայսպիսի կորուստ. ո՞րպիսի աչք իցեն այնքան խստացեալք, որք ոչ դալարիցին ցաւակցութբ, տեսանելով զկորուստն այսքանեաց հոգւոց:

Երրորդ՝ կամք նստեալք առ ափն այսր գետոյս բաբելոնի, առ'ի օգնել եղբարց մերոց, և նպաստաւորել նոցա, առ'ի ձեռնտու լինիլ և հասանիլ 'ի թիկունս նց, որք կան 'ի վտանգի. թերևս կարօղ լիցուք որսալ զնոսա. և կեցուցանել զոմանս 'ի նոցանէ, որք մերձ են յընկղմիլ: Այս է յատուկ պաշտօնն մեր: Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան: Մատթ: 4. 19. Առ այս կոչէ զմեզ Ած, առ'ի լինիլ որսորդս մարդկան ։ վասն այսորիկ եդ զմեզ Ած առ ափն ընկերութեան առ՚ի որսալ զհոգիս , ոչ զի սատի ձգիցեմք զձեռն առ նոսա , որք մերձ են ընկղմիլ ։ Արդ՝ երթիցուք այժմ խոկալով աստ՚ի միոյ կողմանէ ըզ մեծագոյն շնորհն , զոր արար մեզ Տր , զի արար զմեզ այդքան տարբերս , և գերագոյնս քան զաշխարհականս , զի նոքա երթան ըստ ընթացման գետոյս այսորիկ բաբելոնի ․ և մեք կամք ՚ի նաւահանգստի ․ նոքա կան ՚ի վտանգի գետոյս այսորիկ ․ և են յորդայթի կորստեան և հեղձամղձուկ լինելոյ յամենայն վայրկենի ․ և մեք եդաք յԱյ առ եզերն նր , առ՚ի ձեռնտու լինիլ նց , և օգնել ․ զի կեցցեն ։ Եւ ՚ի միւս կողմանէ վերաշրջեսցուք զաչս մեր առ մեզ ինքեանս ․ և նկատեսցուք , զի նոքա , որք ձեռնտու լինելոց են այլոց առ՚ի նպաստաւորել և ազատել զնոսա , որք ընկղմին ՚ի գետս այս , պարտին գոլ յաջողակ լողորդք ․ ապա թէ ոչ՝ և ինքեանք ընկղմին ը նմ սաստկութբ գետոյն ընդ կալնուլն միոյն զմիւսն , և երկոքեանն իջցեն ՚ի վայր ։ Վասն զի պիտոյ է ունիլ զմեծ հնար ՚ի յարհեստի շահելոյ զհոգիս , զբազում զօրութիւն և զկատարելութիւն առ՚ի արտահանել զհոգիս ՚ի վտանգաց՝ առանց դնելոյ զինքն ՚ի վտանգի ։

Պատմի վս երանելւոյ սբյն Անտոնիոսի , թէ անգամ մի գոլով յափշտակեցեալ մտօք ետես զմեծագոյն գետ մի յոյժ վտանգաւոր և սրաթռիչ , ուր մտանէին ամ աղտեղութիւնք , և մրուրք երկրի այնպիսի ծայրագոյն աստիճանաւ գարշութեան , մինչզի ոչ կարէր ձեւակերպիլ յաշխարհի իր իմն այնքան գարշահոտ , աղտեղի , և վատթարագոյն , որ համեմատիցի ջուրցն այնց , որք իջանէին ՚ի գետն այն ։ Եւ էին ջուրքն այնորիկ անոպխսւոյ որակութեան ․ և այնքան խառնեալք , մինչ զի որ ինչ հանդիպէր նց , յափշտակէին զնա առանց լինելոյ ձայր, և զարման նշ՟, թէ արք լցեալք հանդիսաւորքն այնոքիկ, և թէ կանայք: Թէ հարուստք իցեն, և թէ աղքատք, զի զամենեսեան խորասոյզ առնէին մինչև 'ի յատակս 'ի միում կիտոջ, և նովին փութով համբառնային 'ի վեր՝ զորս ընկղմէին, և դարձեալ ընկղմէին զնոսա առանց տալոյ դադար 'ի միում վայրկենի: Զարմացեալ փառաւոր տէրն Անսելմոս ընդ այլանդակ հայեցուածս այս, եհարց թէ ո՛վ ո՛վք կեային, և տարէին անձինքն այնոքիկ, զի էին կենդանիք: Որում տուաւ պատասխանի, թէ ապերջանիկքն այնոքիկ տարէին նովիմբ աղտեղութ՟ք· յորս արդէն ընկղմեցեալք էին· և զնոյն ըմպէին· և այնու տմբէ՟ շատանային: Յետ այսորիկ մեկնեցեալ եղև տեսիլն այն, և տուաւ նմա, թէ հեղեղն, և գետն այն էր աշխարհս այս, յորում մարդիկ կուրացեալք պանծան հարստութ՟բ իւրեանց· պատուով, և մամմոնական հեշտութ՟բ· նաև աղտեղեաւ բերկրութ՟բ հեշտանան, և են այնքան ողորմելիք, մինչ զի թէպէտ ոչ կարեն կալ հաստատուն 'ի նմ՟, սակայն երջանիկս և երանելիս համարին զինքեանս: Իսկոյն յետոյ տարեալ եղև տէրն Անսելմոս 'ի տեղի մի շրջապատեցեալ և ներփակեցեալ պարսպօք, և անդ էր բուրաստան մի յոյժ ընդարձակ և համատարած· որոյ պարիսպքն գունով պատեցեալ պայծառագունեղին արծաթով փայլէին զարմանաբար: 'Ի միջի նր՟ գոյր հովիտ և դաշտ տափարակ, և 'ի դաշտի անդ ծաղկունք և բանջարք գեղեցիկք աննմանք, որք էին կենարարք, և փափկագոյնք: Որք և համեղաբար ընդունէին ըղձանս, որք անդ նստէին, և ընդ նմ՟ խոնարհէին, և ցածանային մինչև յերկիր, և ոչ թարշամէին, և ոչ թեքեալ մնային մի խոնարհելոյն իւրեանց, այլ մանաւանդ մինչ յառնէին նոքա, որք նստէին, կամ ընկողմանէին 'ի վ[ե]ր նց. իսկոյն ուղղէին ինքնին, անկայլն յառաջն: Օդն էր հաճելի և զովացուցիչ: Եւ վերջապէս՝ ամ ինչ, որ կայր յայնմիկ տեղւոջ, էր համեղ, և բերկրալի, և թուէր թէ լցեր դրախտ. և թէ ոչինչ մնայցեր ցանկալի յերանութէ, որ ոչ գտանիցիւր անդ: Եւ ասացաւ ինձ Անսելմոսի, թէ այն է կացութիւն կրօնի:

ԳԼՈՒԽ. Ե:

Հետեւի նոյն նիւթն, զորմէ ընծայեցաւ յառաջնում գլխոյ:

Սիրանելին մեր Բեռնարտոս համառօտեաւ ազ բարբառէ զմեծագոյն բարիսն, որք գոն 'ի կրօնի այսպիսիք սակաւուք բանիւք: * Ո՛չ ապաքէն այս է կրօնն այն մք, մաքուր, և անարատ, յորում կեայ մարդն մաքրագոյն, անկանի յոյժ ցանցառագոյն, յառնէ կարի երագագոյն. գնայ 'ի նմա զգուշագոյն. ոռոգանի յաճախագոյն. հանգչի նաւես անհոգթագոյն. մաքրի անդէն յոյժ վաղագոյն. մեռանի ևս վստահագոյն, և վարձատրի առատագոյն ||: Եւ ևս յայլում տեղւոջ խօսելով զբարձրութէ, և զարժանաւորութէ կրօնաւորաց, ասէ. * Բարձրագունեղ է կացութիւն ձեր, զի յերկինս ելանէ, և է հանգէտ հրեշտակաց, է նման մաքրութե հրեշտակայնոյ. Զի ոչ միայն ուխտեցիք զամ սրբութիւն, այլև զամ կատարելութիւն սրբութեան, և զամ վախճան կատարելութե: Այլք ծառայեն Այ. իսկ դուք յենուք առ Այ ||: Եւ սակաւ ինչ ստորև ասէ. * Ո՛չ գիտեմ, թէ որով արժանաւոր անուամբ յորջորջեցից զձեզ. արդեօք մարդիկս երկնայինս, թէ հրեշտակս երկրայինս, զի կայք 'ի յերկրի՝ զկենցաղավարութի ունիք 'ի յերկինս:

կենս ։ Ո՛չ էք յաշխարհէ, այլ էք քաղաքացիք սրց՟, և ընտանիք Այ՟||։ Զի կրօնաւորքն նմանին հոգւոցն այնոցիկ երանեցելոց, որք թէպէտ առաքին այսր առ՚ի պահպանել զմեզ, սակայն այնպիսաբար պարապին ՚ի պաշտօնս այս, մինչ զի ոչ երբէք միայն առանց տեսանելոյ զԱծ՟ ։ Այսպիսի է կեանքն կրօնաւորի, որ թէպէտ կեայ ՚ի յերկրի, և ունի զսիրտն ՚ի յերկինս․ զի ամ՟ ընձեռութ՟ի, և ամ՟ կենցաղավարութ՟ի իւր է զԱյ՟, և զիւրոց հոգւորաց․ ուստի կարէ ասել ընդ Սրբյն՟ Պօղոսի․ Ինձ կեանք Քս՟ է ։ Զի ամ՟ յաշխարհի յորժամ ոք յոյժ պարապի ՚ի յորս, և բերկրի նովաւ, ասի՝ թէ կեանն նր՟ ամ՟ է երթալ ՚ի յորս ։ և յորժամ ոք պարապի ՚ի յորկրամոլութ՟ի, ասի՝ թէ կեանն նր՟ է ուտել և ըմպել ։ Այսպէս ասէր Առաքեալն, իմս կեանք է Քս՟․ քանզի բոլորովին նուիրեալ և ընծայեալ էր զինքն ՚ի ծառայել Քսի՟ ։ Այսպէս ևս ասէ Սրն՟ Բօնաւէնդուրայ՝ թէ վս՟ այսորիկ կոչի կրօնն կարգ ։ * Զի զոչինչ անկարգութ՟ի կրէ յինքեան ||։

Փառաւոր Սրն՟ Բեռնարդոս մեկնէ վս՟ կրօնի, և այնմիկ առակցէ զբանն զայն․ Անկողինք մեր ծաղկալից ։ Զի ամ՟ յաշխարհի սաս ոչ գոյ տեղի, յորում մարդիկք այնքան հանեղաբար հանգստանան, և դիւրանան, որպ՟ յանկողնոջ ։ Այսպէս ևս ասէ, թէ յԵկեղեցւոջն Այ՟ անկողինն, յորում հանգչի մարդ, է կրօնն․ քանզի ՚ի նմա մարդն կայ ազատ ՚ի հոգոց աշխարհայնոց, և ՚ի զբաղմանց իրաց ժամանակաւորաց՝ և ՚ի հարկաւորաց առ՚ի ապրել ։ Եւ թէ Ած՟ արարեալ իցէ զայս շնորհս մեզ յայսմիկ, բարւոք զփորձառնումք յայսմանէ, քանզի յընկերութ՟է մերում մեծաւորք, և վերակացուք յատկաբար յանձն առնուն հոգալ զայն ամ՟, որ հարկաւոր է ուտելոյ՝ զգենլոյ, ուսանելոյ, և գնալոյ ՚ի ճանապարհ․

պարհ · այնպ՟ 'ի ժամանակի հիւանդութ՟, ոպ՟ 'ի ժամանակի առողջութ՟ : Ուստի ոչ ունիմք կարիս 'ի ծնողաց մերոց մարմնաւորաց, ոչ եւս 'ի յազգականաց, զորս արդէն թողաք, եւ կարեմք մոռանալ զնս՟, բայց 'ի յանձնելոյ զնոսա Այ՟ : Քանզի թէ ունիցիմք զնս՟, եւ թէ ոչ ունիցիմք, թէ իցեն աղքատք, եւ թէ հարուստք, ընկերութն եւ Առաջնորդքն են փոխանակ նց՟ հարք եւ մարք մեր · եւ առաւել է սէրն սոցա առ մեզ, քան զսէրն հայրական եւ մայրական · եւ ջանան նախահոգալ զամ՟ ինչ վս՟ մեր, ոպ՟ զի մեք մոռանալով, եւ անհոգս լինելով զամենից իրաց ժամանակաւորաց, պարապեսցիմք միայն առ վախճանն, վս՟ որոյ եկեալ եմք 'ի կրօն, որ է պարապել 'ի շահն մեր հոգեւոր, եւ 'ի շահն մերձաւորաց մերոց: Կղեմէս աղեքսանդրացին ասէ, թէ վս՟ այսորիկ Այծ՟ եդ զմարդն 'ի Դրախտն երկրաւոր՝ ժառանգութե՟ եւ տէրութե՟ ամենից իրաց, ոպ՟ զի ոչ պակասելով նմա իր իմն, որում կարիցէր ցանկալ, զբոլոր սիրտն իւր վերաբերիցէր 'ի յերկինս : Արդ՝ այս է դիտաւորութն ընկերութ՟ մերոյ · եւ վս՟ այսորիկ հոգայ տալ զամ՟, որինչ պիտոյ է, ոպ՟ զի ոչ ունելով մեք զհոգս վս՟ իրաց երկրաւորաց, զբովանդակ խորհուրդս եւ զցանկութն մեր ունիցիմք 'ի յերկինս:

⁂

ՅԱՂԱԳՍ ՈՒԽՏԻ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ։

ԳԼՈՒԽ. Ա։

Թէ ուխտն աղքատութեան է հիմն կատարելութեան առաքինութեանն ։

ԵՐԱՆԻ ԱՂՔԱՏԱՑ ՀՈգով, զի նոցա է արքայութիւն երկնից ։ Մատթ. 5. 3։ Այսոքիւք բանիւք սկսանի Քս փրկիչն մեր զայն բարձրագոյն քարոզն լերին, և զութն երանութեանն զայնոսիկ։ Իսկ թէպէտ վարդապետք ոմանք, և սրք 'ի մեկնելն զբանս զայս իմանան զխոնարհութիւն. բայց սակայն այլք ըստ իրաւանց իմանան զայս զկամաւոր աղքատութիւն. և յատկապէս զայսմանէ աղքատութիւն, զոր ուխտեմք մեք կրօնաւորքս ։ Իսկ այսու իմացուածով, որ է սրբյն Բարսղի, և այլոց բազմաց սրբոց, իմանամք մեք այժմ։ Ո՛չ է փոքր գովասանութիւն այսր աղքատութեան հոգևորի. զի Քս փրկիչն մեր նովաւ սկսանիցէր զքարոզն զայն բարձրագոյն, և զայն դնիցէր յառաջնում տեղւոջ 'ի մէջ երանութեանց ։ Բայց մեծագոյն գովութիւն նորա է, զի գործովք, և օրինակօք ուսոյց մեզ յամ ընթացս կենաց իւրոց. զի այս եղև նախկին

ընթեր

ընթերցումն, և դասատուութիւն, զոր 'ի ծնանելն ընթերցաւ մեզ մեծագոյն վարդապետն այն՝ յամփոփանէ մսրոյն ․ զայս ուսուցանէ մեզ մսուրն այն, զայս ուսուցանեն մեզ աղքատիկ խանձարուրքն այնք, զայս ուսուցանէ մեզ ունիլն զկարիս խոտոյ, և չնչին անասնոց առ 'ի ջերմանալ ։ Այս եղև ևս յետին դասատուութիւն, զոր ընթերցաւ և ուսոյց մեզ 'ի բարձրագոյն ամպիոնէ խաչին, առ 'ի յանձնել զայն մեզ առաւելաբար ․ և մեռաւ մերկ, և ծայրագունիւ աղքատութ֊ ․ մինչզի առ 'ի թաղել հարկ եղև մուրանալ զողորմութի առ 'ի գնել զպատանս ։ Այլ որպիսի մեծագոյն աղքատութիւն քան զայս լինել կարէ ։ Եւ որպէս եղև սկիզբն և վախճանն, այնպէս եղև նաև կեանքն նր, զի և ոչ զդենար մի ունէր առ 'ի տալ զհարկն, որ խնդրէին 'ի նմանէ ։ Ո՛չ ևս ունէր տուն, ուր կարիցէր հանգչել, և ուտել զպասեքն ընդ աշակերտս իւր ․ զի հարկ եղև զա̃մ ինչ առնուլ 'ի փոխ ․ Աղուեսուց որջք գոն ․ և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ո՛չ գոյ, ուր դիցէ զգլուխ իւր ։ Մատ․ 8․ 20․ Կամէր փրկիչն աշխարհի արկանել զաղքատութիւն հիմն աւետարանականի կատարելութե, ըստ այնմ, Մատ․ 19․ 21 ։ Եթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զինչ ունիս, և տուր աղքատաց ։ Վասն այսորիկ կամեցաւ թողուլ զայն այնքան հաստատեցելոյ, և ուսուցելոյ օրինակաւ իւրով ։ Եւ այսպէս տեսանեմք, թէ որչափ մեծապ̃ տարածեալ մնաց հիմն այս աղքատութե յեկեղեցւոջ 'ի սկզբանէ նախնականութե եկեղեցւոյն, որպ̃ ճառի 'ի գործս առաքելոց ։ Քանզի յայնժամ 'ի մէջ հաւատացելոց ո՛չ գոյր իմ և քո, այլ ամ̃ ինչ էր հասարակաց, և նոքա ամենեքեան, որք ունէին զինչս, զանդաստանս, կամ զայլ ստացուածս, վաճառէին զայնս, և բերէին զգինս նց̃, և դնէին առ ոտս առաքելոց, և նոքա բաշխէին իւրաքանչիւր ումեք ըստ պիտանաւորութեան : Նկատէ աստ սուրբն Հերոնիմոս և ասէ , թէ դնելով առոտս առաքելոց , ցուցանէին այնու , թէ հարստութիւն աշխարհիս պարտի գոլ առոտս կոխեցեալ : Եւ սուրբն Կիպրիանոս , Բարսեղ , և Հերոնիմոս ասեն , թէ յայնմիկ ժամանակի քրիստոնեայքն ուխտէին զուխտ աղքատութեան . և զայս ցուցանեն պատժովն Անանիայ՝ և Սափիրայ , որք թագուցանելով զմասն ինչ գնոյ ստացուածոց իւրեանց . եղեն պատժեցեալք յանկարծական մահուամբ , որ է նշան , թէ ուխտեալք էին զաղքատութիւն : ապաթէ ոչ , ո՛չ արդիւնաւորեցէին զպատիժ մի այսքան մեծագոյն : Արդ՝ գոլով կրթեցեալ Եկեղեցին ՀՌՄ այսու վարդապետութեամբ , սուրբք և համայնք հիմնիչք կրօնից դնեն զուխտն աղքատութեան որպէս զհարկաւոր , և զհաստատագունեղ հիմն կրօնի : Ուստի հայրն մեր հետեւելով այսմիկ վարդապետութեան , որ է այսքան վաղնջական , և սկսելով ընձեռել զաղքատութիւն , ասէ . *Աղքատութիւն որպէս զհաստատ պարիսպ կրօնի սիրելի է , և մաքրութեամբ իւրով պահպանելի , որքան կարելի է շնորհիւ Աստուածայնով|| : Այս է ընդդէմ իրաց աշխարհիս . յորում հիմն անդրանկութեան , և գանձուց՝ են ինչքն , և հարստութիւնքն . բայց 'ի կրօնի աստ եղանի հակադարձաբար : զի հիմն կացութեան կրօնի , և բարձրութեան կատարելութեան սորա է աղքատութիւն , քանզի որպէս շինուածն կրօնի , զոր բարձրացուցանելոց եմք , է տարբեր 'ի շինուածոյ աշխարհիս . սոյնպէս է տարբեր և հիմն նորա :

Այս է այն , զոր Քրիստոս փրկիչն մեր կամեցաւ ուսուցանել մեզ նմանակերպութեամբն այնուիկ , զոր բերէ 'ի սրբազան աւետարանին ասելով . Ո՞ է մարդն այն , որ կամիցի շինել զաշտարակ մի , և ո՛չ նախ համարիցէ զծախսն , եթէ ունիցի բաւական 'ի կատարումն , որպէս զի յետոյ մի՛ տեսցի զնմանէ, Այս այր սկսաւ շինել. եւ ո՛չ կարաց կատարել: Կամ ո՛ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի. եւ ո՛չ նստեալ նախ խորհիցի, եթէ կարօղ իցէ տասն հազարաւ զդէմ ունել այնորիկ, որ գայցէ 'ի վր̃ նր̃ քսան հազարաւ: Այլ թէ ոչ, մինչդեռ հեռագոյն իցէ՝ հրեշտակս արձակեալ աղաչիցէ 'ի խաղաղութի̃: Ղուկ. 14. 30: Եւ յետոյ եզրափակէ Քս̃ ասելով: Այսպէս ամ̃ ոք 'ի ձէնջ, որ ոչ հրաժարեսցի յամ̃ ընչից իւրոց, ո՛չ կարէ իմ աշակերտ լինել: Այսու կամեցաւ ծանուցանել մեզ, թէ ո՛րչ̃ հարկաւոր է յաշխարհի բազմութի̃ զօրաց առ'ի պատերազմիլ, եւ առատութի̃ դրամոց առ'ի շինել. այսպէս հարկաւոր է կրօնաւորաց աղքատութի̃ եւ մերկութի̃ յամ̃ իրաց աշխարհի առ'ի պատերազմիլ ընդդէմ դիւաց, եւ առ'ի շինել ըզշինուածն հոգեւոր: Ուստի զայս տեսլեան մեկնելով երանելին Օգոստինոս ասէ, թէ շինումն աշտարակիս այսորիկ նշանակէ զկատարելութի̃ն քրիստոնէական կենաց: Ծախքն որք լինին վս̃ շինման են հրաժարիլն յամ̃ իրաց. քանզի այսու կերպիւ եղանի մարդ առաւել ազատ առ'ի ծառայել ԱԾ. եւ առաւել ապահով 'ի դիւաց թշնամեաց իւրոց. զի ոչ կարեն ունել զառիթ յառնելոյ 'ի վր̃, եւ պատերազմելոյ:

Սր̃ն Հերոնիմոս, եւ ս̃րն Գրիգորիոս 'ի վր̃ սոյն բանիցս ասեն. թէ մեք եկեալք եմք յաշխարհս յայս առ'ի պատերազմիլ ընդ դիւաց, որք են մերկք, եւ զոչինչ ստացեալ ունին: Ուստի հարկ է, զի եւ մեք մերկանայցեմք յիրացս յայսցանէ առ'ի պատերազմիլ ընդդէմ նց̃: *Զի որ ծանրացեալ զգեստուք կամի գօտեմարտիլ ընդ մերկի ումեք, շուտով անկանի, զի ունի զտեղի՝ յորմէ կալնանի ||: Կամիս քաջաբար մարտնչիլ ը̃ դիւաց. 'ի բաց մերկացիր յամենից իրաց աշխարհիս, որպէս զի մի՛ գտանիցի 'ի քեզ իր իմն, զորմէ

կալկայնուցուն թշնամիքն : Քանզի զինչ այլ ինչ են համայնք երբ երկրայինք, եթէ ոչ զգեստք մարմնոյ, զոր որքան ոք առաւել ստացեալ ունի, այնքան շուտով անկանի ‖ : Ս՟բ ոսկեբերանն հարցանէ, թէ որն է պատճառն, զի 'ի սկզբան եկեղեցւոյն քրիստոնեայքն էին այնքան բարիք, և այնքան ջերմեռանդք, իսկ այժմ են այսքան գաղջք և թոյլք : Առ այս պատասխանէ ասելով, թէ պատճառ սորին է այս, զի յայնժամ եղանէին 'ի պատերազմ ընդդէմ դիւաց մերկք, զի մերկանային յընչից և յապրանաց : Բայց այժմ եղանեն 'ի պատերազմ զգեցեալ զբազում ինչս, և զպատիւս, և զգեստք այսորիկ արգելուն զնոսա մեծապէս : Վա՜յ պարտիմք թողուլ զհարստութիւնս առ 'ի թեթևանալ յամենից իրաց աշխարհիս, ո՟պ զի գոլով ազատք, կարիցեմք բարւոք մարտնչիլ ընդդէմ դիւաց, և հետևիլ Ք՟ի : * Մերկ գոտեմարտն յուժգին գոտեմարտի : Լողորդն առ 'ի դիւրաբար անցանել ընդ գետն, մերկանայ : Ճանապարհորդն 'ի բաց ընկենլով զբեռինս, բարւոք ընթանայ ‖ :

Վ՟ այսորիկ առաջին ուխտն, զոր ուխտեմք 'ի կրօնի՝ է ուխտն աղքատութե՟ որպէս զհիմն այլոց ամենից : Զի ո՟պ ը՟ առաքելոյն ընչասիրութիւն է արմատ ամենից չարեաց . Արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է : 1. Տիմ. 6: 10: այսպէս և աղքատութիւն է հիմն ամենից բարեաց, և առաքինութեանց : Զոր մեկնելով ս՟բն Ամբրոսիոս ասէ : * Զի ո՟պ ինչքն են գործիք ամենից մոլութեանց, այսպ՟ հրաժարիլն 'ի նոցունց է ծնող, և սնուցիչ ամենից առաքինութեանց ‖ : Յաղագս խոնարհութե՟ ասէ ս՟բն Գրիգորիոս : * Աղքատութիւն ունողաց զմիտս բարիս, է պահպանիչ խոնարհութե՟ ‖ : Բարւոք ուսանի ևս, թէ որքանի մեծ գործի լիցի աղքատութիւն վ՟ն պահելոյ զողջախոհութե՟ : Առ 'ի պահպանել զողջախոհութե՟, հարկաւոր է ժուժկալութեան 'ի յուտել և 'ի զգենուլ, որ ծնանի յաղքատութենէ . այսպէս կարեմք տրամաբանել ևս զայլոց առաքինութեանց ։ Վասն այսորիկ սուրբքն կոչեն զաղքատութիւն երբեմն * Պահապան և վարդապետ առաքինութեանց || ։ Երբեմն կոչեն զնա մայր ։ Ուստի ասէ Հայրն մեր 'ի կացուցման ։ * Ամենեքեան որպէս զմայր սիրեսցեն զաղքատութիւն || ։ Քանզի հանգոյն բարւոյ և ճշմարտի մօր սնուցանէ՝ և պահպանէ 'ի հոգւոյ մերում զամենայն առաքինութիւնս ։ և նա է , որ կանգուն պահէ զկրթութիւն կրօնաւորական ։ Եւ այսպէս տեսանեմք , զի կրօնաւորքն այնք , որք օտարացեալք են յաղքատութենէ , օտարացեալք են ևս 'ի կրօնէ հանգոյն որդւոց ոչ նմանողաց մօրն իւրեանց ։ Բղխեցուք ուրեմն այսմիկ սրբոյ աղքատութեանս , որպէս մօր , ոչ այլով սիրով , եթէ ոչ ըղձակաթ սիրով , սաստիկ սիրով . և սիրով հանդերձ յարգութեամբ , և վարկմամբ ։ Երանելին սուրբն Ֆրանչիսկոս կոչէր զաղքատութիւն Տ՟ր իմ ։ Եւ այսպէս 'ի կանոնի սրբուհւոյն Կղարայի ասէ , յանձնաւանդեմք զմեզ առ Տ՟ր մեր սուրբ աղքատութիւն ։

ԳԼՈՒԽ Բ ։

Յաղագս մեծի վարձուն , զոր Տէրն մեր տայ աղքատաց հոգւով ։

Երիտասարդն այն ամենատարանականն՝ որ ցանկայր կատարելութեան , և ոչ շատանայր պահելով զպատուիրանսն , յորժամ Տէրն մեր ասաց նմա , եթէ կամիս կատարեալ լինել . երթ՝ վաճառեա զինչս քո , և տուր աղքատաց , տրտմեցաւ , և չոգաւ , զի ունէր ստացուածս բազումս , և սիրէր զինչս իւր . և ոչ ունէր զսիրտ և զզօրութիւն թողլոյ զայնս . ուստի ոչ ունելով զծախս , ոչ կարաց շինել զաշտարակն աւետարանականի կատարելութեան։ Արդ՝ ո՞վ զի մի՛ պատահիցի նոյնն եւս մեզ, այլ քաջալերիցուք և զօրասցուք առ՚ի թողուլ զա՟մ իրս աշխարհի, Ք՟ս փրկիչն մեր առաջադրէ մեզ զվարձն մեծագոյն, զոր վասն այսորիկ առնլոց եմք, և ասէ, Երանի՛ աղքատաց հոգւով. զի նոցա է արքայութիւն երկնից։ Տե՛ս ուրեմն, եթէ բարի իցէ տալ զիրս երկրայինս վ՟ն արքայութեան երկնից։ Տե՛ս եթէ իմաստուն է վաճառականն այն, որ վաճառէ զա՟մ ինչս իւր առ՚ի ստանալ զգանձս զայս։ Երանելին ն՟րն Բեռնարտոս բարւոք խոկայ զերանութիւնս զայս, և ասէ, թէ Տ՟րն մեր խօսելով զերանութենէ զայսմանէ՝ ոչ խոստանայ մեզ զայն յապագայում ժամանակօք ասելով՝ ն՟ջ եղիցի արքայութ՟ն երկնից, այլ խօսի՚ի ներկայ ժամանակի ասելով, ն՟ջ է արքայութ՟ն երկնից։ Արդէն ձեր է արքայութիւն երկնից, թէպէտ ոչ է տուեցեալ ձեզ այժմիս, սակայն լերուք հաւաստիք, զի արդէն գնեցիք զայն իրօք աշխարհիս, զորս թողիք։ Զի ո՞վ եթէ դու տայցես ումեք զհարիւր դահեկան վ՟ն անօթոյ միոյ ոսկեղինի, կամ վ՟ն ականի միոյ պատուականի, զոր այլ ոք ունի՚ի տան իւրում, իսկոյն եղանի քո անօթն, կամ ակն այն, թէպէտ ոչ իցէ աւանդեցեալ քեզ, զի արդէն գնեցեր զայն քոյովք արծաթովք։ Այսպէս եւ արքայութիւն երկնից է աղքատին հոգւով, զի գնեաց զայն՝ տալով վ՟ն ն՟ր զոր ինչ ունէր։ Նման է արքայութիւն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զա՟մ, զոր ինչ ունէր, և գնեաց զայն մարգարիտ։ Մատթ. 12. 45։ Արդ՝ այսպէս արարեր և դու, զի ետուր վ՟ն արքայութ՟ն երկնից, զոր ինչ ունէիր, վ՟ն որոյ քո է արքայութիւն այն։

Ոչ դադարեն աստէն խոստմունքն Ք՟սի, զի առ-

առ

առաւել քան զայս խոստմանս աղքատացն հոգւով : Կարէ՞ արդեօք գոլ իր ինչ, որ լիցէ առաւել քան զարքայութիւն երկնից : Ասեմ այո՛. քանզի գոն 'ի յերկինս աւելի վարձատրութիւնք. ոպ՟ գոն եւս աստ 'ի յերկրի վասն բարեաց զինուորաց : և խոստմանս Քս՟ աղքատաց հոգւով զաւելի վարձս և զնախադասութիւն գերքան զվարձս այլոց : Զինի որոյ չուեաց երիտասարդն, որ ը՟ խրատուն Քս՟ի ոչ կամեցաւ վաճառել զինչս, և տալ աղքատաց, սկսաւ ասել Քս՟, որչափ դժուարին է մեծատանց մտանել յարքայութիւն երկնից : Յայնժամ յարուցեալ Պետրոս սկսաւ ասել ցՔս՟ յանուն ամենից առաքելոց : Ահաւասիկ մեք թողաք զամ՟, եւ եկաք զհետ քո, արդ զինչ լինիցի մեզ : Եւ նա պատասխանեալ ասէ ցնս՟ : Ամէն ասեմ ձեզ, զի դուք որ եկիք զհետ իմ. 'ի միւս անգամ գալստեան յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգս իէլի : Մատթ. 19. 28: Զայս մեկնելով ս՟բքն ասեն, թէ նախադասութիւն, և գերապատուութիւն այս իմանի վն՟ այնոցիկ ամենեցուն, որք հետևելով առաքելոց 'ի կացութեան աղքատութեան, հաստատեն զայն ուխտիւք, ոպ՟ առնեն կրօնաւորքն. միայն թէ մտանիցեն 'ի շնորհս Այ՟ : և ասեն ս՟բքն, թէ ամենեքեան ունիցին զնախադասութիւն, և զարժանապատուութիւն զայս. և յաւուրն դատաստանի ոչ կացցեն առաջի ատենին Քս՟ի ոպ՟ դատելիք, այլ ոպ՟ աթոռակիցք նորա և դատաւորք առ 'ի հաստատել զվճիռ փրկչին մերոյ : Այսպէս ասէ ս՟բն Օգոստինոս, Բեդա քահանայն, և ս՟բն Գրիգորիոս, և այլք վարդապետք հասարակաբար : Եւ յաղագս այսորիկ առբերեն զբանն Եսայեայ, որ ասէ, Տր՟ 'ի դատաստան եկեսցէ ընդ ծերս ժողովրդեան իւրոյ, և ընդ իշխանս նր՟ : Եսայ. 3. 14. Նաև զայն, զոր Սողոմոն ասէ խօսելով զփեսայէ եկեղեցւոյն, Առակ. 31. 23: Երեւելի է 'ի դրունս այր նր յորժամ նստցի ընդ ծերս երկրի ։ Սոքա են իշխանքն այնոքիկ, որք գան 'ի միասին ընդ Քսի 'ի դատել զաշխարհ, և նստցին որպէս իշխանք ընդ փեսային եկեղեցւոյ, որ է Քս յաւուր վերջնոյ դատաստանին ։ Իսկ թէպէտ ոմանք տան զայս արժանապատուութիւն ամենից սրբոց կանոնաւորեցելոց. բայց առաւել հաստատուն կարծիք սրբոց, որոց հետեւի և մեծն Թովմաս՝ է, թէ զայս արժանապատուութիւն ունիցին միայն նոքա, որք եղեն յանձնառուեալք զկացութիւն աղքատութեան, թէպէտ ոչ եղեն նոքա կանոնաւորեցեալք, և թէպէտ չեղեն դասեցեալք յեկեղեցւոյն 'ի թիւս սրբոց ։ Առաքեալքն, և նոքին առաւելեն զբազում պատճառս, և զպատշաճաւորութիւն, վն որոց նախապատուութիւս այս տրի մանաւանդ այնոցիկ, որք դաւանին զկամաւոր աղքատութիւն, քան թէ այլոց երանեցելոց. բարւոք աղաղակէ աստ մեծն Գրիգորիոս ընդ մարգարէին և ասէ, Յոյժ պատուեալք եղեն բարեկամք քո Ած, և յոյժ զօրացան իշխանութիւնք նոցա, Սաղմ. 138. 17: Օրհնեցեալ և գովեցեալ եղիցիս դու Տր, որ այսպէս պատուես զբարեկամս քո. և մասնաւորապէս զնոսա, որք կամաւորապէս եղեն աղքատք վն սիրոյ քոյ, որովհետեւ ոչ շատանաս տալով նոցա զարքայութիւն երկնից, այլ և առնես զնոսա մեծագոյն, և գերազանց իշխանս. զի լիցեն դատաւորք ընդ քեզ ։

* * *

ԳԼՈՒԽ. Գ։

Թէ Ած հատուցանէ աղքատացն հոգւով ոչ միայն 'ի հանդերձեալն, այլև 'ի կեանս յայս ։

Ո՛վ զի մի՛ կարծիցես, թէ ամ՟ վարձ քո տալի իցէ քեզ 'ի հանդերձեալ կեանսն միայն, և հատուցումն քո տացի քեզ յոյժ անագան, որոյ զգինն ետուր անյապաղ, պարտիս գիտել, զի ոչ միայն 'ի հանդերձեալն, այլև 'ի կեանս յայս Ած վարձատրէ զաղքատս հոգւով առատապէս ։ Եմք մեք մարդիկս այնքան շահասէրք, և այնքան շարժիմք ներկայ, և երևելի իրօք, մինչզի յորժամ ոչ տեսանեմք զայս, սկսանիմք վհատիլ ։ Ուստի նկատելով Տրն մեր զտկարութիւն բնութե՟ մերոյ, կամեցաւ նաև 'ի կեանս յայս վարձատրել զնսա, որք հրաժարին յամենից իրաց վն սիրոյ նր ։ Ուստի զկնի խոստման յաւիտենական կենաց, խոստացաւ և զվարձս 'ի կեանս յայս. Ամ՟ որ թողու զտունս, կամ զեղբարս, կամ զքորս՝ կամ զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան իմոյ. հարիւրապատիկ առցէ, և զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ ։ Մատթ. 19. 29։

Սբն Հերոնիմոս մեկնելով զայս հարիւրապատիկս, իմանայ զբարիս հոգևորս ասելով, * Որ թողու զմարմնաւորս վն կեցուցչին, առցէ զհոգևորս, որք բաղդատութբ, և արժեմք են այնպիսիք, ոչ թէ վն միայն ընդ հարիւրապատիկ իցեն առեալք ‖ ։ Բայց Կասիանոս մեկնէ զայս յաղագս բարեացն արտաքնոց, և ասէ թէ նաև 'ի կեանս յայս առնումք մեք կրօնաւորքս հարիւրապատիկ ընդ ժամանակաւորս. զն որում ասի յաւետարանի սբյն Մարկոսի, Առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի ։ Մարկ. 10. 30։ Եւ զայս բարւոք տեսանեմք արդէն կատարելաբար առընտանեցեալ զոլ. և յանուամ ածուր ասեմք նշ, որք նորապէս գան առ կրօնն այսպէս։ Դու թողեր զտուն մի վն Քնի. և ունիս զբազում տունս, զի քո են ամ տունք կրօնից մերոց, զորս ԱԾ ետ քեզ 'ի կեանս յայս վն տան միոյ ; զոր թողեր։ Թողեր ըզհայր մի, և զմայր մի, և ԱԾ տայ քեզ փոխանակ նց զայնքան հարս, որք առաւել սիրեն զքեզ քան զնա, զորս թողեր. և առաւել հոգան զպարէն քո։ Թողեր դու զեղբարս քո, և գտանես աստ 'ի կրօնի զբազում եղբարս, որք սիրեն զքեզ առաւել քան թէ նոքա զորս թողեր. զի սիրեն զքեզ վն ԱԾ, և 'ի փառս նր առանց խմիք շահասիրութե. իսկ եղբարքն քո աշխարհականք սիրեն զքեզ վն օգտի իւրեանց, և շահասիրուե. զի ունին զկարիս 'ի քէն։ Թողեր յաշխարհի անդ զծառայս ոմանս, զորս գուցէ ոչ ունէիր. իսկ աստ ունիս զբազումս, որք ծառայեն քեզ. ոմն ոպ հոգաբարձու. ոմն ոպ գործակալ, ոմն ոպ տնտես, ոմն ոպ խոհակեր, ոմն ոպ սեղանապետ, ոմն ոպ վերատեսուչ հիւանդաց։ Բայց այն՝ որ առաւել հարկաւորն է, է այս. եթէ երթաս յիսպանիա, 'ի Փօրթուգալ, 'ի Փրանսա, կամ 'ի Հնդստան, և կամ յայլ ամ կողմն աշխարհիս, գտցես անդ զտուն և զտեղի նախապատրաստեցեալ բաղմօք պաշտօնէիւք հանդերձ, որք ծառայեն քեզ հոգացողութբ և փոյթունակութբ, որ է այնքան մեծ բանն, զոր ոչ ոք իշխան աշխարհիս ունի։ Արդ՝ թերևս ոչ է այս առնուլ զհարիւրապատիկ փոխանակ միոյ 'ի կեանս յայս, այլ մանաւանդ առաւել քան զհարիւրապատիկ։

Ասեմ դարձեալ, թէ աստ 'ի կրօնի ունիս առաւել քան զհարիւրապատիկն վասն այնց իրաց, զորս թողեր յաշխարհի. Զի աստ 'ի կրօնի ունիս զամ ինչ, և ես դու առաքելոյ էր և իշխօղ իրաց, և հարստութեանց աշխարհիս, քան թէ ինքեանք հալուածքն։ Զի նք ոչ են տեարք և իշխօղք ընչից և հարստութեանց իւրեանց, այլ են ծառայք, և գերիք նց։ Վն որոյ Աստուածաշունչն կոչէ զնոսա, Արք մեծութէ։ Սաղմ. 75. 6։ Տես, զի ոչ ասէ, մեծութեն արանց, այլ ասէ արք մեծութէ, առ'ի ծանուցանել, թէ հարստութիւքն են իշխօղք նց, զի հարստութիքն հրամայեն հարստաց ոպ ծառայից և գերեաց իւրեանց. զի հարուստքն հարստութեց ծառայեն, վն հարստութեց աշխատին առ'ի ստանալ, առ'ի յաւելուլ, և առ'ի պահել զայնս։ և որքան առաւել ունին զինչս, և զհարստութիս, եղանին առաւելագոյն գերիք նց. զի այնքան առաւել բազմանայ հոգն և զբաղումն նց. Եւ որ յագի մեծանալոյն՝ չէ նմա համարձակ 'ի քուն մտանել։ Ասէ իմաստունն. Ժողով. 5. 11. Հարստութիւն շրջէ այսր և անդր զհարուստն 'ի կակուղ անկողնոջ, զի ինչքն և հարստութիքն բառնան զքունն։ Բայց կրօնաւորքն առանց հոգալոյ և առանց զխնելոյ, եթէ իւրքն թանկք են, կամ դիւրագինք. բարւոք են, կամ վատք, ունին զամ ինչ ըստ ասացելոյ Առաքելոյն. Իբրեւ ոչինչ ունիմք, և զամ ինչ ունիմք։ 2. Կոր. 6. 10։ Կեան առանց հոգաբարձութէ իմիք, և հանդիստ ոպ ոչինչ ունօղք, և զամ ինչ ունին։ Բայց զի՞նչ ասացից յաղագս ապահովութէ, զոր ունիմք հարկաւորապէս առաւել 'ի կրօնի աստ, զոր ոչ էաք ունելոց յաշխարհի անդ։ Եւ եթէ ոչ հաւատաս, հարց աշխարհականաց, և ցայնոսիկ, որք յաշխարհի կան ճոխացեալք, և տեսցես զբազում անհաճութիս, և զանհանգստութիս, որք պատահին նց յամ ընթացս կենաց իւրեանց, յորոց ազատք են կրօնաւորք։ Զի՞նչ ասացից զպատուոյ, զոր ունիս հարկաւորապէս առաւել աստ 'ի կրօնի, քան զոր ունելոց էիր յաշխարհի․ Զի մեծամեծք, իշխանք, և նախարարք, որք յաշխարհի ոչինչ էին համարելոց զքեզ, նոյնքն տեսանելով զքեզ 'ի ներքոյ հին զգեստուց և կարկատեցելոց, պատուէին և յարգէին զքեզ յոյժ ։ Եւ զի՞նչ ասասցես զհանգստութենէ, զանդորրութենէ, և զխաղաղութենէ․ ո՛չ ապաքէն և զայս տայ մեզ ԱԾ հարիւրապատիկ առաւել 'ի կրօնի աստ ։

Եւ զայս ևս տայ մեզ ԱԾ, որ զի առանց զբաղմանց՝ և առանց հոգոց երկրայնոց, զբոլոր սիրտն մեր դիցուք 'ի յերկինս, և զհոգս և զփոյթս, զորս ունելոց էաք յաշխարհի առ 'ի խնդրել զայնս, որք հարկաւորք էին պահպանելոյ զկեանս և զմարմինս․ զնոյնս ունիցիմք 'ի կրօնի աստ առ 'ի առաւել հաճոյանալ ԱՅ, և զարդանալ օրըստօրէ առաքինութեամբ և կատարելութեամբ, ըստ որում ասէ մարգարէն զորդւոցն Իէլի ։ Սաղմ. 104. Ետ նոցա զաշխարհս հեթանոսաց, և 'ի վաստակս ժողովրդոց ժառանգեցոյց զնոսա ։ Զի պահեսցեն զարդարութիւնս նր, և զօրէնս նր խնդրեսցեն ։ Այս է և այն, զոր ասէ ԱԾ 'ի ձեռն մարգարէին Եզեկիէլի, խօսելով զքահանայից ։ Ոչ եղիցի նոցա ժառանգութիւն, և կալուածք մի տացի նոցա 'ի մէջ որդւոցն Իէլի, զի ես եմ նոցա 'ի ժառանգութիւն ։ Եզեկ. 44. 28։ Վասն այսորիկ ուրեմն թողումք մեք զանդս մեր, զստացուածս մեր․ զի ԱԾ կամի գոլ անդն մեր, և ստացուածն մեր, Ո՜հ թէ որքան երջանիկ է վիճակն կրօնաւորին, որում այսպիսի անդ, և այսպիսի ժառանգութիւն առեալ․ Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաստատ եղև ինձ ։ Սաղմ. 15. 6։ Վիճակ բարի դիպաւ մեզ, և ընտիր ժառանգութիւն․ զի եղբարցն մերոց յաշխարհի անկաւ երկիր․ իսկ մեզ 'ի կրօնի աստ դիպաւ երկինքն ։ Տր բաժին ժառանգութեան իմոյ ։ ԱԾ սրտի իմոյ, և բաժին իմ ԱԾ յաւիտեան ։ Երա_

նե.

Նելի մերն Ֆրանչիսկոս ասէր, թէ աղքատութիւն է առաքինութիւն ինչ երկնային և Ածային· զի նուաճէ անդամնին, և ոտնակոխ լինին համայնք իրք երկրայինք։ և բառնին համայնք արգելմունք, ոպ՟ զի հոգին ազատ և թեթևացեալ յամենից իրաց առօրեայնոց, կարիցէ առաւել ազատաբար, և առանց արգելման պարապիլ միայն յիրս երկնայինս, և միաւորիլ ընդ Այ·

ԳԼՈՒԽ. Դ։

Ցուցանէ թէ յորում իրի կայանայցէ աղքատութիւն հոգւոյ։

Բան փրկչին մեր բարւոք բացայայտէ, թէ յորում իրի կայանայցէ կատարելութիւն այսորիկ աղքատութեան, զոր դաւանեմք մեք կրօնաւորքս այսոքիւք բանիւք։ Երանի՛ աղքատաց հոգւով։ Մատթ. 5. 3։ Ասէ, թէ պարտի գոլ աղքատութիւն հոգւով, կամաւոր, և ըղձալի։ Ո՛չ է բաւական աղքատաբար թողուլ զինչս, և զհարստութիւնս աշխարհի· այլ հարկ է նաև սրտիւ թողուլ զայնս. Այս է աղքատութիւն հոգւով, որ արձակէ ոչ միայն զմարմինն, այլև զոգին, և զսիրտն, և անջատէ զայն յամենից իրաց, ոպ՟ զի ազատ և թեթևացեալ յամենից առօրեայնոց՝ կարիցէ ազատաբար, և առանց արգելման իմիք հետևիլ Քի։ և տալ զինքն բոլորովին կատարելութեան, որ է վախճան, որ խնդրի, և վասն որոյ եղաք կրօնաւորք։ Սրբն Հերոնիմոս բարւոք նկատէ զայն, զոր պատասխանեաց Քս փրկիչն մեր սրբյն Պետրոսի. Ամէն ասեմ ձեզ, զի դուք՝ որ եկիք զկնի իմ։ Մատթ. 19. 28։ Սրբն Պետրոս ասացեալ էր ցՔս. Տէր մեք որք թողաք զամն ինչ, և եկաք զկնի քո, զի՞նչ արդեօք տացես մեզ։ Քս պատասխանեալ ասացին․ Ամէն ասեմ ձեզ, թէ դուք՝ որք եկիք զկնի իմ։ Ծանիր (ասէ ս̃րն Հերոնիմոս) զի ոչ ասէ, ամէն ասեմ ձեզ, զի դուք՝ որք թողիք զա̃մ ինչ․ այլ ասէ, դուք՝ որք եկիք զկնի իմ։ Քանզի զայս թողուլ զա̃մ ինչ, արարին նաև հեթանոսք․ որպ̃ արար Դիոգինէս, Անդիստէս, և այլք բազումք փիլիսոփայք, 'ի մէջ որոց մին էր կրաթէս թեբայեցին, զորմէ ճառէ ս̃րն Հերոնիմոս, և ասէ, թէ գոլով սա յոյժ հարուստ, և կամելով երթալ յԱթէնս առ'ի ուսանիլ զփիլիսոփայութի̃, և զառաքինութի̃, որպ̃ զի հարստութիւն ոչ արգելուցուր, վաճառեաց զա̃մ անդաստանս, և զստացուածս, զորս ունէր, և առնելով յոյնցանէ բազում ոսկիս, ընկէց զա̃մ 'ի ծովն՝ ասելով, *'Ի բաց կացէք յինէն չարք տարփմունք, կամիմ զձեզ ընկղմել, զի մի ես 'ի ձէնջ ընկղմիցիմ ||: Նաև զայլմէ փիլիսոփայէ Փուչիոնէս կոչեցելոյ, որ յոյժ պայծառացաւ աղքատութ̃բ, ճառի՝ թէ մեծն Աղէքսանդրոս առաքեաց նմա զբազում ոսկիս, իբ̃ զհարիւր տաղանդ, որ առնէ կո̃ սկուդ։ Եհարց փիլիսոփայն ցն̃ա, որք տարան զոսկին, թէ վասն ըր պատճառի առաքեաց Աղէքսանդրոս զայնքան ոսկիս։ Ասեն ցնա սպասաւորքն Աղէքսանդրու․ վասն այսորիկ միայն, զի դու ես առաքինի․ զի զքեզ համարի Աղէքսանդրոս բարեգոյն, և առաւել առաքինի քան զա̃մ աթենացիս։ Առ որս փիլիսոփայն ասաց․ *Թող տացէ ինձ ուրեմն, զի մնայցեմ առաքինի ||: Եւ ոչ կամեցաւ ընդունիլ զոսկին։ Արարմունքս այս, և պատասխանիս այս՝ այնքան մեծ և հռչակաւոր համարեցաւ 'ի մէջ փիլիսոփայիցն յունաց, մինչ զի երկար ժամանակաւ ոչ այլ ինչ ընձեռուէր 'ի մէջ փիլիսոփայից, եթէ ոչ խմնալ․ արդեօք Աղէքսանդրոս իցէր մեծագոյն՝ առաքելով զայնքան ոսկին , թէ փաւջինես մխիթարութիւն՝ ոչ ընդունելով զայնքան ոսկին : Եւ բազումք են օրինակք այսպիսիք : Եւ հակադարձաբար ասեն սրբն Օգոստինոս , և սրբն Հերոնիմոս , թէ ոչ են ոսկիքն և արծաթքն , որք վնասեն . և աւերեն զօրինակս բազմաց նահապետաց , և սրբոց հնոց կտակին , որք եղեն յոյժ հարուստք , որպէս Աբրահամ , Իսահակ , Յակոբ , և Յովսէփ նահապետն , որ էր երկրորդական զկնի փարաւոնի 'ի թագաւորութեն , և իշխէր ամ երկրին եգիպտոսի : Եւ Դանիէլ , և երեք ընկերքն իւր՝ որք ունէին զմեծիշխանութին 'ի բաբիլօն : և մուրթքէ , և Եսաթեր 'ի բոլոր թագաւորութե Արտաշէսի : Դաւիթ , Յոբ , և այլք բազումք , որք 'ի մէջ հարստութե , և շքոյ աշխարհիս ունէին զայն , որ էր նախապետական այսօրինակ աղքատութե հոգւոյ . զի ոչ ունէին զսիրտս յեցեալս հարստութե , նկատելով յոյժ բարուք զայն , զոր մարգարէն ասէ . Սաղմ. 61. 11. ՄԵԾՈՒԹԻՒՆ ԹԷ ԱՌԱՒԵԼ ԳԱՅՑԷ , ՄԻ ՅՕԺԱՐԵՍՋԻՔ ՍՐՏԻՒ ՁԵՐ :

Արդ՝ դարձցուք այժմ առ բանն մեր : երկուկոք են այնք , որք խնդրին վն աղքատութե հոգւոյ , զորոց առնեմք զդաւանանուն մեք կրօնաւորքս : Նախկինն է , զի վն իրաւանց թողուցումք զամ իւր աշխարհի , որպ թողումք իսկ ուխտիւ աղքատութե : Երկրորդն է , զի թողուցումք եւս զղձանականութին իւրաց : Եւ այս երկրորդս է առաւել սկզբնաւոր , որ պահանջի , որպ զի սիրտն մնայցէ անզբաղ և ազատ , առ'ի ամբողջաբար նուիրել ԱՅ և կատարելութե : Եւ այսպէս ընդ Թովմաս ասէ , թէ նախկինն , որ է թողուլ զինչս արտաքինս , կարգի առ երկրորդն . որպ զի այսպէս առաւել դիւրաբար թողուցումք զղձանակտութեն նց . զի այս է միջոց յոյժ գործունեայ վն նց : Եւ առաւել ընդ Թովմաս յաղագս ւայսորիկ զայն, զոր ասէ ս՟բն Օգոստինոս. Առաւել սաստկաբար սիրեն երկրայինքն առ ստացեալս, քան թէ ցանկացեալս ||: Դիւրագոյն է ոչ կամիլն զայն, զոր ոչ ունիմք, քան թէ թողուլ զայն, զոր ունիմք. քանզի զայն՝ զոր ոչ ունիմք, կարեմք քամահել. ոպ՟ զիր իմն օտարական. բայց զայն՝ զոր ունիմք, թուի թէ իցէ առաւել միաւորեցեալ, և գրեթէ ներմարմնացեալ ը՟ մեզ. և ասէ ս՟բն Թովմաս, թէ թողուլն զիրն ունեցեալ, է ոպ՟ հատանել զանդամ մի 'ի մարմնոյ, որ ցաւէ մեծապէս:

Ս՟բն Հերոնիմոս, ս՟բն Օգոստինոս, և ս՟բն Գրիգորիոս 'ի վերայ բանից ս՟բ Առաքելոյն Պետրոսի: Ահաւասիկ մեք թողաք զամ՟: Մատթ. 19. 27: Բարւոք ընձեռեն զայսմանէ: Ասէ ս՟բն Հերոնիմոս. * Մեծ վստահութիւն է այս. Պետրոս էր ձկնորս, և ոչ էր մեծատուն. ըզկերակուրն իւր ձեռամբ և արհեստիւ խնդրէր, սակայն խօսի համարձակաբար, և ասէ || Ահաւասիկ մեք թողաք զամ՟: Առ որ ս՟բն Գրիգորիոս պատասխանեալ ասէ. * Յայսմիկ իրի, եղբարք սիրելիք, պարտ է հայիլ մանաւանդ առ ըղձաձկտութիւնն, քան թէ առ ինչսն՝ որք թողանին: Զբազում ինչս թողու նա, որ զոչինչ պահէ. զբազում ինչս թողու նա, որ եթէ բազում, և եթէ սակաւ, զամ՟ ինչ թողու: իսկ մեք զոր ունիմք, սիրով ժառանգեմք, և զոր ոչ ունիմք, ցանկանալով խնդրեմք: Զբազում իրս թողին ուրեմն Պետրոս և Անդրեաս, զի երկոքեանն զցանկութիւն ունելոյ թողին ||: Զայս ասէ և ս՟բն Օգոստինոս: * Յորժամ ձկնորսքն կոչեցեալք 'ի Տ՟նէ, թողլով զնաւակս և զուռկանս հետևեցան Տ՟ն, զայս յիշելով ուրախացան: Իրաւի զամ՟ արհամարհէ նա, որ ոչ միայն արհամարհէ զայն՝ զորքան կարէր ունիլ, այլև զայն՝ զոր կարէր կամիլ ունիլ ||: Թէպէտ առաքեալքն զայլ ոչինչ ունէին, եթէ ոչ զնաւակս և զպատառոտուն ուռկանս, սակայն ըստ իրաւանց ասացին, թողաք զա՟մ. զի զա՟մ իրս աշխարհի թողու, և զա՟մ իրս արհամարհէ նա, որ ոչ միայն արհամարհէ զայն զոր ունի, այլև զայն, որում ցանկալ կարէր:

Այս է մեծ մխիթարութիւն վ՟ս ն՟ց, որք զասկան իւրս թողին յաշխարհի: Մեծն Օգոստինոս, որ վաճառեալ և թողեալ էր, զոր ունէր, մխիթարէր զինքն ասելով: *Ես քանզի ոչ եղէ մեծատուն, վ՟ս այսորիկ ոչ համարիմ սակաւ, զոր թողի: Քանզի և ոչ առաքեալքն, որք յառաջագոյն զայս արարին, էին մեծատունք: Զաշխարհս ա՟մ թողու նա, որ զոր ունի թողու, և զցանկութիւն ունելոյ թողու‖: Ուստի դու թողեր զա՟մ վ՟ս Ա՟Յ. եթէ թողեր զիւրն և զցանկութիւն ոչ միայն այնց իրաց, զորս ունէիր, և կարէիր ունիլ, այլև զայն ա՟մ, որում կարէիր ցանկալ: Վ՟ս որոյ կարես բարւոք ուրախանալ, և ասել ընդ առաքելոց, *Ահա մեք թողաք զա՟մ*: Եր՟ն նա, որ ունէր զբազում ստացուածս յաշխարհի, և եթող զայնս, մի համարեսցի զինքն մեծ, և մի կարծեսցէ թէ թողեալ իցէ զբազում իրս. քանզի եթէ ոչ թողու զցանկութ՟ի ամենից, զորս կարէր ունիլ, և ցանկալ ն՟ց, սակաւ թողու այսպէս: Եր՟ն զաւելի իւր թողունա, որ թողու զցանկութ՟ի ամենից իրաց աշխարհիս:

Յայսմիկ ուրեմն կայանայ սկզբնական մասն աղքատութ՟ե հոգւոյ. փ 'ի յանձնառումն յաշխարհէ. 'ի բաց բարձման ըղձից. 'ի յարհամարհման ամենից իրաց աշխարհիս. և 'ի յունիլ զայն 'ի ներքոյ ոտից իբրև զաղբս, ըստ ասացելոյ առաքելոյն. Փիլիպ. 3. 8. Զա՟մ համարիմ իբրև զաղբիւնս. զի զՔ՟ս շահեցայց: Այսպիսիքս են աղքատք հոգւով, որք կոչին երանելիք. և ըստ իրաւանց են երանելիք ոչ միայն վասն այսորիկ՝ զի նոցա է արքայութիւնն երկնից, որպէս ասացաք, այլեւ զի խոկոյն սկսանին զգալ ըզյագումն իմն յոյժ մեծագոյն, որ է երջանկութիւն եւ երանութիւն մի 'ի վերայ երկրի. քանզի որպէս ասէ Պօէցիոս, գոլն երանեցեալ ոչ կայանայ 'ի յունելն զբազում իրս, այլ 'ի առնուլն զցանկութիւնն իւր: Եւ սուրբն Օգոստինոս ասէ. * Երանելի է, որ ունի՝ զոր կամի, եւ ոչ կամի զչար ||: Արդ զայս երանութիւն առաւել ունի աղքատն հոգւով, քան թէ հարուստքն աշխարհի, եւ կարողագոյնքն նորա. քանզի աղքատքն հոգւով ունին զայն ամենայն, որոց ցանկան, եւ ոչ ցանկան իրի իմիք՝ բաց յայնցանէ, զորս ունին, եւ նոքօք յագեալ շատանան. եւ ոչ այլում իրի ցանկան. եւ մանաւանդ թուի նոցա, թէ նաեւ հարկաւորն իցէ աւելորդ իւրեանց: Բայց հարուստքն աշխարհի ոչ յագին, եւ ոչ շատանան: Ագահն ոչ յագեսցի արծաթով: Ասէ իմաստունն Ժողով. 5. 9: * Ագահն ոչ երբեք ասէ բաւական է ||: Զի իրք այսոքիկ ոչ կարեն բաւականանալ առ 'ի յագեցուցանել զցանկութիւն նորա. այլ մանաւանդ լուցանեն, եւ յաւելուն զցանկութիւնն: Զի որպէս ջրգողեալն որքան առաւել ըմպէ ըզջուր, այնքան առաւել ծարաւի. այսպէս եւ առնէ ագահն, * Յաւելլանայ սէրն արծաթոյ, որքան աճի դրամն ||: Թէպէտ զինչս բազումս ունիցի, միշտ ցանկայ այնմիկ, որ պակաս է իւրեան, միշտ հառաչէ առ 'ի ունիլ աւելի քան զայն՝ զոր ունի, զի ոչ շատանայ այնու՝ զոր ունի, այլ հոգայ զայն, զոր կարէր ունիլ: Եւ առաւել է վիշտն վասն ոչ ունելոյ զայն, զոր ոչ ունի, քան թէ հաճութիւն վասն այնորիկ՝ զոր ունի. եւ այսպէս միշտ կայ 'ի տառապանս եւ 'ի տանջանս՝ ցանկանալով, ըղձալով, եւ հոգալով ունիլ զաւելի:

Պատմի զԱղէքսանդրոսէ մեծէ, թէ լուեալ սա 'ի փիլիսոփայէ միոյ Անաքսարքոս կոչեցելոյ, թէ անթիւ աշխարհք գտանէին, սկսաւ Աղեքսանդրոս լալ, և գոլով հարցեալ յիւրայնոց, թէ վ̃ն էր պատճառի լաս, պատասխանեալ ասաց ցնն̃ ։ Ո՞չ թուի ձեզ, թէ ունիմ զպատճառ լալոյ, քանզի գոլով այնքան աշխարհ, զորքան ասէ փիլիսոփայս այս, և ես չև ևս եմ եղեալ տէր մի միայն աշխարհի ։ Զմեծագոյն միշտ կրէր վասն ոչ ունելոյ զայն՝ որում ցանկայր, քան զհաճոյին վասն այնորիկ, զոր ունէր ։ Իսկ հակադարձաբար ոմն ՚ի փիլիսոփայից կրաթէս կոչեցեալ աղքատ, և միով հնագոյն մերարկուաւ շատացեալ, կայր այնքան հաճեալ, և ուրախ, մինչ զի թուէր ինքեան, թէ միշտ զատիկ իցէր վ̃ն իւր ։ Առաւել յագեալ և շատացեալ, և ուրախ կայր առ աղքատութե̃ իւրով, քան թէ աղեքսանդրոս բոլոր աշխարհաւ ։ Պատմէ ս̃րն Բարսեղ, թէ աղեքսանդրոս տեսեալ զԴիոգինէս փիլիսոփայն ՚ի բազում աղքատութե̃, ասէ ցնա, ո՛վ Դիոգինէ, թուի ինձ, թէ ունիցիս զկարիս բազմաց իրաց, խնդրեա՛ յինէն, զի կամիմ տալ քեզ ։ Ասէ փիլիսոփայն ցնա․ ասա՛ ինձ ո՛ կայսր, ո՛ արդեօք ունի առաւել զկարիս, ես որ շատանամ մերարկուաւ իմով, և զայլ ոչինչ ունիլ ցանկամ, թէ դու, որ գոլով թագաւոր մակեդոնիոյ, դիմադրես զքեզ բազմաց վտանգաց առ ՚ի յաճելուլ զթագաւորութի̃ն քո, և ագահանաց քոց ո՛չ է բաւական աշխարհս բոլոր ։ Ուստի ես եմ հարստագոյն քան զքեզ ։ Իսկ ասէ ս̃րն Բարսեղ, թէ յոյժ բարւոք ասաց նոյն փիլիսոփայն ։ Քանզի ասա՛ ինձ, աղաչեմ, ո՞ է առաւել հարուստ, նա՛ որում իրքն յաճելանան, թէ նա՛ որում պակասին ։ Յայտ է, թէ առաւել հարուստ է նա՛ որում յաճելանան ։ Արդ՝ քանզի փիլիսոփայն այն զոր ունէր, այնու շատանայր, և ո՛չ այլում իմիք ցանկայր, թուէր՝

թէ յաւելանայր վասն նորա : Իսկ աղէքսանդրոսի պակասէր բազում վերահայեցմամբ այնորիկ, որում ցանկայր, և ոչ կարէր ունիլ : Ուրեմն առաւել հարուստ էր փիլիսոփայն այն քան զաղէքսանդրոս, և առաւել պակասէր աղէքսանդրոսի, քան թէ փիլիսոփային այնմիկ :

Ուստի ճշմարիտ հարստութիւն, հաճութիւն, և երջանկութիւն աշխարհիս ոչ կայանայ 'ի յունիլն զբազում իրս, այլ 'ի լնուլն զցանկութիւն, և 'ի յագեցուցանել զկամքն : Նաև աղքատութիւն ոչ կայանայ 'ի պակասութեան իրաց, այլ 'ի ցանկութեան, և 'ի քաղցու, զոր ունի մարդն առ այնս, և 'ի յանյագ ծարաւման ունելոյ զայնս : Ուստի Պղատոն ասէ, * Եթէ 'ի բաց բառնիցի այս, որ է բարի, (իբր, ո՞չ թէ հարստութիւն որքան բարի է, կամ ունիլն զազնիւ պալատս որքան բարի է, և այլք նմանք․) եղիցի ես հարուստ ‖ : Սուրբ ոսկեբերանն առբերէ յաղագս այսորիկ զնմանութիւն մի գեղեցկագոյն, որով բարւոք պարզաբանէ զայս ասելով : Եթէ ոք ունիցէր զայնքան մեծ ծարաւ, մինչ զի թէպէտ ունիցէր զբազում ամանս ջրալից, և ըմպիցէր զմին զկնի միւսոյն, սակայն ոչ անցանիցէր ծարաւն յաղագս մեծի եռացման փորոտեացն, այլ մնայցէր միշտ ծարաւի, ոչ ասիցէաք՝ թէ մարդս այս լիցէր երջանիկ յաղագս ունելոյ զառատութիւն ջրոց : Այլ համարիմք երջանիկ զայն մարդն, որ ոչ ունի զծարաւ, և ոչ զգայ զցանկութիւն ըմպելոյ․ քանզի նա տագնապի որպէս ջրգողեալ, որ կայ ջեռուցեալ տապով մեծագունի ջերման․ իսկ սա է որպէս առողջ, և բարի կենօք : Այս է ուրեմն տարբերութիւն 'ի մէջ նոցա, որք ցանկան ունիլ զհարստութիւն և զինչս, և նոցա, որք են ճշմարիտ աղքատք հոգւով, որք շատանան այնու՝ զոր ունին, և ոչ ցանկան իրի իմիք աշխարհիս․ զի սոքա են

առողջք , և Նոքա հիւանդք . սոքա են յագք , և Նոքա սովեալք . սոքա են հարուստք , և
Նոքա աղքատք :

Այս է այն , զոր ասէ Հոգին Սուրբ Սողոմոնիւ . Առակ. 13. 7. Են՝ որք մեծացուցանեն զանձինս , և զոչինչ ունին . և են՝ որք խոնարհեցուցանեն զանձինս , և լիք են մեծութեամբ բազմաւ : Այս է Թշուառութիւն , ապերջանկութիւն , և չքաւորութիւն , զորս կրեն ընդ ինքեանս հարստութիւնքն , և բարիքն աշխարհիս , որք ոչ կարեն յագեցուցանել , և ոչ շատացուցանել : Եւ այս է երջանկութիւնն և երանութիւնն , զոր ունի ընդ ինքեան աղքատութիւնն հոգւոյ , զի առնէ երանեցեալս զնոսա , որք ունին զնա . քանզի սկսանին իսկոյն զմայլիլ յագեցմամբ մեծաւ :

Ասի զՍոկրատէս փիլիսոփայէ , թէ սովոր էր ասել . Աստուած ոչ ունի զկարիս իրի իմիք , և այսպէս նա է առաւել նման Աստուծոյ , որ ունելով զկարիս բազմաց իրաց , շատանայ սակաւուք : Եւ անցանելով սա ընդ հրապարակն , և տեսանելով անդ զբազմութիւն իրաց՝ որք վաճառէին անդ , ասէր ինքն յինքեան : * Ո՜հ թէ որքան բազումք են իրքն , որոց ոչ կարօտիմ ես ‖ : Տգէտ ռամիկն , և ագահ մարդիկք յորժամ տեսանեն զբազմութիւն իրաց , հառաչելով ասեն . * Ո՛հ թէ որքան իրք գոն աստ , յորոց զուրկ եմ ես ‖ :

ԳԼՈՒԽ. Ե։

Յաղագս կրօնաւորաց, որք Թողեալք յաշխարհի զսէրս մեծագոյնս, ընդ այն ունին 'ի կրօնի զսէրս փոքրագոյնս։

Նաև յայսմանէ ասացելոցս վն̃ օգտի մերոյ նախ, զի մեք, որք Թողումք զաշխարհ, զինչս, և զհարստութիւնս, եթէ ոչ Թողուցումք և զըղձաձկութիւն առ այնս, ոչ լինիմք աղքատք հոգւով։ Քանզի աղքատութիւն այս կայանայ ոչ միայն 'ի բաժանիլն մարմնով արտաքուստ յիրաց Ծի, այլ և 'ի յանջատիլն 'ի նոցանէ կամաւ և ըղձիւ։ և այս է գլխաւոր իրն հոգևորի աղքատութեն։ Արդ եթէ տակաւին մնայ 'ի քեզ ըղձաձկութիւն դէպ 'ի յայնս, դու ոչ Թողեր զայնս, այլ բերեր զայնս ընդ քեզ 'ի կրօնն. զի ունիս 'ի սրտի քում, և այսպէս ոչ ես ճշմարիտ, այլ կեղծաւորեալ աղքատ. և հետևապէս ոչ ես ճշմարիտ, այլ կեղծաւորեալ կրօնաւոր, զի միայն մարմնով կաս 'ի կրօնի, իսկ հոգւով և սրտիւ կաս յաշխարհի, և 'ի պատրուակի ունիս զանուն կրօնաւորի։

Երկրորդաբար հետևի, զի եթէ կրօնաւորն, որ եթող, և արհամարհեաց զինչս և զհարստութիւնս Ծի, և տայ 'ի կրօնի ըղձաձկոտի առ ոմանս իրս, առ սենեակ, առ զգեստս, առ գրեանս, առ պատկերս, և առ այլս նմանս նց̃, ոչ է ճշմարիտ, և ոչ կատարեալ աղքատ հոգւով։ Եւ յայտնի է պատճառ սորա. քանզի աղքատութիւն հոգւոյ կայանայ սկզբնաւորաբար 'ի Թողուլն զիղձս իրացն աշխարհի, և 'ի ունիլ զսիրտն անջատեալ 'ի նոցանէ։ Եւ այսպիսիս ոչ եթող զըղձաձկութիւն, այլ զայն, զոր ունէր յաշխարհի, անդրաբերեաց, և փոխարկեաց ընդ իրաց փոքրագունից, զի սիրտ իւր ըղձաձկտեցեալ՝ և յեցեալ է առ իրս դուզնաքեայս, որպէս էր յաշխարհի առ ինչս, և առ հարստութիւնս ։ Կասիանոս յոյժ բարւոք ընձեռէ զայսմանէ, և ասէ ։ Ո՛չ գիտեմ, թէ ո՛պ̄ կարասցես պարզաբանել զեր մի ծիծաղելի, որ պատահի ոմանց կրօնաւորաց, որք զկնի թողլոյ զինչս՝ և զհարստութիւնս, զորս ունէին յաշխարհի, տեսանեմք զնս̄, զի ՚ի կրօնի յոյժ հոգան զիրս փոքունս և զմանունս ․ ջանան, և խնդրեն զոմանս օգուտս իւրեանց աւելորդս, և անպատեհս ։ * Զի այսոցիկ հոգն քան զառաջնոց բնաւից գոյից զկիրս ՚ի վեր անցանէ ‖ ։ Մինչ զի երբեմն մեծագոյն է խղձն և փոյթն, զոր ունին յայսոսիկ իրս, քան զայն, զոր ունէին յաշխարհի առ բնաւս ինչս իւրեանց ։ Որոց (ասէ Կասիանոս) սակաւ օգտեսցէ թողուլն զբազում ինչս, և զմեծամեծ հարստութիւնս ․ վ̄ն զի ոչ թողին զըղձաձկտութիւն առ նս̄, այլ փոխեցին, և բերին զայն առ այսոսիկ իրս փոքունս և նուաստս ։ * Քանզի զախտն արծաթսիրութե̄ և ագահութե̄, զոր առ տեսակս պատառականս ՚ի գործ արկանել ոչ կարեն, ՚ի վերայ նուաստագունից նիւթոց սեւեռելով յայտ առնեն, թէ չեն ՚ի բաց հատեալք, այլ փոխարկեալք զառաջին կիրսն ։ Նոքին իսկ, որով և յառաջքան զայն՝ ըմբռնեալք կան առփանօքն ‖ ։ Ո̄պ թէ նոյն չարն ՚ի մէջ ոսկւոյ, և ՚ի մէջ տարբերութե̄ հանդից և իրաց իցէ, և ոչ թէ ՚ի յըղձաձկտութե̄ և ՚ի կիրս սրտին, և որպէս թէ առ՚ի ցանկալ փոքունց իցեն թողեալք զիրս մեծագոյնս ․ իրաւի ոչ թողաք զիրս մեծագոյնս առ՚ի գտնել զխիղձս մեր ՚ի փոքունս, ասէ Կասիանոս ։ * Այլ վ̄ն այսորիկ ՚ի բաց ընկեցաք զպատառական նիւթս, ո̄պ զի ունայնիցէաք դիւրաւ խոտել զչնչինս ‖ ։ Քանզի եթէ խիղձ և տռփումն կապեցեալ ունին զսիրտս մեր, այնքան

քան զհասեն մեզ խղճքն դուզնաքեայ իրաց, որքան մեծաց՝ և փոքերց: Քանզի այնքան յեցեալք և ըղձունեալք եմք աստ 'ի կրօնի առ իրս փոքունս, և ունիմք նոքօք զխիղճս մեր զբաղեալս՝ և խանգարեցեալս, որքան կարէին զբաղեալք և խանգարեցեալք միով մեծագունիւք: Ո՟պ եթէ դիմադրիցի աչաց ուրուք տախտակ մի ոսկեղէն, կամ երկաթեղէն առ'ի արգելուլ զտեսութիւն արեգական, մի և նոյն է. վ՟ն զի այնպէս արգելու ոսկեղէնն, ո՟պ արգելու և երկաթեղէնն: Զայս մտածէր աբբայն Մարկոս, և խօսելով ինքն ընդ հոգւոյ իւրում ասէր այսպէս, ՚ Թերևս ասես ո՛վ հոգի իմ, մեք ոչ զոսկիս ժողովեմք, և ոչ զագարակս և զստացուածս ունիմք: Եւ ես պատասխանեմ քեզ, թէ ոչ ոսկին և ոչ ագարակքն վնասակարք են ըստ ինքեանց, այլ ապակարգ խիղճն առ նոսա է վնասակար: Զի բազում մեծատունք ոչ ունելով զսէր հարստութ՟ե, հաճոյք եղեն Ա՟յ. ո՟պ ս՟քն Աբրահամ. Իսահակ, Յակոբ, և Դաւիթ: բայց մեք առանց հարստութ՟ե զմոլութ՟ի ագահութ՟ե 'ի նիւթս դուզնաքեայս, և յիրս անարգս անուցանեմք: Ո՛չ ժողովեմք մեք զոսկի, և զարծաթ. բայց զիրս անօտիս կուտեմք: Զիշխանութ՟ի և զարժանապատուութ՟ի ոչ ընկալնումք. բայց յա՟մ կողմանէ ըզփառս և զգովութիւս խնդրեմք ‖: Ո՛չ յանձն առնումք զեպիսկոպոսութ՟ի, ոչ խնդրեմք զնախագահութ՟ի. բայց ցանկամք գոյզն ինչ պատուոյ. և ջանամք առ այն ա՟մ կարելի ճանապարհաւ. և հաճիմք ընդ գոլն գովեցեալ, և մեծ վարկեցեալ: Ուստի եմք առաւել թշուառականք, և ողորմելիք, և արժանիք նախատանաց քան զաշխարհականս, (ասեն ս՟բքս այսոքիկ,) զի առաւել կորացուցանեմք մեք զմեզ, քան թէ աշխարհականքն զինքեանս: Զի մինչ աշխարհականքն սիրեն զիր

իմն,

իմ՟ն , սիրեն զայն , զի մեծ համարին զայն . և վարկեն մեծութ՟ի ինքեանց : Բայց մեք որք թողաք զայսպիսի մեծութ՟իս , և սիրեմք ըզ փոքրկունս և զանոտիս , եղանիմք հանդէտք տղայոց : Պարտիմք մեք զարգանալ . և եղանիլ արք կատարեալք օրըստօրէ , որպէս ասէ առաքեալն . իսկ մեք զհակառակն առնեմք : Զի 'ի մտանելն մեր 'ի կրօնն էաք արք կատարեալք և քաջասիրտք թողլով զա՟մ իւր աշխարհի . և յաղթելով քաջապէս ամենից դժուարութեանց . բայց այժմ աստ 'ի կրօնի եղաք տղայք դնելով զսիրտս մեր 'ի յիրս անոտիս և չնչինս և տղայականս : Զի ոպ՟ տղայն սկսանի լալ՝ յորժամ բարձցի միրգն 'ի ձեռանէ . այսպ՟ և սոքա իսկոյն սկսանին աղմկիլ . յորժամ 'ի բացբառնի 'ի նոցանէ իր մի փոքրիկ՝ առ որ իղձ նց՟ ձկտի . և կամ ոչ շնորհի նց՟ , զոր ինչ հայցեն : Այս է , զոր ասէ Կասիանոս , թէ 'ի միոյ կողմանէ է իր ծաղու արժանի . և 'ի միւսոյ կողմանէ արժանի ցաւակցութ՟ե տեսանելով զմարդ ոք , որ գոլով յարգելի և կրօնաւոր , որ և համարձակեցաւ արհամարհել զաշխարհս , և զա՟մ իւր նորա , յետոյ այնպ՟ս ստորանկի իւրաց ցածագունից և դուզնաքէից , մինչ զի սկսի աղմկիլ և վրդովիլ հանգոյն փոքրկան մանկան , այնու զի ոչ տուաւ նմա խնձոր մի , կամ 'ի բաց բարձաւ 'ի նմանէ իր մի ունայն :

Փառաւոր Տ՟րն Բեռնարդոս գրելով առ ոմանս կրօնաւորս ասէ , ՚ Մեք միայնակեցաքս ողորմելիք եմք քան զա՟մ մարդիկ , եթէ վա՟ այսպիսեաց դուզնաքէից իրաց , զայսքանս կրեմք զվնասս : Զի զինչ անմտութ՟ի է . մանաւանդ թէ խելագարութ՟ի . զի որք զմեծագոյնս թողաք , զփոքրագոյնս պահեմք մեծաւ մերով վնասակարութ՟ե ‖ : Կամիս տեսանել զվնասն և զկորուստն , ասէ Տ՟րն Բեռնարդոս . Եթէ արհամարհեցաք զաշխարհս ա՟մ . եթէ հրաժարեսցուք 'ի յըղձականութենէ ազգականաց , եթէ գերեցուցաք մեք զմեզ 'ի բանտ վանից : եթէ ոչ եկաք այսր առ'ի առնել ըզկամս մեր , այլ եդաք զմարդիկ 'ի վ՟ր գլխոց մերոց · զի՞նչ ոչ պարտիմք առնել , զի մի՛ անմտութ՟բ մերով կորուսանիցեմք զարդիւնս սոցա ||:

ԳԼՈՒԽ · Զ:

Յաղագս երից աստիճանացն Աղքատութեան:

Երեք աստիճանք աղքատութե՟ գտնին 'ի ս՟րց , և 'ի Վարդապետաց կենացն հոգևորաց : Առաջին աստիճանն է նոցա , որք արտաքուստ թողուն զիրս աշխարհի , բայց ոչ թողուն 'ի ներքուստ կամաւ , այլ մանաւանդ ըղձիւ մնացին ընդ նմ՟ : Եւ սոքա , ոպ՟ ասացաք , ոչ են ճշմարիտ , այլ կեղծաւորեալ աղքատք , և սոսաբար ունին զանուն կրօնաւորի : Երկրորդ աստիճան աղքատութե՟ է նց՟ , որք թողուն զիրս աշխարհի ըղձիւ , և կամաւ հանդերձ , նաև աստ 'ի կրօնի թողուն զիղձն իրաց աւելորդաց , բայց ունին զմեծ ըղձաձկութի՟ առ իրս հարկաւորս : Զի են կարի հոգունակք , զի մի՛ պակասիցի ինքեանց յայնցանէ , զորոց ունին զպիտոյս : Կամին կալ ամ՟ փարթամութ՟բ յամ՟ իրս , 'ի յուտելն , 'ի զգենուլն , 'ի սենեկի , և յայլ ամ՟ մնացեալս , և յորժամ պակասի նց՟ իր ինչ յայնցանէ , սկսին տրտնջել , և տժգոհել · և այս ոչ է կատարեալ աղքատութի՟ : Զայսցանէ խօսելով ս՟բն Բեռնարդոս՝ ասէ ·՛ Արժանիք են մեծի ցաւակցութե՟ նոքա , որք պարծին անուամբ աղքատութե՟ , և կամին լինել այնպիսի աղքատք , որոց ոչինչ պակասիցի , այլ ունել զամ՟ ինչ լիակատար : Այս ոչ է աղքատութի՟ , այլ հարստութի՟ , որ է այնքան մեծ ,

մեծ, մինչ զի և մեծատունք աշխարհիս ոչ ունին. զի սոքա կրեն երբեմն զպակասութիւն իրաց. զի ոչ ունին զայն ամենայն, զոր կամին. ոմանք ևս 'ի նոցանէ համբերութեամբ տանին պակասութեանց պիտոյից վասն ոչ կամելոյն ծախել զդրամ. իսկ մեք ոչ կամիմք ունել զաղքատութիւն վասն սիրոյ առաքինութեան։ Եւ ոմանք աշխարհականք թէպէտ ունին, և ծախեն զդրամ, սակայն ծառայքն ոչ միշտ առնեն զիրս ըստ հաճոյից տեարցն։ Իսկ դու որ եսդ կրօնաւոր, և դաւանիս զաղքատութիւն, և ուխտեցեր զուխտ նորա, ոչ կամիս զգալ զկարիս, և ոչ կրել զչքաւորութիւն. այս ոչ է գոլ բարեկամ աղքատութեան, այլ բարեկամ քոյոյ փարթամութեան, և ունելոյ զամենայն ինչ լիակատար։ Մինչ կայաք յաշխարհի, պակասիցէին թերևս մեզ բազումք իրք. ուստի ոչ է իրաւունք, և ոչ պատեհաւոր իմն, թէ աստ 'ի կրօնի, յոր եկաք առ 'ի մահացուցանել զմեզ՝ և ապաշխարել, կամիցիմք գտանել զմեզ. և կալ առաւել հանգիստ, քան թէ կարէաք գոլ յաշխարհի.

Որդ՝ եթէ կամիմք ժամանել առ կատարելութիւն այսորիկ աղքատութեան հոգւոյ, և լինել զանուն կրօնաւորի, որպէս զի կեանքն մեր համապատասխանիցէ անուան զոր ունիմք, հարկ է յառաջանալ առ երրորդ աստիճանն աղքատութեան, որ է * Աղքատութիւն հարկաւորաց իրաց։ Զի ճշմարիտ աղքատն նաև զհարկաւորսն անդոսնէ ‖։ Հարկ է թողուլ զըղձաձկտութիւն ոչ միայն իրաց աւելորդաց, և առանց որոց կարեմք կալ. այլև հարկաւորաց, որպէս զի և յայսմիկ լիցեմք աղքատք, և ցուցանիցեմք նաև 'ի նմին զկիղճ աղքատութեան, և զցանկութիւն առ այն։ Եւ յորժամ ոչ կարեմք թողուլ զայնս բոլորովին, գոնեա կալցուք զայն, որ է հարկաւոր յոյժ անձկաբար, և չափաւորապէս, և ոչ լայնացուցանիցեմք ըզհարկաւորութիւն զայս․ այլ հարկ է անձկացուցանել, և վերածել զայն 'ի սակաւութի․ որքան կարելի է․ և ուրախանալ՝ յորժամ կրեմք զիր իմն 'ի նոսին վ̃ս սիրոյ աղքատութե̃։ Սա է ոմն ոք, ոչ է գովելի գոլն մարդոյ աղքատ՝ եթէ ոչ յայնժամ, յորժամ գոլով յոյժ աղքատ, սիրէ զնոյն աղքատութիւն, զոր ունի, և ուրախանայ ընդ նա, և տանի ուրախութ̃բ զպակասութիւն, որ 'ի նմին պատահի վ̃ս սիրոյն Ք̃սի։ Որ ոք ուրեմն կամի գիտել, եթէ է աղքատ հոգւով, և երթայ զարգանալով 'ի նմին, հայեսցի, եթէ ուրախանայ ընդ գործս աղքատութե̃, և ը̃ բարեկամս ն̃ր, և ը̃ ընկերս ն̃ր, որք են քաղցն, ծարաւն, ցուրտն, վաստակումն, և մերկութիւն։ Տես եթէ ուրախանաս դու զգեստուք հնացունիւք, և կօշկովք կարկատեցելովք։ Տես, եթէ ուրախանաս, յորժամ պակասի քեզ իր իմն 'ի սեղանի, յորժամ մոռանան զքեզ, յորժամ ոչ են եղեալք իրքն ըստ հաճոյից քոց։ Տես եթէ ուրախանաս, յորժամ սենեակն քո ոչ է ըստ ըղձին քում։ Քանզի եթէ ոչ ուրախանաս այսոքիւք իրօք, և ոչ սիրես զայսոսիկ, այլ ճանաճանդ փախչիս յայսցանէ, ոչ ես ժամանեալ առ կատարելութիւն աղքատութե̃ հոգւոյ, զոր բացայայտեցաք մեք յետոյ։

ԳԼՈՒԽ. Է:

Յաղագս ոմանց միջոցաց ժամանելոյ առ աղքատութիւն հոգւոյ, և պահպանելոյ 'ի նմին :

Նմանապէս օգնէ մեզ վասն ժամանելոյ առ աղքատութիւն հոգւոյ. և պահպանելոյ 'ի նմին : Նախ այն, զոր մեզ ասէ Հայրն մեր 'ի կացուցման : Ոչ ոք ունիցի զիր ինչ ոպ՟ զյատուկ և զսեփական իւր իւր : Եւ բացայայտէ զայս նմանակերպութբ՟ միով առակաւ : Կրօնաւորն յամ՟ իւրս, զորս 'ի կիրարկանէ, պարտի համարել զինքն ոպ՟ զարձան մի զգեստաւորեցեալ, և զարդարեցեալ, որ ոչ ընդդիմանայ՝ յորժամ 'ի բացբառնան 'ի նմանէ զզգեստսն : Այսպիսաբար պարտիս ունիլ դու զզգեստս, զգրեանսն, զժամագիրքն, և զայլ ամ՟ իւրս, զորս ունիս, զորոց եթէ ասիցի քեզ, թո՛ղ զայս, կամ փոխեա՛ զայն, ոչ վրդովիցիս. ոպ՟ ոչ զգայ արձանն, յորժամ մերկեն զնա 'ի զգեստուց իւրոց : Որ եթէ այսուկերպիւ համարիցիս զիրս, ոչ համարիցիս զայնս ոպ՟ զյատուկ իւրս քո : Բայց յորժամ ասիցի քեզ, Ել յայս ինչ սենեկէ, թո՛ղ զայս ինչ իր. փոխեա՛ զայս ինչ իր ընդ այն ինչ իրի, զգաս զբաղում ընդդիմութ՟ն և զդժուարութ՟ն, և ոչ ես ոպ՟ զարձան, նշան է՝ թէ ունէիր զայն իրն ոպ՟ զքո՟, ուստի և, զգաս զծանրութ՟ն վն՟ գոլոյն 'ի բացբարձեցեալ : Վասն այսորիկ կամի Հայրն մեր, զի մեծաւորքն փորձիցեն, և քննիցեն երբեմն զհպատակս իւրեանց յառաքինութ՟ե աղքատութ՟ե, և հնազանդութ՟ե, ոպ՟ Ած՟ փորձեաց զԱբրահամ, ոպ՟ զի ճանաչիցի առաքինութիւնն, որ է 'ի յիւրաքանչիւրում անձին. և տացի նոցա առիթ առաւելաբար զարգանալոյ 'ի նմին : Եւ յայս և կերպ իմն փորձութեան յոյժ բարի, և միջոց մի կարի յարմար վս այնորիկ, զորմէ խօսիմք, թ՟ բառնալ, և փոխել զայն, զոր ունիմք: Սբն Օգոստինոս խօսելով զըղձաձկութէ այսոցիկ իրաց երկրայնոց ասէ. * Բազում անգամ մինչ ներկայք են իրքն, թուի մեզ՝ թէ ոչ սիրեմք զայնս. բայց մինչ սկսին հեռանալ, գտանեմք զմեզ, որպիսիք եմք ‖: Եթէ մինչ թողուս զիրն, կամ զայն բառնան 'ի քէն, զգաս զընդդիմութի, զդժուարութե, և գուցէ տրտմիցես, նշան է, թէ ըղձակաթէիր առ այն. վս զի յըղձակաթութեէ յառաջանայ այս ցաւս և զգացողութիւս: * Քանզի զայն միայն առանց մերոյ սիրոյ ունիմք, որ առանց ցաւոյ հեռանայ 'ի մէնջ ‖: Ասէ սբն Օգոստինոս: * Եւ ոչ թողանի առանց ցաւոյ, որ երկրութբ պահպանի ‖: Յորժամ թողումք զիրն առանց նեղսրտութե, և տրտմութե, նշան է, թէ ոչ կայաք միացեալք և ըղձաձկեալք առ այն, այլ յորժամ թողումք զայն հանդերձ տրտմութբ և ցաւով. նշան է, թէ էաք ըղձաձկեալք: Վս այսորիկ ուրեմն բարի է, զի մեծաւորքն կրթիցեն զմեզ ստէպ յայսոսիկ իրս, տալով փոխել ըզսենեակս, յորս կամք թերևս անդորրութբ, և ունիմք զիղձս առ այնս, և տալ փոխել ըզգիրս, և զզգեստս, ոպ զի մի լիցուք տիրապետօղք նոցա, այլ թէ ոչ՝ կարէ սակաւ առ սակաւ մտանել 'ի մեզ յատկասիրութի, և քակտել հաստատագոյն պարտական աղքատութե: Եւ այսպէս ընթեռնումք, զի զկրթութիս զայս յաճախ 'ի գործածէին հարքն այնք հնագոյնք. ոպ զի կրօնաւորքն մի ըղձաձկացէին առ իրս, և մի պահիցէին զայնս ոպ զիւրս սեփականս: Այսպէս առնէր սբն Տորոթէոս ը աշակերտին իւրում սբյն Տոսիթէոսի: Տայր սբն Տորոթէոս Տոսիթէոսի զգեստ մի, և հրամայէր կարել զայն, և

առէր

ասէր՝ այս վ՟ քոյ է, և բարւոք կարգադրել պատրաստել զայս ․ և մինչ Տոսիթէոս զայն ամ՟ առնէր վ՟ իւր, առեալ Տորոթէոսի զզգեստն զայն, տայր այլում կրօնաւորի ։ Այս բան գրոց ս՟բյն Տորոթէոսի յոյժ համակերպ է այսոցիկ՝ զորոց խօսիմք, և խօսի զբազմաց պատահմանց փոքրագունից և մանրից ։ Պատմի անդ՝ թէ դոլով ս՟բն Տոսիթէոս հիւանդացաւ, հաճեցաւ սա ընդ դանակ մի, և զայն խնդրեաց ՚ի ս՟բյն Տորոթէոսէ ոչ վասն իւր, այլ առ՚ի գործածել ՚ի հիւանդանոցի ։ Առ որ ս՟բն Տորոթէոս ասաց ․ * Հաճիս ընդ դանակս այս ո՛վ Տոսիթէոս, ոչ կամիս լինել ծառայ, դանակիս այսմիկ, թէ Ք՟ի ։ Զիարդ ոչ ամաչես, զի ցանկաս, թէ դանակս այս տիրեսցէ քեզ ‖ ։ Ո՜հ թէ քանիցս անգամ կարեմք առնել մեք զայս մեզ ․ որք սակաւ, և փոքր ինչ համարիմք զայս ։ Բայց ոչ է սակաւ, և փոքր, այլ յոյժ հարկաւոր ։ Ս՟բն Տորոթէոս հրամայեաց միանգամ ոչ մերձենալ ՚ի դանակն յայն, և Տոսիթէոս ոչ մերձեցաւ առ այն երբէք ։ Զնմանէ սորա ասէ ս՟բն Հերոնիմոս զարմանալով, թէ ն՟ք որք ոչ ծանեան զարժանաւորութ՟ի առաքինութ՟ե, և ոչ են ժամանեալք առ կատարելութ՟ի, և մաքրութ՟ի ն՟ր, թուի թերևս, թէ այսոքիկ իրք իցեն խաղք տղայականք, և սակաւ հարկաւորք ։ Բայց ոչ է այսպէս (ասէ ս՟բն Հերոնիմոս,) այլ է մեծ կատարելութ՟ի, և խոնարհութ՟ի ն՟ր, ծածկեցեալ յիմաստնոց և ՚ի խոհեմաց աշխարհիս, և յայտնեցեալ և հրատարակեցեալ պարզամտաց և խոնարհաց ։

Երկրորդաբար օգնեսցէ մեզ առ՚ի պահպանել զմեզ յայսմիկ աղքատութ՟ե հոգւոյ՝ ոչ ունիլն և ոչ պահելն զիր ինչ աւելորդ ։ Այս է իր մի մանաւանդ, վ՟ որոյ առնէ մեզ Տ՟ր զբազում շնորհս յընկերութ՟ե մերում ։ Քանզի սենեակք մեր են հանգոյն սենեկին այնմիկ, մեկ, զորմէ Ածաշունչն ասէ, թէ կինն այն Սոմնացի ունէր պատրաստեցեալ վն սր մարգարէին Եղիսէի : քանզի ստէպ անցանէր մարգարէն ընդ տուն կնոջն այնորիկ . և ասէ կինն ցայրն իւր . 4. Թագ. 4. 10. Արասցուք նմա վերնատուն մի փոքրիկ, և դիցուք ՚ի նմա մահիճս, և սեղան, և աթոռ և աշտանակ . և եղիցի ՚ի գալ նր առ մեզ, մտցէ անդր : Այս պարտի գոլ զարդն սենեկաց մերոց, որ մահիճ մի, սեղանատախտակ մի, աթոռ մի, աշտանակ մի, և ճրագ մի, որք միայն են հարկաւորք : Ո՛չ ՚ի գործածի, և ոչ թոյլ տրի աստ ունել զաթոռ գնոջ, զիրս պճնեցեալս . զզարդարանս պատկերաց, և նկարմանց, կամ այլոց իրաց նմանեաց : Նաև ոչ թոյլ տրի պահել զգրակալ պաճուճեցեալ, ոչ զսփռոց սեղանատախտակի, և ոչ զվարագոյր : Ո՛չ կարեմք պահել զապեղանի ՚ի խցի մերում, և ոչ զայլ փափկութիւնս առ ՚ի մխիթարել նոքօք . կամ այնու մխիթարել և մեծարել զնս, որք գան ՚ի տեսանել զմեզ : Եթէ մանաւանդ առ ՚ի ըմպել զաման մի ջուր, հարկ է հայցել զհրաման, և երթալ ՚ի սեղանատունն : Ո՛չ կարէ ոք պահել եւս զտետր մի, յորում կարիցէ քարշել զգիծ մի միայն, կամ կրել ընդ ինքեան : Մեծ աղքատութիւն է այս, զոր ոչ կարեմք ուրանալ . բայց համանգամայն մեծ հանգստութիւն է, և մեծ կատարելութիւն . քանզի առանց կարծեաց իրքս այսոքիկ արգելուն և խափանեն մեծապէս զկրօնաւորն : Զի յայտնի է այս, թէ ունելն զվերոյասացեալսն, և պահելն զայնս՝ և յաւելուլն ոչ կարէ լինել առանց զբաղմանց, և տարացնդմանց : Ուստի ոչ թոյլ տալով պահել զայսոսիկ իրս, այլ ոչ թոյլ տրի աստ, դադարին համայնք անպատեհութիւնքս այսոքիկ : ՚ի մէջ այլոց պատճառաց, վն որոց ոչ է սովոր ընկերութիւն մեր թոյլ տալ օտարականաց մտանել 'ի սենեակս մեր, մինն է այս, որ զի այսպէս բարուք պահպանիցի աղքատութիւն մեր· զի 'ի վախճանի եմք մարդիք, ուստի և թէ մտանելոցք իցեն 'ի սենեակս մեր ազնուականք, վաճառականք, և վարդապետք, զորս խոստովանեցուցանեմք, ոչ գիտեմ եթէ ունիցէաք զայնքան զօրութի, որով կարիցէաք շատանալ առ 'ի կալ այնու աղքատութբ, զոր 'ի խուղս մեր 'ի կիրարկանեմք: Այլ թերևս կամիցէաք ունել զայնս յոյժ զարդարեցեալս գրքովք· զի գոնեա պատճառաւ գրեանց՝ այլք համարիցէին զմեզ գիտունս, և արժանիս մեծի վարկման: Եւ այսպէս օգնէ մեզ մեծապէս այնս առ 'ի պահել զմեզ յաղքատութե մերում, և առ 'ի ոչ պահել զիրս աւելորդս, զոր պարտիմք մեծ համարիլ, և ջանալ՝ զի միշտ այսպէս յառաջանայցեմք:

Լ, Եւ բարի միջոց՝ և յոյժ գովելի այն, զոր սովորք են առնել ոմանք կրօնաւորք առ 'ի պահել 'ի նր աղքատութե, որ է տանել առ մեծաւորն իւրեանց զամ, զոր ունին, զորս կոչեն ըղձանկութիս առ 'ի թեթևանալ 'ի նոցանէ, թէպէտ իցեն այնպիսի իրք, զորս պատեհաւորաբար՝ և ըստ հնազանդութե կարեն պահել: 'Ի ժամանակագիրս կարգի մերոյ Հերոնիմոսի ասի, թէ 'ի սկզբանն նորին կարգին կարի սովորք էին առնել զայս, և ունէին զայնքան մեծ հոգս վն այսորիկ, մինչ զի ոչ ոք 'ի կրօնաւորաց կարէր պահել զիրս աւելորդս, և ոչ զնորատեսս, և յորժամ գտանիւր առ ումեք իր ինչ նորատես, և ոչ կրօնաւորական, ժողովէին ամենեքեան, և վառէին 'ի միջի զմեծ հուր, յորում այրէին զիրն զայն, ասելով նր արքն այնոքիկ, թէ այնպիսի իրքն էին կուռք կրօնաւորաց: Արդ՝ այսմիկ պարտիմք հետևիլ և մեք, և զամ իրս, որք ոչ են հարկաւորք մեզ, պարտիմք աքսորել 'ի սենեկաց մերոց և առ 'ի թեթևա

Գ Ս

նալ 'ի նոցունց՝ մատուցանել զնուէրս մեծաւորին, ոչ ունելով զյոյս դարձուցանելոյ զայնս առ մեզ երբէք։ Եւ առ 'ի մեկուսանալ յայսցանէ իւրաց՝ և առ 'ի մատուցանել զայնս առաջնորդին, ո՛չ է հարկաւոր, թէ իցեմք ըղձունակք առ այնս, այլ բաւական է, թէ ոչ իցեն հարկաւորք մեզ իրքն այնոքիկ։

Ի յամիկ առաւելցէ ս՟րբն Բօնաւէնթուրայ զայլ իր մի, և ասէ, թէ նաև ո՛չ առ 'ի տալ այլոց՝ ո՟պ առնեն ոմանք, պատճառաւ վարձու, կամ շահելոյ, կամ պատրուակաւ ջերմեռանդութե՟ պարտ է պահել զայնպիսի իրս. քանզի զբաղեցուցանեն զմիտս, և տարացնդեն զմիտս. Նաև այս է առնել զինքն եզական 'ի մէջ այլոց. քանզի թուէր թէ նա միայն իցէ, որ ունիցի զկրպակ այսոցիկ իրաց։ Եւ մանաւանդ (ասէ ս՟րբն) գոյ և այլ անպատեհ իմն յայսմիկ, զի բազում անգամ տրին փոքրկունք իրքս այսոքիկ առանց հրամանի մեծաւորին. երբեմն առնեմք զայս վ՟ս ոչ զգուշանալոյ, երբեմն վասն ամօթոյ. զի ամաչեմք առէպ խնդրել առ մեծաւորն այսոքիւք դուզնաքեայ իրօք, և այս եղանի պատճառ, զի և այլք ընդունելին զայնս առանց հրամանի մեծաւորին, զի ոչ իշխեն ասել, թէ ոչ կամիմ ընդունիլ առ 'ի ոչ յամօթ առնել զտուօղն։ Եւ այս է պատճառն, վ՟ս որոյ 'ի միոյ կողմանէ մնան գայթակղեալք ընդունօղքն. և 'ի միւս կողմանէ մնան խղճահարք, զի ընկալան առանց հրամանի մեծաւորին։ Գոյ ևս յայսմիկ միւս այլ իր, զի երբեմն այսոքիւք պարգևօք և ընծայիւք կամին սնուցանել, և տածել զբարեկամութի և զընտելութի մասնաւոր, զոր պարսաւեն ս՟րբքն, զի է ընդդիմակար միաբանութե՟, և սիրոյ եղբայրականի, ո՟պ ասացաք յիւրում տեղւոջ։ զի ասէ ս՟րբն Բօնաւէնթուրայ, այսպիսի բարեկամութիւնս, ո՛չ թուեցաւ հաճոյ հարցն մերոց։ Եւ այսպէս է և այս 'ի կրօնի մերում. քանզի թէպէտ այս ոչ է արգելեցեալ ումանց յաղագս պաշտօնի նց ։ Բայց սակայն գիտեմք բարւոք, զի ոչ հաճին ընդ այս առաջնորդքն, և ոչ չինին եղբարքն մեր ։ Պարտ է կրօնաւորին գոլ այնքան աղքատ, որ ոչ ունիցի զիր իմն տալոյ այլոց, և այս է այն, որ չինէ ։ Եւ որք են բարեկամք պահելոյ զիրս առ 'ի տալ այլոց, ոչ չինեն, և ոչ թուի թէ առնիցեն բարւոք ։ Աստի հարկ է հեռանալ յայս մէկ խրատու սրբյն Բօնաւէնթուրայի ։

Եւ այս օգտակար է եւս առաջադրել առ զիր մի, յորում մեծապէս ճառագայթէ զօրութիւն աղքատութեան սրբոյ. շուրջ զօրով առնէ մեզ Տրն մեր զյատուկ շնորհս յընկերութեան մերում, որ է այս, զի ոչ փակեմք ըզդուռն խցից մերոց, և ոչ կարեմք առանց մասնաւոր հրամանի մեծաւորին ունել փակեցեալ զտապանակ, կամ զարկղ մի, այլ ամ ինչ յայտ է մեծաւորաց ։ Աստի զոր ինչ ունիմք և 'ի գործ ածեմք, այնպէս պահեմք, և ունիմք, որպ թէ ասիցեմք. առ եղբայր՝ եթէ կամիս ։ Զայս բարւոք ծանոյց սրբն Հերոնիմոս ասելով ։ * Ոչ իցեն հարկաւոր փականք, որպ զի այնու նշանաւ արտաքնով երևեցի, թէ զայլ ոչինչ ունիմք 'ի ներքուստ՝ բաց 'ի Յսէ ‖ ։ Եւ ունելով զամ ինչ բաց, և յայտնի՝ շնորհիւ Տն յոյժ բարւոք պահպանին ։ Զի առ այս վախճան, որպ զի զայս կարիցեմք առնել դիւրաբար, և անկասկածօրէն, հայրն մեր ետ զկանոն մի, զի ոչ ոք կարիցէ մտանել 'ի սենեակն այլոյ առանց հրամանի մեծաւորին. և այս կանոնս է բանալի և փակ մի, որով առաւել պահպանի խուցն, քան թէ երկաթի փականաւ ։ Եդ և զայլ կանոն մի, զի մի ոք առնուցու զիր իմն 'ի սենեկէ այլոյ առանց հրամանի մեծաւորին, որ է այլ փակ և նիգ յոյժ ամրագոյն ։ Եւ այսոցիկ անամենից դնէ զկնիքն ուխտին աղքատութեն , որ և է այլ փակ զօրեղագունեղ ։ Եւ այսոքիւք երիւք փականօք և բանալեօք ամրագունեղիւք եղիցի առաւել պահպանեցեալ խուցն մեր , և զոր ինչ ունիմք 'ի նմին , թէպէտ լիցէ բաց , և անփակ , քան թէ լիցէր փակեցեալ դրամբք , և երկաթի փականօք ։ Եւ մեք ամենեքեան պարտիմք ջանալ՝ զի լիցէ այսպ̃ , ոպ̃ զի յառաջանայցէ իրն ․ և եղիցի արժանի մեծի պատժոյ նա , որ համարձակութբ̃ իւրով եղիցի պատճառ քակտեցման այսորիկ մաքրութեն , և կատարելութեն , որով յառաջանայ ընկերութին մեր , և հարկադրեսցէ զմեզ այլայլել զիրս զայս այսքան սբ̃ , յորում փայլէ զօրութին սբյ աղքատութեն ․ զորմէ խօսին յոյժ ծանրաբար , և գովեն զնա սբն Բարսեղ , և սբն Բօնաւենթուրայ ։

ԳԼՈՒԽ․ Ը։

Յաղագս այլ միոյ միջոցի , որ յոյժ օգնեսցէ առ'ի ժամանել յաղքատութին հոգւոյ , և պահել զնոյնն ։

Օգնեսցէ ևս մեզ առ 'ի պահպանել յաղքատութեն հոգւոյ , և ժամանել առ կատարելութին նորա , ոչ միայն զրկել զմեզ յիրաց աւելորդաց , այլև ջանալ՝ զի 'ի նոյն իրս հարկաւորս , զոր հարկաւորապէս 'ի կիրարկանելոց եմք , փայլեցէ զօրութին աղքատութեն , և 'ի յայնս բնաւս երևիցուք աղքատք , որպիսիք եմք իսկ ։ Զայս առակցէ մեզ հայրն մեր 'ի կացուցման՝ ասելով , ուտելն , և զգենուլն և ննջելն եղիցի ոպ̃ աղքատաց , և իւրաքանչիւրոք հաւատայցէ , թէ անարգագոյն իրքն տան լիցին վասն իւր՝ յաղագս ուրանալոյ զանձն իւր , և սակս յառաջադիմութեն հոգևորականի ։ Եւ յայլում տեղւոջ ասէ, սիրեսցեն ամենեքեան զաղքատութ՟ն ո՟րպ զմայր, և ը՟ս չափու որբոյ ընտրողութ՟ն 'ի ժամանակի խուռում զգայցեն զպտուղս նր՟: Կամի հայրն մեր, զի ցանկանայցեմք իրաց աղքատաց, և անարգադունից. բայց ոչ կամի՝ թէ բոլորն կայանայցէ 'ի ցանկութ՟ն, այլ թէ երբեմն զգայցեմք արմամբ զգործս նր՟. մինչ զի թէպէտ ոչ պակասի այն՝ որ հարկաւոր է վ՟ս ապրելոյ, իցէ եր իմն, յորում զգայցէ զզօրութ՟ն աղքատութ՟ն որբոյ: Եւ ոչ շատացաւ ասել զայս սեռօրէն մի և երկու անգամ, այլև զկնի վեցերորդի մասին կացուցման բացայայտեայ տեսակաւորաբար, թէ որպիսի է լինելոց զգեստն մեր, ո՟րպ զի գոլով 'ի միոյ կողմանէ կրօնաւոր, ոչ միայն իցէ զգեստն վայելուչ կրօնաւորի և յարմար պաշտօնի, այլև աղքատութ՟ն՝ զոր դաւանիմք: Եւ ասէ՝ թէ գիտելոց եմք յայսմիկ զերկս իրս: Նախ՝ զի զգեստն իցէ համեստ, զի եմք կրօնաւորք: Երկրորդ՝ զի իցէ յարմար սովորութ՟ն գաւառին, յորում գտանիմք, քան զի կերպն կեցոյ մերոյ է հասարակ առ արտաքինս: Երրորդ՝ զի մի՛ իցէ ընդդէմ աղքատութ՟ն: Եւ պարզաբանէ անդ ասելով. եթէ իցէ զգեստն մեծածախ, է ընդդէմ աղքատութ՟ն: Եւ այսպէս թէև ծնօղքն, կամ ազգականքն, կամ բարեկամքն, կամ ջերմեռանդքն կամիցին տալ կրօնաւորին զզգեստ մեծագին, մի՛ զգենուցու զայն, զի այն ոչ է զգեստ աղքատի, և ոչ համաձայն կացուցման մերոյ: Ոմանք առաջարկեն ասելով, թէ գոն ոմանք զգեստք ասրեղէնք, որք թէպէտ են գնոյ, սակայն են համանգամայն դիմացկունք, և այսպ՟ զգենուլն զայնս՝ ցուցանէ զաւելի աղքատութ՟ն: Բայց այս պատճառս է պատճառ մարմնոյ և աշխարհի. վ՟ս զի յոյժ հարկաւոր է, թէ փայլիցէ աղքատութիւն 'ի զգեստս.

զորս զգենումք , և շրջիմք զգեստաւորեցեալք ընդ աղքատս : Դարձեալ՝ ոչ միայն 'ի յորակութեան նիւթոյ հանդերձին , այլև 'ի կարուածն իւր զգեստուց պարտի փայլել աղքատութիւն · քանզի եթէ ոք զգենուցու զզգեստ յոյժ լացեալ , կարի երկայն և անուանի , ոչ է այն զգեստ աղքատ կրօնաւորի : Կամի հայրն մեր՝ զի յերկուս իրս նկատեսցեմք . մի՟ 'ի պատեհաւորութեան , և 'ի համեստութեան : Նաև 'ի նպաստաւորիլն և 'ի պատսպարիլն նոքօք 'ի ցրտոյ · զի մի՟ այսոցիկ երկուց իրաց եղեն ներկայացուցեալք զզգեստքն · և այս է վախճան նոցա , մի՟ պահպանել զմեզ 'ի ցրտոյ , և ծածկել զմեզ համեստաբար : Այս վարդապետութիւն է սրբոյն Բարսղի , որ յաղագս այսորիկ բերէ զայն , զոր ասէ սուրբն Պօղոս · 1. Տիմ. 6. 8: Ունիմք զկերակուր , և զծածկոյթս , և այնու շատասցուք : Ասէ և ոմն 'ի սրբոց , տե՛ս զի ասէ , զկերակուր , * և ոչ զհեշտալիս || · և դարձեալ նկատեա՛ , զի ասէ , զծածկոյթս " և ոչ զայնս , որովք պճնաւորիմք || : Պարտիմք շատանալ իրօք հարկաւորօք միայն · և 'ի բաց ընկենուլ 'ի կրօնէ զայն ամենայն , յորմէ հնչի մեծութիւն · և անձնացուցութիւն · և ոչ ինչ կերպիւ պարտ է թոյլ տալ այնմիկ , զի է ունայնութիւն և իր գարշելի : 'Ի բա՛ց կացէք , 'ի բա՛ց կացէք համայնք այսոքիկ , և մի՛ մտանէք 'ի կրօնս յայս իրք աշխարհականք : Ո՜հ թէ որքան երկնչէր յայսմանէ սուրբն Ֆրանչիսկոս 'ի կրօնի իւրում:

Պատմի 'ի ժամանակագիրս նր՟ , թէ եղբայր Եղիայն այր նախապետական կարգին այնորիկ , և սեռական պաշտօնեայ , արար վասն իւր զզգեստ լայն և երկայն , թեզանեօք երկայնովք 'ի մեծագին կապերտուէ : Սուրբն Ֆրանչիսկոս կոչեաց զնա առ ինքն առաջի եղբարց բազմաց , և ասաց ցնա , տուր ինձ զզգեստդ զայդ , զոր զգեցեալ ես · զոր եդեալ սուրբն 'ի վերայ զգեստուց իւրոց , սկսաւ ժողովել զքղանցն, յարմարեաց զգլխարկն, և վերածալելով զթեզանիսն սկսաւ շրջիլ ունայնաբար՝ ունելով զգլուխն վերամբարձեալ, և զկուրծն փքացեալ. քայլէր սիգալով, և ողջունէր բարձր ձայնիւ զեղբարսն, որք էին ներկայք ասելով, Ած՟ կեցուսցէ զձեզ ով որք պատուեցեալք : Իսկ եղբարքն կային հիացեալք տեսանելով, զոր առնէր, և ասէրին : Զայս արարեալ մեծաւ եռացմամբ, և նախանձայուզութ՟բ, սկսաւ վաղվաղակի և մեծաւ ցասմամբ մերկանալ 'ի զգեստէն յայնմանէ, և մեծաւ արհամարհանօք 'ի բաց ընկէց յինքենէ զայն, ասելով ցեղբայր Եղիայն 'ի լուր ամենեցուն. Այպ՟ զգենուն նոքա, որք ոչ են հարազատ որդիք կարգիս. Եւ ինքն մնաց խոնարհ, և անգոսնելի, կարծ, և անձուկ զգեստուքն, և փոխեալ զերեսս իւր յուրախութ՟ի և 'ի հեզութ՟ի, սկսաւ բազում խոնարհութ՟բ և ընտանեբար խօսիլ ը՟ եղբարսն իւր, և ասել՝ (առ 'ի ուսուցանել նց՟ զնմ՟ հեզութ՟ի, զաղքատութ՟ի, և զխոնարհութ՟ի) որդեակք իմ, մեք ոչ եմք որդիք անհարազատք կրօնից մերոյ, այլ եմք որդիք օրինաւորք, որք նմանեցուցանեմք զմեզ յամ՟ իրս մօրն մերում աղքատութե՟ : Զգեստքն մեր պարտին գոլ ոպ՟ խնկական իրք աղքատաց. զի փայլեսցէ 'ի նոսին աղքատութիւն, և յայտնի լիցի, թէ եմք աղքատք, և վն՟ այսորիկ պարտ էր պակասագոյն գոլ զգեստն մեր քան զայն, զոր պատեհաբար զգենումք. և մանաւանդ նաև պակասագոյն քան զայն, որ ը՟ ենթադասութե՟ աշխարհիս է մեզ հարկաւոր : Քանզի ոչ ասի աղքատ զգեստուք նա, որ ունի զզգեստ հարկաւոր լիակատար, և ոչ ցուցանէ 'ի նմին զնշան իմն աղքատութե՟ : Բայց ասի աղքատ նա, որում պակասի իր ինչ նաև 'ի յիրս հարկաւորս : Եւ այսպէս ասացաք 'ի վերոյ, թէ կատարեալ աղքատութիւն է ուբախանալ 'ի տանիլն զպակասութիւն նաև 'ի յիրս հարկաւորս. և նա, որ ոչ կամի տանիլ, և ոչ կրել զհարկաւորութիւն իմն, ոչ է ժամանեալ առ կատարելութիւն աղքատութեան հոգւոյ։

Այն՝ զոր ասացաք վասն զգեստուց, պարտ է իմանալ և վասն այլոց իրաց, զորս 'ի կիրառ կանեմք. զի յամենայն իրս պարտի ճառագայթել զօրութիւն նոյն աղքատութեան. և առ այս պարտիք ջանալ, զի յայտնի եղիցի, թէ եմք աղքատք 'ի սենեակս, ոչ պահելով 'ի նոսա, եթէ ոչ զհարկաւորս։ Պարտիս ցանկալ՝ թէ նուաստագոյն, և աղքատագոյն սեղանն, չնչին անկողինն, և վատթարագոյն իրքն տան իցեն վասն քո։ Եւ գրեանքն որք ոչ են հարկաւորք քեզ, տանիլ 'ի գրքատունն, և ոչ պարտիս ձեւացուցանել զքեզ որպէս ունօղ զիշխանութիւն 'ի վերայ բազմաց գրեանց 'ի սենեկին։ Սուրբ Բոնաւէնթուրա իջանէ յայսմիկ յոյժ մանրաւորաբար առ իւրս մանունս, յորդորելով զկրօնաւորսն, զի մի ունիցին, եթէ ոչ զհարկաւորսն միայն, և պարտին ջանալ, զի հարկաւոր իրքն այնք ոչ իցեն հետաքրքրականք, և կոկք, այլ կոշտք, հինք, և կարկատեցեալք։ Ոչ կամի, թէ գիրքն իցեն գեղեցկաբար կազմեցեալք. և ոչ կամի, թէ ժամագիրքն իցէ հետաքրքրական, կամ կոկ, կամ եղական։ Մի ունիցիս առ քեզ աստ զպատկերս հետաքրքրականս, և մի զվարդարան մեծագինս, և մեծ վարկանելի։ Եթէ ունիցիս զգաւն Աստուծոյ, զխաչ, կամ զմանկաստուածն վասն քոյոյ ջերմեռանդութեան, իցեն սոքա համակերպք աղքատութեան, զոր դաւանիմք։ Եւ որքան առաւել իցես աղքատ յայսոսիկ իրս, այնքան առաւել հաճոյանայցես Աստուծոյ. և մրց նորա։ Ասէր երանելին Սուրբն Ֆրանչիսկոս, թէ պահելն զիրս հետաքրքրականս, և ոչ հարկաւորս՝ նշան է մեռեալ հոգւոյ. քանզի հոգին գաղջ.

և ցրտացեալ 'ի ջերմութենէ շնորհաց , ի՛նչ է ծածկելոյ զպակասաւորութիւն իւր , կամ ի՛նչ է մխիթարելոյ զինքն , եթէ ոչ այսոքիւք մանրամասնական իրօք ։ Զի ոչ գտանելով զմխիթարութիւն 'ի յիւրս հոգևորս , խնդրէ զայն 'ի յայսպիսի զբօսանս արտաքինս ։ Այս է ճըշմարտութիւն մի յոյժ մեծագոյն , և փորձառեցեալ ․ և վասն այսորիկ մեծաւորքն մեր այսքան մեծ համարին զիրս զայսոսիկ մանրամասնականս ։ Նախ՝ զի ներհակք են աղքատութեան ։ Երկրորդ՝ զի ճանաչեն , թէ ոչ գոյ 'ի նմա ոգի , որ կամի զբաղիլ այսպիսի իրօք ։ Եւ ոչ միայն 'ի յայսոսիկ , այլև 'ի յիւրս հարկաւորս՝ որպէս ասացաք պարտիմք գոլ , և թուիլ աղքատք , հաճելով կրել զչքաւորութիւն իմն 'ի նմին , առ 'ի հետևիլ Քրիստոսի Տեառն մերում , Զի վասն ձեր աղքատացաւ , որ մեծատունն էր ․ 2․ Կորն․8․9։ Ասէ սուրբն Բեռնարդոս , թէ 'ի յերկինս գոյր առատութիւն բազմաց բարեաց , և հարստութեց , ուր ոչ գտանիւր աղքատութիւն իմն , և աստ 'ի յերկրի գոյր մեծ առատութիւն վաճառականութեան այսորիկ , այսինքն աղքատութեան , և մարդիք ոչ ճանաչէին զգին և զզօրութիւն նորա ։ Ուստի որդին Աստուծոյ որ իմաստուն վաճառական սկսաւ ըղձալ վաճառականութեան այսմիկ ․ և բեռնաւորեցաւ նովաւ , որպէս զի նաև մարդիկ ճանաչելով , և մեծ համարելով ըզվաճառականութիւնս զայս , բեռնաւորեսցեն և ինքեանք այսու , որովհետև այնքան մեծ է գին նորա յարքայութեանն երկնից ։

✠ ✠ ✠ ✠ ✠

ԳԼՈՒԽ Թ.

Հաստատի այն՝ որ ասացաւ, օրինակօք:

Ի Գիրս պայծառագունից արանց կարգին չիստէրսականաց պատմի զաբբայէ միոյ սաքսոնիայ վանից, թէ ոչ շատանայր զգենլով զհանդերձս 'ի նիւթոյ գաւառին՝ ուր կայր, այլ յամ տարւոջ առաքէր 'ի Փլանտրա առ 'ի գնել անտի զնիւթս ազնիւս, և մեծագինս առ 'ի զգենուլ: Արդ՝ զկնի մահուան աբբային՝ եղբարքն բաժանեցին զզգեստսն նր̄ 'ի մէջ իւրեանց: Եւ առաջնորդն վանից էառ վասն իւր զզգեստ մի. և զգենլով զայն 'ի գիշերի միում 'ի հանդիսաւոր տօնի, զգաց ոպ̄ զտախտակ մի հրացեալ 'ի վերայ թիկանց իւրոց եդեալ: Սաստիկ սկսաւ ճչել, և ասել, թէ այրիմ, և իսկոյն 'ի բաց ընկէց յինքենէ զզգեստն, զոր ամենեքին տեսին, զի արձակէր յինքենէ զկայծս հրացեալս, ոպ̄ թէ լինէր երկաթ մի հրաբորբոք: Զայս տեսեալ ամենեքեան, որք առեալ էին 'ի զգեստուց մեռեալ աբբային՝ սկսան սոսկալ և հիանալ. և տարան իսկոյն անդ. և մինչ դիզեցին՝ սկսան ելանել անտի կայծակունք հրոյ յամենից կողմանց՝ ոպ̄ 'ի բորբոքեցելոյ հնոցէ: Եւ մնաց այնքան երկար, մինչև զեկուցին ամենից աբբայից մերձակայ վանից, որք գնացեալք և տեսեալք զայս, վկայեցին զզարհուրելւոյ դատաստանէն Այ̄:

Պատմէ չէզարիոս, թէ մին ազնուական նեղէր յոյժ զվանս մի նոյն Բենէդիկտոսի յերկրին Փրանսիոյ. վս̄ որոյ խորհեցան աբեղայք վանիցն այնորիկ առաքել զաբեղայ մի առ Փիլիպպոս թագաւորն՝ առ 'ի գանգատել զանիրաւութէն, զոր կրէին. և առաքեցին զաբեղայ մի երիտասարդ և ազնուազարմ. ոպ̄ զի Թագաւորն յաղագս նորին մեծայարգ ազգականաց՝ սիրով անսայցէր բանից նորա: Եւ ժամանեալ սա առ Թագաւորն՝ ասէ ցնա: Այր ոմն մեծատուն նեղեաց զվանս մեր, վս՟ որոյ աղերսեմ զբարձրութի՟ քո, զի նուաճիցէ զնա· և արասցէ դարձուցանել զինչս, զոր եբարձ 'ի մէնջ: Եւ հայելով Թագաւորն 'ի զգեստն աբեղային, 'ի շարժմունս, և 'ի կերպ խօսելոյն նորա, եհարց, թէ ո՛ է նա· և լուեալ Թագաւորն, թէ է որդի ազնուականի միոյ, զոր բարուք ճանաչէր Թագաւորն, սկսաւ ասել զբաղում իրս Թագաւորն ցաբեղայն· և ասէ աբեղայն ցԹագաւորն, տէր արդարև եբարձ 'ի մէնջ զա՟մ, զոր ունէաք 'ի վանս· և զոչինչ եթող մեզ: Յայնժամ հայելով Թագաւորն 'ի հողաթափն աբեղային՝ ասէ ցնա, բարւոք երևի այս 'ի հողաթափն քո, զի եթէ ազնուականն այն թողուցոյր զսակաւ մի կաշի 'ի վանս, ո՛չ լիցէր այդքան նեղ հողաթափն քո: Յետոյ ասաց ցնա Թագաւորն, որքան ազնուագոյն ես դու քան զայլ աբեղայս, այնքան առաւել պարտիս դու խոնարհագոյն քան զնս՟: Եւ կամելով Թագաւորն զիջուցանել զնա, յաւել ասել ցնա· մի՛ վշտանար վս՟ զգուշացուցանելոյս իմոյ զքեզ, զի վս՟ բարւոյ քոյ, և 'ի յօգուտ քեզ արարի: Դարձիր 'ի վանս քո, և ես արարից, զի մի՛ ևս վշտացուցանիցէ զձեզ անձն այն:

Օմիւս այլ օրինակ պատմէ անդ Չեզարիոս զաբբայէ միոյ 'ի կարգէն չիստերսականաց· զի աբբայս այս յաճուր միում խօսէր զչքաւորութէ՟ վանից իւրոց ընդ փիլիպպոսի Թագաւորին հռօմայեցւոց: Իսկ Թագաւորն հայեցեալ 'ի հողաթափն նորին, որ էր արարեցեալ գեղեցկայարմար և նեղ, ասէ ցնա, բարւոք տեսանի աղքատութի՟ն 'ի հողաթափս քո, զի նաև կաշին թանկագին է 'ի տան քում։ որով զամօթի հարաւ աբբայն յոյժ։

Պատմի զերանելոյն Ֆրանչիսկոսէ 'ի ժամանակագիրս նորա, թէ վերատեսուչ մի յոյժ ընտանի սրբոյն կամեցաւ կառուցանել զաղօթարան մի վասն եղբարց. և մերձ առ այն արար զխուց մի սակաւ ինչ հեռի, յորում կարիցէր բնակել սուրբն Ֆրանչիսկոս, և աղօթել յաղօթարանի յայնմիկ՝ յորժամ պատահիցէր անդ, որպէս զի հաճելով ընդ այն, երկարապէս մնայցէր անդ։ Եւ խուցն այն էր կերտեցեալ փայտեղինօք միայն։ Եւ գնացեալ սուրբ հայրն Ֆրանչիսկոս առ այն տեղին, վերատեսուչն տարաւ զնա 'ի տեսանել զխուցն զայն. առ որ ասաց սուրբն Ֆրանչիսկոս, Եղբայր՝ եթէ կամիս դու, զի մնացից ես յայսմիկ խցի, դիր յայնմիկ զցախս, և զոստս ծառոց, որպէս զի ես տեսից 'ի նմին զաղքատութիւն։ Զոր արարեալ այնպէս, մնաց սուրբն անդ զաւուրս ոմանս։

Օ հօրէ մերմէ Ֆրանչիսկոսէ պօրձեան ընթեռնանի 'ի վարս նորա, թէ յամենայն իրս լեալ տեսանիւր ճշմարիտ աղքատ, և կատարեալ սիրող առաքինութեանս այսորիկ, 'ի զգենուլն, 'ի յուտելն, 'ի յանկողնոջ, 'ի սենեակն, նաև 'ի յիրս փոքունս, որպէս 'ի թուղթս՝ զոր 'ի կիրառկանէր վասն իւրոյ քարոզութեան, 'ի հուրն՝ զոր վառէր վասն հարկաւորութեան ուրուք, և յայլս իրս նմանասոյս. մինչ զի ոչ էր հնար հաւանեցուցանել նմա առնուլ զզոյգ մի հողաթափ նոր, կամ զզոյգ մի գուլպայ նոր. և թէպէտ կամեցան միանգամ մի խաբել զնա՝ դնելով զնոր հողաթափս 'ի տեղւոջ, ուր դնէին հինքն, սակայն ոչ եղև նմա հնար առնուլ զայն։ Յորժամ երթայր հայցել զողորմութիւն, մանաւանդ կամէր ունել զկտորիկս հացին՝ զոր ինքն, կամ այլք բերէին, քան թէ 'ի յամբողջ հացէ, որ դնիւր 'ի սեղանի։ Յորժամ երթայր ուրեք, թէպէտ երկար և աշխատալի իցէր ճանապարհն, և կրիցէր զնեղութիւն ներհակ առողջութե̃ն մարմնոյ, ոչ երբէք կամէր՝ թէ տանիցիւր զա̃ իւր պատատուակալ մի յատակ, զի վնասակար համարէր զնեյ աղքատութ̃ն : Բազում անգամ 'ի ժամանակս ցրտայինս ննջէր 'ի յերդանոցի, որ էր վատթարածածկք, 'ի յոր մտանէր հողմն յամենից կողմանց · և զայս առնէր այնքան հաճութբ̃, և ուրախութբ̃, մինչ զի հիանային ընկերքն : Ոպ̃ 'ի ժամանակի ձմերան, այսպէս և յամարան առ 'ի պահպանել զինքն յանձրևոյ՝ զայլ ոչինչ կամէր ունել, եթէ ոչ զվերարկուն իւր, զոր կրկնապատեցեալ և շրջեալ տանէր, զի մի՛ մաշիցիւր : Ո՛չ երբէք կամեցաւ տանել զկօշիկ, կամ զայլ իք ինչ, որով կարիցէր պատսպարել յանձրևոյ, ասելով թէ առ 'ի պատսպարել յանձրևոյ, և յարևոյ՝ շատ էր գլխարկն : Ուստի բազմիցս ժամանէր յիջևանն տոգորեցեալ անձրևով, և ներ թափանցեալ ցրտով · և ուրախութն նորա էր՝ մինչ ոչ գտանէր զբարի իմն հարկաւորաց 'ի յիջևանի : 'Ի հիւանդութե̃ն իւրում, թէպէտ լինէր ժամանակն դժնեայ, և ցուրտ, ոչ երբէք թոյլ տայր, թէ 'ի մահճս, կամ 'ի դրանն սենեկին կախիցիւր իր իմն առ 'ի պատսպարել 'ի ցրտոյ, և ունել զջերմութե̃ն : Թուէր նմա մեծ փարթամութն կախել զփոքրիկ սփիրթ մի 'ի գլուխ մահճին : Եւ այսոքիկ իրք այնքան առաւել զարմանալիք էին 'ի նմին, որքան առաւել էր այն, զոր եթող յաշխարհի :

ԳԼՈՒԽ·

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս Թէ որպիսաբար, կամ առ որպիսի իրս պարաւանդէ զկրօնաւորն ուխտն աղքատութեան:

Մնայ այժմ ընձեռելի, թէ առ ինչ պարաւանդէ զմեզ խստաբար ուխտն աղքատութեան. և երբ մեղանչէ ոք ընդդէմ նորա, կամ թէ երբ մեղանչիցէ մահացուօրէն: Զի պատեհաւոր իմն է, թէ կրօնաւորն ծանիցէ բարւոք զպարաւանդութիւն, զոր ունի վասն կրօնաւոր գոլոյն. և վասն ուխտից, զորս ուխտեաց: Այլ անգամ ընձեռեցաք զիրաց որք են կատարելութեան, այժմ ընձեռեսցուք զիրաց, որք են պարաւանդութեան. որ պարտ է գոլ միշտ նախկին իրն. և ոչ հիմն, 'ի վերայ որոյ շինելի է այլ ամենայն մնացեալն: Ժողովեսցուք աստ որքան կարելի է համառօտաբար զայն՝ շուրջ զորով առեն վարդապետք, աստուածաբանք, և կանոնագէտք, զարտահանեցեալն 'ի նոյն կանոնաց և 'ի նոցա: Ուխտն աղքատութեան ըստ բնութեան իւրում պարաւանդէ զկրօնաւորն առ 'ի ոչ ունիլ զտէրութիւն, ոչ զվայելչութիւն, և ոչ զկիրառութիւն իրի ուրուք ժամանակաւորի առանց օրինաւոր հրամանի մեծաւորին: Վճիռս այս է հասարակ ամենից վարդապետաց. և բացայայտեցեալ բացորոշաբար 'ի կանոնս սրբազանս:

Ուստի հետևի առաջին իրն, թէ կրօնաւորն վասն ուխտին աղքատութեան պարաւանդեցեալ է ոչ ունիլ, ոչ ստանալ, ոչ տալ, ոչ առնուլ, և ոչ ընդունիլ զիր ինչ ժամանակաւոր՝ առ 'ի պահել, 'ի կիր արկանել, կամ տրամադրել զայն առանց հրամանի մեծաւորին: Քանզի այս է յատուկ այնորիկ, որ է, կամ կարէ լինել յատկունակ, կամ տէր իրին: Ուստի

որոք

որ՝ք զայս առնէ , գործէ ընդդէմ ուխտին աղքատութե՟ : Այսպէս մեկնաբերին, և ասեն ամ՟ վարդապետք • և կայ բացորոշեցեալ, և բացայայտեցեալ 'ի կանոնս սրբազանս :

Երկրորդաբար հետևի, թէ ոչ միայն առնէ ընդդէմ ուխտին աղքատութե՟ կրօնաւորն , որ առնու • կամ պահէ , կամ տայ , կամ տրամադրէ զիր ին՟ 'ի տան առանց հրամանի մեծաւորին • այլև կրօնաւորն այն , որ առնու զիր ին՟ 'ի յարտաքնոց , յազգականաց , 'ի բարեկամաց , կամ 'ի ջերմեռանդից , և պահէ , կամ տրամադրէ զայն առանց հրամանի մեծաւորին, առնէ ընդդէմ ուխտի աղքատութե՟ : Այս ևս է հասարակ վճիռ վարդապետաց , և բացորոշեցեալ որպէս իր հաւաստի 'ի կանոնս :

Այսոքիկ են սկզբունք , և հիմունք ամենից նիւթոց այսոցիկ , 'ի վր՟ որոց հիմնելոց եմք զայն ամ՟, զոր ասելոց եմք առ 'ի արտահանել 'ի սկզբանցս յայսցանէ զեզրակացութիւն՝ առ 'ի լուծանել զպատասխանս մտանաւորս , որք պատահիլ կարեն :

Հայրն մեր ընձեռելով զայսմանէ նիւթոյ 'ի կացուցմունս ասէ , և առաջադրէ , և պարզաբանէ մեզ զայս ամ՟ : Եւ եդեալ կայ 'ի կանոնի , ոպ՟ զի ունիցիմք առաջի աչաց : Կանոնն, իզ , ասէ այսպէս • Գիտասցեն ամենեքեան , թէ ոչ կարեն փոխ տալ , ոչ առնուլ , և ոչ տրամադրել զիր ին՟ տան առանց գիտութե՟ առաջնորդին , և հաւանութե՟ նր՟ : Եւ ոպ՟ զի մի ոք խորհիցի , թէ իցէ միայն ընդդէմ աղքատութե՟ առնուլ , կամ տրամադրել զիր ին՟ տան՝ առանց հրամանի մեծաւորին , բայց ը՟ունիլն յումեքէ արտաքոյ տան , կամ տրամադրելն զայնմանէ , զոր ընկալաւ 'ի նմանէ առանց հրամանի , ոչ է ընդդէմ ուխտի աղքատութեան , բացայայտէ նաև զայս երկրորդ իրս յայլում կանոնի , որ ասէ • Ոչ՟ք անփականայուսցէ զեր լիմն տան , կամ աննեկի այլոյ , ոչ եւ առնուցու ամենեւին ո և իցէ կերպիւ յումեքէ արտաքոյ տան վն̃ իւր , կամ վն̃ այլոց առանց հրամանի մեծաւորին : 'Ի կանոնի յայսմիկ համառօտէ հայրն մեր կարճառօտաբար , թէ առ որպիսի իր պարաճանդէ զմեզ ուխտն աղքատութեան խըստաբար :

Բայց աստ պարտ է զգուշանալ , զի մի՛ խաբիցի ոք խորհելով , թէ ոչ իցէ մեղք , կամ գոնեա ոչ իցէ մահացու առնել ընդդէմ այսմ կանոնի , ասելով թէ կացուցմունքն և կանոնքն մեր ոչ պարաճանդեն առ մեղս մահացուս • զի կարէ լինիլ , թէ ոք խաբիցի յայսմիկ ասելով , բարւոք անսանէի ես , զի առնէի ընդդէմ կանոնի ընդունելով զայս ինչ իրս յումեմնէ , կամ տալով ումեմն • բայց քանզի կանոնն մեր ոչ պարաճանդէ առ մեղս • ոչ խոկայի թէ իցէր մեղք , այլ կարծէի՝ թէ բեկանէի միայն զկանոն մի : Իրաւի է , զի կանոնք և կացուցմունք մեր ոչ պարաճանդեն առ մեղս , ոպ̃ հայրն մեր բացայայտէ 'ի կացուցմունս • բայց ուխտքն՝ զորս առնեմք՝ է յայտնի իմն , զի պարաճանդեն առ մեղս , և առ մեղս մահացուս ը̃ բնութ̃ն իւրեանց :

Այսպէս բացայայտեաց անդ հայրն մեր , ոպ̃ զի ոչ ոք անմեղացուցանիցէր զինքն անգիտութ̃բ , և ոչ առնուցուր անտի զաւիթ մոլորելոյ , թէպէտ էր յոյժ յայտնի իրս այս : Քանզի կարի յայտնագոյն է այս , զի ոպ̃ կրօնաւորն , որ առնէ ընդդէմ ողջախոհութ̃ , մեղանչէ մահացուօրէն ընդդէմ ուխտին , զոր ուխտեաց , և առնէ զսրբապղծութ̃ն , այսպէս լինի եւ ընդդէմ աղքատութ̃ , զի որ առնէ ընդդէմ աղքատութ̃ , մեղանչէ մահուչափ ընդդէմ ուխտին աղքատութ̃ , զոր ուխտեաց : Յայսմիկ ոչինչ գոյ երկբայութ̃ի : Է՞ 'ի ձեռին քում մնալն քո յաշխարհէն ընչիւք

քոց.

քովք, և վարել նոքօք ըստ կամաց քոց, և ոչ մտանել 'ի կրօն, և ոչ առնել զուխտ աղքատութեան: Բայց զկնի մտանելոյն քոյ յայն, և առնելոյ զուխտն աղքատութե՟, ոչ ևս է 'ի ձեռին քում ընդունիլ զդրամ մի, կամ պահել զիր իմն առանց հրամանի. քանզի արդէն պարաւանդեցեր զքեզ ուխտիւ, զոր ուխտեցեր: Այս է, զոր ասէ մեր առաքեալն Պետրոս, ո՟պ ընթեռնանի 'ի գործս առաքելոց առ Անանիա, և առ Սափիրա, որք ապարեալք էին զուխտ աղքատութե՟, ո՟պ ծանուցանեն մ՟րքն, և վաճառեալք զագարակ մի, զոր ունէին, զգինն նր՟ տարեալ եդին առ ոտս առաքելոց, ո՟պ առնէին այլքն, և պահելով զմասն մի վ՟ իւրեանց, ասելով թէ ոչ էին վաճառեալք աւելի քան զայն, զոր մատուցանէին. Ասէ մեր առաքեալն Պետրոս ցԱնանիա, Անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո, ստել քեզ Հոգւոյն սրբոյ, և խորել 'ի գնոյ գեղջն. ո՞չ ապաքէն մնալ քոյն՝ քո էր. և 'ի վաճառելն ընդ քո իշխանութե՟ էր: Զի՞ է, զի եդեր 'ի սրտի քում զիրս զայս, ոչ ստեցեր մարդկան, այլ Ա՟յ: Եւ իսկոյն էհաս պատուհասն Ա՟յ, զի իսկոյն անկաւ անդ մեռաւ. և նոյնն պատահեցաւ իսկոյն և կնոջն նր՟, որ եղեալ էր մեղսակից նմա: Եւ ասէ սկզբնագիրն: Եւ եղև երկիւղ մեծ 'ի վ՟ր ա՟մ եկեղեցւոյն, և 'ի վ՟ր ամենեցուն, որք լսէին զայն: Գործ. 5. 11: Այսպէս պատահէ և մեզ, զի և մեք յղանայցեմք զահ մեծ 'ի յառնելն ընդդէմ ուխտին աղքատութե՟, որովհետև այսքան խստաբար պատժի:

Արդ՝ այժմ դառնալով առ բանն մեր, ասեմ, եթէ վ՟ն այսորիկ ոչ այլ ինչ իցէր եթէ ոչ կանոնն միայն, առնելն ընդդէմ նմին ոչ իցէր մեղք. բայց յորժամ կացուցանեմքն, և կանոնքն ներպարունակեն, և բացայայտեն զնիւթն ուխտի ուրուք, ասեն զպարտաւորանցութե՟ն մեղաց, ոչ զօրութ՟ իւրեանց, այլ զօրութե՟ ուխտին, որ պարաւանդէ առ իւրն այն ։ Ո՟պ յորժամ կացուցմունքն . և կանոնքն պարունակեն, և բացայայտեն զնիւթն ողջախոհութե, կամ զօրէնն բնական, ասեն զպարաւանդութի մեղաց՝ ոչ զօրութե՟ կանոնին, այլ պարաւանդութե՟ն, զոր ունի ի՟ ինքեան ողջախոհութիւն, կամ նոյն օրէնն բնական ։ Եւ քանզի կանոնքս այսոքիկ ասեն, և բացայայտեն զգոյացութի ուխտին աղքատութե, և զայն՝ առ որ ուխտն այն պարաւանդէ ըստ բնութե իւրում, վ՟ս այսորիկ նա՝ որ առնէ ընդդէմ այսոցիկ կանոնաց, մեղանչէ, ոչ վասն առնելոյ ընդդէմ կանոնին, այլ վ՟ս զի բեկանէ զուխտն աղքատութե, որ 'ի նմին բացայայտի ։ Աստի ունիլըն առաջի աչաց զկանոնս զայս՝ ոչ պարտի գոլ առիթ խոկալոյ, թէ իրն իցէ միայն կանոն, այլ թէ անդ գոյ բովանդակեցեալ, և համառօտեցեալ գոյացութիւն ուխտին աղքատութե, և այն, որ պարաւանդէ զմ՟ խստութե՟, արտահանեցեալ 'ի կանոնաց, և յամենից վարդապետաց, ո՟պ ասացաք ։ Եւ այսպէս ս՟րբն Օգոստինոս խօսելով զկրօնաւորաց, որք կեային 'ի հասարակութե ասէ . *Այս ճշմարիտ է, զի առանց հրամանի մեծաւորին ոչ է պարտ ունիլ զիր իմն, ոչ առնուլ . ոչ տալ, կամ առնուլ ‖ ։ Զի այս է գոլ աղքատ . իսկ կարելն ուրուք ըստ կամաց իւրոց առանց հրամանի մեծաւորին առնուլ, տալ, ունիլ, կամ տրամադրել զիր իմն ժամանակաւոր, է գոլ յատկունակ, և հետևապէս գործէ այնպիսին ընդդէմ ուխտի աղքատութե ։

Արդ՝ ո՟պ զի բարուոք իմանիցի իրս այս, զոր ունելոց եմք ո՟պ զնախկին սկիզբն յայսմիկ նիւթոյ, գիտելի է, զի այս է տարբերութիւն, զոր գտնեն վարդապետք, Ա՟ծաբանք . և իրաւագէտքն 'ի մէջ կիրառութե, և տիրապետութեն . 'ի մէջ գոլոյ տէր իրի ուրուք, և ոչ գոլոյ՝ այլ ունելոյ զկիրառութիւն նորա միայն : Նա՝ որ է տէր իրի, կարէ հասարակաբար առնել զայնմանէ զայն, որ հաճոյ է ինքեան, զի կարէ տալ, ում կամի տալ, փոխտալ, վաճառել . և տրամադրել զայն ըստ հաճոյից իւրոց : Բայց նա՝ որ ոչ է տէր բացարձակ, այլ ունի միայն զկիրառութիւն նր՟, ոչ կարէ տրամադրել զայն, ոպ՟ և կամի . զի ոչ կարէ տալ զայն այլոց, ոչ վաճառել, ոչ օտարացուցանել յինքենէ, այլ միայն կարէ 'ի կիրառնուլ, կամ 'ի գործածել զայն վս՟ այնր գործոյն, յաղագս որոյ առեալ նմա : Եւ զայս պարզաբանեն օրինակաւ միով : Ոպ՟ յորժամ ոք հրաւիրէ զայլ ոք առ 'ի ուտել, տայ նմա միայն հրաման ուտելոյ յայնց ամենից, որք դնին առաջի իւր . բայց ոչ առնէ զնա տէր կերակրոց, զորս դնէ 'ի սեղանի : Ուստի ոչ կարէ տանիլ 'ի տունն իւր, ոչ առաքել բարեկամի ումեք . ոչ վաճառել, և ոչ առնել կարէ զայնցանէ, զոր ինչ կամի առնել, այլ միայն կարէ ուտել զոր ինչ և զորքան կամի, զի միայն զկիրառութիւն նր՟ ունի : Վս՟ որոյ ասեն, թէ զանազանի կիրառութիւն 'ի տիրապետութէ նաև 'ի յիրս, որք սպառին, կամ մաշին կիրառութբ՟, և նախկին կիրառութբ՟ : Արդ՝ ասեն վարդապետքն թէ այսպիսիք են կրօնաւորք մասնաւորք 'ի յիրս՝ զորս ունին հրամանաւ մեծաւորաց իւրեանց, զի առին նց՟ միայն կիրառութիւն նոցին առ 'ի գործածել : Ուստի յայտ է, թէ ոչ կարես տալ դու այլոց զզգեստն, զոր ունիս առանց հրամանի մեծաւորին, զի ոչ է քո : Եւ եթէ այդպէս առանց հրամանի, արասցես ընդդէմ ուխտի աղքատութեն . զի կամիս առնել զքեզ բացարձակ տէր նորին . վասն զի առնես զայն, զոր կամիս առնել : Եւ զայն՝ զոր ասեմ զայսմանէ, պարտիս իմանալ զայլոց ամենից իրաց, զորս 'ի կիրարկանեմք ։ Զի ոչ կարես տալ այլոց զժամագիրքդ , ոչ զաւետր , ոչ զգլխարկ առանց հրամանի մեծաւորին , զի ոչինչ յայսցանէ իւրաց է քո , այլ քեզ միայն տուեալ կիրառութն նց , որպ ասացաք զհրաժարեցելոյն ։ Յիշեսցուք միշտ զօրինակս զայս , որ բարւոք բացայայտէ զայս ։

Արդ՝ եթէ և ոչ զայն կարէ կրօնաւորն իւ կամաց իւրոց տրամադրել , զոր հրամանաւ մեծաւորին ունի , ապա յայտ է , թէ նաև ոչ կարէ տրամադրել և տալ այլոց , կամ յայլոց առնուլ զայլս իրս տանն՝ առանց հրամանի մեծաւորին , առնլով զիր իմն 'ի տնտեսատանէ ․ 'ի սեղանատանէ ․ 'ի գրքատանէ , 'ի զգեստատանէ , և կամ յայլմէ տեղւոջէ , ոչ վն տալոյ այլոց , և ոչ վն իւրեան , զի այս լինիցէր յայտնապէս ընդդէմ ուխտի աղքատութեան ։

ԳԼՈՒԽ․ ԺԱ։

Բացայայտի աստ , թէ որպէս ընդդէմ ուխտի աղքատութէ իցէ , առնուլ , կամ տալ զիր իմն առանց հրամանի մեծաւորին , թէպէտ իրն այն ոչ իցէ տան ։

Ասացաք 'ի վերոյ , թէ հասարակ վճիռ վարդապետաց է , զի ոչ միայն առնուլն զիր իմն տան յաղագս պիտոյից քոց , կամ առ'ի տալ այլոց առանց հրամանի մեծաւորին՝ է ընդդէմ ուխտին աղքատութեան , այլև ընդունիլն յայլոց առանց հրամանի մեծաւորին է նմանապէս ընդդէմ նոյնոյ ուխտին ։ Ուստի եթէ բարեկամ մի , կամ ջերմեռանդ ոք , կամ հայրն քո , կամ ազգական քո տայցէ քեզ դրամ վն զգեստուց , վն գրքի , կամ վն այլոց իրաց նմանեաց սոցին , և դու առեալ պահես , և 'ի գործածես առանց հրամանի մանկի մեծաւորին , մեղանչես ընդդէմ ուխտին աղքատութեան , եթէ դու խնդրեալ իցես զայն , կամ ոչ իցես խնդրեալ , կամ տուեալ իցէ քեզ յօժար կամաւ , կամ յաղագս բարեկամութեան , կամ ճանապարհաւ ողորմութեան , կամ ազգականութեան , և այլով որպիսեաւ կերպիւ և իցէ : Բայց թերևս ասիցէ ոք , յորժամ իմն է տան , թուի ինձ թէ իցէ ընդդէմ ուխտին աղքատութեան . սակայն յորժամ տայ ինձ այլ ոք , զի՞արդ կարէ լինիլ այս : Զի ես զոչինչ բառնամ 'ի տանէ , և ոչ վնասեմ տանն , այլ մանաւանդ առնեմ զօգուտ տանն , զի խնայեմ զայն , զոր ինձ տալոց էր տունն . ուրեմն որպիսի մեղք է այս , կամ ընդդէմ որո՞ւմ հրամանի է այս : Առ այս ասեմ , թէ է մեղք և գողութի ընդդէմ եօթներորդ հրամանին Այ՟ : Այսպէս ասէ բացորոշաբար ս՟բն Օգոստինոս 'ի կանոնի իւրում այսու բանիւ : * Եթէ իր իմն տացի ումեք , ոմն զգեստ , եղիցի այն հասարակ , և տացի նմա , որում իցէ հարկաւոր || : Ուստի եթէ ոք առաքիցէ քեզ զգեստ մի , և մեծաւորն տայցէ զայն այլում , ոչ արասցէ քեզ զանիրաւութիւն , զի ոչ է քո . քանզի 'ի մտանել այնր զգեստու 'ի տունն , եղանի հասարակ , և ոմն է քո , այնպէս է և իմ : Ուստի ս՟բն Օգոստինոս հետևի ասելով , * Եթէ ոք զիր իմն արկցեալ թաքուցանէ , դատաստանաւ գողութեան դատապարտեսցի || : Զայնս ասէ նաև ս՟բն Բարսեղ , * Գողութին է յատուկ ստացումն իւրաց || : Ասիցես թերևս , յումմէ՞ լինի գողութին . գիտես յումմէ՞ , ասէ ս՟բն Բարսեղ , 'ի կրօնէ , և 'ի հասարակուէ . զի * Ի մերկացուցանել զընկերսն 'ի յատկական գործածմանէ իւրաց , որպիսի և իցեն իրքն այնք || : Մի՛ ոք խոկասցէ թէ այս իցէ գիշաչարդութին բանից , զորս ս՟բքն ասէրք են առնել յայլս իրս առ 'ի պատճառել զմեծածագոյն ահ, և զդողումն յայնմիկ, զոր յանդիմանեն : Այս ոչ է այնպէս սուտ, այլ է ճշմարտութ՟ի զտագոյն . և վճիռ հաստատուն ամ՟ վարդապետաց . է հիմնեցեալ 'ի սկզբան միում, որում ամենեքեան համաձայնեն, որ է այս : Կրօնաւորն վ՟ն ուխտին աղքատութ՟ե եղանի անընդունակ, և անկար տալոյ, կամ առնլոյ : զի ոպ՟ ինքն ոչ է իւր, այլ կրօնին, այնպէս և՝ ամ՟ զոր ստանայ, ամ՟ որ տրի նմա, և զոր ինչ ունի, յորժամ անկանի ընդ կարողութ՟ե նո՟ր, իսկոյն եղանի կրօնին : Եւ յորժամ կրօնաւոր ոք է դասատու աթոռանիստ, և ունի զեկամուտ, ոպ՟ տեսանեմք, զի ունին կրօնաւորքն 'ի սալամանկա գաւառին, և յայլում հասարակութ՟ե, որք ունին զեկամուտ, և զօգուտ այնր դասատուութ՟ե, եկամուտն այն ոչ է կրօնաւորին, այլ է վանից իւրոց . և մեծաւորն հաւաքէ, և հոգաբարձէ յանուն նո՟ր ոպ՟ զայլ եկամուտ վանից, և դասատու կրօնաւորն հոգացեալ լինի 'ի մեծաւորէն ըստ պիտանաւորութ՟ե իւրում, ոպ՟ նաև հոգացեալ լինէր, եթէ ոչ լինէր դասատու :

Բայց յայտնապէս երևի, թէ գողութ՟ի է առնուլն կրօնաւորի զեր ինչ յայլոց առանց հրամանի մեծաւորին, կամ պահել զայն . զի իրն այն է կրօնին իսկոյն 'ի ժամանակն 'ի ձեռս կրօնաւորին : Ուստի եթէ պահէ վ՟ն իւր, գողանայ 'ի կրօնէն . և սեփականէ ընդդէմ կամացն մեծաւորին : Զի այս է սահման գողութ՟ե, ի՟ առնուլ և պահել զինչս այլոց ը՟դէմ կամաց տեառն : Ուստի հետևի . եթէ կրօնաւորն տացէ զիրն զայն այլում ումեք առանց հրամանի, թէև տայցէ ճանապարհաւ ողորմութ՟ե, նա որ ընդունի զայն, ոչ ստանայ զտէրութ՟ի իրին տնօրէնելոյ ինքեան, այլ պարտաւորի դարձուցանել 'ի կրօնն : Աստուստ տեսանի ևս, թէ որքան մեծաւ՟

խա.

խաբին նոքա , որք կարծեն , թէ կարէ կրօնաւոր ոք տալ աղքատականաց իւրոց , կամ խոստովանորդւոյ իւրում , կամ բարեկամի իւրում զգիրք մի , զպատկեր մի , զմասնարան , կամ զայլ իր ինչ նման սոցին՝ տալով , թէ ոչ եւ նմա տուեալ , և ոչ մեծաւորին , այլ եւ այլ ոք :

Ուստի ո՟պ գողութի՟ է , և ընդդէմ ուխտին աղքատութե՟ առնուլ , տալ , կամ տրամադրել զիր ի՟մ տան առանց հրամանի մեծաւորին , այսպ՟ և գողութի՟ է առնուլ զիր ի՟մ յանձանց արտաքնոց , պահել և տրամադրել զայն թարց վերոյ ասացելոյ հրամանին :

Բայց պարտ է զգուշանալ աստ , զի թէև այս ոչ իցէ գողութի՟ , և այնու ոչ վնասեցիւր տունն , կամ վանքն , կամ այլ ոք , ո՟պ կարէ պատահել երբեմ՟ , բայց սակայն իցէր մահացու մեղք ըստ իւրում տեսակի առնուլն , կամ տալն , կամ 'ի գործ ածելն , կամ տրամադրելն զիրն զայն ժամանակաւոր առանց հրամանի մեծաւորին : Քանզի 'ի յուխտէ աղքատութե՟ արգելեցեալ է այս կրօնաւորին , և եղև նա անընդունակ այսմիկ , ո՟պ ասացաւ . և նա՝ որ ընդունելի զայնպիսի իր 'ի կրօնաւորէն , ոչ ունի զտէրութի՟ այնր իրին առեցելոյ , և պարտաւորի դարձուցանել . զի է առ զայն յայնմանէ , որ ոչ կարէր տալ :

Առ'ի հաստատել զայս , առբերի աստ այն , որ պատահեցաւ ս՟բյն Գրիգորի պապին ընդ կրօնաւորի միում 'ի վանքն , զոր նոյն Գրիգորիոս չինեալ էր 'ի Հռոմ 'ի ժամանակի , յորժամ էր պապ . և զայս պատմէ նոյն ս՟բն Գրիգորիոս 'ի տրամախօսութե՟ իւրում . և Սուրիոս եւս գրէ 'ի գիրս վարուց նորին ս՟բյն Գրիգորիոսի : Եւ պատահումն եղև այսու կերպիւ : Կրօնաւոր ոմն այնր վանաց Յուստոս կոչեցեալ , հայցեաց յաշխարհական եղբօրէ

իւրխուրմէ , զի գնիցէր վ̄ր ն̄ր զհանդերձ մի , և եղբայրն արկեալ զձեռն իւր 'ի քսակն՝ եհան զերիս դրամս , և ասէ ցնա, ահա երեք ձուլիք , գնեա դու քեզ զհանդերձն ը̄ հաճոյից քոց ։ Այսպէս պատմէ սուրբն , և ասէ , թէ զայս արտահանի 'ի նոյն սկզբնագրէն , թէպէտ 'ի տրամախօսութիւս ս̄րյն Գրիգորիոսի ընթեռնանի՝ թէ եղեալք իցեն երեք սկուդք ։ Բայց յաղագս տուաչադրութ̄ե մերոյ ոչինչ է փոյթ , եթէ եղեալք իցեն երեք ձուլիք , կամ երեք սկուդք առ 'ի գնել զզգեստ մի , զի յայնմ ժամանակի բաւականք էին եւ երեք ձուլիք ։ Արդ՝ առեալ կրօնաւորն զերիս ձուլիս , կամ զերիս սկուդսն առանց հրամանի մեծաւորին՝ եդ 'ի պահեստի ։ Հիւանդացաւ յետոյ կրօնաւորն այն ծանրապ̄ս , և պատահմամբ իմացաւ այլ ոմն միայնակեաց , թէ կրօնաւորն այն հիւանդ եդեալ էր 'ի պահեստի զայնս դրամս , և զգալով զխայթումն խղճի մտաց՝ գնացեալ զեկոյց զայն աբբայ հօրն ․ ը̄ կանոնին , զոր և մեք ունիմք յընկերութ̄ե մերում , զի եթէ ոք գիտիցէ զիր իմն ծանրագոյն 'ի վ̄ր այլոց ուրուք , իսկոյն զեկուցանիցէ զայն մեծաւորին ։ Ուստի Աբբայն համարելով զայս յանցանք ծանրագոյն , և արժանի յայտնելոյ պապին , գնաց առ Գրիգորիոս պապն , առ 'ի գիտել , թէ զինչ իցէր առնելոյ ։ Հրամայեաց յայնժամ ս̄րն Գրիգորիոս , զի մի՛ ոք 'ի միայնակեցաց կարիցէր յայցելանել հիւանդին այնմիկ ․ և մի՛ ընձեռիցէին ընդ նմա , այլ ունիցէին զնա որպէս զբանադրեցեալ , զի ընկեցեալ էր զուխտն աղքատութ̄ե ։ Հրամայեաց եւս , զի յորժամ մեռանիցէր , ոչ թաղիցէին զնա ը̄ այլոց միայնակեցաց ․ նաև ոչ 'ի սրբազան տեղիս , այլ արտաքոյ վանից յաղբանոցի , և ընկենուցուին 'ի վ̄ր մարմնոյ նորա զարծաթն՝ ասելով ամենեքեան բարձրաձայն ․ Արծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ: Մեռաւ նոյն միայնակեացն այնու հիւանդութեամբ, և կատարեցին կրօնաւորքն զա՟մ, զոր հրամայեաց նոցա սբ՟ Գրիգոր պապն: Եւ ասէ սբն Գրիգորիոս, թէ օրինակս այս պատճառեաց զարսափումն և զդողումն 'ի վանքն յայն՝ այնքան մեծագոյն, մինչ զի սկսան համայնք կրօնաւորքն վեր 'ի վայր շրջել զխուցս իւրեանց, և զա՟մ իրս փոքրիկս, զորս ունէին հրամանաւ մեծաւորին, և կարէին պատեհաբար ունիլ, տարան եւս զայնս առ մեծաւորն առ 'ի լինել անկասկած, և ոչ առնել զիր իմն ընդդէմ ուխտին աղքատութե՟: Վն՟ այսորիկ, և վն՟ այլոց օրինակաց հնոց հարցն մնաց հաստատեցեալ 'ի մրց՟ կանոնաց պատիժս այս ընդդէմ կրօնաւորաց, որք մեռանին յատկասէրք:

ԳԼՈՒԽ. ԺԲ:

Յաղագս դիպուածոց ոմանց մասնաւորաց, որք են ընդդէմ ուխտին աղքատութեան:

Ի Սկզբանց, և 'ի վարդապետութենէ հասարակէ Վարդապետաց, զորս ասացաք, կարեմք տրամահանել զլուծումն դիպուածոց մասնաւորաց՝ որք կարեն պատահիլ: Եւ քանզի իրքս այսոքիկ բարոյականք բացայայտեն մեզ յոյժ բարեպէս օրինակօք, և պատահմամբք մասնաւորօք, ուստի դնեմ աստ ոմանք օրինակք, որովք իմանին այլքն, և նոքօք բացայայտի նիւթս այս:

«Այս ասեմ, և զայս մակաբերեմ յասացելոց, զի եթէ մեծաւորն տայ աստ զարծաթ կրօնաւորի միում վն՟ ճանապարհին, զոր գնալոց է նա, ոչ կարէ այնու գրամով գնել ըզ վարդարանս, ոչ զպատկերս սրբոց, և ոչ զայլս իրս, ոչ վն՟ իւր, և ոչ վն՟ տալոյ այլոց: այլև ոչ կարէ այնու զուգել զգաւուն ԱՅ, կամ զմասնաւորան, թէև հաստատիցէ զայն 'ի բերանոյ իւրմէ, և անխնայելով լիցէ ծախեալ, զոր թէ ոչ անխնայիցէր՝ կարէր ծախել ։ Եւ պատճառ սորին է, զի դրամն այն տուեալ նմա առ 'ի ծախել զայն վ̃ն ճանապարհի միայն ։ ուստի այն ա̃մ, որ ոչ ծախի 'ի ճանապարհի, պարտ է դարձուցանել առ մեծաւորն զմնացորդն, կամ առ նոյն մեծաւորն, որ առաքեաց զնա, և կամ առ այն՝ առ որ երթայ ։ որ եթէ պահէ՝ կամ ծախէ վ̃ն այլոց իրաց՝ է գողանալ 'ի կրօնէ, և մեղանչէ ընդդէմ ուխտին աղքատութ̃ե ։ Եւ այս իմանի, յորժամ կրօնն տայ կրօնաւորին զայն ա̃մ, որինչ հարկաւոր է վ̃ն ճանապարհի իւրոյ, որպ̃ սովորութի̃ է 'ի մերում կրօնի ։ Բայց այլապ̃ իմանի այս ․ յորժամ տուի նմա բացորոշեցեալ, և չափաւորապէս՝ այնքան վ̃ն իւրաքանչիւր աւուր, մինչզի եթէ ունիցէր զպիտոյս աւելի քան զայն, տայցէր նմա ․ զի յայնժամ նշան է՝ թէ գոյ հրաման բացորոշ, կամ ծածուկ կարելոյ ծախել զդրամն զայն յիւրս պարկեշտս ։

Երկրորդ առեմ, թէ այսպ̃ իմանալի է նաև եթէ ոչ լիցէ առեալ զթոշակն զայն 'ի կրօնէ, այլ 'ի հօրէ, յազգականաց, կամ 'ի ջերմեռանդէ ումեքէ, զի ո՛չ կարէ գնել այնու զժամագիրքս, ո՛չ զպատկեր, ո՛չ զզոյգ մի աչքնոց, և ո՛չ զայլ իր ինչ, ո՛չ վ̃ն իւր, և ո՛չ վ̃ն այլոց ։ Մի՛ ոք խաբեսցի յայսմիկ իրի ասելով, թէ զարծաթս զայս ոչ ետ ինձ կրօնն, այլ հայրն իմ, կամ բարեկամն իմ ։ Զի ո՛չ է փոյթ եթէ տուեալ իցէ քեզ կրօնն, կամ հայրն քո, կամ բարեկամն քո ․ քանզի յորժամ գայ ընդ կարողութ̃ե քով արծաթն ․ իսկոյն եղանի կրօնին, և է այնպէս, որպ̃ թէ տուեալ իցէ քեզ մեծաւորն, կամ հոգաբարձու տանն, որպ̃ ասացաք 'ի նախընթաց գըլխոյ ։ Եւ այսպ̃ ո՛չ կարես ծախել, եթէ ոչ յայնմիկ իրի , վն որոյ մեծաւորն ետ զհրամանն , իբ 'ի ճանապարհի քում ․ և զայն ամ , որ յաւելանայ որով կերպիւ և իցէ յաւելուածն այն , դարձուցանելոց են առ մեծաւորն ․ զի եթէ ծախես վն այլոց իրաց ․ կամ պահես , մեղանչես ընդդէմ ուխտին աղքատութե , որպ թէ գողացեալ իցես 'ի կրօնէ ։ Իսկ զայս ասեմ , թէպէտ զայն դրամն առեալ իցես յայլոց հրամանաւ մեծաւորին ․ քանզի եթէ առնուցուիր առանց հրամանի , արդէն նաև յաղագս այսորիկ բեկանիցէիր զուխտն աղքատութե , որպ ասացաւ 'ի վերոյ ։

Երրորդ՝ այսպ է նաև յորժամ ոք գայ յառաքելութէ ․ կամ 'ի հայրենեաց իւրմէ ․ և անդ տուեալ նմա իր իմն , ընծայ , կամ պաշար ճանապարհի , կամ զգեստ ․ զի ընդ գալն 'ի ձեռս նր , ինքն եղանի հասարակութե ․ և յորժամ ժամանէ 'ի տունն , ինքն յանձնելոց է մեծաւորին , կամ վերակացուին զգեստուց ․ և եթէ պահեսցէ առանց հրամանի , լինի յանցաւոր , և առնէ զգործն ընդդէմ ուխտին աղքատութե ։

Չորրորդ՝ եթէ ոք չուելոց իցէ 'ի միոյ տանէ , կամ 'ի ժողովարանէ առ 'ի երթալ 'ի յայլ միւս տուն , կամ ժողովարան՝ ոչ կարէ հայցել , կամ առնուլ զիր իմն յումեքէ արտաքոյ տան , նաև ոչ վն թոշակի իւրոյ առանց հրամանի մեծաւորի տանն , ուստի չուէ ․ թէպէտ հայցելն , կամ առնուլն հաճոյ թուիցի մեծաւորի այնորիկ տան , յո գնալոց է , զի խնայէ զծախսն , զոր առնելոց էր ։ Քանզի ներկայաւար իւր մեծաւորն է նա , յորմէ չուէ , այլ ոչ այն միւսն ․ ուստի այս իցէր առնուլ առանց հրամանի մեծաւորին ։ Բայց եթէ ոք գտանիցի արտաքոյ տան 'ի ճանապարհի առանց ունելոյ զմեծաւոր՝ յորմէ կարէր առնուլ զհրաման , յայնժամ կարէ հայցել զիր իմն , համարեալով թէ այն իցէր կամք մեծաւորին, ունելով զդիտաւորութիւն յայտնելոյ մեծաւորին, յորժամ ժամանիցէ 'ի տուն, և տալոյ զհամար նմա. զի յայսմիկ դիպուածոյ հաւատայ, թէ հաւանելոց էր մեծաւորն։ Բայց ոչ կարէ հաւատալ, թէ այն լինէր կամք մեծաւորին, յորժամ մեծաւորն մերձակայ գոլով, կարէր հայցել զհրաման։

Հինգերորդ հետևի յասացելոցս, եթէ ոք առնուցու զհրաման 'ի մեծաւորէն առնլոյ 'ի հոգաբարձուէն զդրամ յաղագս իրի ուրուք բացորոշելոյ, ոպ՟ վն՟ տալոյ օրինակել զոմանս գրեանս, ոչ կարէ ծախել զայն դրամն վասն այլոց իրաց առանց հրամանի մեծաւորին. Նաև ոչ կարէ յայնց դրամոցն տալ այլում կրօնաւորի տանն զչորս ջուլիս յաղագս հարկաւորութեան ուրուք, որ պատահի կամ ինքեան, կամ խոստովանորդւոյ, կամ ազգականաց, կամ բարեկամի իւրոյ, ոչ ճանապարհաւ ողորմութեան, ոչ 'ի գին վարդարանաց, կամ պատկերաց, և ոչ յաղագս այլոց իրաց։ Եւ ոչ միւս անձն կարէ ընդունիլ զայն առանց հրամանի. ապա թէ ոչ մինն և միւսն լինէր ընդդէմ ուխտին աղքատութեան. քանզի տալ, կամ առնուլ, կամ տրամադրել զիր ինչ ժամանակաւոր առանց հրամանի մեծաւորին, է ընդդէմ ուխտին աղքատութեան, որպէս ասացաւ։

Վեցերորդ, զի ոպ՟ կրօնաւորն ոչ կարէ տալ, կամ առնուլ առանց հրամանի մեծաւորին. այսպ՟ և ոչ կարէ փոխ տալ, և ոչ փոխ առնուլ. քանզի զամ՟ կերպ դաշնադրութեան արգելու ուխտն աղքատութեան. թէպէտ 'ի յիրս փոքրագոյնս, որք պատահին առէպ, հաւանական է, թէ լիցի հրաման ծածուկ, կամ հասարակ կարելոյ փոխատալ այլում կրօնաւորի նոյնոյ տանն, զիրն՝ զոր ունի հրամանաւ գոնեայ սուղ ժամանակաւ, աւելի, կամ պակաս, ըստ որում բացայայտէ սովորութիւն։

Եօթ

Եօթներորդ , մեղանչէ կրօնաւորն ընդդէմ ուխտին աղքատութեան , եթէ առանց հրամանի մեծաւորին առնուցու զիր իմն յաւանդ արտաքուստ , կամ ի տանէ . քանզի աւանդն է ճշմարիտ դաշնադրութիւն ինչ , և ըստ բնութեան իւրում զկրօնաւորն՝ որ զայն առնու 'ի վերայ իւր , պարաւանդէ տալ զհամարս . և բաց յայլոց խանգարմանց , պարաւանդէ ևս վճարել , եթէ կորուսանէ . Նաև պատճառէ ըզգայթակղութիւն , յորժամ գտանի դրամ առ կրօնաւորն առանց գիտելոյ , թէ զինչ , կամ որոյ իցէ : Բայց 'ի յիրս հասարակս , զորս կրօնաւորն ունի հրամանաւ , և կարէ պահել 'ի խցի իւրում , սովորութիւն և գործածութիւն կրօնի բացայայտէ , թէ կարէ տալ ևս զայնս 'ի պահել այլում կրօնաւորի տանն :

Ութերորդ , զի որպէս ընդդէմ ուխտի աղքատութեան է առնուլ , և պահել զդրամս , կամ զայլ իրս առանց հրամանի մեծաւորին , այսպէս է ևս ունել զայնս , կամ զայլ իր գնոյ 'ի ձեռս այլոց առանց հրամանի մեծաւորին . զի մի և նոյն է ունել 'ի ձեռս իւր , կամ 'ի ձեռս բարեկամի ուրուք , և այսպէս եթէ ոք ունիցէր զիր իմն 'ի ձեռս ջերմեռանդի , կամ բարեկամի ուրուք , որպէս զի առնուցուր 'ի նմանէ , յորժամ չուելոց էր յայնմ տեղւոջէ , լինիցիւր ընդդէմ ուխտին աղքատութեան , որպէս թէ ունիցէր զայն ընդ իշխանութեամբ իւրով :

Իններորդ , ո՛չ է համակերպ աղքատութեան , զոր դաւանեմք յընկերութեան մերում , այլ մանաւանդ ունի զհոտ իմն յատկասիրութեան , եթէ տանիցէ ոք ընդ ինքեան զոմանս գրեանս , կամ զպատկերս , կամ զայլս իրս նմանս , յորժամ երթայ այլ ուրեք . ուստի այս ո՛չ լինի յընկերութեան մերում : Այլ այս ամենայն իր , զոր ոք ունիցի , հրամայի , զի գրիցին , և ունիցին որպէս իրք տան , կամ ժողովարանի , ուր դադարի , և 'ի նմին մնայցեն , յորժամ չուիցէ այլ ուրեք, և ոչ ևս կարիցէ տանիլ ընդ ինքեան առանց հրամանի. և եթէ տանիցի առանց հրամանի, եղիցի՝ որպէս թէ գողացեալ իցէ 'ի տանէ, որում տան արդէն նուիրեցեալք են. և համահետևաբար լինի ընդդէմ ուխտի աղքատութե. և այս եղիցի, թէև այնք իրք տուեցեալք լիցին ինքեան յայլոց, այլ ոչ 'ի կրօնէն, զի նոյն է, որպէս ասացաք 'ի վերոյ։

Տասներորդ, կրօնաւորն մեղանչեսցէ ընդդէմ ուխտին աղքատութե, եթէ ծախիցէ զինչ 'ի յիրս անպատեհս՝ ունայնս՝ և աւելորդս, թէև մեծաւորն տայցէ զհրաման. քանզի է արգելեցեալ յուխտէ աղքատութե. և զայս բացայայտեն մեր կանոնքն. նա և ոչ նոյն մեծաւորն կարէ ծախել յայլս իրս. ուստի և ոչ կարէ տալ զհրաման այլոց առնել, եթէ ոչ զայն, որ իցէ հարկաւոր և օգտակար և համեստ։ Աստի հետևի, զի եթէ ոք ընդունի զայսպիսի իրս, յորս կրօնաւորն ծախէր չարաչար, պարտաւանդի դարձուցանել զայն կրօնին, որպէս ասացաք 'ի նախընթաց գլխոյ։

Մետասաներորդ, է ընդդէմ ուխտի աղքատութե, ունիլն կրօնաւորի զիր ինչ թագուցեալ, որպէս զի վեհագոյնն ոչ կարիցէ գտանել և բառնալ 'ի նմանէ. քանզի որպէս ծանուցանեն Վարդապետք, է՛ կերպ մի յատկացուցանելոյ՝ և պահելոյ ընդդէմ կամաց վեհագունին։

Երկոտասաներորդ, պաշտօնաւորն՝ որում աւանդեցեալ է հրաման բաժանելոյ՝ և տրամադրելոյ զիր ինչ, ոչ կարէ առնել զայս ըստ կամաց իւրոց, այլ ըստ կամաց, և ըստ ենթադատութե վեհագունին, և եթէ տայ աւելի կամ պակաս՝ ոչ ըստ կամացն վեհագունին, առնէ ընդդէմ կամաց վեհագունին, և ընդդէմ ուխտին աղքատութե, զի տրամադրէ զիրս, որպէս թէ իցէր տէր նց, և սեփականոնացուցից , և անկախ յայլմէ ։

Երրեքտասաներորդ , զի որպէս մեղանչէ կրօնաւորն ընդդէմ ուխտին աղքատութեան , եթէ վաճառիցէ , և ցրւիցէ զիրս տան , զորոց ունի շնորհ , կամ տուեալք են նմա 'ի պէտս իւր , այսպէս և մեղանչէ ընդդէմ ուխտի աղքատութեան նա՝ որ անհոգութեամբ իւրով վատնէ և ցրուէ ․ քանզի * Իրն անհոգութեամբ արարեալ , համահանգէտ է նենգութեամբ արարեցելոյ ‖ ։ Երկ պատճառաւ տրին է , նախ՝ զի այս յատուկ գործ նոցա է , որ է տէր լինել՝ պահելոյ , կամ վաճառելոյ զայն , որպէս և կամի ։ Երկրորդ՝ զի կրօնաւորին տուեալ միայն կիրարկութիւն իրաց , զորս տան կամ յանձնեն նմա 'ի յօգուտ իւր , և կրօնին իւրոյ ։ Ուստի եթէ վատնէ , կամ մաշէ , կամ ծախէ յանօգուտ , մեղանչէ ընդդէմ ուխտին աղքատութեան ։ Պարտէ զգուշանալ 'ի յայսմանիկ իրս ․ զի թէպէտ վնասն , որ եղանի կրօնին իցէ փոքրագոյն յիւրաքանչիւր արարման , սակայն եթէ եղանի բազումանգամ , լինի մեծագոյն ։

Արժանի է յիշելոյ օրինակն այն , զոր պատմէ Կասիանոս զհնադունից միայնակեցացն ։ Իբր ասէ , թէ մնեալ յաճուր միում անօթեան կամ հոգաբարձուն վանից 'ի խոհարանն՝ ետես զերիս հատս ոսպից անկեալ պատահմամբ յերկիր 'ի ձեռաց խոհակերին 'ի ժամու լուացմանն առ'ի խարշել ․ և հոգաբարձն գնացեալ զեկոյց աբբայ հօրն ։ Իբր աբբայհայրն կոչեալ առինքն զխոհակերն՝ ետ նմա զապաշխարանս հրապարակաւ , զի 'ի գործածէր զիրս վանիցն անհոգաբար ։ Ասէ Կասիանոս , թէ նոքա կրօնաւորքն այնոքիկ նկատէին ոչ միայն յինքեանս , այլև յայլ ամենայն իրս վանից որպէս յիրս նուիրեցեալս , և տնադրեցեալս Աստուծոյ ․ և զամենայն իրս 'ի գործ ածէին ամենայն հոգացողութեամբ և պատկառանօք , որպէս զիրս Աստուածայինս , նաև զիրս փոքրագոյնս ։

ԳԼՈՒԽ. ԺԳ։

Պատասխանեալ լինի առարկութ՟ե միում, որով առաւել բացայայտի նիւթս այս։

Բայց թերևս ասիցէ ոք· թուի թէ մեծ խստութ՟ն և անձկութ՟ն իցէ այս, զի և այլք կրօնաւորք, որք ուխտեցին զաղքատութ՟ն, տեսանեմք զի ոչ խորշին 'ի յընդունելոյ յազգականաց, 'ի ջերմեռանդից, և 'ի բարեկամաց, զժամագիրք մի, զտետրակ մի գրելոյ, նաև զգեստ· սակայն են իմաստունք· և երկիւղածք Այ։ Սովոր են տալ նաև զգիրք մի բարեկամաց, որք կան 'ի տան, և արտաքոյ տանն· և ևս զիրս մեծագինս առանց հայցելոյ զհրաման, և ոչ ունին ըզխղճահարութ՟ն առնելոյ զայս ընդդէմ ուխտի աղքատութ՟ե։ Ուրեմն նաև ոչ աստ մեղանչեմք մեք ը՟դդէմ ուխտի աղքատութ՟ե· առնելով զայս, այլ ը՟դդէմ կատարելութ՟ե, և հնազանդութ՟ե մեծաւորին, և ը՟դդէմ կացուցմանց, և կանոնաց մերոց։ Արդ՝ այս է յոյժ բարի առարկութ՟ն, զոր վ՟ս այսորիկ եդաք աստ, ոպ՟ զի պատասխանեաւ սորին առաւել բացայայտեսցի այն, զոր ասացաք, և որք ասասցին։ Ասեմ ուրեմն, թէ ճշմարիտ է այս ամ՟, զի 'ի յոմանս կրօնս կրօնաւորքն առնեն զայս ամ՟ առանց խղճահարութ՟ե, և ոչ մեղանչեն ը՟դդէմ ուխտին աղքատութ՟ե· բայց յայսմանէ ոչ մակաբերի, թէ և մեք ոչ մեղանչիցեմք 'ի նոյին· այլ մանաւանդ ասեմ, եթէ մեք առասցուք զայնս, ոչ միայն առնեմք ընդդէմ հնազանդութ՟ե, և կանոնաց մերոց, այլև մեղանչեմք ը՟դդէմ ուխտին աղքատութ՟ե։ Եւ պատճառ տարբերութ՟ե է, զի 'ի յայլս կրօնս առնեն զայս հրամանաւ վեհագունին· քանզի կամ գոյ հրաման բացայայտ առնելոյ զայնս, կամ գոնեա ծածուկ և մեկնողական , կամ զօրութենական որ կայ , ոպ ասեն վարդապետքն , յայնժամ , յորժամ հասարակաբար առնի իրինչ 'ի կրօնի իմիք , և մեծաւորն գիտէ և տեսանէ , և թէպէտ կարէ արգելուլ , սակայն ոչ արգելու , այլ անտես առնէ . այս ասի հրաման լռելեայն , ծածուկ , և զօրութենական , իբ այնմ , "Որ լռէ , հաճանի || : Ուրեմն կրօնաւորն , որ ունի զբացայայտ , կամ զլռելեայն հրաման 'ի վեհագունէ իւրմէ տալոյ , և առնլոյ , կամ տրամադրելոյ զիր ինչ , առնելով զայն ոչ մեղանչէ ընդդէմ ուխտի աղքատութե : Եւ վա այսորիկ ո՛չ մեղանչեն բազումք կրօնաւորք զայս առնելով : Բայց քանզի ընկերութին մեր սկսանի այժմ , մեղանչեսցէ ընդդէմ ուխտին աղքատութե . և այլք կրօնաւորք ևս մեղանչիցեն ըդդէմ ուխտին աղքատութե , եթէ ոչ ունիցեն զհրաման առնելոյ զայն : Ոպ առնեն միանձնուհիքն , որք թէպէտ առնեն զուխտ աղքատութե , սակայն ունին զեկամուտս իւրեանց , որովք զգենուն , և գնեն զհարկաւորս , և առնեն զայլ իրս . և զայս համարեմք պատեհ նց . քանզի առնեն զայս հրամանաւ վեհագունին իւրեանց : Յայտնի ինչ է այս , զի եթէ ոք 'ի մէնջ արասցէ զայս առանց հրամանի օրինաւորի , մեղանչեսցէ ընդդէմ ուխտին աղքատութե : Ուրեմն ո՛չ է բարի ձեռնարկութի , թէ այն , որ առնի յայլում կրօնի , թէև իցեն անդէն իմաստունք , և սր մարդիկք . նոյնն պատեհ իցէ ևս 'ի մերում կրօնի , զի յայնմիկ կայ հրաման , կամ բացայայտ , կամ լռելեայն , իսկ 'ի մերում կրօնի ո՛չ գոյ այնպիսի հրաման , այլ է սովորութի և գործածութի ներհակ նմին : Եւ այսպէս ո՛չ են խղճահարութիք , ո՛չ ևս անձկութիք այնք , զորս ասացաք . այլ ճշմարտութի յոյժ հիմնեցեալ ըստ նմ խաստութե , և հասարակ վարդապետութ ամենից Վարդապետաց:

Ս̃ն Բոնաւէնթուրա, և Ճէրսոն, որք բաց 'ի մ̃ք, և 'ի հոգևոր գոլոյն, են ևս մեծագոյն Աճառանք, և զհամայնս դիպուածս մա̃նաւորս տալոյ և առնլոյ կրօնաւորին, զորս ասացաք, կայացուցանեն 'ի յունելն 'ի մեծաւորէն զհրաման կամ բացայայտ, կամ լռելեայն, կամ 'ի յոչ ունելն զայնպիսի հրաման: Իսկ եթէ ոչ ունի կրօնաւորն զայն, ասեն թէ ոչ տալ, և ոչ առնուլ, և ոչ տրամադրել կարէ զիր ինչ, զոր եթէ արասցէ· մեղանչեսցէ ընդդէմ ուխտին աղքատութե̃· զի այս է թողուլ զաղքատ գոլն· և եղանիլ յատկատէր· և իշխօղ իրաց, զի տայ և առնու, և տրամադրէ զիրս ըստ կամաց իւրոց: Իսկ Ճէրսոն դնէ զայսպիսի դիպուածս նաև 'ի հոգաբարձն, կամ 'ի տնտեսն վանաց, որ ունի զդրամս գնելոյ զհարկաւորսն վն̃ հասարակութե̃: Իսկ հարցանէ Ճէրսոն, եթէ հոգաբարձն այն մեղանչեսցէ՝ եթէ գնիցէ վն̃ իւր կմ̃ վն̃ այլոց ուրուք զդանակ մի, կամ զաչքնոց մի· և իջանէ նա և առայլս իրս մանունս, զասեղ մի. զգրիչ մի գրելոյ, կամ զասկաւ մի դերձան: Իսկ պատասխանէ, զի եթէ զայս առնիցէ հրամանաւ վեհագունին մասնաւորաւ, կամ հասարակաւ, բացայայտիւ, կամ լռականաւ, ոչ մեղանչէ· բայց եթէ առնիցէ առանց հրամանի, մեղանչէ ընդդէմ ուխտին աղքատութե̃: Իսկ զայսն ասէ նաև զտալոյ, կամ զառնլոյ արտաքոյ վանից: Ուստի համայնք վարդապետաց համաձայնին յայսմիկ, թէ կրօնաւորն ուխտիւն աղքատութե̃ պարտաւանդի ոչ պահել, ոչ տալ, կամ առնուլ, կամ տրամադրել զիր ինչ առանց հրամանի վեհագունին: Իսկ եթէ յոմանս կրօնս համարի ըմբռան վն̃ իրի պատեհաւորի պահելն կրօնաւորի զոմանս իրս փոքրիկս, և զնոյնս ընծայիկս 'ի սենեկի իւրում, և կարելն ը̃ունիլ յիւրոց բարեկամաց , կամ յազգականաց , կամ կարելն տալ , և տրամադրել զմանս այլս իրս , նշան է , թէ գոյ անդ հրաման բացայայտ , կամ լռելեայն առնելոյ զայն , ապաթէոչ՝ ոչ իցէր ըմբռն , այլ ընդդէմ ուխտին ազատութեան :

Ուստի հետևի իր մի արժանի խոկացողութեան յայսմիկ , և 'ի յայլ նիւթս , և է այս , թէ առ'ի պատասխանել կրօնաւորի միում , եթէ յայսմիկ իրի , կամ յայլում մեղանչիցէ ընդդէմ ուխտին ազատութեան , կամ ոչ , հարկ է գիտել զաւրութիւնն , որ գտանի 'ի կրօնի իւրումշուրջ զայնու իրօք . և տեսանել , եթէ իցէ հրաման բացայայտ , կամ լռելեայն առնելոյ զայն : Եւ առանց սորա ոչ կարէ բարւոք թուելի կրօնաւորին այնմիկ այս : Քանզի բազումք իրք կարեն գոլ ըմբռնք 'ի միում կրօնի , յաղագս գոլոյ անդ լռելեայն , և մեկնողական հրամանս այս , որք ոչ եղիցին ըմբռնք յայլում կրօնի , յաղագս ոչ գոլոյն յայնմիկ հրամանս այս :

Աստուստ հետևի ևս , զի թէպէտ ոմանք վարդապետք տան , թէ ոչ մեղանչէ կրօնաւորն ընդդէմ ուխտին ազատութեան առնելով զդրամ յայլմէ ումեքէ առ 'ի գնել զմանս դրամս , կամ զայլ ինչ այսպիսի , միայն թէ ոչ պահիցէ գաղտ զիրս գնեցեալս , այլ յայտնի և համարձակ , ունելով զդիտաւորութիւն պատրաստեցեալ ներկայացուցանելոյ , և թողլոյ զայնս , եթէ վեհագոյնն ոչ կամիցի զի ունիցի զայն : Բայց տակայն կրօնաւորն ընկերութեան մերոյ եթէ առնիցէ զայս , մեղանչեսցէ ընդդէմ ուխտին ազատութեան : Քանզի զայս առնելով վերոյ ասացեալ վարդապետքն . ենթադասեն թէ գոյ արդէն հրաման լռելեայն , և մեկնողական , որով մինչ հպատակին , և համակերպեն զինքեանս վեհագունին , առնեն զնա շատացեալ : Բայց 'ի յընկերութենէ մերում ոչ գոյ հրաման լռելեայն և մեկնողական վ͞ս այսորիկ, այլ մանաւանդ կամն ն͞ր է բացայայտեցեալ ներհակ նմին : Ուստի նաև զշալիկն, զվերարկուն, և զժամագիրքն, զորս 'ի կիրարկանեմք հրամանաւ վեհագունին, պարտաւորիմք ունիլ այնու հպատակութ͞բ, և նախապատրաստութ͞բ սրտի, որ եթէ ոչ կամիցի տալ զհրաման, ոչ կարիցեմք պահել. և առնելով զհակառակն մեղանչեմք ընդդէմ ուխտին աղքատութե, քանզի եղանիմք ո͞չ յատկատերք, և ունօղք զիրս ո͞չ սեփականս : Բայց առ'ի առնուլ յումեքէ զդրամ վ͞ս զգեստուց, կամ վ͞ս ոմանց գրեանց, կամ վ͞ս այլոց իրաց նմանեաց ասոցա՝ թէև պահիցէաք զայնս յայտնի և համարձակ 'ի խցի մերում, նաև առանց նախապատրաստութ͞բ, ոչինչ կերպիւ գոյ հրաման յընկերութենէ մերում. այլ ունիմք զտիրութի և զգործածութի ամենևին ներհակ նմին, և այսպ͞ս առնելն զայն է ընդդէմ ուխտի աղքատութե : Իրաւի, եթէ առնուլն և պահելն զայսպիսի իրս այսպիսեաւ կերպիւ առանց հրամանի ըմբռն լիցէր յընկերութենէ մերում, յայնժամ զաղաղակ բառնայցէաք ամենեքեան 'ի ժողովս, և ջանայցէաք խնուլ ըզդուռնս զայս, ընդ որ կարէր մտանել ապականումն աղքատութե մերոյ :

Զգուշացուցանեն վարդապետք շուրջ զայսու իրօք մատենաւորօք, և ասեն, թէ ո͞չ զի կրօնաւորն կարիցէ տալ՝ և առնուլ զիր ի͞ն լռելեայն, և մեկնողական հրամանաւ ոչ է բաւական հաւատալ միայն, եթէ հայցիցէր զհրաման 'ի մեծաւորէն, իսկոյն տալոյ էր նմա զհրամանն : Այլ և ոչ է բաւական առ'ի ելանել 'ի տանէ առանց հայցելոյ զհրաման, կամ առ'ի գրել զորակ մի այսու դիտաւորութ͞բ, զի եթէ հայցիցէր զհրաման, գիտէր հաւաստեաւ, թէ տայցէր . այլ հարկ է . զի գիտիցես հաւաստեաւ, և հաւատայցես, թէ մեծաւորն հաճիցէր ընդ այն, և շատանայցէր տալով, կամ առնլով քոյ զիր իմն, և կամ պահելով զայն առանց հայցելոյ զհրամանն 'ի նմանէ : Այս է հրաման լռելեայն, մեկնողական, և զօրութենական տալոյ և առնլոյ առանց հայցելոյ զհրաման մասնաւոր : Եւ այս եղանի 'ի բազում կրօնս՝ ոպ̃ ասացաք : Բայց 'ի յընկերութե̃ մերում է այնքան հեռի այսպիսի կամեցողութենս 'ի վեհագոյնս, մինչ զի ցանկամ՝ զի ո̃մ ինչ նշանագրեսցի հնազանդութե̃ : Եւ մեծաւ̃ր առաջին, եթէ տեսանիցեն զոք ունել զայնքան աղքատութի̃ և զվստահութի̃ առնելոյ զիր իմն այսոցիկ առանց հրամանի : Եւ այսպէս 'ի յընկերութե̃ մերում խօսելոյ եմք շուրջ զաղքատութե̃, և զայլովք մասնաւորօք դիպուածովք յոյժ տարբերաբար յայլոց կրօնից : Սոյնս եղև նաև 'ի յայլ կրօնս 'ի սկզբան նոցին . ոպ̃ յայտ է 'ի պատմագիրս նոցա . և ամենք 'ի նոցանէ մեծաւ̃ գովութե̃ իւրեանց պահեն, և ունին զայս մինչև ցայսօր .

ԳԼՈՒԽ. ԺԳ.

Յաղագս թէ ուխտն աղքատութե̃ պարտաւորէ առ մեղս մահացուս . և թէ որպիսի քանակութի̃ իցէ բաւական, զի համարիցի առ մահացու մեղս :

Թերևս հարցանիցէ ոք, եթէ այսոքիկ իրք, զորս ասացաք գոլ ընդդէմ ուխտին աղքատութե̃ լիցի՞ն միշտ մեղք մահացուք, կամ երբե՞ք եղանիցին մահացուք : Արդէն ասացաք, թէ է հաստատակ վճիռ վարդապետաց, և ո̃րց, թէ որ մեղանչէ ը̃դդէմ ուխտին աղքատութե̃, առնէ զմեղս գողութե̃, ընդդէմ եօթներորդ հրամանի օրինի̃

Այ։ Ասեմ ուրեմն, թէ ոպ̃ եօթներորդ հրամանն պարտաւանդէ առ մեզս մահացուս, *ըստ սեռի իւրում‖, ոպ̃ ասեն Ածաբանք, որ կամի ասել, ըստ բնութեան իւրում, և ըս̃ տեսակի իւրում։ Բայց յաղագս սակաւ քանակութեան նիւթոյն, կարէ լինել գողութենն մեղք ներելի, ոպ̃ գողանալն զխնձոր մի, և զչորրորդ մասն ձուոյ միոյ։ Այսպէս և ուխտն աղքատութեան ըստ բնութեան իւրում և ըստ տեսակի իւրում պարտաւանդէ առ մահացու մեղս։ Բայց կարէ լինել, թէ ոք բեկանիցէ զայն յիրի փոքրագունի, և եղիցի միայն մեղք ներելի։ Իսկ եթէ ցանկաս գիտել, թէ որպիսի քանակութիւն ասի բաւական ժամանելոյ առ մեղս մահացուս, այս խնդիրս է ստէպ ընձեռեցեալ 'ի մէջ վարդապետաց 'ի նիւթոջ գողութեան, թէ որպիսի քանակութիւն է պիտոյ, զի գողութիւնն իցէ մահացու։ Իսկ ըստ այսմ խօսելն զբեկմանէ ուխտին աղքատութեան։ Ուստի քանակութիւն, որ բաւական է մեղանչելոյ մահացուօրէն ընդդէմ եօթներորդ հրամանին, նոյնն եղիցի բաւական մեղանչելոյ ընդդէմ ուխտին աղքատութեան մահացուօրէն։ Այսպէս ասեն հասարակաբար նոքա, որք գրեցին զայսմանէ նիւթոյ։

Վ. Ա՛ի բարւոք բացայայտել, և հաստատել զայս, ծանուցանեն ամենք ածաբանք, թէ ծանրութիւն այսորիկ մեղաց առնանի յերկուց արմատոց. նախ՝ զի սեփականեցուցանի, և առնանի իւր այլոց ընդդէմ կամաց տն։ Երկրորդ՝ զի այնու բեկանի ուխտն ուխտեցեալ Այ։ Իսկ ասեն, զի թէպէտ նկատելով զառաջին արմատն միայն, թուի թէ աստ պիտոյանայցէ մեծագոյն քանակութիւն առ 'ի լինել մեղք մահացու, քան թէ 'ի գողութեան. քանզի 'ի յիրս ուխտին՝ թուի թէ իւր ոչ իցէ այնքան այլոյ, և ոչ Տն իւրն իցէ այնքան անհաճոյ, որքան 'ի գողութեան • բայց սակայն նկատելով զերկրորդ արմատն, որ է ուխտելն ԱՂ, առ 'ի գոլ մահացու բաւական է այնքան քանակութիւն, որքան բաւական է մ՟ծ գողութեան • զի մեծագոյն է պարտաւորութիւն, զոր ուխտիւ աղքատութեան ունիմք ոչ սեփականել, և ոչ առնուլ զիր իմն ընդդէմ կամաց վեհագունին, քան զպարտաւորութիւն եօթներորդի հրամանին, որ է ոչ առնուլ զիր իմն ընդդէմ կամաց տ՟ն իւրին ։

'Ի պատահման յայնմիկ ս՟բյն Գրիգորի, զոր պատմեցաք 'ի վերոյ, այն զոր առեալ էր միայնակեացն այն այնու կերպիւ, զոր պատմէ Սուրիոս, և ասէ, թէ արտահանեաց 'ի նախկնոյ օրինակէն, բովանդակն էր երեք ձուլի, զոր առեալ էր յեղբօրէն իւրմէ վ՟ն պատմուճանի միոյ, զոր կրօնն տալոց էր նմա, եթէ եղբայրն ոչ էր տուեալ, բայց սակայն ս՟բն Գրիգորիոս ենթադատեաց, թէ քանակութիւն այն բաւական էր յայնժամ առ 'ի գոլ մահացու մեղք, ո՟պ տեսանի 'ի բանադրանսն և 'ի պատիժն, զոր ետ նմա ։ 'Ի նորագունից վարդապետաց, որք 'ի մերում ժամանակի գրեցին, ոմանք դնեն բաւական քանակութիւն առ 'ի գոլ մեղք մահացու ընդդէմ ուխտին աղքատութեան զերիս ձուլիս, ոմանք զչորս • և ոմանք զհինգ ։ 'Ի կրօնի Քարթուսիանոսաց յոյժ փոքրագոյն քանակութիւն այսօրիկ է ենթադատեցեալ վ՟ն մահացու մեղաց • վ՟յ զրկի 'ի թաղմանէ • և է բանադրեցեալ՝ ո՟պ ասէ Նաւարրոս ։

Բայց այնպ՟ համարեսցուք, թէ 'ի յուխտն աղքատութեան կարիցեմք տարածել զմեղ տակաւ ինչ աւելի, և երեք, կամ չորս ձուլիք իցեն թէեւ յայսմ նիւթոջ, և պիտոյանայցէ յաւելուլ առ 'ի գոլ մեղք մահացու, ո՟պ կամին այլք • մի թէ վասն այսորիկ կրօնաւոր ոք, որ ջանայ լինել կատարեալ, դնելոց իցէ զինքն յայսմիկ պատահման և վտանգի· որոնելով, եթէ այն՝ զոր ետ, կամ էառ, ժամանիցէ՞ 'ի քանակութին, որ բաւական իցէ առ'ի գոլ մեղք մահացու, կամ ոչ· եթէ ժամանիցէ՞ յարժելուն չորից կամ վեցից ձուլլոց, կամ ոչ։ Դրամածախքն, և մանկունքն յորժամ երթան առ'ի գնել զիր իմն, եթէ առնուցուն անգամ մի զչորրորդ մասն ձուլւոյ միոյ վն ինքեանց, այլ միւսանգամ ըղփող մի, ո՛չ մեղանչեն այնու մահացուօրէն՝ վն գոլոյ քանակութենն սակաւ։ Բայց ո՛րպիսի կրօնաւոր է այն, զոր եթէ առաքիցեն առ'ի գնել զիր իմն, իշխիցէ առնուլ վն իւր զչորրորդ մասն ձուլլոյ միոյ, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մեղք ներելի։ Արդ՝ եթէ ոչ իշխէիր առնել զայս, այլ համարէիր սրբապղծութին, և մեծ անարգանք· մի՛ ունիցիս ուրեմն զհամարձակութին տալոյ, կամ առնլոյ զիր իմն առանց հրամանի ասելով, թէ ոչ է մահացու մեղք, զի և այս եղիցի ըստ զառաջինն։

Սովորեցուք զիրս փոքրկունս, մանաւանդ 'ի նիւթոջ միում այսքան ծանրագունի՝ որքան է այս, որ ներպարունակէ զմին յերից ուխտից էութենականաց կրօնի։ Քանզի որ իշխեսցէ նուաղել յայսմիկ՝ ասելով, թէ ոչ է մեղք մահացու, եղիցի 'ի մեծագունի վտանգի բեկանելոյ զուխտն աղքատութն մահացուօրէն։ Քանզի տուրումն և ցանկութին ունելոյ, տալոյ՝ և առնլոյ է կիրք սաստիկ, և յոյժ համակերպ բնութն մերոյ, որ է յոյժ բարեկամ ստրին, ուստի կուրացուցանէ և խաբէ մեծամտ։ Եւ բազում անգամ թէպէտ ո՛չ կարեմք ասել հաւաստեաւ, թէ իրն ժամանեաց 'ի մահացու մեղս, սակայն կարեմք ասել հաւաստեաւ, թէ իցէ կարծիք· և կրօնաւորն պարտի կալ յոյժ հեռի 'ի գնելոյ զինքն յայսմ կարծողութն, և վտանգի։

ԳԼՈՒԽ·

ԳԼՈՒԽ. ԺԵ:

ՄԻԹԷ կրօնաւորն կարիցէ ընդունել պարգևս առ 'ի բաշխել 'ի գործս բարիս առանց հրամանի վերակացունին. և երբ մեղանչիցէ յայսմիկ ընդդէմ ուխտին աղքատութ՟ե:

ԿԱմի ընկերութ՟ն մեր, զի ունիցիմք զայնքան մաքրութ՟ի և զկատարելութ՟ի մասնաւորաբար յայսմիկ աղքատութ՟ե, և կայցեմք այնքան հեռիք 'ի ունելոյ, և 'ի յընծեռելոյ զդրամս, մինչզի ունիմք զկանոն ոչ կարելոյ խնդրել, ոչ ընդունել զիր ինչ յազգականաց, և ոչ յայլոց անձանց, և ոչ առնելոյ զողորմութ՟ի աղքատաց, և ոչ ճանապարհաւ դարձուցանելոյ ումեք: Ուստի թէև խոստովանորդին պարաւանդեցեալ իցէ դարձուցանել. և կամիցի տալ խոստովանահօրն, զի դարձուսցէ առ տէրն, ոչ կարէ ընդունել, և ոչ յանձն առնուլ առանց հրամանի վերակացունին: Եւ կանոնս այս հիմնեցեալ է բազում խոհեմութ՟բ. և փորձառութ՟բ. վարդապետութ՟բ, և օրինակօք սրբոց: Ս՟բն Բարսեղ բացայայտապէս տայ զխրատս զայս. և հայրն Փրանչիսկոս Քսաւերեանն յորդորէր մեծապ՟, որ՟պ ընթեռնումք 'ի վարս նր՟: Եւ զերանելւոյ Հիլարիոնէ պատմէ ս՟բն Հերոնիմոս 'ի վարս նորա, թէ աշակերտաց զհարստագոյն մարդ մի 'ի միոյ լեգէոնէ դիւաց, զոր ունէր յանձին իւրում. հիւանդն մատոյց նմա զբազում պարգևս 'ի նշան երախտագիտութ՟ե, և ոչ կամեցաւ ս՟բն Հիլարիոն ընդունել զայն, նա թախանձէր զնա, զի առնուցու առ 'ի բաշխել աղքատաց. բայց ս՟բն պատասխանեաց նմա, և ասէ. դու ինքնին բարւոք կարես բաշխել աղքատաց, որ շրջիս 'ի քաղաքի, քի, և ճանաչես զաղքատս: Ես արդէն թողի զինչս իմ. ո՞յր աղագաւ կամիմ յանձն առնուլ զբեռն այլոց: Պաշտօնն մեր է խրատել զմերձաւորս զի իցեն ողորմածք, այլ ոչ զի իցեմք մեք բաշխօղ ողորմութեանց. զի այս ոչ միայն ոչ օգնէ պաշտօնից մերոց. այլև է արգելիչ նց̃: Քանզի ոչ վն̃ այլոյ իրի է պիտոյ այս, եթէ ոչ առ ՚ի լնուլ զտունն մարդկամբ, առ ՚ի գոլ հոգացեալ, և առ ՚ի առնել, զի ոչ իցեն բաւական երկու դռնապանք առ ՚ի լնուլ պատգամաւորք վասն այսորիկ: Հարկ է, զի խոստովանահայրն տարայնդիցի ՚ի խոստովանեցուցանելոյ, և ՚ի պաշտօնից հոգևորաց առ ՚ի հոգալ զայս: Եւ առաքեալքն զխորհ առին, թէ ոչ կարէին հոգալ զայս առանց խափանեցեալ լինելոյ ՚ի պաշտօնից հոգևորաց առաւել սկզբնաւորաց. Ո՛չ է հաճոյ մեզ թողուլ զբանն Ա.Յ. և պաշտել զսեղանս: Գործ. 6. 2: Եւ այսպ̃ հարկ եղև, զի ընտրիցեն զոմանս, որք հոգայցեն զայս, ուս̃ զի ինքեանք կարիցեն հոգալ ամենևին զդարձումն հոգւոց: Կարծեն ոմանք, թէ բաշխելն զողորմութիւն իցէ միջոց յոյժ բարեգոյն առ ՚ի շահել զմերձաւորս, և առ ՚ի առնել զն̃ս ընդունակս առ յաճախ կիրառութե̃ սր̃բ խորհրդոց: Բայց խաբին սոքա, քանզի բազումք են, որք կորնչին, քան զնոսա, որք շահեցեալք լինին այսու ճանապարհաւ. զի բազմագոյնք են նոքա, որք մնան տրանջօղք, և գանգատօղք քան զն̃ս, որք շատանան, ոմանք վասն ոչ առնլոյ զինչ, ոմանք վն̃ ոչ առնլոյ աւելի. դրեթէ ՚ի վախճանի երթիցեն ամենեքեան տրանջելով, և գանգատելով. ուս̃ թէ մեք շարժիցիմք նկատմամբ յատուկ անձին ուրուք. և իցեմք աչառօղք: Հաւատան և, թէ մեք առնումք անտի զիր իմն վասն մեր առ ՚ի ծախել վասն տան մերոյ: Այլև ոչ է այս բարի միջոց առ ՚ի ընդունակել այսու զոք առ յաճախս խոստովանութե՟ն · մանաւանդ ատուեալ առնուն բազումք զառիթ խոստովանելոյ կեղծաւորաբար · և ասելոյ զբազում սուտս խոստովանահօրն առ՛ի շարժել զնա զի տայցէ զթողութի՟ն : Ո՛հ թէ որքանաւ մեծաւ եռանդամբ խրատէ զմեզ իմաստունն, զի հաւատայցեմք ծերոց և հնազանդելոյ · և հետևիցիմք խրատուց նց՟ : Երբեմն կարեմք հրամանաւ վեհագունին ընդունել զիր իմն 'ի խոստովանորդւոյ, որ պարտի դարձուցանել 'ի տ՟րն իւրն, յորժամ իրն է գողոնի · և խոստովանորդին ոչ կարէ դարձուցանել առանց յայտնեցեալ լինելոյ : Յայնժամ ծանուցանեն վարդապետքն · և է բարի ծանուցումս այս, թէ խոստովանահայրն առնուցու զձեռագիր յայնմանէ, որում դարձուցանէ զիրն, ոպ՟ զի յայտնի լիցի խոստովանորդւոյն, թէ եհաս իրն 'ի տ՟ր իւր, որում էր պարտական : և յետոյ տացէ ձեռագիրն խոստովանորդւոյն առ 'ի առաւել հաճեցուցանել զնա, և զինքն : Եւ թէպէտ խոստովանորդին ասիցէ, թէ ոչ կամիմ զայդ, զի հաւատամ քեզ · ոչ պարտի խոստովանահայրն թողուլ առ առնելոյ զայս : Զի զայս առնելով 'ի վախճանին մնայ նա շինեցեալ, հանգիստ, և ապահով : և ոչ ունիցի յետոյ ըզխղճահարութի՟ն, և զկարծատութի՟ն, թէ արդեօք իրն այն տուաւ նմա, թէ ոչ · որպէս սովոր է լինել կարծատութի՟ն, յորժամ ոչ լինի այսպիսի հաւաստութե՟ն :

Արդ՝ որովհետև երթամք ընձեռելով զպարաւանդութէ ուխտին աղքատութե՟ն, և թէ առ որպիսի իր պարտաւանդէ զմեզ ատակաբար, բարի եղիցի : զի բացայայտիցեմք, թէ երբ մեղանչէ ոք յայսմիկ ընդդէմ ուխտին աղքատութե՟ն · և երբ ոչ · այլ մեղանչէ միայն ընդդէմ հնազանդութե՟ն, և կանոնաց : Ածաբանքն մասնաւորաբար խօսին զայսմանէ : և

է

է խնդիր, միթէ մեղանչիցէ կրօնաւորն ը՟դէմ ուխտին աղքատութե՟, որ առանց հրամանի մեծաւորին ը՟ունի արտաքոյ տան յումեքէ զդրամ ոչ վ՟ս իւր, այլ առ՚ի բաժանել յանուն տուօղին 'ի գործս բարեպաշտութե՟, կամ ըստ որում թուի ինքեան: Եւ երեւի՝ թէ այս ոչ իցէ ընդդէմ ուխտին աղքատութե՟, զի ոչ ընդունի վ՟ս իւր, և ոչ բաժանէ յանուն իւր, այլ յանուն ն՟ր, որ զայն ետ նմա: Բայց առ՚ի լուծանել զայս կէտ՝ ասեմ, թէ երկու կերպիւ կարէ ոք ընդունել զդրամ, կամ զայլ ինչ յումեքէ առ՚ի տալ այլում: Մինն է յորժամ տայ ինձ զայն, ո՟պ զի յանուն ն՟ր տայցեմ զայն այսինչ մարդոյ, կամ բաժանիցեմ յաղագս այս ինչ գործոյ բարւոյ, և այսու կերպիւ տրի խոստովանահարց, ո՟պ զի դարձուցանիցեն 'ի տ՟րն, կամ առնիցեն զողորմութի՟ աղքատաց ոմանց. և նա, որ այսու կերպիւ ընդունիցի զդրամ յընկերութե՟ մերում առանց հրամանի մեծաւորին առ՚ի տալ այլոց՝ իցէր այս ընդդէմ կանոնին, որ արգելու զմեզ, որպէս ասացաք: Բայց թուի թէ ոչ մեղանչիցէ ընդդէմ ուխտին աղքատութե՟. քանզի յայնժամ տուօղն մնայցէ տէր դրամոյն իւրոյ. զի նա է, որ տրամադրէ զայն, իսկ ես իցեմ պաշտօնեայ, և գործի միայն ն՟ր, առ՚ի տալ յանուն նորա այնմիկ, որում ինձ ասէ, զի տայցեմ: Սակայն եթէ այլ ոք տայ ինձ զայն, ո՟պ զի ես ազատաբար ծախիցեմ. և բաժանիցեմ ըստ կամաց իմոց, և ո՟պ թուիցի ինձ. թէև իցէ վ՟ս գործոց բարեաց՝ յայնժամ ընդունելն զդրամն, կամ տալն և դարձուցանելն 'ի տ՟րն առանց հրամանի մեծաւորին՝ ոչ միայն իցէ ընդդէմ կանոնին, այլև ընդդէմ ուխտին աղքատութեան: Նախ՝ զի յայնժամ տուօղն զրկի 'ի տ՟րութե՟ դրամոյն. և որքան է 'ի կողմանէ իւրմէ, զայն տրուելն անդրաբերէ առ

իս,

ես, ո՛ր զի տրամադրիցեմ ես զայն ըստ կամաց իմոց. և կրօնաւորն ո՛չ է ընդունակ այսմիկ: Երկրորդ՝ զի ո՛չ միայն է ընդդէմ ուխտին աղքատութեան եղանիլ տէր և յատկունակ իրաց, այլև ունիլն զկիրառութիւն, զգործածութիւն, և զտրամադրութիւն նց ազատաբար առանց հրամանի վերակացունին. զի այս է տեսակ իմն յատկանիրութեան, և սեփականութեան, որ արգելեցեալ է 'ի կրօնաւորէն ուխտիւ աղքատութեան: Եւ մանաւանդ սուրբն ածաբանքն, թէ է առաւել ընդդէմ ուխտին աղքատութեան ունիլ զազատ կիրարկութիւն ընչից և հարստութեանց, քան զունիլն զտիրապետութիւն, և զյատկացուցումն նց. քանզի առաւել տարացնդէ զկրօնաւորն, և մնաս է նմա կիրարկումն ընչից, քանթէ տէրութիւն նց, և յատկացուցումն, եթէ ոչ 'ի կիրարկանիցէր զայնս: Ուստի վախճանն, վն որոյ եկեղեցին և սբ հարքն ներկացուցին, զի կրօնաւորքն ոչ կարիցէին ունիլ զտիրապետութիւն, և զյատկացուցումն նց, եղև, որ զի այսպիսաբար մնայցէին աղքատք. և թեթևացեալք 'ի կիրարկութէ, և 'ի պաշտօնատարութէ նց, և կարիցէին առաւել ամբողջաբար տալ զինքեանս Տն Այ մերում: Զի հոգունակութիւնքն այնոքիկ արգելուն, և տարացնդեն առաւել, քանթէ յատկացուցումն նց: Ուստի ոչ է բաւական կրօնաւորին ոչ ունիլ զտիրապետութիւն, և զյատկացուցումն դրամոցն այլոց առ 'ի ոչ մեղանչել ընդդէմ ուխտին աղքատութեան, եթէ ընդունիցի զկիրառումն, զպաշտօնատարութիւն նց ազատ առանց հրամանի վերակացունին: Յայտբարբառ ասէ Գրիննեսիոս քարթուզեանն, թէ արժանի է ծաղրատութեան հայրն այն, որ ունելով զորդի մի խելագար, արգելուցուր զնա, զի մի իցէր տէր, և իշխող դանակի, կամ սուսերի, բայց տայցէր զհրաման 'ի կիրարկելոյ զայնս ազատաբար: Արդ՝ այսպէս երդմնաւորին կրօնաւորքն այնոքիկ, որք խոստանան ոչ ունելով զանկրապետութիւն, և զյատուկ իշխանութիւն դրամոց, բայց առնուն զգործածութիւն նոցա. քանզի առնուն զայն, որ 'ի մէջ դրամոցն է առաւել առբայնդիչ մտաց, առաւել վնասակար, և առաւել վտանգաւոր: Իսկ թուի ոմանց, թէ նաև առաջին դիպուածն իցէ ընդդէմ ուխտին աղքատութեան, զի է ունիլ, և բաժանել զդրամ, կամ զիր ինչ, որ արժէ այսքան դրամ առանց հրամանի վեհագունին, թէպէտ ասեն, թէ իցէ նիւթ թեթև, և ոչ ժամանէ առ գոլն մահացու մեղաց, եթէ իսկոյն տայցէ նմա, որում է տալի:

Յայսմանէ արտահանիլ կարէ պատասխանի առ դիպուածն այն, որ է կարի գործածական: Միթէ մեղանչիցէ կրօնաւորն այն ը͞դդէմ ուխտին աղքատութեան, որ առանց հրամանի մեծաւորին հայցէ յումեմնէ զդրամ, կամ զողորմութիւն վ͞ն աղքատկանի, կամ խոստովանորդւոյ, կամ վ͞ն բարեկամի իւրոյ, և առեալ զայն, տայ ն͞մ, կամ աղաչէ զնա, զի տայցէ, կամ առաքիցէ ն͞մ, վ͞ն որոց հայցէ: Ասեմ առ այս, եթէ կրօնաւորն՝ որ հայցէ, կամ առնու զիրն զայն՝ կամի եղանիլ տ͞ր, կամ կամի 'ի կիրարկանել զայն, մեղանչէ ընդդէմ ուխտին աղքատութեան, թէև իցէ տալոց աղքատկանին, կամ բարեկամին իւրում, կամ ներկայաբար տայ. կամ առաքիցէ նոցա յետոյ, կամ ինքնին տայցէ, կամ առաքիցէ յանուն այլոյ: Բայց եթէ ոչ ընդունի վ͞ն իւր, այլ մանաւանդ ասէ յայտնապ͞. ես ոչ ունիմ պիտոյս զայսմանէ իրէ վ͞ն իմ, և ոչ կարեմ ընդունիլ վ͞ն իմ: ուստի եթէ կամիս տալ այս ինչ ումեք, կամ կամիցիս առաքել, և վասն այսորիկ կամիս, զի ես առեալ զայս, տաց, կամ առաքեցից նմա յանուն քո. ընկալայց զողորմութիւնս, և զնպաստաւորութիւնս, յայնժամ ոչ եղիցի ընդդէմ ուխտին աղքատութե՟ն, թէև տուօղն զայն արասցէ զողորմութին խնդրուածօք կրօնաւորին · և կրօնաւորն առ այս պատճառ շնորհակալ լինիցի զնմանէ : Քանզի նա ոչ առնու զայն վ՟ս իւր, և ոչ եղանի իշխօղ ն՟ր, այլ ո՟պ միջնորդ աղերսէ զնա զայս առնել : Ապա կարի հեռի է 'ի յառնելոյ ընդդէմ ուխտին աղքատուե՟, յոր ժամ աղերսէ զտուօղն, զի ոչ ինքեան, այլ այլում տայցէ զողորմութին զայն յանուն իւր, կամ առաքիցէ 'ի ձեռս այլոց, թէև տուօղն զայն առնիցէ վ՟ս միջնորդութե՟ն կրօնաւորին : Բայցսակայն, թէպէտ առնելն զայս առանց հրամանի վերակացունին, և ընդդէմ կամաց նորա ոչ իցէ ընդդէմ ուխտին աղքատուե՟, սակայն քարշէ ընդ ինքեան զբազում անպատեհ իրս՝ բաց 'ի վտանգից, որք անդ գոն առնելոյ ընդդէմ ուխտին աղքատութե՟ն : զի բազմիցս ոչ զգուշանալով ոք, տարակուսի, մի թէ ինձ տայ · կամ ո՟պ ընդունիմ զայն, զոր տայ · մի թէ տամ յանուն իմ կամ յանուն ն՟ր · մի թէ նա տայ, կ՟մ ես տամ: Բազումանգամ տուփումն սովորէ կուրացուցանել, և ցանկութի՟ն ունելոյ, և ընձեռելոյ զդրամս, և բաժանելոյ զայնս, և տրամադրելոյ զիրս ո՟պ ասացաք 'ի նախընթաց գլխոջ, և առնէ 'ի ներքոյ տեսակի ամենից պատճառաց վերերևութից զիրս, որք են ընդդէմ ուխտին աղքատութե՟ն : Վ՟ս որոյ պարտիմք երկնչել · և փախչել մեծապ՟ յայսպիսեաց իրաց · և յայլոց նմանեաց սացին : Ջանասցուք զի մի՛ ասիցի զմէնջ այն, զոր պատմէ Կասիանոս, թէ ումն ժողովրդապետ թողեալ զաշխարհս, զպաշտօնն, և զարժանապատուութի՟ն ժողովրդապետական, եղև կրօնաւոր · բայց պահեաց զեր իմն յիւրոց առ'ի ոչ աշխատել 'ի ձեռագործս վասն կերակրոյ, որպէս առնէին այլք կրօնաւորք · առ որ ասաց մ՟ծն Բարսեղ, * Կորուսեր ըզ ժողովրդապետութիւնն ։ և կրօնաւոր ոչ եղէր ‖ ։

ԳԼՈՒԽ · ՃԶ ։

Հաստատի օրինակօք ոմանց այն , որ ասացաւ ։

Պատմէ նրն Հերոնիմոս , թէ 'ի սկիւթումն անապատական յայնցանէ , որք ապրէին աշխատութ̃բ ձեռաց իւրեանց , ցանկացաւ ժողովել զդրամ ։ Հիւսէր զվուշ , և տափանօքն զոր ունէր , վաղվաղէր մեծաւ̃ աշխատիլ · և ուտէր յոյժ սակաւ , և այսպէս յաւել գրեթէ զհարիւր դահեկանս ։ Եւ 'ի մեռանելն , և 'ի թաղելն զնա , գտին զայնս ։ Ժողովեցան կրօնաւորքն առ 'ի տեսանել , թէ զի՞նչ պարտէին առնել 'ի դիպուածոյն յայնմիկ զայնց դրամոց ։ Ասէ նրն Հերոնիմոս , թէ բնակէին անդ գրեթէ եռ̃ կրօնաւորք , իւրաքանչիւրքն 'ի խցի իւրեանց զատուցեալք 'ի միմեանց , որոց ոմանք ասէին , բաժանել զդրամն զայնս աղքատաց , ոմանք ասէին տալ եկեղեցեաց · ոմանք ասէին առաքել զայնս առ հայր և մայր ննջեցելոյն , որք էին չքաւորք ։ Բայց մեծն Մակարիոս , աբբայն Պամբոյ , և Իսիդորոս , և այլք ծերագոյնք , զորս նոքա հարս կոչէին , որովք խօսելով Հոգւին սբ̃ , ասացին և վճռեցին թաղել ըղ դրամսն ընդ նմին ասելով՝ Արծաթդ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ ։ Եւ արարին այնպ̃ · և ասէ նրն Հերոնիմոս · մի՛ ոք կարծիցէ , թէ այս լիցէ անողորմութի՛ւն , այլ է գթածութի՛ւն · քանզի օրինակս այս պատճառեաց զայնքան ահ , և զարհուրումն յամ̃ միայնակեացս եգիպտոսի , մինչ զի համարէին մեծ յանցանք , եթէ 'ի կեանս մահուան նոցա գտանիցիւր 'ի նմ̃ փող մի , կամ տասանոց մի ։

Սբն

Սր̃ն Օգոստինոս ձայնէ զօրինակ մի զկրօնաւորէ միոյ Յունվարիոս կոչեցելոյ՝ և մեծ ջք համարեցելոյ․ զոր ասացից նոյնով բանիւ սբյն Օգոստինոսի, որ է յոյժ ողբալի և ցաւալի ։ Ասէ սր̃ն Օգոստինոս, պարտիմք լալ, և սաստիկ զսուգ առնուլ 'ի վ̃ր դատապարտութե̃ն յունվարիոսին մերոյ, որ թուէր 'ի միջի մերում սիւն մի հնազանդութե̃, և աղքատութե̃․ և վճարեաց զկեանս իւր թշուառաբար ։ Զի եկեալ առ մեզ արտասուելով խոստացաւ պահել զաղքատութե̃ զա̃մ ժամանակս կենաց իւրոց, և ոչ դիտելով մեր զնա, ստացեալ ունէր յաշխարհէն զայգի, և զագարակս ։ Ո՛հ դաւանութի մահացու․ ո՛հ խոստումն նենգաւոր, զի դաւանէր, և խոստանայր բերանով զայն, յորմէ գարշէր սրտիւ ։ Կարծեմք մեք թէ իցէր սր̃ նա, որ չարագոյն էր քան զամենեսեան ։ Այսու կերպիւ եկեաց յունվարիոսն մեր զամս երկոտասան, և աւելի․ չարաչար եկեաց, և չարաչար մեռաւ ։ Եկեաց չարաչար, զի պահէր գաղտ և 'ի թաքստի զայն, որ ոչ էր իւր․ և մեռաւ չարաչար․ զի և ոչ 'ի վախճանի կենաց իւրոց ծանեաւ զմոլորութի իւր․ այլ մեռաւ յամառեալ 'ի մեղս իւր․ և արարեալ զկտակ առանց գիտելոյ մեր, եթող ժառանգ զորդին իւր, զոր ունէր յաշխարհէն ։ Ո՛հ երանի թէ գոնեայ ասիցէր մեզ 'ի ժամու մահուան իւրոյ․ զի աղօթելով մեր վ̃ն նր̃ առնուցուր զթողութի ։ Բայց ոչ խոստովանեցաւ, և ոչ զղջացաւ․ վ̃ն որոյ ոչ է 'ի մերայնոց, և ոչ էր մեր, մինչ էր կենդանի ։ Կարդացէք սուրբեմ զձեռան գիր նր̃, և գիտէք 'ի նմանէն ըզհարիւր և զմետասան ոսկեղան ծրարեցեալս 'ի կապերտի միում, զորս ունէր 'ի պահեստի 'ի յորմն խցին իւրոյ, և ասացէք լալով արծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ ։ Զի ոչ է ձան մեզ ծախել, կամ 'ի գործ ածել զայնս գրամս վասն զգեստուց, կամ կերակրոց, և կամ վն՟ այլոց իրացն վանից. քանզի է դէն յաւիտենականի դատապարտութե՟: Այսպ՟ ասէ ս՟րն Օգոստինոս առ եղբարս անապատականս:

Պատմէ Չեսարիոս, թէ 'ի կարգի չիսթերսականաց` հիւանդացաւ կրօնաւոր մի, և ըղձնի խոստովանելոյն աբբայհօրն, բերելն նմա զամենաս՟րբ հաղորդութիւն, և բացեալ զբերանն ընկալաւ զայն. բայց ոչ կարաց կլանել, և ոչ փակել զբերանն: Եւ կալով ամենեքեան զարմացեալք ընդ այս, քահանայն առեալ 'ի բերանոյ նորա, եդ 'ի բերան այլոյ հիւանդի միոյ կրօնաւորի, որ անդ կայր. և ընկալաւ զնա մեծաւ ջերմեռանդութբ՟, և եկուլ զայն առանց դժուարութե՟ իմիք: Զկնի սակաւուց մեռաւ կրօնաւորն այն. և յայտնեցաւ պատճառն, վն՟ որոյ արգելեալ եղև կեցութին, և դեղն կեցութե՟ նր՟. քանզի 'ի լուանալն զմարմինն, գտին առ նմա զհինգ պղնձեայ փողս, զորս ոչ էր նմա հրաման պահել: Զայս տեսեալ օրհնեցին զԱծ, և գիտացեալ աբբայն ետ զհրաման թաղելոյ զնա 'ի դաշտի. ընկենլով զհինգ դրամսն զայնոսիկ 'ի վր՟ դիոյ նորա, ասելով, "Արծաթ քո` զոր գաղտ ընդդէմ դաւանութե՟ քում՝ ստացար, եղիցի ընդ քեզ 'ի կորուստ յաւիտենական": Եւ պատմելով զիրս զայս աբբայ հայրն 'ի հասարակ ժողովում, ա՟ծ զի յայտնի լինիցի պատճառն վն՟ ոչ կարելոյն կլանել զհաղորդութին, ասէ. Ոչ եղև հիւանդութին պատճառ ոչ կարելոյ կլանել զամենաս՟րբ հաղորդութին, զի 'ի նմին աւուր եկեր զհաւ մի ամբողջ:

Ի ժամանակագիրս ս՟րյն Փրանչիսկոսի պատմի, թէ 'ի մենաստանի միում կարգի նր՟ կայր եղբայր մի ոչ քահանայ, որ գիտէր ընթեռնուլ սակաւ մի. և ցանկանալով գիտել աւելի, լի, ստացաւ զսաղմոսարան մի · բայց քանզի կանոնն արգելոյր զհասարակ եղբարն յուսանելոյ զգրութիւն, հայրն վերատեսուչ զայս գիտելով խնդրեաց 'ի նմանէ զսաղմոսարանն · որում պատասխանեաց եղբայրն, թէ ոչ ունիմ զգիրքն զայն : Կրկին անգամ խնդրեաց վերատեսուչն, զի ասիցէր, թէ ուր էր գիրքն այն, ո՟պ զի մի՛ մնայցէր յատկասէր · բայց եղբայրն այն ո՛չ կամեցաւ հնազանդիլ : Զկնի սակաւուց անկաւ եղբայրն այն 'ի ծանր ինչ հիւանդութիւն, և վերատեսուչն՝ ո՟պ զի մի՛ մեռանիցէր նա յատկասէր, հրամայեաց նմա զօրութ՟բ սրբոյ հնազանդութեան, զի տայցէր ինքեան զսաղմոսարանն, և ասիցէր, թէ ուր իցէր թաքուցեալ զայն : Իսկ թշուառականն այն յամառեալ և խստացեալ 'ի բացասելն, մեռաւ առանց 'ի բաց ձգելոյ զյատկասիրութիւն : Եւ 'ի գալ գիշերոյն զկնի թաղման ն՟ր, մինչ լուսարարն հնչեցուցանէր զզանգակն 'ի գիշերին վ՟ս առաւօտեան ժամուն, զգաց 'ի վ՟ր թիկանց իւրոյ զառնէր մի յոյժ ծանրագոյն · և 'ի միասին զձայն մի ահարկու, և շփոթեցեալ · և անհասկանալի · և անկաւ յերկիր ո՟պ զմեռեալ : Եղբարքն լսելով զառաջին բաղխումն զանգակին վ՟ս առաւօտեան ժամուն, և տեսանելով թէ զանգի կալնոյր, և զկնի սպասելոյ երկարապ՟, գնացին որոնել զլուսարարն · և գտին զնա ո՟պ զմեռեալ, և մինչ դարձաւ յետոյ 'ի յուշն, ծանեան նոքա զպատճառն : Եւ 'ի սկսել ն՟ց զառաւօտեան ժամն, երևեցաւ զարհուրելի ստուերն այն, առնելով զահարկու դղրդումն, և շընջիւն հանգոյն փողահարի միոյ կերկերեցելոյ՝ առանց կարելոյ իմանալ զեր իմն այնուրէկ, զոր ասէր · Վ՟ս որոյ ամփոփեցեալ բոլոր դասն, հայրն վերատեսուչ քաջալերեաց զն՟ս, և ասէ ցստուերն · 'ի կողմանէ Յ՟ի Ք՟ի ան՟ մերոյ, և նորին սրբազան չարանօքն հրամայեմ քեզ, զի ասիցես մեզ, թէ ո՞ իցես դու. և զի՞նչ խնդրես յայսմիկ տեղւոջ: Որ պատասխանեալ ասաց. ես եմ հասարակ եղբայրն այն, զոր յերէկ թաղեցէք աստ: Կրկնեաց վերատեսուչն, կամի՞ս դու 'ի մէնջ զօժանդակութիւն իմն, և զաղօթս, ասա մեզ՝ առ ի՞նչ ես եկեալ այսր: Ասէ ստուերն, ոչ կամիմ զաղօթս ձեր, որք ոչ են ինձ օգուտ. զի յաղագս սաղմոսարանին, որով մեռայ յատկասէր, դատապարտեցայ յաւիտենականաբար: Յայնժամ ասէ ցնա վերատեսուչն. որովհետև ոչ կարեմք օգնել քեզ. հրամայեմ քեզ յանուն Յսի Քսի տն մերոյ, զի իսկոյն 'ի բաց գնայցես աստի. և ոչ ևս դառնայցես այսր առ 'ի վրդովել զմեզ: Իսկոյն անյայտ եղև ստուերն այն, և այլ ոչ երևեցաւ:

Պատմէ Դիոնէսիոս քարթուսիանն, թէ կրօնաւոր ոմն ունելով զզգեստն պատառոտեցեալ, մտեալ 'ի հանդերձատունն էառ ըզկտոր մի կապերտի առանց հրամանի առ 'ի կարկատել: Հիւանդացաւ սա, և քանզի էր մեծ ծառայ Այ, գոլով մերձ 'ի մահ, ունէր զմեծ ուրախութիւն, և էր հանդարտ. խիղճ մտացն ոչ խայթէր զնա վն իրի իմիք, այլև ոչ դևն գտանէր 'ի նմա զտեղի, ուստի կալնուցոյր առ 'ի աղմկել զնա: Բայց համբարձեալ պատահմամբ զաչսն դէպ 'ի յանկիւն մի խցին, ուր կախիւր զզգեստն իւր, ետես զդև մի 'ի վր զգեստուց իւրոց 'ի կերպ կապկի, որ լիզէր զայն կտոր կապերտին, որով կարկատեալ էր զզգեստն: Յայնժամ իմացաւ զախալանս իւր, զոր արարեալ էր՝ առնլով զկտորն զայն առանց հրամանի. և կոչեալ զվեհագոյնն, ասաց նմա զախալանս իւր. և ընդ խոստովանիլն, իսկոյն անյայտ եղև դևն:

'Ի պատմագիրս կարգին Սբյն Դոմինիկոսի ընթեռնա-

Թեռնանի · Թէ գոլով առաջնորդ 'ի քաղաքն Բոլոնիայ մբն՟ Ուէձինալտոս՝ կրօնաւոր եղբայր մի առեալ էր յողորմութի զկտոր մի կապերտ՝ յայնց կապերտաց , զոր նք՟ 'ի գործ ածէին , վն՟ կարկատելոյ զհանդերձն իւր · բայց առեալ էր առանց հրամանի : Վն՟ որոյ մբն՟ Ուէձինալտոս կոչեալ զնա 'ի ժողովն ներկայութբ՟ ամենից կրօնաւորաց , պատժեաց զնա ոչ զգող և զյատկասէր խստագոյն բանիւք , և խարազանահար արար զնա · և այրեաց զկապերտն առաջի աչաց նց՟ , և այլոց կրօնաւորաց :

Ի նոյնում պատմութե Ճառի , Թէ գոլով մեծն ալբերտոս գաւառապետ յայնմիկ սրբազանի կարգի , հրամայեաց մեծագունեղն խստութբ՟ , զի մի՛ ոք 'ի յեղբարց ունիցէր ը՟ իշխողութբ՟ իւրով , և ոչ ը՟ իշխողութբ՟ այլոց զդրամս , Թէ բազում իցէ , Թէ սակաւ , ոչ վն՟ իւր , և ոչ վն՟ այլոց · և զայս 'ի ներքոյ մեծագունեղի պատժոյ : Եւ պատմեցաւ 'ի գաւառական ժողովի միում , Թէ եղբայր ոմն անցեալ էր զայնու կարգադրութբ՟ , և զսահմանաւ · և էր արդէն մեռեալ և Թաղեցեալ եղբայրն այն յանցաւոր : Եւ մեծն ալբերտոս ետ հանել զնա 'ի գերեզմանէ անտի , ուր սակաւ ինչ յառաջ Թաղեցեալ էր · և ետ ընկենուլ արտաքոյ մբ՟ տեղւոյն 'ի յաղբանոցի , առ 'ի հեռանալ մբց՟ հարցն հնոց , որք սովորք էին այսպ՟ վարիլ ը՟ նմ՟ եղբարս այնպիսիկ , որք եղեալք էին յատկասէրք :

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ:

ԳԼՈՒԽ. Ա:

Յաղագս գերազանցութե՟ առաքինութե՟ն ողջախոհութե՟. և յաղագս աստիճանաց նր՟, ընդ որս ելանելոց եմք առ կատարելութի՟ նորին:

ԱՅՍ ԷՆ ԿԱՄՔՆ ԱՅ՟ ՍՐբութե՟ ձեր. 'ի բաց լինել ձեզ 'ի պոռնկութե՟: Գիտել իւրաքանչիւրումեք 'ի ձէնջ զիւր աման ստանալ սրբութե՟, և պատուով: Քանզի ո՛չ կոչեաց զմեզ ԱԾ՟ 'ի պղծութե՟, այլ 'ի սրբութե՟: 1. Թես. 4. 3. և 7. *Սբ՟ առաքեալն Պօղոս զողջախոհութիւն կոչէ աստ՝ սրբութիւն: Վս՟ այնորիկ բառիս սրբութիւն, կամ սրբարարութիւն, իմանայ առաքեալն զողջախոհութիւն, ոպ՟ ծանուցանէ սրն՟ Բեռնարդոս: Եւ Քս՟ փրկիչն մեր 'ի սրբազան աւետարանին կոչէ զնա առաքինութիւն երկնային, և հրեշտակային. զի զմեզ նմանս հրեշտակաց առնէ:* 'Ի յարութե՟ ո՛չ կանայս առնեն, և ո՛չ արանց լինին, այլ են իբրև զհրեշտակս ԱՅ՟ յերկինս: *Մատթ. 22. 30: Եւ այսպէս ասէ սրն՟ Կիպրիանոս խօսելով ընդ ոմանս* կուսանս, զայն՝ զոր ունելոց էք յետոյ 'ի փառս արքայութեն, զնոյնն սկսեցէք վայելել 'ի յայս կեանս. զի մինչ յարատեւէք յողջախոհութեն, և 'ի մաքրութեն, նման հրեշտակաց լինիք և հանդէպք նց ։ Իսկ կասիանոս հաստատելով զսոյնս՝ ասէ, թէ այլ ո՛չ իւիք առաքինութբ եղանին մարդիկք այնքան նման հրեշտակաց, որպ եղանին ողջախոհութբ ։ Զի այնու կեան 'ի մարմնի, որպ թէ ոչ ունիցեին զմարմին. և որպ թէ լիցեին ոգիք մաքրագունեղք. ըստ ասացելոյ սբյն Պօղոսի. Բայց դուք ո՛չ էք մարմնով, այլ հոգւով ։ Հռովմ. 8. 9 ։ Այլև այսու կերպիւ գերազանցեմք քան զհրեշտակս. քանզի նոքա որովհետև ո՛չ ունին զմարմին, ո՛չ է մեծ իմն, թէ ունիցին զմաքրութիւնս զայս. բայց մարդ՝ որ կեայ այսու մարմնով մահկանացուաւ, որ է այնքան ներհակ հոգւոյ՝ և պատերազմի ընդ նմա, կեայ նէ այնպ, որպ թէ ոչ ունիցի զմարմին, և իբրև թէ լիցէր որպ մաքուր ոգի. այս է առաւել մեծ իմն ։

Այնքան հաճի ԱԾ ընդ առաքինութիւս այս, մինչ զի որդին իւր մարմնանալով, և կամելով ծնանիլ 'ի կնոջէ, կամեցաւ ծնանիլ 'ի կոյս մօրէ նուիրեցելոյ ԱՅ ուխտիւ ողջախոհութեն, որպ ասեն սրբքն ։ Սբն Յոհաննէս ասէ 'ի յայտնութեն, թէ տեսի 'ի լերինն սիօնի, ճ 'ի յերկինս զայնոսիկ, որք պահեցին զկուսութի՝ ընկերակիցս հրեշտակաց, և հետևէին գառին, ուր և երթայր, և երգէին զերգ նոր, զոր այլ ոչ ոք կարէր երգել, եթէ ոչ կուսանքն ։ Տեսի. և ահա գառն կայր 'ի վր լերինն սիօնի, և ընդ նմա հարիւր քառասուն և չորք հազարք, և երգէին զերգս նորս, և ոչ ոք կարէր գիտել զերգս նոցա, բայց միայն հարիւր քառասուն և չորք հազարքն, որք գնեալք էին յերկրէ ։ Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք ։ Սոքա զհետ երթան գառինն, ուր և երթայցէ ։ Յայտ. 14. 1.

Սրբն Գրիգորիոս ասէ աստ, թէ կուսանքն կան ընդ Քի 'ի լերինն, զի 'ի ձեռն մեծի արդեանն ողջախոհութե են յոյժ բարձրացեալք 'ի փառս:

Սրբն Հերոնիմոս և Սրբն Օգոստինոս ասեն, թէ պատճառն նախամեծարութե Սրբյն Յօհաննու աւետարանչին՝ որ այնքան յառաջաբար սիրեցաւ 'ի Քէ քան զայլ աշակերտսն, (որ անուանէ զնա սրբազան աւետարանն Յօհաննու. 21. 7. Աշակերտն այն, զոր սիրէր Յս) եղև կուսութն նր: Ուստի եկեղեցին երգէ 'ի պաշտօնի տօնի նր. 'Սիրէր զնա Յս, զի հոգևոր նախամեծարութեն ողջախոհութե տայր զնա մեծագունի սիրոյ արժանի, զի գոլով կոյս ընտրեցեալ 'ի նմանէ, կոյս մնայ յաւիտեան ||: Եւ այսպէս տեսանք մեկնեն զնմանէ զայն, որ ընթեռնամք 'ի յառակսն. 22. 11. Որ սիրէ զսրբութիւն սրտի, յաղագս շնորհի շրթանց իւրոց ունիցի բարեկամ զթագաւորն: Վասն այսորիկ սիրէր զնա և խանդաղատէր զնովաւ Տրն: վս այսորիկ թոյլ տայր նմա անկանել զլանջօք իւրովք: Եւ Պետրոս առաքեալն, որ գոլով ամուսնացեալ, ոչ իշխեաց 'ի յընթրիսն հարցանել ցՔս, թէ ով մատնելոց էր զնա, աղաչեաց զՍրբն Յօհաննէս, զի հարցանիցէ զնա: Եւ յաւուրն յարութե Քի ընթացեալ նա ը պետրոսի առ գերեզմանն, յառաջեաց քան զպետրոս: Եւ այլ անգամ մինչ կային նոքա 'ի նաւակի իւրեանց, և որսային զձուկն 'ի ծովուն տիբերիայ, երևեցաւ նց Տր առ ափն ծովու, և 'ի յոչ ճանաչելն զնա այլոց աշակերտաց, ճանաչեաց զնա Յօհաննէս ասելով ցպետրոս: Տր է այն: Յօհան. 21. 7: Ուստի ասէ Սրբն Հերոնիմոս, 'Միայն կոյսն ճանաչեաց զկոյսն ||, այսինքն Յօհաննէս զՔս: Եւ վերջապէս կալով Քս 'ի խաչին, ում արդեօք յանձնեաց զկոյս մայրն իւր 'ի յետնում կտակի իւրում, եթէ ոչ կոյս աշակերտի իւրում : * Զմայրն կոյս՝ կուսի յանձնեաց || ասէ սբ՟ն Հերոնիմոս :

Բայց թողցուք զգովասանութի՛ն, և զգերազանցութի՛ն ողջախոհութե՛ 'ի մի կողմն, և զայլ բազում իրս, զորս կարէաք ասել զնմանէ, զի կամիմ գալ համառօտ յայսմիկ ընձեռուածոյ հետևելով երանելւոյ հօրն մերում Իգնատիոսի : Արդ՝ Կասիանոս դնէ զեօթն աստիճանս ողջախոհութե՟, ընդորս ոպ՟ ը՟ սանդուղս պարտիմք ջանալ ելանել, մինչև ժամանեսցուք առ կատարելութի՟ և մաքրութի՟ այսորիկ երկնային և հրեշտակային առաքինութեա՟ : Առաջինն է, զի 'ի յարթնութե՟ ոչ յաղթիցի մարդ 'ի ցանկութե՟, և ոչ անդրաքարշիցի 'ի խորհրդոյ իմիքէ, կամ յաղտեղի և 'ի զգայական շարժմանէ : Երկրորդն է, զի մի յամիցէ յայնպիսի խորհուրդս, այլ 'ի գալ նոցա, իսկոյն արտաքսիցէ յինքենէ : Երրորդն է, զի մի շարժիցի, և մի այլայլիցի, ոչ սակաւ և ոչ բազում տեսութե՟ կանանց : Աստիճանս այս է մեծի կատարելութե՟ . և ոչ է այնքան հասարակ, որքան առաջինքն . յաղագս մեծի բեկանաւորութե՟, և ապականութե՟ մարմնոյ մերոյ, որ 'ի յառաւլթս նմանս տայ իսկոյն համբառնայ զինքն : Չորրորդն է՝ ոչինչ կերպիւ հաւանիլ, եթէ դևն մերձենայցէ առ նա, մինչ է արթուն, և ոչ թողուլ տալ, զի շարժիցի մարմինն, ոչ ևս լոկ շարժմամբ : Հինգերորդն է, զի յորժամ ախտոյ լիցէ ընձեռել զիրաց, որք պատկանին առ այս նիւթս, ոպ՟ ընթեռնուլ, կամ ուսանիլ, յայնժամ անցանիցէ ընդ այն հանդարտ սրտիւ, և ոչ ունիցի զշարժումն զայնց իրաց, որպէս թէ ընձեռիցէ զայլևսոց շինուածոց, կամ զսերմանց սերմանելեաց, կամ զայլոց սոցին նմանեաց : Իսկ զայս աստիճանս ունէր երանելին հայրն մեր Իգնատիոս կատարելապ՟ 'ի սկզբանէ դարձման իւրոյ, ոպ՟ ընթեռնանի

՚ի վարս նր։ Վեցերորդ աստիճանն է, զի ոչ ես ՚ի քուն լինիլն ունիցի զցնորմունս, ոչ զերևակայութի, կամ զայլ իրս անպարկեշտութե։ Եւ այս նշանակէ զմեծ մաքրութի, զի նշան է, թէ նաև տեսակ նորին ոչ գոյ ՚ի յիշողականութե։ Եւ թէպէտ հակառակն նորին որ պատահի՝ ոչ իցէ մեղք, զի մարդն է ննջեալ, սակայն նշան է, թէ ոչ է յաղթահարեալ, և ենթարկեալ տակաւին զախորժակն զգայական. այլև ոչ է ջնջեցեալ ամենևին ՚ի նմա յիշատակն նմանեաց իրաց։ Եօթներորդ և վերջին աստիճանն՝ այն է կատարեալն՝ թէ է սակաւուց, զոր և ունէր Տէրն այն Սերենոս. և այլք նմանք նմին, որոց Տր կամի առնել զայս շնորհ, և է՝ յորժամ ոք ժամանէ յայնպիսի մաքրութի, մինչ զի ոչ ՚ի քուն լինիլն, և ոչ յարթնութե զգայ զայնպիսի շարժմունս, ո՛չ պատճառօք բնականօք սովորք են գալ. զի զօրութբ շնորհաց ախորժակն կայ հանդարտ. և խաղաղութբ հաստատ. և բնութիւն անկար զմայլի մասամբ իմիք այնու երջանկութբ, զոր ունէր նոյն բնութիւն յառաջնում կացութե անմեղութե. Ըստ ասացելոյ սբյ առաքելոյն Պօղոսի. Հռովմ. 6. 6։ Զի խափանեսցի մարմինն մեղաց։ Յայսպիսի ՚ի բաց բառնի շնորհօքն Այ ուժն մեղաց, և իշխողութին, զոր սովոր է ունիլ. և այսու ոչ զգան զշարժումն ինչ անկարգ. և ոչ զայնպիսի իր, որ ունիցի զհամ նորա. այլ կեան ՚ի մարմնի, որպ զանմարմինք։ Արդ՝ ոչ ասեմք թէ իցէ ընդդէմ ողջախոհութեան զգալն զշարժմունս զայսպիսիս յարթնութե, կամ ՚ի քուն, զի այս է իր բնական, և խոստովանի անդ Կասիանոս, թէ նաև ՚ի յոյժ կատարեալս կարէ պատահիլ, թէպէտ Տրն մեր առնելով ոմանց ծառայից իւրոց զշնորհ, տալ զկատարեալ պարգև ողջախոհութե։ Եւ ոմանք շնորհիւ նր հազիւ զգան զայսպիսի իրս։

երս : Եւ ոմանց պատահելով իր իմն այսացիկ, հանդարտին խոկոյն դիւրաւ՟, որ՟ թէ ոչինչ լիցէր եղեալ : Եւ այս ա՟մ է հետևիլ մաքրութե՟ հրեշտակայնոյ, որ է այն, զոր հայրն մեր դնէ 'ի կացուցման փոխանակ նորատակի, առ որ միշտ պարտիմք հայիլ, և ասէ . * Պարտ է նկրտելով մաքրութե՟ հրեշտակայնոյ հետևիլ|| : Ցանկիր զբառն զայն՝ նկրտելով . քանզի նկրտիլն ոչ միայն կամի ասել ջանալ, և աշխատիլ, այլ աշխատիլ ա՟մ զօրութբ՟, և բռնադատել զինքն, որ՟ 'ի յաղթահարել զիւր դժուարինս : Կամի յայտնել ուսուցանել մեզ, և զգուշացուցանել, թէ առ 'ի ժամանել առ մաքրութիւն այս հրեշտակային, հարկ է, զի աշխատիցիմք ա՟մ զօրութբ՟ մերով, և առնիցեմք զայս իրակութիւն 'ի կիր արկանելով զա՟մ առաքինութիւնս, և մանաւանդորաց՟ զառաքինութի մահացուցման : Զի թէպէտ այս է պարգև Այ՟, և ոչինչ ջանացողութե՟ մարդկային բաւական է ժամանելոյ առ այս, բայց սակայն կամի ա՟ծ, զի մեք առնիցեմք 'ի կողմանէ մերմէ, որքան կարելի է, և այսու կերպիւ կամի տալ մեզ զայս պարգևս :

ԳԼՈՒԽ Բ.

Թէ առ'ի պահպանել զողջախոհութիւն է հարկաւոր մահացուցումն, և պահպանութիւն զգայարանաց, և մանաւանդ աչաց :

Ոչէ կասկածանս, թէ էր հասարակ և փորձառեցեալ կարծիք հնոց հարցն այնոցիկ, թէ ոչ ոք կարէր առնել, և յաղթահարել զայս մոլութի և զախորժակ մարմնոյ, եթէ ոչ սովորելով մահացուցանել և բեկել զյատուկ կամն իւր 'ի յա՟մ իրս : * Քանզի զբազմաց զփորձառեալս, և 'ուսեալս ռամանդեն , թէ միայնակեացն , և մանաւանդ երկրաւորդն ոչ բնաւ զկամս ցանկութե̃ իւրոյ սանձել կարասցէ , եթէ ոչ նախ ուսցի մեռուցանել զկամս իւր 'ի ձեռն հնազանդութե̃ ‖ ։ Եւ Ս̃ն Բարսեղ , և այլք Ս̃րք հաստատեն զայս յոյժ երկարապ̃ , թէ առ'ի ստանալ , և պահպանել զմաքրութի և զկատարելութի̃ ողջախոհութե̃ , պիտոյ է կրթութի̃ ամենից առաքինութե̃ց , զի համայնք այնոքիկ ծառայեն , պահպանեն , և օգնեն այսմիկ առաքինութե̃ ։ Զայսմանէ խօսեցաք յամ̃ խօսակցութիս այսորիկ ընծեռոմածոյ մանուածորապ̃ յերկրորդում մասին ։ Ուստի այժմ ասասցուք զամենս իրս մանուածորս , որք յաղագս այսորիկ օգնեսցեն յոյժ ։ Եւ առաջինն է այս , զի եթէ կամիմք ստանալ զմաքրութի̃ և զկատարելութի̃ ողջախոհութե̃ , և պահպանել զնա 'ի նմին , պիտոյ է , զի ունիցիմք զմեծ հոգս պահպանելոյ ըզդրունս մերոց զգայարանաց , և յատկապէս զաչս ․ որովհետև անտուստ մտանեն չարիքն 'ի սիրտն ։

Սբ̃ն Գրիգորիոս 'ի վբ̃ այնց բանիցն Եսայ. 60. 8. Ո՞վ ԷՆ սոքա , որք իբրև զամպս թռուցեալ են , և իբրև զաղաւնիս առ պատուհանս իւրեանց ․ ասէ՝ թէ արդարքն են , որք թռչին որպէս զամպս , զի վերանան յերկրաւորաց , և որպ̃ զաղաւնիս դառնան առ պատուհանս իւրեանց , զի զգուշանան ի̃ ելանելն արտաքս , և 'ի հայելն ընդ լուսամուտս զգայարանաց առ իրս արտաքինս , և այնու պահպանին 'ի ցանկանալեաց նոցա ։ Բայց նոքա , որք թեթևամտութե̃ ելանեն արտաքս առ'ի հայել ընդ լուսամուտս զգայարանաց առ իրս աշխարհիս , բաղձում անգամ ըմբռնին ցանկութ̃ նց ։ Մարգարէն Դաւիթ թէպէտ էր Ս̃բ , և սովոր թռչելոյ որպ̃ զամպ առ խոկումն բարձրագունից խորհրդոց ա̃ծայնոց ․ բայց զի ոչ եղև խոհեմ 'ի հայելն, վս որոյ քարշեցաւ եղև յայնմանէ, զոր ետես. Ել մահ ընդ պատուհանս ձեր : Երեմ. 9. 21: Եմուտ մահն մեղաց ընդ պատուհանս աչաց իւրոց, և անարգեաց և կողոպտեաց զհոգին, և ասաց. Աչք իմ կողոպտեաց զհոգի իմ : Ողբոց. 3. 51. Ասէ սրն Գրիգորիոս, ՚Ո՛չ վայելէ հայիլ առայն, որում ոչ վայելէ ցանկալ‖ : Զի իբրև անաւք քարշեսցեն զքեզ առ ինքեանս, յափշտակեսցեն, և կողոպտեսցեն զսիրտդ, և յանկարծ եղանիս բանտարկեալ և գերի :

Վս այսորիկ սրն Յոբ յոյժ բարեաւ պատրաստէր յայսմիկ ասելով, Ուխտ եդի ընդ աչս իմ, զի մի խորհեցայց զկուսէ : Յոբայ. 31. 1. Ասէ սրն Գրիգորիոս, [illegible] պայման ուխտադրութե է այս, ուխտ դնել ընդ աչաց ոչ խոկալ : Թո՛ղ՝ թէ պարտ է պայմանել ընդ իմացականութե, և ընդ երևակայութե առ 'ի ոչ խոկալ, և ընդ աչաց առ'ի ոչ հայիլ : Բայց սակայն ո՛չ ասէ այսպէս, այլ ասէ, ընդ աչաց իմոց եդի ուխտ առ'ի ոչ խոկալ զկանանց : քանզի յոյժ բարւոք գիտէր սրն Յոբ, թէ աստուստ մտանեն վատ խորհուրդքն 'ի միտս. և թէ պահելով զաչս և զդրունս զգայարանաց իւրոց, կարէր պահպանել զիմացականութի և զսիրտ իւր. վս այսորիկ ասէ, թէ ուխտ եդի ընդ աչաց իմոց՝ ոչ խոկալ զկանանց : Ուստի եթէ ոչ կամիս ունիլ դու զվատթար խորհուրդ և զանպարկեշտ, պիտոյ է քեզ ունիլ զաչս ողջախոհս և պարկեշտս, և ուխտել ը աչաց քոց, և ո՛չ հայիլ յայն, որում ոչ է ժամ ցանկալ : Սբ ոսկեբերանն խոկալով զայս բան ասէ. Ո՞վ է այն՝ որ ոչ զարմանայցէ, տեսանելով զայրս զայս քաջամարտիկ, որ ընդդէմ եկաց դիւին, և երես առ երես մարտեաւ ընդ նմա, նաև յաղթեաց զամ մեքենայս նր, և զնենգութիւնս, ո՛չ իշխէ հայիլ յերեսս աղջկան միոյ : Ո[illegible] զե

տեսա

տեսանիցեմք, ասէ, թէ որքան հարկաւորութիւն ունիմք կալոյ զգոյշ և շրջահայեաց յայսմիկ իրս, թէև իցեմք մեծ կրօնաւորք:

Սբ աբբայն Եփրեմ ասէ, թէ երեք իրք են, որք մեծապէս օգնեն առաքինութեան, մանաւանդ մաքրութեան ողջախոհութեան: Ժուժկալութիւն, լռակեացութիւն, և պահպանութիւն աչաց: և դու թէև պահիցես զառաջին երկուսն, եթէ ոչ պահես զաչսդ, ոչ եղիցի կայուն և հաստատուն ողջախոհութիւն քո: Քանզի որպէս յորժամ բեկանին ջրմուղքն, ցրուի և կորնչի ջուրն յայն կողմն. այսպէս և մինչ տարածանին աչքն, և ցրուին, կորնչի ողջախոհութիւն: Այլ ոմն ոք ասէ, թէ տեսութիւն կնոջ է նետ թունաւոր, որ իսկոյն վիրաւորէ զսիրտն: և թէ որպէս կայծ մի, որ անկանի 'ի մէջ յարդից, եթէ յամիցէ անդ, և ոչ շիջանիցի իսկոյն, առնէ զմեծ հրդեհումն, այսպէս առնէ վատթար խորհուրդն պատահեցեալ 'ի տեսութենէ:

Սուրբն պատմէ զմիոյ Հուգոն եպիսկոպոսէ գրացինուպօլսեցւոյ, թէ զամս աւելի քան զյիսուն 'ի կառավարութեան եպիսկոպոսութեան իւրոյ, թէպէտ խոստովանեցուցանէր զբազում կանայս, և ունէր զբազում գործս, որք գային առ նա՝ ոչ միայն 'ի վիճակէ իւրմէ, այլև յայլոց բազմաց կողմանց յաղագս սրբութեան նորա, ոչ երբեք հայեցաւ յերեսս կնոջ ուրուք. միանգամ միայն ետես զերեսս կնոջ միոյ այնու կերպիւ, մինչ զի ոչ ծանեաւ, եթէ իցէր պառաւ, կամ աղջիկ, տգեղ, կամ գեղեցիկ: Եւ ասէր սա այս, թէ հարկ է շարժիլ մեծաւ զգուշութեամբ, զի ոչ կարէ պահպանել զսիրտն 'ի չար խորհրդոց, եթէ ոչ պահպանիցէ զաչսն: Եւ զմիոյն Բեռնարդոսէ ընթեռնանի, թէ անգամ մի սակաւ ինչ անհոգութեամբ հայեցաւ 'ի կին մի՝ առանց ուշադրութեան առ այն՝ զոր առնէր. և յորժամ խեիմաստ եղև, սկսաւ ամաչել, և պատկառիլ այնքան մեծապ, մինչ զի գոլով ժամանակն ձմեռնային, եմուտ 'ի լիճ մի ջրալի սառուցեալ, որ հասանէր մինչև ցփողն, և եկաց 'ի նմին այնքան, մինչև հանին զնա անտի կիսամահ ։

ԳԼՈՒԽ. Գ.

Թէ մասնաւորաբար յայսմիկ առաքինութեան ողջախոհութեան հարկ է մեծ համարել նաև զիրս փոքրագոյնս ։

Որքան առաւել վեհագոյն և պատուականագոյն է առաքինութեն ողջախոհութեն, այնքան մեծագոյն փոյթ և ջան պիտոյ է առ 'ի պահել զայն ։ 'Ի յամ իրս յոյժ հարկաւոր է վարկանել զիրս փոքրկունս և մանունս ։ Քանզի ոպ ասէ իմաստունն, որ ոչ համարհէ զիրս փոքրագոյնս, փոքր փոքր անկանի 'ի մեծագոյնս ։ Բայց մանաւանդ յայս մեկ առաքինութեն է առաւել հարկաւոր, զի ամ ինչ առ' թէև իցէ փոքր, մեծապ անպատուէ զողջախոհութիւն ։ Տեսանեմք հասարակաբար 'ի յիրս պատուականս' և գեղեցիկս այսորիկ աշխարհի, զորս ամ փոքրագոյն պակասութի առնէ տգեղ ։ Եւ այնքան առաւելաբար, որքան առաւել գերազանցք են իրքն, և գեղեցիկք ։ Արդ' այսպէս պատահի բարձրագունեղի, և գեղեցկագունեղի առաքինութե ողջախոհուե ․ և կարեմք ասել ևս, թէ ոչ գոյ այլ առաքինութի այնքան գիրգ, և այնքան փափուկ, որպիսի է այս ։ Ոմն 'ի սրբոց նմանեցուցանէ զողջախոհութիւն հայելւոյ միում պայծառագունի, որ շնչով միով թեթևագունիւ աղտեղանայ, և կորուսանէ զփայլումն իւր' և զշուքն ։ Այսպ ողջախոհութիւն փոքրագունիւք իրօք կորուսանէ զճառագայթն և զփայլումն իւր ։ Վասն որոյ հարկ է մեզ վարիլ մեծաւ զգուշութեամբ, մահացուցանելով զզգայարանս, հատանելով և փակելով զճանապարհն վատթար խորհրդոց, և փախչելով 'ի յառիթից ։ Քանզի որպէս բոցն յոր և մերձենայ, թողու զնշան իւր աւելի կամ պակաս, ըստ որում զտեղի կալնու, և եթէ ոչ կիզէ, գոնեայ ներկէ ։ Այսպէս այսոքիկ կիրքս եթէ ոչ կիզիցեն, բաւական են ներկելոյ․ քանզի յետոյ յարուցանեն 'ի հոգւոջ զերևակայութիւն և զխորհուրդ ներհակ ողջախոհութեան, և 'ի մարմնոջ զաղտեղի և զանկարգ շարժմունս ։

Մեծաւ խրատամբ ասաց Հայրն մեր, թէ այն՝ որ պատկանի առ ողջախոհութիւն, ոչ ունի ալխոյս մեկնութեան ։ Ոչ կարէ մարդ համարատալ ինքեան, և ասել, մինչև ցաստ ոչ այրիմ․ բայց եթէ սակաւ մի յառաջ գնայցեմ, այրեցայց ։ Մինչև ցաստ ըմբոն է ինձ․ բայց եթէ սակաւ ինչ յառաջ գնայցեմ, ոչ է ըմբոն ։ Ոչ կարէ առնել այս 'ի նիւթն ողջախոհութեան, հասից մինչև ցաստ, և ոչ անդր անցից յառաջ․ քանզի ուր ոչ կամիցիս գնալ, յանկարծ երթիցես անդր ։ Որ թոյլ տայ ինքեան անկանել 'ի վայր ընդ քարաժայռ և ընդ զառիվայր տեղի, ոչ կարէ ասել, ժամանեցից միայն մինչև ցայն ինչ տեղի նշանաւոր․ զի ծանրութեամբ մարմնոյ, և տեղին սահելի առնեն, զի ժամանիցէ առաւել յառաջ, ուր ոչ ունէր զդիտաւորութիւն ժամանելոյ 'ի սկզբանն ։ Այսպէս և է յոյժ դիւրասահ այս վայրամիտող ծանրութիւն մարմնոյս մերոյ․ և մեծապէս յօժարի առ այս ։ Ոչ թոյլ տայ փրկութիւն առաքինութեանս այսորիկ, զի մերձենայցեմք մեք այսքան առ ձիւանն, կամ դնիցեմք զմեզ 'ի վտանգս յայտնելի ։ Ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս ։ 2. Կորն. 4. 7. Ուստի հարկ է մեծաւ ջանիւ և հոգացողու-

Թբ

թե̃ փախչել յամենից կողմանց զանցս ամենից ապակարգ շարժմանց, ընդ որս կիրքս այս կարէ գալ առ'ի տիրապետել սրտի մերում։

Ընթեռնանի զմիոյ անապատականէ 'ի հարցն առաջնոց, թէ ունէր զմեծ պարգեւ ողջախոհութե̃. բայց սակայն վարէր մեծաւ զգուշութե̃ եւ 'ի յաւելթս փոքրագոյնս, արտաքսելով զվնասակար խորհուրդս իսկոյն 'ի սկզբան, 'ի կենցաղավարելն, 'ի հայելն, եւ 'ի խօսելն. եւ հարցեալ ցնա ընկերք նորա զպատճառն երկնչելոյ նո̃, որովհետեւ առեալ էր զպարգեւ ողջախոհութե̃, որով ա̃ծ ամրացուցեալ էր զնա այնու պարգեւաւ։ Նոցա պատասխանեաց ս̃բն ասելով. եթէ ես առնեմ զայն, զոր պարտիմ առնել 'ի յերս փոքրագոյնս եւ մանունս 'ի կողմանէ իմմէ, լիցի օգնական ինձ ա̃ծ, զի մի անկանիցիմ 'ի յերս մեծագոյնս։ Բայց եթէ անհոգանամ, եւ անփոյթ լինիմ 'ի փոքրկունս, ոչ գիտեմ, եթէ օգնիցէ ինձ ա̃ծ։ Բայց ոչ անհոգանալով, գոնեայ ոչ թողուցու զիս ա̃ծ 'ի ձեռաց, զի անկանիցիմ. վ̃ն այսորիկ ես ոչ կամիմ անհոգանալ յերս փոքերս եւ մանունս, այլ կամիմ առնել զա̃մ զոր կարեմ 'ի կողմանէ իմմէ։ Պատմէ սուրբս վ̃րդն Թովմայէ աքուինացւոյ, թէպէտ ընկալեալ էր յԱ̃յ գերբնաբար զպարգեւ ողջախոհուե̃, եւ ոչ եւս ըզգալոյ զփորձութիւն ընդդէմ նմին. եւ հրեշտակք ասացեալ էին նմա, թէ ոչ լիցէր կորուսանելոց երբէք զողջախոհութիւն ընկալեալ, բայց սակայն պահէր ծայրագունիւ զգուշութե̃ զաչսն 'ի հայելոյ 'ի կանայս, եւ առ այլ ա̃մ իրս, որք կարիցէին վնասել նմա։

Արդ՝ այսպ̃ պարտիմք առնել եւ մեք, եթէ կամիմք զմեզ պահել մաքրութե̃ եւ կատարելութե̃ այսորիկ առաքինութեան. ապա թէ ոչ՝ մեծաւ իրաւամբ կարեմք երկնչել յանկանելոյ։ Եւ այս է, զոր ասէ ս̃բն Յոբ, յորժամ ասաց՝ Ոչ եթէ ընդ այս եմ, այլ զի հասցեմ ըմբռնել. Այսպէս յետոյ՝ Քանզի զի՞նչ մասն ունիցէր 'ի յես ԱԾ 'ի վերուստ. զի եթէ ես ոչ ջանայցեմ զգուշանալ և փախչիլ յառիթից՝ արտաքսելով զչար խորհուրդս՝ և համարելով զիրս փոքրկունս, անկանիմ 'ի վատթար ցանկութիւնս, և կորուսանեմ զԱԾ:

Այնպէս առնէ յայսմիկ դեւն, որպէս առնէ գող ոք գլխաւոր. զի մինչ կամի գողանալ 'ի տանէ, և տունն այն փակեցեալ է պինդ, և տեսանէ 'ի նմին զծակ կամ զլուսամուտ ինչ փոքրիկ, ընդ որ ինքն ոչ կարէ մտանել, մուծանէ ընդ այն զփոքրիկ մանուկ որ է աշակերտ իւր; որպէս զի նա մտեալ ընդ ծակն այն, բանայցէ զդուռն նմա առ 'ի մտանել զոր ինչ կամի: Այսպէս և դեւն ներածէ զվատ խորհուրդս, զթեթև տեսութիւն աչաց, և զայլ փոքրիկ իրս նմանս սոցա որպէս զփոքրագոյն գողիկս, որք բանան զդուռն, և մուծանեն զդեւն: Ուստի յոյժ հարկաւոր է ունիլ զմեծ զգուշութիւն փախչելոյ, և նախադիտելոյ 'ի հեռուստ զառիթս: Եւ ամենայն զգուշութիւն, որ 'ի սմին 'ի կիր արկանի, է բարւոք 'ի կիրարկեցեալ:

Վասնորոյ յաղագս այսորիկ առնէր զայն, զոր ասէ սուրբ առաքեալն Պօղոս. 2.Կորն.9.25. Ամենայն որ պատերազմի, ամենայնի ժուժկալ լինի: և ասէ, եթէ կորովիքն այնոքիկ, որք խաղային, և ընթանային 'ի խաղս օլիմպականս՝ առ 'ի ոչ թուլանալ, և նուաղեցուցանել զոյժն, որ պիտոյ էր վերայ նոցա, հրաժարէին 'ի կերակրոց, որք կարիցէին գոլ վնասակարք, և զգուշանային 'ի դատարկակեցութենէ, և կրթէին զինքեանս առ 'ի յաճելուլ զոյժն. և ոչ միայն առնէին զայս, այլև առ 'ի գոլ առաւել թեթևագոյնք, և զօրեղք, դնէին 'ի վերայ երիկամանց զտախտակ արճճեայ, որպէս զի ոչ ևս յերազի ունիցէին զշարժումն, կամ զցնորս, և ոչ պատահիցիւր նմ՟ իր այնպիսի, որով կորուսանիցէին, կամ նուաղիցիւր նմ՟ ոյժն և զօրութիւն . և զայս ամ՟ առնէին առ'ի ստանալ զպարգև, և զպսակ մի ապականելի, և անցողական : Արդ զի՞նչ ոչ պարտիմք առնել մեք առ'ի ստանալ զառաքինութիւս զայս հրեշտակային, և երկնային, և զպսակ անապական, և յաւիտենական : Նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն . և մեք զանեղծութեանն :

1. Կորնթ. 9. 25.

ԳԼՈՒԽ. Դ:

Թէ յաղթողաց 'ի խոստովանութե՟ հարկ է մեծ համարել զայն ամ՟, որ ինչէ ներհակ ողջախոհութեան :

Սր՟ն Բօնավէնթուրայ ընծեռելով զխոստովանութե՟ տայ զխրատ մի հասարակ, որ է յոյժ հարկաւոր վս՟ ամենեցուն . և ասէ, թէ զգուշասցին ամենեքեան 'ի թողլոյ 'ի խոստովանութե՟ զոմանս իրս փոքրկունս ամօթալիս, որք սովորք են պատահիլ, ասելով այս ոչ է մեղք, գոնեա մահացու, և ոչ եմք պարաւանդեցեալք խոստովանելոյ զներելիս . զի մեծագոյն չարիք են մտեալք ընդ դուռնս այս, և անպատեհութիւնք . և բազումք աստուստ առին զսկիզբն դատապարտութե՟ իւրեանց : Ած փրկեսցէ զմեզ 'ի տալոյ զմտաւս զայս դիւին, և 'ի բանալոյ նմա զդուռնս զայս, զի նա ոչ ունի զիշխանս այլում իմիք առ'ի առնել, զոր կամի առնել : Զի վաղվաղակի առաջիցելով զամօթն ընդդուռնաքեայ իւրին, հաւանեցուցանէ զքեզ, թէ այն ոչ էր մեղք, որ իրաւի էր մեղք, կամ գոնեայ կայիր 'ի տարակուսանս, եթէ էր մեղք, կամ ոչ . և թողուս խոստովանիլ զայն : Եւ 'ի յայնոսիկ՝ որք կեցեալք իցեն բարեաց, և ոչ իցեն սովորք առնել զմահացու մեղս, առաւել թագաւորէ ամօթս այս, յորժամ պատահի նմա իր ինչ։ Քանզի գոլով հպարտութիւն, և ախորժակն բարի վար կեցեալ գոլոյ 'ի մեզ՝ բնական, և արմատացեալ 'ի սրտի մերում, զարթնու յայնժամ, և անձն զգայ մեծապէս զանկանիլն 'ի բարւոյ համբաւոյ իւրմէ, և զկորուսանելն զբարի վարկուածն, զոր ունէր զնմանէ խոստովանահայրն իւր։ Եւ այս առնէ. զի խնդրիցէ ըզպատճառս հաւանաւորս, թէ իրն այն նուաստագոյն և չնչին, որ պատճառէ նմա յայնժամ զայնքան ամօթ 'ի յասելն՝ ոչ իցէ մեղք մահացու, և ոչ պարաւանդիցի խոստովանիլ։ Եւ երբեմն թէպէտ ոչ կամի լռել ամենևին, եղանի պատճառ ամօթն այն, զի խոստովանիցի այնքանեաւ պակասաւորութեամբ, և այնպիսեօք եղերօք և պարագայիւք, մինչ զի գրեթէ ոչ իմանի, կամ գոնեայ ոչ թուիցի այնքան ծանր, որ է որպէս թէ ոչ ասիցէր. քանզի այնք իրք, որք խոստովանին, պարտին խոստովանիլ զատաբար, զի խոստովանահայրն ծանիցէ զծանրութիւն մեղաց։ Եւ եթէ ոք խոստովանի զիր ինչ այնպիսեաւ կերպիւ, որով ոչ թուիցի մեղք. կամ այնու կերպիւ, որով ոչ ճանաչիցի ծանրութիւն, և պարագայն հարկաւոր, այնպէս է, որպէս թէ թողուցուր զխոստովանիլն ամենևին։ Զի կուրացուցանէ, և խաբէ ամօթն, կամ մանաւանդ հպարտութիւն, որպէս զի մի բացայայտիցին ամբողջապէս։ Զսակաւ կամ զոչինչ ցաւ մեղաց ունի նա, որ ոչ և վասն ասելոյ և բացայայտելոյ զմեղս իւր խոստովանահօրն՝ ունի զզօրութիւն։ Զամօթս զայս և զամաչելս պարտի մարդ մատուցանել Աստուծոյ 'ի վճար և 'ի հատուցումն վասն յանցանաց իւրոց, զորս գործեաց, առ 'ի զինջուցանել զԱստուած Տէրն մեր։ Միայն զգալն զընդդիմութիւն և զդժուա-

րութի

րութիւն 'ի յասելն զմեղս իւր՝ պարտ է բաւականանալ առ'ի ճանաչել, թէ պատշաճէ ասել զմեղս իւր, թէպէտ այլ ոչինչ բարի իցէր, եթէ ոչ յաղթել այսմիկ ընդդիմութեան, և մանկացուցանել զինքն, որպէս զի մի՛ մարմինն և դևն երևեսցին յաղթօղք:

Գոն բազումք իրք մասնաւորապէս յայսմիկ նիւթոյ ուղղախոհութեան, զորս նոքա որք ո՛չ գիտեն, կարծեն՝ թէ ոչ իցեն մեղք մահացուք, բայց իրականապէս են մահացուք: Են ևս այլք իրք, որք ո՛չ կարեն այնքան դիւրաւ բացորոշել, եթէ իցեն մահացուք կամ ոչ, զի են յոյժ երկբայք: Զայսոսիկ ևս պարտ է խոստովանել 'ի ներքոյ պատժոյ մահացու մեղաց: Ուստի բաւական է, թէ անձն ոք իցէ երկբայ, եթէ իցէ մահացու, կամ ոչ. և այս բաւական է պարտաւորելոյ ըզ մարդ առ'ի խոստովանել 'ի ներքոյ պատժոյ մահացու մեղաց. ապաթէ ոչ, սրբապիղծ է խոստովանութիւն և հաղորդութիւն: Բազում անգամ ևս նոյն ինքն խոստովանահայրն թէպէտ իցէ յոյժ իմաստուն, ո՛չ կարէ որոշել, եթէ իցէ մահացու, կամ ոչ. ապա որպէս իշխէ խոստովանորդին 'ի դատաստանի իւրում որոշել և եզերել, թէ ոչ իցէ մահացու, և թողուլ զխոստովանելն: 'Ի մեծի վտանգի գնէ զինքն այսպիսիս, մանաւանդ յորժամ ունի զյօժարութիւն թողլոյ զխոստովանելն. և եթէ կարելի իցէր, կամէր ոչնչացուցանել զայն առ'ի ոչ խոստովանել՝ վասն մեծի ամօթոյն, զոր ունի յասելն: Ես ո՛չ կարեմ ապահով և աներկբայ համարել զսոսա, և ո՛չ է հարկաւոր սոցա այլ բարեգոյն վկայ՝ քան զխղճմտաց իւրաքանչիւր ուրուք. քանզի որ ամբաստանէ զինքն 'ի խոստովանութեան զայլոց իրաց փոքրագունից; ո՛չ կարէ լինել, թէ ոչ զգայցէ զխայթումն խղճի յաղագս ո՛չ խոստովանելոյ զայն, զոր գիտէ, որ և է առա_ ճել քան զմնացեալսն , և 'ի ժամ մահուան ոչ իշխէր ոչ խոստովանիլ : Մի՛ ուրեմն և այժմ իշխեսցէ թողուլ խոստովանիլ . զի այսու կերպիւ պարտիմք միշտ խոստովանիլ , և առնել զնոյն գործս մեր , ոպ̃ թէ իսկոյն պարտիցեմք մեռանիլ : Ասէ Սբն Գրիգորիոս , թէ է նշան բարւոյ հոգւոյ երկնչիլ 'ի մեղաց , ուր ոչ է մեղք : * Բարեաց մտաց է , անդ իսկ երբեմն ճանաչել զմեղս , ուր մեղք ոչ է ‖ : Եւ հակադարձաբար է նշան հոգւոյ ոչ բարւոյ , ոչ երկնչիլ 'ի մեղաց , ուր գոյ առիթ երկնչելոյ :

Ասեն ոմանք , ես ոչ կամիմ խոստովանիլ մանրամասնաբար առ 'ի ոչ եղանիլ խղճահար : Այս է այլ խաբէութիւն մի , զոր դեւն սովոր է պատճառել : Զի այս ոչ է եղանիլ խղճահար , զի նոքա որք ջանան գոլ առաքինիք , խոստովանին , և խոստովանելոց են զերս յոյժ մանրունս քան զայսոսիկ , ոչ վն̃ հարկաւորութե՛ , և ոչ վասն խղճահարութե՛ , այլ վասն ջերմեռանդութե՛ , և առ 'ի յարգել զորբագունեղ սրբայնութիւն : Պարտի այնքան մեծ գոլ մաքրութիւն , զոր ունելոց եմք յայսմիկ , մինչ զի խրատեն արք հոգեորք , թէ պարտիմք ամբաստանել զմեզ նաև վն̃ այնց իրաց , որք ոչ են մեղք , և ասել . Հայր ամբաստանեմ զինէն վն̃ ունելոյ զփորձութիւնս անհամեստս . և եթէ թուի քեզ , թէ եղեալ իցես անփոյթ 'ի արտաքսելն զայնս 'ի քէն , պարտիս ասել , ինձ թուի , թէ եղէ սակաւիկ մի անփոյթ 'ի յընդունելն , կամ 'ի յարտաքսելն , թէպէտ անհոգութիւն եղեալ իցէ թեթևագոյն և ներելի : Եւ է այս իր մի յոյժ հասարակ գոլ 'ի նն̃ մեղք , և անհոգութի , գոլով յոյժ հպաւոր : Եւ թէպէտ թուիցի քեզ , թէ ոչ ունիս զմեղս , սակայն կարես ասել . Ամբաստանեմ զինէն վն̃ ունելոյս զբաղում խորհուրդս և փորձութիս անպարկեշտս · բայց թուի ինձ, թէ ողորմութիւն Այ արարի 'ի կողմանէ իմմէ զամ, և ոչ ունիմ զմեղս : Զի ոչ խրատեն և ես հոգևոր արք, զի խոստովանիցիմք զվատ խորհուրդս, որք գան ընդդէմ Այ, և նրց նր, և հաւատոյ : Ասեն և ես՝ թէ պարտ է խոստովանիլ զիրս փոքրագոյնս քան զայսոսիկ, եթ զայնս՝ որք պատահին, մինչ եմք 'ի քուն, ուր ոչ կարէ գոլ մեղք ինչ, զի ոչ գոյ անդ ազատութի : Բայց սակայն է բարի խրատ խոնարհելն և ամբաստանելն զինքենէ յաղագս փոքրութե երազականի, թէպէտ ոչ է հարկաւոր մինչ ոչ է տուեալ զպատճառ, որով ունիցի զմեղ իմն · և այսպէս նոքա, որք են երկիւղածք Այ, սովորք են խոստովանիլ զայսոսիկ նախքան զհաղորդիլն առ'ի յարգել զվեհագոյն սրբազնութին : Ուստի ընձեռելով զայսմանէ ճծաւանքն, խնդրեն՝ միթէ վն այսորիկ հարկ իցէ հրաժարիլ 'ի հաղորդելոյ, և ասեն, թէ բարեգոյն իցէ առ'ի առաւել յարգել զայն, յապաղել առ միւս օրն, կամ առ այլ օր, եթէ ոչ գոյ պատճառ իմն մասնաւոր, որպէս, 'ի կրօնի միում յորժամ հաղորդի բոլոր հասարակութին և կրօնաւոր ոք եթէ ոչ հաղորդիցի, յայտնի լինի, թէ հանդիպեալ է նմա փորձութիւն ինչ : Բայց որովհետև վերոյասացեալքն տան զհրաման հաղորդելոյ, բարի իմն է կատարել զխրատն նց :

ԳԼՈՒԽ. Ե:

Թէ որքան սաստիկ և վտանգաւոր իցէ կիրքն
սիրոյ, և որքան պարտիմք երկնչելի
յայսմանէ :

Ի ՄԷՋ այլոց կրից, յորոց պարտիմք մեծաւ երկնչիլ, մին է կիրքն սիրոյ. քանզի գոլով այս առաւել սաստկագոյն, և առաւել գլխաւոր 'ի մէջ կրից, է առաւել դժուարին առ'ի սանձել. և է մեծագոյն վտանգ՝ առ որ արշաւեմք առ'ի յանդունդս քարշիլ և գահավիժիլ 'ի նմանէ : Երանելին սբն Օգոստինոս բարւոք բացայայտէ զզօրութի, և զսաստկութի սիրոյ այսորիկ, և զմեծ պատճառն երկնչելոյ 'ի սմանէ, երկու ծանրագոյն օրինակօք ա̄ծաշունչ գրոց : Առաջին օրինակն է նախահօրն մերոյ Ադամայ : Ուստի հարցանէ սբն, թէ ո՞րն էր պատճառն, զի Ադամ հնազանդիցէր ձայնի կնոջ իւրոյ, և անցանիցէր զհրամանօքն Այ̄, ուտելով'ի ծառոյն արգելեցելոյ : Թերևս խաբեցաւ Ադամ, համարելով, զի եթէ ուտիցէր ըղպտուղն զայն, եղանելոց էր ոպ̄ զԱծ̄, որպ̄ ասացեալ էր օձն ցԵւա. այս ո՛չ է հաւատալի (ասէ սբն Օգոստինոս) թէ գոլով Ադամ օժտեցեալ այնքան բարձրագոյն գիտութե̄, կարիցէր խաբել, և հաւատալ այնպիսի բանի : Ուստի սբ Առաքեալն Պօղոս ասէ, 1. Տիմ. 2. 14. Ադամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ, և յանցեաւ : Եւ այսպ̄ ծանուցանէ սբն Օգոստինոս, թէ յորժամ Ած̄ եհարց ցԵւա, և ասէ, Զինչ գործեցեր դու : Նա պատասխանեալ ասաց օձն խաբեաց զիս, և կերի : Բայց մինչ եհարց զԱդամ, նա ոչ պատասխանեաց, թէ կինն զոր ետուր ինձ, նա խաբեաց զիս, և կերի, այլ պատասխանեաց :

նեաց, Կինն զոր ետուր ընդ իս, նա ետ ինձ 'ի ծառոյ անտի, եւ կերի։ Ծնն. 3. 12։ Եդեալ էր զայնքան սէր եւ [illegible] 'ի կինն, մինչ զի առ 'ի ոչ տրտմեցուցանել զնա, արար զայն, զոր խնդրեաց նա։ Այսպիսաւ չար խաբեցաւ Ադամ. սէրն կնոջ խաբեաց զԱդամ. Եւ այս ոչ պատահեցաւ Ադամայ, (ասէ սբն Օգոս.) այլ թէ լիցէր յաղթեցեալ 'ի հեշտասիրութե եւ 'ի ցանկութե մարմնոյ, զի յայնժամ ոչ զգայր զհակառակութիւն զայս, այլ զի անդրաշարժեցեալ եղեւ սիրով եւ բարեկամութե, որոյ պատճառաւ եւս մեք առ 'ի հաճեցուցանել ընդ բարեկամս, տամք զհաճութի Այ։ Եւ այսպէս ը̄ այս եմուտ մեղքն յաշխարհս. եւ ը̄ նովին մահն, եւ ամ̄ չարիք. եւ ամ̄ վիշտք։

Երկրորդ օրինակն է Սաղոմոնի. Ո՛ արար ասէ սբն Օգոստինոս, զի անկանիցի Սաղոմոն 'ի յայնպիսի խելագարութի, մինչ զի պաշտիցէր զկուռս։ Ո՛չ է հաւատալի, թէ ոմն մի՝ որում Ած տուեալ էր զայնքան իմաստութի, հաւատայցէր, թէ 'ի կուռս յայնս իցէր ածութի իմն. կամ ունիցէր զօգուտ ինչ 'ի պատուելն զայնս։ Ո՛ եղեւ ուրեմն պատճառն, զի այսպիսի իմաստունն ժամանիցէր յայնպիսի անպատեհութիւն, մինչ զի երկրպագանիցէր, եւ մատուցանիցէր կռոց զսկի, եւ զխունկ. գիտես ո՛վ. սէրն եղեւ պատճառ։ Զայս ասէ մեզ յայտնապէս նոյն ածաշունչն։ 3. Թագ. 11. 1։ Թէ էր իգասէր, եւ էառ իւր կանայս օտարազգիս բազումս, յազգացն յորոց հրամայեաց տր̄ որդւոցն Իէլի, չմտանել առ նոսա, եւ նոքա մի մտցեն առ ձեզ, զի մի գուցէ խոտորեցուցանիցեն զսիրտ ձեր զհետ կռոցն իւրեանց. 'ի նոսա յարեցաւ Սողոմոն սիրել։ Եւ եղեւ 'ի ժամանակի ծերութեան Սողոմոնի՝ եւ կանայք նր̄ խոտորեցուցին զսիրտ նր̄ զհետ աստուածոց օտարաց։ Ո՛չ հնազանդեցաւ Սողոմոն հրամանին Այ, եւ այսպէս պատահեցաւ նմա, զոր ինչ ասաց նմա Ած.

Վ՟ն զի 'ի յառնուլ զմի 'ի յայնց կանանց, շինէր զտաճար մի վ՟ն կռոց ն՟ր, զորս կինն այն պաշտէր: 'Ի յառնուլն զայլ միւս կին, շինէր զմի այլ տաճար վ՟ն կռոց ն՟ր․ և այսպ՟ս առնէր ևս ընդ այլս համայնս: Նոքա պաշտէին զկուռս իւրեանց․ և արքայն սողոմոն ևս պաշտէր զայնս ընդ նոսա մ՟ծ ծանրութ՟բ, և իմաստութ՟բ իւրով, և մատուցանէր ն՟ց ըղխունկ: Գիտէր զի անդ ոչ գոյր իր իմն արժանի պատուոյ, ասէ ս՟րն Օգոստինոս, այլ պարտեցեալ և կուրացեալ էր սիրով: * Ո՟չ զի մի՛ տրտմեցուցանիցէր զերկրութիս իւր, որովք նուաղեալ հալէր ‖: Առ'ի հաճեցուցանել զնոսա, և վճարել ն՟ց, զորս սիրէր:

Զի սէրն թիւրեալէր զսիրտ ն՟ր:

Մ՟ն այսօրինակ ս՟րք և վարդապետք կենացն հոգևորաց զգուշացուցանեն զմեզ, զի զգուշանայցեմք յայսմանէ ախտակրութէ, և յամենից առթից, որք կարեն զմեզ ածել յայս սահման: Եւ թէև սէրն թուիցի բարի, և իցէ ընդ անձին ումեք յոյժ առաքինւոյ, և սրբոյ․ և թէպէտ խօսակցութիւն, և կենցաղավարութիւն իցէ զխրաց բարեաց և հոգևորաց, և նոքա որք վարին այսու կերպիւ, թուին թէ արտահանեն զմեծ բարի, և ըղպտուղ, և զօգուտ 'ի հոգիս իւրեանց այնպիսեաւ կենցաղավարութ՟բ, սակայն պարտին գոլ յոյժ զգոյշք, և շրջահայեացք: Վ՟ն այսօրինակ է հասարակ վարդապետութ՟ն ս՟րց: Եւ աւերէ զայս ս՟րն Բոնավէնթուրայ, թէ սէրն հոգևոր սովոր է դիւրաւ փոփոխիլ, և ապականիլ, և 'ի հոգևորականէն եղանիլ մարմնաւոր և զգալի: Եւ թէպէտ 'ի սկզբան իցէ գինի, բայց խառնի յետոյ ընդ ջրոյ: Եւ այն որ էր պաղատամ, սկսի այլայլիլ, զի խառնի ընդ նմին այլ հեղուկ անարգ, ըստ ասացելոյն Եսայեայ, 1. 22. Վաճառականք քո խառնեն ջուր ընդ գինի: Մանաւանդ այս է միջոց և կերակուր գինին, զոր 'ի գործածէ առ'ի խաբել զոք. և սակաւ առ սակաւ ածել, ուր կամի ինքն:

Բարւոք ասէ սբն Բոնավէնթուրայ, թէ առնէ գինին յայսմիկ զայն, զոր ասաց նա Ճարտարապետն (Յօհան. 2. 10.) դնել նախ զանոյշ գինին, և յետոյ զյոռին: Զի 'ի սկզբան տայ հաճոյանալ նմա, թէ ոմն ինչ լիցէ ջերմեռանդութիւն, և հոգի. և թէ կարեն արտահանել զպտուղ բարի 'ի կենցաղավարութենէ յայնմանէ, և յընտանեկցութենէ, և յորժամ սկսի կակղացուցանել զսիրտս, և ենթարկել զնոսա, յայնժամ երևի թոյն նր: Այն առաջինն եղև ոչ կերակուր առ կարթին, որով ներածեաց յուռկանն՝ և 'ի ցանցս. Ոչ վատակի գեն (ասէ սբն Բոնավէնթուրայ) 'ի պահելոյ զոք երկարաւ այսու կերակրով, որ թուի բարի, զի զոմն ինչ համարէ բարւոք ծախեցեալ, միայն թէ յետոյ ժամանիցէ այն մի, որում ցանկայր, որ է, զի սէրն հոգևոր փոխեսցի 'ի սէր մարմնաւոր, և զգալի: Ո՞վ թէ քանիք (ասէ սբն Բոնավ.) արարին ըզ բարեկամութիւն և զկենցաղավարութիւն ընդ անձանց ումանց ենթ տեսակի հոգևորութեան, և թուէին նոցա, թէ ոմն ընտանեկցութիւն այն էր զԱյ. և հոգևոր. և թէ այնու առնէին հոգւոց նոցա զմեծ պտուղ. և թէպէտ 'ի սկզբանն էր այնպէս: Բայց յետոյ սակաւ առ սակաւ փոխելով, և այլայլելով զայն սէրն, սկսան զխօսակցութիւն անպատեհս, և զիրս թեթևագոյնս և ծիծաղելիս. սկսան հոգւով, և վերջացուցին մարմնով. Սկսեալ հոգւով, և արդ մարմնով վերջանայք: Գաղատ. 3. 3:

Պատմէ Հերոսն զմիոյ ծառայէ Այ, որ էր այր մեծ դպրութեամբ և սրբութեամբ. թէ կենցաղավարիւր նա ընդ կրօնաւորուհւոյ միում ազախնոյ Այ սրբասէր, և խօսակցէր ընդ նմա զիրաց օգտակարաց հոգւոյ իւրոյ: Բայց նա կաւ առ սակաւ կենցաղավարելով և խօսակցելով ընդ նմա, յաւելաւ սէրն, այլ ոչ 'ի սէր. մինչ զի ոչ կարէր ժուժել 'ի գնալոյ, և տեսանելոյ զնա սակաւ, և կալոյ ընդ նմա երկարա՟պ. և յորժամ ոչ կայր ը՟ նմա, հազիւ կարէր կալ առանց խորհելոյ զնմանէ. բայց սակայն էր այնքան կուրացեալ բարի մարդն այն, մինչ զի թուէր, թէ ոչ լինէր չար ի՟ն, ոչ ևս պատրանք դիւական. զի ասէր, թէ ոչ անցանէր ընդ միտն իւր չար խորհուրդ ի՟ն. որ է պատճառ մի, որով բազումք սովորք են կուրանալ, և պատրիլ. այսպ՟ առնէր և սա, մինչև որ յաղագս պատճառի ուրուք ստիպեցեալ եղև գնալ զճանապարհ երկար. և յայնժամ 'ի բաժանիլն իւր 'ի նմանէ, իմացաւ ծառայն Ա՟յ, թէ սէրն այն ոչ էր մաքուր և ողջախոհ. և եթէ Ա՟ծ ոչ հեռացուցանիցէր զնա 'ի յառթէն յայնմանէ այնու տարակացութե՟, յոյժ մերձակայ էր անկանել 'ի մեծագոյն չարիս: Եւ այսպ՟ ասէ անդ Ճերսոն, ընձեռելով զվտանգէ, և զմեծ խաբէութե՟, որ սովոր է գոլ 'ի սէրն, թէ ոչ է ոսկի այն ա՟մ, որ փայլէ, և ոչ է եղբայրսիրութի՟ն ա՟մ, որ թուի եղբայրսիրութի՟: Եւ պատմէ զանձնէ միոյ կարի ս՟բյ որ ասէր՝ թէ ոչ գոյ իր, յորմէ նա այնքան մեծա՟պ երկնչէր, և կասկածէր, որքան 'ի սիրոյ, թէպէտ սէրն այն լինէր դէպ 'ի յանձն ո՟ք առաքինի, և ս՟բ: Եւ բերէ զայն բանն իմաստնոյն, որ ասէ, Առակ. 16. 25. Են ճանապարհք, որք թուին մարդկան, թէ ուղիղք իցեն, և կատարած նոցա հայի յատակս դժոխոց: Այսպէս (ասէ) սովոր է լինել և այս ճանապարհ:

⁂

ԳԼՈՒԽ. Զ։

Յաղագս դեղոց ամանց ընդդէմ անհամեստ խորհրդոց ։

ՅԵրկրորդում մասին 'ի չորրորդ ընձեռուածն փորձութեանց ասացաք զոմանս դեղորայս ընդդէմ այսոցիկ փորձութեանց, և զայլս թողաք վ՟ն այսր տեղւոյս, զորոց ընձեռեսցուք այժմիկ ։ Նախ ասեմ, թէ առաջին միջոցն է աղօթքն, և է առաւել նախապատուական, զոր և տան մեզ ամենայն գրուածք, և ս՟րքն ընդդէմ ամենից փորձութեանց ։ Եւ նոյնինքն Ք՟ս ուսուցանէ մեզ յաւետարանին ։ Մատթ. 26. 41։ Արթուն կացէք, և աղօթս արարէք. զի մի անկանիցիք 'ի փորձութիւն ։ Ասէ Բեդա, զի ո՟չ գողն մինչ լսէ զձայն, փախչի, և ամենեքեան յառնեն, և երթան օգնել. այսպէս աղաղակն աղօթից փախուցանէ ըզդեւն, և զարթուցանէ զհրեշտակս, և զերանեցեալ ս՟րբսն, զի հասանիցեն 'ի թիկունս մեր ։ Ընթեռնումք զս՟րյն Բեռնարդոսէ, թէ մինչ գնացեալ դևն կամէր գողանալ զողջախոհութիւնն, սկսաւ աղաղակել և ասել, գողք գոն, գողք գոն, և այսու փախուցեալ հեռացաւ դևն ։ Արդ՝ եթէ աղաղակաւ մարդկան փախչի գողն. ապա ո՞րքան առաւել փախչի խորամանկ և հնագոյն գողն, որ ջանայ գողանալ զհոգևոր հարստութիւն հոգւոց մերոց, աղաղակաւ, զոր համբառնամք առ Ա՟ծ, և առ ս՟րբս նորա ։

Յատկաբար է եզականագունեղ դեղ վասն այսորիկ առանձնանալ, և խոկալ զչարչարանս Ք՟ի, և թագչիլ 'ի մէջ վիրաց նորա ։ Ասէ ս՟րբն Օգոստինոս, * Ոչինչ դեղ գտանի այնքան զօրեղ և գործունեայ ընդդէմ բորբոքման վավաշոտութեան, ո՟չ մահն փրկչին իմոյ ։

'Ի յո՞ւմ իրս ոչ գտի զայնքան զօրեղ դեղ, որքան 'ի վէրսն Քի, 'ի յայնս ննջեմ ապահով, և յառնեմ անկասկած ‖: Յոյժ բարւոք խոկայ և ծանուցանէ մեծագոյն վարդապետ մին, թէ վս այսորիկ ոչ ասէ աւետարանիչն, թէ կողն Քի լցէ խոցեալ, այլ ասէ, թէ եղև բացեալ. Մի ոմն 'ի զինուորաց տիգաւ եբաց զկողս նորա: Յով. 19. 34: ոպ զի ծանիցուք, թէ բաց է ճանապարհն առ'ի երթալ, և մտանել 'ի սիրտն Յսի, և անդ լինելոց է ապաւինութի մեր և տեղին ապաստանի: 'Ի ծերպս վիմին, և յանձաւ նախապարսպին: Երգոց. 2. 14: 'Ի ծերպս այնր վիմին, զորմէ ասէ, և վէմն էր Քս:

Այն Բեռնարդոս ունի ևս զայս դեղս, և ասէ. յորժամ զգայցես զայս փորձութիւս. առանձնացի՛ր, և խոկա՛ զչարչարանս Քի, և ասա՛ այսպէ. * Ածն իմ կախեցեալ է զտանջանարանէ, և ես կամիմ ջանալ ունիլ զհեշտութի ‖: Ո՜վ ասաց այն ծառայն, և հաւատարիմ զինուորն, որում հրամայեաց դաւիթ արքայն, զի երթիցէ 'ի տուն իւր, առ'ի հանգչիլ և զուարճանալ. իսկ նա պատասխանեալ ասաց ցարքայն, 2. Թագ. 11. 11: Տապանակն տն, և Իէլ և յուդա բնակեալ են 'ի վրանս. և տր իմ յովաբ. և ծառայք տն իմոյ բնակեալ են 'ի բացի. և ես մտանիցեմ 'ի տուն իմ ուտել, և ըմպել, և ննջել ընդ կնոջ իմում, և զիա՞րդ լինիցի այն. կենդանի է անձն քո, թէ արարից զբանդ զայդ: Նոյնպէս ևս պարտիմք ասել մեք. Դու տր իմ կաս 'ի խաչին, և այժմ վճարես զպարտս վս յանցանաց իմոց, վս այսորիկ ոչ կամիմ ունիլ զհեշտութի, և զերկրկրութի:

Բայց 'ի փորձութիս այսպիսիս 'ի կերպարկանեն զյիշատակ, և զխոկումն վերջնոց, որ մահուան, և դժոխոց, ըստ ասացելոյ իմաստնոյն. Յմն գործս քո յիշեա զյետինս քո, և յաւիտեան ոչ մեղիցես: Սիրաք. 7. 40: Ոմանք օգնեն նինխոկմամբ դժոխոց, մատնելով զայն, զոր Գրիգորիոս ասէ․ *Վայրկենական է որ բերկրեցուցանէ․ և յաւիտենական է, որ տանջէ։‖ Իջանել 'ի խորս այսորիկ մտածման յաւիտենականութե՟, և յիշել զայն * Ոչ երբեք ‖ է միջոց յոյժ զօրաւոր առ'ի ոչ մեղանչել, ըստ՟ ասացելոյ մարգարէին, կենդանւոյն իջցեն 'ի դժոխս․ Սաղմ. 54. 16։ Զի իջանելն այժմ կենդանւոյն խոկմամբ 'ի դժոխս, օգնեսցէ զի մի իջանիցեմք յետոյ զկնի մահուան անդ։ Այլք օգնին մտածմամբ փառացն արքայութե՟, որոց թուի խելագարութի՟, ոպ՟ և է իսկ, փոխելն զսուղ ժամանակեայ հեշտութի՟ն ընդ Ա՟յ, և յաւիտենական փառաց։ Այլ որպիսի խելագարութի՟ կարէ լինել մեծագոյն քան զայս, որ է թողուլ զԱ՟ծ, որ խոստանայ և առաջադրէ զփառս, և առնուլ զայն, զոր կամի դե՟ն, որ խոստանայ ըզդժոխս։ Այլք ոմանք զգան զմեծ պտուղ յիշելով զմահ, և զվերջին դատաստանն։ Համայնքն են բարի խոկմունք։ Իւրաքանչիւրոք կարէ դիմել առ այն իրն, յորում զգայցէ զմեծագոյն օգուտ։ Եւ երբեմն ոմն զգայցէ 'ի միում իրի զմի իր, և միւսն զայլ իր օգուտ ինքեան․ և այսպէս պարտիմք 'ի գործածել զն՟մ իր։

Օգուտ է ևս մեծա՟պ յայսոսիկ փորձութս կնքել նշանաւ ս՟բ խաչին զճակատն և ըզսիրտն․ և կարդալ ջերմեռանդութ՟բ զ՟ր անունն Յ՟սի․ զի զարմանալի պտուղ տեսաւ, եւ բազում հրաշք երևեցան այսու, ոպ՟ ընթեռնանի 'ի պատմագիրս։

Ունիլ զջերմեռանդութի՟ առ փառաւորագունեղ կոյս տիրուհին մեր, է մեծագունեղ օգնութի՟ վ՟ս ա՟մ իրաց, և այսպ՟ ա՟մ ոք պարտի ունիլ զջերմեռանդութի՟, և դիմել խոկոյն առ վեհագոյն Կոյսս այս մեծաւ համարձակութ՟բ․ զի ոչ կարէ գոլ առանց ողորմածումանութե՟ն նա, որ զինն ամիս ներփակեալ կրեաց յարգանդի իւրում զնոյն ողորմածութին: Զի է մայր ողորմութե՟, և փաստաբան մեղաւորաց, զորս սիրէ. զի տեսանէ, թէ որքան սիրեաց զնա որդին իւր, և որքան թանկապէս գնեաց զնա: Տեսանէ ևս, զի մեղաւորքն եղեն պատճառ, զի բանն Ա՟ծ էառ զմարմին 'ի յարգանդի նր՟. և եղև ինքն մայր Ա՟յ. վ՟ որոյ հայի 'ի նս՟ գթածագոյն աչօք. և միջնորդ լինի վ՟ նց՟ առ որդին իւր, և ընդունի 'ի նմանէ՝ զոր ինչ կամի վ՟ նց՟ Արդ՝ զինչ կարէ խնայել որդին մօրն, այնպէս որդին՝ այնպիսւոյ մօր: Ուստի սր՟ն Բեռնարդոս ստիպեցաւ ասել զբանն զայն այնքան հոչակաւոր: * Եթէ իցէ այնպիսի ոք, որ 'ի հարկաւորութ՟ն իւրում կարդացեալ իցէ առ քեզ, և ոչ իցէ օգնեցեալ, ո՛վ կոյս երանեցեալ, լռիցէ 'ի գովելոյ զողորմածութ՟ն քո ||: Բայց թէպէտ 'ի յամ՟ փորձութիս, և 'ի դիպուածս իցէ այս զօրեղագոյն դեղ: սակայն առաւել զօրեղագոյն է ընդդէմ այսմ փորձութեան, զորմէ խօսիմք աստ. զի յոյժ հաճի մաքրագունեղ կոյսն ընդ մաքրութին և ընդ ողջախոհութին: Ասեն ոմանք վարդապետք, թէ մաքրութին կուսական էր այնքան գերազանց, զոր ունէր սր՟բ Յօհաննէս մկրտիչն, մինչ զի ոչ ևս ներելապէս մեղանչեաց ընդդէմ նմ՟. և մաքրութիս այս պատճառեցաւ յայցելութէ տիրուհւոյն այնորիկ, որ եկաց զերիս ամիսս ընդ սր՟յն Եղիսաբեթի: Այցելութին այն ոչ միայն եղև մարմնաւոր, ասէ սր՟ն Ամբրոսիոս, այլև հոգևոր: * Ոչ միայն եղև պատճառ ընտանեկցութե՟ երկարապէս մնալն նորա անդ, այլև օգուտ մեծի մարգարէին || սր՟ Յօհաննու: Եւ եթէ նախկին այցելութ՟ ածանցեցաւ այնքան մեծ բարի, զի մանուկն ցնծացաւ յարգանդի մօր իւրոյ, և սրբեցաւ, և սրբուհին

Եղիսաբեթ լցաւ Հոգւով սրբով իսկոյն 'ի լսել զողջոյնն կուսին • ապա որքան մեծ էր լինելոյ՝ ասէ սրբն Ամբրոսիոս՝ պտուղն և օգուտն ներկայութե՟ն, և կենցաղավարութե՟ն այնքան երկարագունի : Հայր վարդապետն Աճիլս ասէ, թէ ետես զբազում պտուղս 'ի յանձինս նեղեցեալս յայսմանէ փորձուէ միջնորդութ՟ կուսին տիրուհւոյն մերոյ • վն՟ ասելոյ նոցա յամ՟ առնուր զիր իմն 'ի յիշատակ մաքրութե՟, որով նա յղացեալ եղև առանց մեղաց • և 'ի պատիւ կուսականի նորին մաքրութե՟, որով յղացաւ և ծնաւ զորդին Այ՟ : Եւ են յոյժ յարմարք վն՟ այսորիկ տողքն այնք, զորս երգէ եկեղեցին, * Յետ ծննդեան կոյս անապական մնացեր, սր Ածածին բարեխօսեա վն՟ մեր : Ո՛վ եզական կոյս սրբուհի, 'ի մէջ, բնաւից հեզահոգի, զմեզ 'ի մեղաց արձակելով, արա՛ հեզս, և ողջախոհս մարմնով ||: Որով ներկայացուցեալ զանարատ և զմշտնջենական կուսութին, աղաչեմք զնա, զի առընկալնուցու վն՟ մեր զայս առաքինութին, ոպ՟ զի հաճոյանայցեմք ինքեան, և գթածագունեղի որդւոյն նր՟ :

Է՛ եւս յոյժ բարի ջերմեռանդութին առ սր՟ս և՛ առ նշխարս նց՟ : Պատմէ Զեղարիոս զիր մի, և ասէ, թէ պատմեցաւ ինքեան, թէ էր կրօնաւոր մի 'ի կարգէն իւրմէ չիսթերականէ անուանեցեալ Բեռնարտոս : Սա նախքան զմտանելն 'ի կրօն, գնալով ը՟ ճանապարհ մի, տանէր ը՟ ինքեան կախեցեալ զպարանոցէ իւրմէ զտուփ մի նշխարաց սրբց մարտիրոսացն Յօհաննու և Պօղոսի • և գնալով զճանապարհն իւր, եկն 'ի նա փորձութին անպարկեշտ • իսկ նա ոչ ունէր զփոյթ, և անհոգանայր ընդդիմանալ, և թօթափել 'ի միտաց զվատթար խորհուրդս զայնս : Եւ սր՟ նշխարքն այնք սկսան բաղխել զկուրծն այնու տուփովն • Իսկ նա այնու ամի՟ ոչ լինէր խելամուտ զայնմանէ. և ոչ ճանաչէր, թէ զի՛նչ նշանակիցէր բաղխումն այն: Եւ 'ի դադարիլ փորձութե՛ն, դադարեցաւ և բաղխումն: Զկնի սակաւուց դարձաւ առ նա փորձութի՛ն, և մեր նշխարքն սկսան բաղխել զկուրծն միւսանգամ, որպէս թէ կամիցէին ասել, զի զգուշանայցէր, և պատրաստիցէր յին քենէ զչար խորհուրդսն զայնս: Յայնժամ իմացաւ զգեկուցումն, և զազդումն, զոր տայի՛ն նմա, և ջանաց հոգունակուբ ընդդիմանալ փորձութե՟ց:

Ես յոյժ բարի ջերմեռանդութի՟, և օգնէ յայսմիկ մեծապէս սակաւ այցաւնելն ամենայնբ հաղորդութե՟, և անդ հայցել 'ի մնէ զօգնութի՟ և զհաստատութի՟ առ 'ի յաղթել քաջութ՟, և մանաւանդ սակաւ ընդունիլ զնա, զի յաճախ ընդունիլն զամենայնբ խորհուրդս զայս՝ է՛ դեղ եղականագունեղ ըստ այնց բանիցն մարգարէին, Պատրաստ արարեր առաջի իմ սեղան, ակն յանդիման նեղչաց իմոց: Սաղ. 22. 5: Ասեն մեքն, թէ ընդդէմ ամենից փորձութ՟ց այս է մեծ դեղ. բայց յատկապէս առ 'ի յաղթել փորձութեանց մարմնոյ, և պահպանել զողջախոհութի՟: Զի մեծային խորհուրդս այս՝ հանդարտեցուցանէ զլուցիկն մեղաց, նուաղեցուցանէ՝ և շիջուցանէ զշարժումն մարմնոյ, և զեռացումն ցանկութե՟, որպէս ջուրն զհուրն, ասէ մեր Կիւրեղ. և բերեն յաղագս այսորիկ զայն, զոր ասէ մարգարէն Զաքարիա. 9. 17: Զի որինչ բարին իւր՝ նորա, և որինչ լաւն նորին. ցորեան երիտասարդաց, և գինի անուշարար կուսից:

* * *

ԳԼՈՒԽ.

ԳԼՈՒԽ. Ի։

Թէ ապաշխարութիւն և մահացուցումն մարմնոյ է յոյժ յաջողակ և նախապատրաստական դեղ ընդդէմ այսմ փորձութէ։

ԱՍԷ երանելի սբն Հերոնիմոս, * Եռացեալ ցասմունքն սատանայի՝ պահոց և հսկմանց խստութբն են շիջուցանելիք ‖, Եւ ոչ այսպ առնէր ինքն ։ Նոյն սբն Հերոնիմոս պատմէ զսբյն Հիլարիոնէ, թէ գոլով վշտացեալ փորձութբ մարմնոյ, և անպարկեշտ խորհրդովք, ցասնոյր 'ի մարմին իւր, և ասէր ցնա. ոհ էշուկ, արարից քեզ զեր մի, զի մի աքացեսցես զիս։ զի բարձից 'ի քէն զորայն, և տաց քեզ զյարդ միայն. սպանից զքեզ սովու և ծարաւու. և բարձից քեզ ըղ բեան ծանրագոյն. վշտացուցից զքեզ ցրտով և տապով, որպ զի այսու կերպիւ խոկասցես մանաւանդ զկերակրոյ, քանթէ զվավաշոտութէ։ Այս է դեղ մի յոյժ աւանդեցեալ 'ի սրբոց, և 'ի կիր արկեցեալ 'ի ծառայից Այ․

Նաև առանց զդալըն զայս մորս։

Ի ժամանակագիրս սբյն ֆրանչիսկոսի պատմի, թէ ոմն եհարց ցմարդ մի սբ. թէ ըմբ աղագաւ սբ Յոհաննէս մկրտիչն գոլով սրբբեցեալ յորովայնէ մօրն, գնաց յանապատ, և անդ ապաշխարեաց այնքան խստութբ, որպ ասէ սրբազան աւետարանն։ Աւ որ պատասխանեալ սբն ասէ, ասա ինձ դու, վս ըմբ պատճառի ցանեն զաղ 'ի վր մսոյ, թէպէտ իցէ թարմ, և բարի։ Ասէ միւսն, որպ զի բարեգոյն պահպանիցի, և մի ապականիցի։ Արդ՝ այսպ, (ասէ սբն) փառաւոր սբ Մկրտիչն աղեցաւ ապաշխարութբ․, որպ զի սրբութին իւր առաւել բարեաւ պահպանիցի առանց իրիք ապականութե մեղաց, որպ եր-

երգէ Եկեղեցին. * Զի և ոչ գոնէ թեթև ցաւով կարիցէր բժշկօրէն զկեանս ||: Արդ եթէ նաև նախքան զունելն զփորձութիւնս զայս 'ի ժամանակի խաղաղութեան պատեհ է վարժել այսու կրթութեամբ ապաշխարութեան, և մահացուցման, ապա որքան տանել հարկ է վարել սովոր 'ի ժամանակի պատերազմի: Սուրբն Թովմաս ասէ, և առնու զայն յԱրիստոտելէ, թէ * Ողջախոհութիւն ասի 'ի ճնշելոյ ||: զի ճնշելով զմարմինն, սանձահարի ներհական մոլութիւն. և ասէ, թէ մոլութիւն անպարկեշտ է որպէս մանուկ տղայ, որում պիտոյանայ ձաղանք, զի զուրկ է 'ի բանականութենէ:

Իսկ եթէ յայսմանէ վշտացուցմանէ մարմնոյ ածանցելի թուլութիւն, կամ մնաս առողջութեան մարմնաւորի, պատասխանէ նոյն Սուրբն Հերոնիմոս յայլում տեղւոջ, և ասէ, * Լաւ է ինձ, թէ ստամոքսն ցաւեսցի, քան թէ միտն ||: Լաւ է, զի դողայցեն ոսկերն յաղագս թուլութեան մարմնոյ, քան թէ տատանեսցի ողջախոհութիւն, թէպէտ միշտ պիտոյ է ընտրողութիւն. Ուստի այսուքիկ իրք չափելիք են ըստ կարողութեան, և ըստ փորձութեան, և ըստ վտանգին իւրաքանչիւրոյ ուրուք: Քանզի յորժամ պատերազմն է այնքան մեծ, զի դնէ զմարդն 'ի վտանգի կորուսանելոյ զողջախոհութիւն, յայնժամ պիտոյ է դնել զմարմինն յայնում վտանգի առ'ի մնալ կենօք հոգւոյն: * Ծայրագոյն ախտից, զծայրագոյն, և զսաստիկ դեղս պիտոյ է տալ|| ասեն բժիշկք: Յորժամ հիւանդութիւնն է մահաբեր, և երբեմն թէ արդէն ածէ զմարդն 'ի վախճան կենաց, հարկ է 'ի գործածել զդեղ անսովոր: Այլ յայնժամ պարտ է առնել նա 'ի փորձութիւնս, և 'ի հիւանդութեան հոգևորի, յորժամ է սաստիկ: Իսկ այլապէս պարտ է մարտնչել ընդդէմ փորձութեան չափաւորի, յորում ոչ գոյ երկիւղ ունել զայնքան վտանգ.

վտանգ, և ո՛չ է հարկաւոր այնքան աշխատանք, և վիշտ առ'ի յաղթել:

Բայց ծանուցանեն առաւել վարդապետք հոգևոր կենաց, թէ այսպիսի փորձութիւնք մարմնոյ երբեմն ծնանին 'ի նոյնոյ մարմնոյ՝ և 'ի մարմնոյ ցեղանին 'ի հոգին. ոպ̄ սովոր է պատահիլ երիտասարդաց. և նշ̄. որք ունին զբարի առողջուն, և դդուեն զմարմինն իւրեանց. յայնժամ մեծապ̄ օգտէ դեղն վերոյասացեալ. զի 'ի նմին կայ արմատն հիւանդութե̃: Երբեմն ծնանի փորձութիւնս այս 'ի հոգւոյ ազդմամբ դեւին, և 'ի հոգւոյ ցեղանի 'ի մարմինն: Եւ նշան սորին է, յորժամ մարտնչի առաւել խորհրդով, և զազրալի երևակայութե̃, քան թէ շարժմամբ մարմնոյ: և եթէ լիցին ևս այսպիսիք, այս ո՛չ է, զի սկսանի փորձութիւն 'ի նախին, այլ սկսանելով ի̃ խորհուրդն, ածանցին զգայութիւնքն այնք, և շարժմունքն 'ի մարմինն. որ գոլով երբեմն թուլագունեղ, և որպէս մեռեալ, չար խորհուրդքն են յոյժ կենդանիք, ոպ̄ պատահէր սբ̄յն Հերոնիմոսի, ըստ որում նոյն ինքն պատմէ, թէ գոլով մարմինն թոյլ, մաշեցեալ, և ոպ̄ մեռեալ ապաշխարութե̃. վս̃ մեծի խստակրօնութե̃, զոր ունէր. բայց սակայն թուէր նմա երբեմն, թէ գտանիւր 'ի մէջ խաղից, և խրախճանաց աղջկանցն հռօմայ: Եւ ունին նաև զայլ նշան, որ է այս, զի գան խորհուրդքն այնպիսիք տարաժամու, և յորժամ մարդն ոչ կամի, և ոչ գոյ առիթ: Ո՛չ պատահին 'ի ժամանակէ աղօթից, ոչ 'ի պատարագէ, և ո՛չ 'ի տեղեաց սրբազանից, յորս նաև վատթարագոյն մարդիկք սովորք են կալ մտախոհք, պատկառանօք, և հրաժարին 'ի խոկալոյ զայսպիսի իրս: Եւ երբեմն են այնքան, և այնպիսի խորհուրդքն այնք, զի մարդ ո՛չ երբէք գիտաց, ո՛չ լուաւ, և ո՛չ պատկերակերպեաց յինքեան զնմանս նց̄, որք ներկայացուցանելին նմա ։ Եւ՛ ուժովն, և թափովն, որով գան խորհուրդքն այնք, իմանայ մարդ, թէ ոչ ծնանելին յինքենէ, այլ է այլ ոք, որ տայ, և առնէ զայնս ։ Համայնքս այսոքիկ են յայտնի նշանք, թէ հալածանքն այնք են 'ի դիւէն, և ոչ ծնանելին 'ի մարմնոյ, թէպէտ մարմինն չարչարի 'ի նոսին ։ Եւ՛ այսպէս պիտոյ է յայնժամ 'ի գործածել զայլ դեղ ։ Եւ՛ ասեն ամենեքեան, թէ յոյժ բարի իմն է վն՟ այսորիկ ջանալ ունել զգործողութն իմն, և գտանել զայն 'ի խորհրդոջ իւրում, ունել նաև զաշխատանս, և զվիշտս, որովք կարիցէ մոռանալ զզազրալի պատկերացուցութին զայն ։ Այսու դիտաւորութբ՟ ջանաց սբն՟ Հերոնիմոս (զի որում ինքն պատմէ) ուսանել զլեզուն եբրայական մեծաւ աշխատութբ՟, թէպէտ ոչ առանց օգտի ։

Եւ՛ նոյն սբն՟ Հերոնիմոս պատմէ զմիայնակեցէ միոյ երիտասարդէ յազգէն յունաց, որ կայր 'ի մենաստանի միում եգիպտոսի, և էր յոյժ վշտացեալ այսու փորձութբ՟ մարմնոյ. և թէպէտ պահէր, և ապաշխարէր մեծապ՟. սակայն ոչ դադարէր փորձութին ։ Եւ՛ վեհագոյնն առ'ի ազատել զնա 'ի գործ էած զայս միջոցս ։ Հրամայեաց միայնակեցի միում ծերագունի, որ էր այր ծանր և խստակրօն, զի հանդիպիցէր ստէպ երիտասարդին այնմիկ, և յանդիմանիցէր զնա ծանր և խստագոյն բանիւք. և զկնի թշնամանելոյ զնա վատթար բանիւք, երթիցէր առ նոյն վեհագոյնն առ'ի գանգատել զայնմանէ երիտասարդէ, որպ՟ թէ անարգեցեալ իցէր 'ի նմանէ ։ Գիտաց յոյժ բարւոք կատարել ծերն այն զհրամանն. և յետ՟ իբր յաղագս ամենից իրաց առեալ զառիթ՝ յանդիմանէր զնա յոյժ սաստկաբար, և ածէր զնա ևս առ վեհագոյնն առ'ի դատել զնա, յաղագս որոյ նախապատրաստեցեալքն արդէն վկայք առ'ի

ասել

տանել, թէ անարգեալ լիցէր երիտասարդն ըղձերն զայն : Եւ վեհագոյնն յանդիմանէր զերիտասարդն, և տայր նմա զապաշխարանս ծանունս, ոչ յանցաւոր մեղապարտի, և այս շարունակիւր յամ օր : Ուստի տեսանելով երիտասարդ աբեղայն զինքն այսպիսաբար թշնամանեցեալ. և այսքանեաւ սուտ վկայութեա ծանրացեալ, կայր յոյժ վշտագնեցեալ, և տրտմեալ 'ի խցի իւրում, և հեղոյր զբազում արտասուս, աղաչելով զՏր, զի ջատագովլիցէր զնա, զի տեսանէր զինքն գոլ լքեցեալ յամ նպաստաւորութէ մարդկայնոց : Ամենեքեան էին ընդդէմ նմին. և ոչ լինէր 'ի տան սխալանք, կամ պակասութի, կամ անկարգ լինի, զորմէ ոչ մեղադրիցէին նմա : Եւ փոխոյն երևէին երկու կամ երեք աբեղայք. և վկայէին ընդդէմ նմա, և անձրևէին 'ի վր գլխոյ նր զյանդիմանութիս, և զապաշխարանս : Եւ մնաց այս զտարի մի ամբողջ : Զկնի որոյ այլ ոմն աբեղայ էհարց զնա, թէ մի՞ կայ շուրջ զփորձութ մարմնոյ, առ որ նա պատասխանեաց առաց : * Ապրել ինձ ոչ է ըմբռն, և պոռնկութեն լեալ ըմբռն ||, զի ըղ կեանս իմ մաշուցեալէմ յաղագս այսքանեաց վշտաց. և զիարդ կարեմ յիշել զպոռնկութի : Եւ ոչ ևս եղև յիշումն այնր փորձութեն : Այսու կերպիւ բուժեաց զնա հայրն իւր հոգևոր : Մեծագունիւ ցաւով և վշտօք էբարձ զցաւն փորձագոյն : Եւ զինչ յարէ անդ սրն Հերոնիմոս 'ի գովեստ կրօնի. Եթէ միայնակ լիցէր եղեալ սա, ո՛ արդեօք օգնիցէր նմա առ 'ի յաղթել փորձութեն : Եւ 'ի կանոնի միայնակեցաց մին 'ի մէջ այլոց պատճառաց, զորս առբերէ նորն առ 'ի ցուցանել, թէ որքան օգուտ է կրօնն, և կեալն 'ի ներքոյ հնազանդութէ, է այս. * Զի մի առնիցես զայն՝ զոր կամիս. կերիցես զայն, որ հրամայի քեզ ուտել. զգենուցուս զայն, զոր

առ.

տանուս. և զպարան գործոց քոց վճարիցես. վաստակեալ առ անկողնով մտանիցես, և չև ևս կատարեալ զքունդ՝ յառնել սովորիցես ‖ : Եւ որպէս հեռանալով մի իրն զկնի միւսոյ, լիցիս այնքան զօրացեալ 'ի հնազանդութ՟ե, մինչ զի ոչ ունիցին զժամանակ փորձութեանցն մտանելոյ 'ի քեզ. և ոչ դու ունիցիս զժամանակ խոկալոյ զայլ իր, եթէ ոչ զայն՝ զոր առնելոց ես :

Երանելի սբ՟ն Փրանչիսկոս ասէր, թէ գիտէի փորձառութ՟ե, զի դևքն սաստէին, և փախչէին 'ի խստութ՟է և 'ի կշտութ՟է ապաշխարութեան. և մերձեցեալք առ փափկակեացսն, փորձէին զնոսա յուժգնակի : Սբ՟ն Աթանաս պատմէ զսբ՟յն Անտոնէ Աբբայէ, թէ զայն զայս ուսուցանէր աշակերտաց իւրոց : Հաւատացէք ինձ (ասէր) եղբարք, երկնչի սատանայ 'ի բարեպաշտից հսկմանց, յաղօթից, 'ի պահոց, և 'ի կամաւոր աղքատութ՟է :

Սբ՟ն Ամբրոսիոս առնէր զայն՝ զոր ասէ մարգարէն. Սաղմ. 68. 11. Խոնարհեցուցի պահօք զանձն իմ. արարի զհանդերձս իմ քուրձ : Եւ յայտ է (ասէ) բարի նպաստաւորութ՟ն և բարի օգնականութ՟ն ընդդէմ թշնամւոյս այսմիկ : Ուսնիմք ևս յաղագս այսորիկ զվարդապետութ՟ն Ք՟ի ուսուցեալ մեզ 'ի նմանէ, յորժամ եհան զպիղծ ոգին զայն, զոր աշակերտքն ոչ կարացին հանել, և ասաց, Ազգս այս ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք, և պահօք : Մատ. 17. 20. Աղօթից առաւելեալ զապաշխարութ՟ն, և ընդ պահս, որք զխաւարեան միջոց փախուցանելոյ զայս ազգ դիւաց : Ուստի յորժամ գան փորձութիւնքն այնք, ոչ պարտիմք շատանալ դիմելով առ աղօթս, առնելով զգործ և զյառաջադրութի ներհակ փորձութ՟ե, այլև պարտիմք 'ի գործ ածել ևս առաւել յաւելեալս զգործս մարմնաւորի ապաշխարութ՟ե, և մահայտուցման միշտ 'ի ձեռն խրատու խոստովանահօրն , և վեհագունին , որ̃պ զի առնիցեմք զո̃մ ինչ բարեգունապէս ։

Կրօնաւոր ոմն գոլով պատերազմեցեալ այսու փորձութ̃բ էհարց ցմ̃ եղբայրն Եգիդիոս , թէ որ̃պ կարեմ ազատիլ ։ Ասէ ցնա մ̃ն · զի՞նչ առնիցէիր դու եղբայր իմ շան միում , որ գայցէր խածանել զքեզ ։ Ասէ կրօնաւորն · ես առեալ զքար , կամ զցուպ մի հարկանիցէի զնա , մինչև փախիցէր ։ Յայն ժամ ասաց մ̃ն · արդ՝ այսպ̃ արա և դու ը̃ մարմնոյ քում , որ կամի խածանել զքեզ · և փախիցէ 'ի քէն փորձու̃նդ այդ ։ Եւ՛ է այնքան բարի դեղս այս , մինչզի երբեմն որպիսի և իցէ աշխատանք , վիշտ , և ցաւ , թէպէտ փոքրագոյն , որ̃պ կալ բաղկատարած , անկանիլ 'ի ծունկս , բաղխել զկուրծս , լինել խարազանաբաղխ · կծմթել զմարմինն , պըռձոքել զհերս , սովոր են դարձուցանել , և բառնալ զփորձութիւնս զայս ։

Ընթեռնանի 'ի վարս սբ̃յն Անդրէի առաքելոյն , թէ ծեր ոմն կոչեցեալ Նիկողայոս գնաց առ նր̃ առաքեալն 'ի կորնթոս , և ասէ ցնա , վաթսուն և չորս ամ է հայր սբ̃ , զի կեամ բղջախոհութ̃բ , և թուլացուցեալ ըղ ձանձն առ անկարգ ցանկութ̃ին իմ, եղեալ եմ որս ա̃մ ցեղ վավաշոտութ̃ե , և մինչ սակաւ ինչ յառաջ մտի 'ի բոզատունն՝ առ 'ի վշտացուցանել զԱծ̃ , ունելով ընդ իս զաւետարանն սբ̃ , պոռնիկ կին ոմն տեսեալ այնորիկ , ընդ որում կամէի մեղանչել , հեռացոյց զիս յինքենէ սարսափմամբ , և աղաչեաց զիս ոչ մերձենալ առ ինքն , զի տեսանեմ ասէ 'ի քեզ զիրս զարմանալիս , և զխորհրդաւորս ։ Զայս ասացեալ Նիկողայոս ցսբ̃ն Անդրէաս, աղաչեաց ապա զնա տալ նմա զդեղ իմն ընդդէմ այնմիկ մեծի բեկանաւորութ̃ե իւրում, և հնացեալ սովորութ̃են 'ի մեղս ։ Սբ̃ն Անդրէաս

դրէաս սկսաւ աղօթել վ՟ն ն՟ր. և պահեաց զաւուրս հինգ աղաչելով զՏ՟ր, զի թողուցուր զմեղս թշուառական ծերոյն այնորիկ, և շնորհիցէր նմա զպարգև ողջախոհութե՟ն: Յատանելով ս՟բ Առաքեալն յաղօթս, զկնի հինգ աւուրց լուաւ զձայն մի յերկնից, որ ասէր ցնա. ես շնորհեմ քեզ զայն՝ զոր դու խնդրեա վ՟ն ծերոյն: Բայց կամիմ, զի որպէս դու պահեցեր վ՟ն ն՟ր, այսպ՟ և նա պահիցէ, և վշտագնիցէ զինքն, եթէ կամի զկեցութի՟ն իւր: Հրամայեաց ս՟բ Առաքեալն Նիկողայոսի; զի պահիցէ. և ամենից քրիստոնէից, զի աղօթիցէին վ՟ն ն՟ր, հայցելով զողորմութի՟ն 'ի Տ՟նէ: Եւ Ա՟ծ լուաւ աղօթից ն՟ց, և Նիկողայոս դարձաւ 'ի տուն իւր, և զոր ինչ ունէր, ետ աղքատաց. Նուաճեաց զմարմին իւր մեծաւ խստութ՟բ զամիսս վեց, և ոչ զայլ ինչ եկեր, և էարբ, եթէ ոչ զհաց չոր, և զսակաւ ջուր: Եւ զկնի ապաշխարութե՟ն այսորիկ փոխեցաւ աստի առ այլ կեանս. և Ա՟ծ յայտնեաց ս՟բյն Անդրէի, որ էր յայնժամ տարակաց անտի, թէ ծերն այն փրկեցաւ:

Պատմի 'ի գիրն հոգևոր հովտի, թէ միայնակեաց ումն գնացեալ եգիտ զհայր մի ծերագոյն, և ասաց ցնա. զի՞նչ արարից հայր, զի ոչ կարեմ ըմբերել խորհրդոց, որք ընդ իս մարտնչին: և ծերն պատասխանեալ ասէ ցնա. ես ոչ երբէք բաղխեցայ յայդպիսի խորհրդոց: Միայնակեացն այն գայթակղեցաւ այնու պատասխանեաւ, և գնաց առ'ի գտանել զայլ հայր ումն 'ի ծերոց անտի, և ասէ ցնա, գիտեա՛ զի այս ումն հայր ասաց ինձ, թէ ոչ երբէք բաղխեցայ 'ի խորհրդոց. և ես գայթակղեցայ, զի թուի ինձ, թէ ասաց նա զիր մի, որ գերազանցէ քան զբնութի՟ն մարդկային: Պատասխանեաց հայրն, և ասաց, մի՛ գայթակղիր, զի այրն այն Ա՟յ,

ոչ

ո՛չ տամ քեզ զբանդ զայդ առանց պատճառի : Դարձի՛ր առ նա , և խնդրեա՛ զթողութին . և տացէ քեզ զպատճառն , վ՟ որոյ տաց քեզ այնմ : Դարձաւ աբեղայն , և ասէ ցնա : Հա՛յր թողութին շնորհեա՛ ինձ , զի առանց հայցելոյ զհրաման 'ի քէն , գնացի յանցելում աւուր ագխտաբար : Բայց աղաչեմ զքեզ , զի բացայայտեսցես ինձ , թէ ո՞չ ոչ եղեր պատերազմեցեալ խորհրդովք : Պատասխանեաց ծերն ասէ ցնա . զի յորմէ հետէ եմ ես կրօնաւոր , ո՛չ երբէք յագեցայ , և ո՛չ յագեցայց հացիւ , ո՛չ ջրով , և ո՛չ քնով . և ժուժկալութիս այս ո՛չ ետ ինձ թոյլ , թէ ռնեսցէի զպատերազմ խորհրդոց , զորս դու ասես :

ԳԼՈՒԽ . Բ:

Յաղագս այլոց դեղոց ընդդէմ անպարկեշտ խորհրդոց.

Երանելին տ՟րն Գրիգորիոս ասէ , թէ երբեմն փորձութիւնքն անպարկեշտք , և լինին անձին վշտացեալ 'ի խորհրդոց և 'ի վատթար շարժմանց՝ սովոր են գոլ հետք և մնացորդք անցելոց վատթար վարուց , և պատիժ և պատուհաս աղատութէ և չար վարութէ հնոյ : Եւ յայնժամ հուրս այս շիջուցանելի է արտասուօք , ողբալով յուժգնակի զիրս անցեալս :

Ս՟բն Բօնավէնթուրայ ասէ , թէ յոյժ բարի դեղ է 'ի փորձութէ , զի մարդն ենթադասեսցէ զինքն գոլ արժանի այնմ վշտադնութէ և նեղութէ , և ճանաչեսցէ զինքն գոլ յոյժ պարտաւոր այնմ պատժոյ վ՟ յանցանաց իւրոց , և վ՟ աղատութէ անցելոյ ժամանակի . և առնիցի զայն խոնարհութ՟է և համբերութ՟է , ասելով ընդ եղբարսն Յովսեփայ . Իրաւղայս, եղեւ, զի մեղաք յեղբայրն մեր: Ծննդոց 42. 21. Այսու կերպիւ ասէ Սբն Բօնավէնթուրա, մարդն հաճոյանայ Այ առաւել շուտով, և փորձութիւնքն դառնան 'ի բարի, և 'ի յօգուտ: Ճանաչելն զինքն գոլ արժանի պատժոյ, շարժէ մեծապէս յողորմութիւն զգթութիւնն Այ: Եւ այսպէս ընթեռնումք յածաշունչն, թէ այսպէս սովոր էր առնել ժողովուրդն իէլի առ'ի ընդունիլ զթողութիւն յԱյ:

Միւս այլ յոյժ զօրաւոր միջոցն առ'ի ունիլ զնպաստութիւն և զօգնութիւն 'ի Տնէ, և առ'ի ունիլ զյաղթութիւն և պարտել զթշնամիս մեր յամ փորձութիս, և մասնաւորապէս յայսմիկ է ոչ ապաւինիլն 'ի մեզ, այլ դնել զամ յուսացողութիւն մեր յԱծ, զորմէ երկարապէս ընձեռեցաք յայլում տեղւոջ, և յետոյ յորժամ ընձեռեսցուք զերկիւղէն Այ, ասելոց եմք ևս զիր իմն: Վասն այժմիս բաւականասցի ասել, թէ հասարակաբար խոնարհութիւնն է մեծ դեղ ընդդէմ փորձութեց: Է յայտնի իրն այն, որ յայտնեցաւ սրբոյն Անտոնի, որ տեսանելով հոգւովն զբոլոր աշխարհս լի որոգայթիւք, սկսաւ աղաղակել և ասել արտասուօք: Ո՛ Տր, ո՞ կարէ ազատիլ յայսքան որոգայթից: Եւ լուաւ զձայն մի՝ որ ասաց, խոնարհն: Լե՛ր ուրեմն դու խոնարհ, և Ած ազատեսցէ զքեզ յորոգայթից և 'ի փորձութեց յայսցանէ, Պահէ Տր զտղայս: Եւ խոնարհ եղէ, և Տր կեցոյց զիս. Սաղմ. 1. և 4. 6: Լերինք բարձունք բաղխին 'ի կայծականց, և 'ի մրրկաց, ծառք մեծամեծք կործանին 'ի հողմոց, բայց եղեգունք, թուփք, և տունկք ցածունք, որք խոնարհին, և թեքին աստ և անդ, մնան անվնաս 'ի բաղխմանէ մրրկաց:

Ըստ այսմ ևս եղիցի յոյժ բարի, և օգտակար իմն՝ արտահանել զխոնարհութիւն, և զճանաչումն անձին յայսպիսեաց փորձութեց ան-

պարերկնչոտից, տեսանելով, թէ այնպիսիք երբ պատահին մեզ, և ասել. Ահա Տր̄ իմ, այն եմ, որ եմս. այլ ո՞րպիսի իրի կարէիր ազատել յայսմանէ աղբանոցէ, եթէ ոչ այսպիսւոյ հոտոյ, այլ ո՞րպիսւոյ իրի կարէիր ազատել յայսմ երկրէ, զոր դու անիծեր, եթէ ոչ փշոց և տատասկաց: Այս է պտուղն, զոր ես կարեմ տալ. եթէ ոչ դու Տր̄ սրբեսցես զիս: Այսպիսի փորձութիւնքս, և չար միտմունքս տան մեզ զբարի առիթ խոնարհութե̄: Եթէ անարգ և խոտան զգեստքն օգնեն առ 'ի խոնարհիլ, ո̄պ ասեն ո̄մքն. ապա ո՞րքան առաւել օգնեսցեն մեզ առ'ի խոնարհիլ այսպիսի անարգ և աղտեղի խոկմունքս, որպիսիք են այնք, որք անցանեն ընդ միտս մեր: Սր̄ եղբայրն Եգիդիոս ասէր, թէ մարմինն մեր է ո̄պ զխոզ, որ ընթանայ մեծաւ տենչմամբ առ տիղմն, և բերկրի 'ի նմին. կամ ո̄պ զբզէզ, որոյ կեանքն է թաւալիլ 'ի յաղբս: Խոկմունքս այսպիսիկ օգնեսցեն մեզ մեծա̄պ, զի մի՛ քարշեսցիմք յայսց խորհրդոց:

Ամէ̄ հասարակաբար 'ի յա̄մ փորձութիւնս է յոյժ բարի դեղ, զի մարդն ոչինչ համարեսցի զայնիրն, առ որ քարշէ փորձութիւն. և դառնասցէ 'ի յինքն իսկոյն, խոնարհելով և ասելով, այսքան չար մարդ եմ ես, զի գան առ իս, և անցանեն ը̄ն միտս իմ այսպիսի իրք: Զի այսու թուլանայ ուժն փորձութե̄. և դևն մնայ ծաղր եղեալ: Օգնէ ևս մեծա̄պ ամաչելն վ̄ն ունելոյ զփորձութի̄, և զվատթար խորհուրդս, և շարժմունս, որք գան, որպէս թէ իւրն իցէ մեղն, թէպէտ յոյժ հեռի իցէ 'ի հաւանելոյ նոցա: Զի կատաղի դևն, և հաշի 'ի ցաւոյ տեսանելով զայնքան խոնարհութի̄. և գոլով ինքն այնքան հպարտ, ո՛չ կարէ տանիլ այնքան խոնարհութե̄: Ո՛չ կարես դու տալ նմա զմեծագոյն ապտակ, և ո՛չ կարես ունել զմիջոց, որով նա յոյժ վաղվաղակի

ղակի

զակն թողուցու զքեզ 'ի փորձելոյ, քան ցուցանել նմա, թէ շահիս դու նովիմբ, որով նա կամի զքեզ կործանել: Եւ ևս զայս առնելով մարդ՝ ցուցանէ, թէ յոյժ հեռի է իւրն կամք 'ի վշտացուցանելոյ զԱծ, որ է իր մի, որ հաճեցուցանէ զմարդ. և առնէ զնա ապահով:

Օգնեսցէ ևս երբեմն ծաղր առնել զդևն, և քամահել զնա, ասելով նմա այսու օրինակաւ: Երթ յետս իմ ոգի չարիր, յամօթ լեր ով վատաբախտ, զի յոյժ ատելի ես դու, որ գտես զայդպիսի ատելի իրս 'ի յիշողականութեն իմում: Քանզի գոլով նա յոյժ հպարտ, յորժամ քամահեմք զնա, և անգոսնեմք՝ համարելով զնա այնպիսի, որպիսի իսկ է, ոչ կարէ ըմբերել, և փախչի: Սրբն Գրիգորիոս պատմէ զդատիոսէ եպիսկոպոսէ միլանու, թէ երթալով 'ի քաղաքն կոստանդնուպօլիս՝ հանդիպեցաւ 'ի քաղաքն կորնթոս, և ոչ կարելով առնել զայլ տեղի իջեւանի; եթէ ոչ զտուն մի անբնակ, և ամայի. զի 'ի բազմաց ամաց հետէ անդ բնակէին դևք: ասէ սրբն Դատիոս, երթիցուք 'ի տունն յայն. և գնացին. և մերձ 'ի մէջ գիշերին մինչ կայր սրբն 'ի քուն, սկսան դևքն առնել զմեծ շշնջիւն 'ի կերպ զանազան անասնոց, զի փառանչէին հանգոյն եզանց, գոչէին որպէս զառիւծ. խանչէին իբրև զխոզս, և շչէին հանգոյն օձից: Եւ զարթուցեալ սրբն այնու շշնջմամբ, բարկացեալ ընդդէմ դիւաց ասաց ցնոսա. ո՛ թէ ո՛րքան բարեպէս վայելէ ձեզ այդ. ո՛ թէ ո՛րքան բարւոք յաջողեցաւ ձեզ 'ի համբառնալն զձեզ կամիլ լինել որպէս զԱծ. բայց եղէք անբան անասունք. վիշապք, և օձք. զի բարւոք ցուցանէք զայն, որպիսիք էքդ: Եւ ասէ սրբն Գրիգորիոս, թէ այնքան մեծապէս զամօթի հարան դևքն այսու, մինչ զի խոյն 'ի չիք դարձեալ, ոչ ևս դարձան 'ի տունն յայն · և այնուհետև կարաց բնակել 'ի տանն յայնմիկ ամ՟ ոք ։ Ս՟բն Աթանաս պատմէ զերանելւոյն հ՟րյն Անտոնէ , թէ էր մեծապէս վշտացեալ յանպարկեշտ փորձութ՟ց · և թէ յաւուր միում անկեալ առ ոտս նորա մանուկ մի սեաւ , զազիր՝ և վատթար , որ գանգատէր և ասէր , թէպէտ յաղթեցի բազմաց , սակայն 'ի քէն միայն ծաղր եղէ ։ Եւ հարցեալ ցնա ս՟բն Անտոնիոս՝ թէ դու ո՛ ես , ասէ նա · ես եմ ոգի պոռնկութ՟ ։ Եւ ս՟բն ասէ ցնա · այսուհետև ոչինչ համարեցայց զքեզ · որովհետև դու այդքան անարգ՝ և խոտան ես ։ և իսկոյն անյայտ եղև տեսիլն ։ Եւ Քս՟ փրկիչն մեր 'ի սրբազան աւետարանի կոչէ պիղծ՝ զոգին պոռնկութ՟ · Յորժամ այսն պիղծ ելանիցէ 'ի մարդոյ ։ Ղուկ· 11· 24· Այսու կերպիւ և մեք կարեմք յամօթառնել , և ծաղրառնել զդևն , համարելով զնա այնպիսի , որպիսի է իսկ , և ծիծաղիլ զնովաւ ։ Եւ երբեմն առանց ասելոյ նմա զիր իմն , և առանց տրամաբանելոյ ը՟ նմա , կարեմք առնել ընդդէմ նմա զչչուամն ինչ ։

ԳԼՈՒԽ· Թ·

Յաղագս Երկիւղին Ա՟յ ։

Երկիւղիւ և դողութ՟բ զանձանց փրկութ՟ն գործեցէք ։ Փիլիպ· 2· 12։ Մինն 'ի մէջ իրացն , որք օգնեն մեզ մեծապ՟ վ՟ս ողջախոհութ՟ , և հասարակաբար վ՟ս պահելոյ զմեզ 'ի շնորհս Ա՟յ , է կալն միշտ երկիւղիւ սրբով , և զգուշութ՟բ , և ոչ լինել անձնապաստան , այլ դիմել առ Ա՟ծ , և դնել 'ի նա զա՟մ յոյս մեր ։ Ուստի ասէ ս՟բն Բեռնարդոս , * Ճշմարտութ՟բ ուսայ , թէ ոչ այլ ինչ այնքան զօրեղ է առ'ի արդիւնաւորել զշնորհս , առ'ի պա-

պա.

պահել զարդիւնաւորեցեալն, և առ՚ի վերստին ստանալ զկորուսեալն, որպիսի է յամ ժամ գտանել զքեզ ոչ բարձրամտիլ առաջի Ա՟Յ, այլ երկնչիլ ։ ‖ Երանի առն, որ միշտ երկնչի ։ Առակ. 28. 14. Եւ հակադարձաբար մինն ՚ի յիրաց, որք և զմեծագոյն սէրս թշուառաբար ընկեցին ՚ի վայր, եղև ապաւինիլն ՚ի յինքեանս, և կալն առանց երկիւղի, և ըզգուշութէ ։ Իմաստունն զարհուրեալ՝ խոտորեցաւ ՚ի չարէ . իսկ անզգամն յանձնապաստան խառնակի ընդ անօրէնին ։ Առակ. 14. 16։ Նա որ տանի զհեղուկ իւր մեծագին յապականեալ անօթում, որ է յոյժ դիւրաբեկ . և անցանէ ընդ տեղի վտանգաւոր, ուր անձինք պատահին միմեանց, և մղեն զիրեարս, և չնչեն յուժգին հողմունք մրրկաց հանդերձ . եթէ ոչ ճանաչէ զբեկանաւորութիւն ապակւոյ, և ոչ տանի բազում զգուշութ՟, դիւրաւ բեկանի անօթն, և ցրուի հեղուկն, զոր տանի ։ Բայց որ ճանաչէ զդիւրաբեկ գոլն անօթոյն, և երկնչի ՚ի բեկանելոյ, և տանի բազում զգուշութ՟, և երթայ բազում նկատմամբ, և մտադրութ՟, այսպիսին երթայ առաւել անկասկածաբար ։ Սոյնս պատահի ևս մեզ . ունիմք զհեղուկ, և զգանձ մեծագին շնորհաց, և զպարգևս Ա՟Յ ՚ի խեցեղէն անօթոջ, որպէս ասէ ս՟բ առաքեալն Պօղոս, որք կարեն դիւրաւ բեկանիլ, ցրուիլ, և կորնչիլ . զի կամք ՚ի մէջ բազմաց հողմոց և մրրկաց, ուր գոն բազում պատահմունք, և վտանգք ։ Նոքա որք ոչ բարւոք ճանաչեն զինքեանս, և ոչ երկնչին ՚ի բեկանաւորութէ, և ՚ի թուլութէ յայսմանէ, այսպիսիքս կեան ՚ի սուտ անկասկածութէ . և կորնչին դիւրաւ ։ Բայց նոքա, որք ճանաչեն, և երկնչին, կան յոյժ զգուշացեալք, և վարին մեծաւ հոգունակութ՟ առ՚ի պահպանել, և այսու կեան առաւել ապահով ։ Եւ եթէ կարէ գտանել ապա-

հո.

հողմոյն իմն 'ի կեանս յայս, ունին զայն այսպիսիքս :

Ոմանք կարծեն, թէ եղեալ իցէ այս՝ (ասէ Երանելին սբն Բեռնարդոս) զի ոմանք անձինք եղեն ողջախոհք յերիտասարդութե իւրեանց, թէպէտ պատերազմեցեալք եղեն 'ի փորձութեց ծանրագունից. և յետոյ 'ի ծերութե իւրեանց եղեն թշուառաբար անկեալք 'ի յոյնակի աղտեղի, և 'ի գարշելի անարգութիս, մինչ զի և ինքեանք զարմացան : Պատճառ սորին է, զի յերիտասարդութե իւրեանց կեային երկիւղիւն Այ, և խոնարհութբ, և ոտնահարելով զինքեանս մերձ 'ի յանկանիլ, դիմէին առ Ած, և էին հովանաւորեցեալք 'ի նմանէ : Բայց յետոյ յաղագս երկարատև ստանալոյ զողջախոհութի, սկսան բարձրանալ, և ապաւինիլ յինքեանս, և գոլ ապահով. իսկոյն 'ի նոյն կիտում եղեն թողեցեալք 'ի ձեռանէ Այ Տն մերոյ. և արարին զայն, որ էր յատուկ իւրեանց, որ է անկանելն :

Երանելին Սբն Ամբրոսիոս ասէ, թէ այս է պատճառն, վն որոյ բազումք որք ծառայեցին Այ. և զտիւ և զգիշեր խոկային զօրէնս նր. 'ի խաչ հանին զմարմինս իւրեանց, և սանձահարեցին զցանկութիս, և զգրգիռս նր. համբերեցին վշտաց, ոյք նց պատահեցան, և գտան հաստատունք 'ի հալածանս, զորս կրեցին : Բայց սակայն 'ի վախճանի կերուսին զկայունութի, և զհաստատութի, և զբարձրութի կենաց. և անկան 'ի մեծ թշուառութի. զի ապաւինեցան 'ի զօրութի իւրեանց, և 'ի սրբութին, նաև 'ի գործս բարիս՝ զորս առնէին, և ինքնահաճութբ յուսացան անկարգաբար 'ի յայնս : Եւ արդ, որոց դեռ ոչ կարաց հաւանեցուցանել զսէրն յայտնի մոլութեց, և ոչ կարաց պարտել թափով անարգանաց, և հալածանաց, անկան 'ի նմա նէ քաղցրաբար, յորժամ նոյն դեն համբառնայր զն͞ն ինքնահաճանութ͞բ:

Ունիմք ըն զա͞ծաշունչ գիրս, և զգրեանս մ͞րց այսպիսւք օրինակօք, և ողբայ զայս յուժգին ա͞է հայրն Օգոստինոս այսպիսւք բանիւք. *Տեսայք ասէ զբազումս, և լուայք 'ի հարանց մերոց, (զոր առանց մեծի դողութ͞ե ոչ կարեմ յիշել), զի նախ ելին մինչև յերկինս, և 'ի մէջ աստեղաց զետեղեցին զբոյնն իւրեանց. իսկ յետոյ անկան մինչև յանդունդս, և հոգիք ն͞ց թմրեցան չարեօք: Տեսայք, զի աստեղք անկան յերկնից թափով գազանացեալ տտանն վիշապին. և նոքա որք անկեալ կային 'ի հող երկրի, զօրացուցչաւն ձեռամբ քով զարմանաբար համբարձան ‖: Որքան ողջախոհութիւն հաստատուն և ընտիր էր, զոր ունէին ոմանք 'ի հնոց հարց, այնքան շիջան և դարձան 'ի յածուխ:

Ո՞վ է այն, որ ոչ զարհուրեալ դողայցէ այնու օրինակաւ, զոր ճառէ լիպոմանոս զՅակոբայ անապատականէ, որ զկնի ծառայելոյ Տ͞ն աւելի քան զամս քառասուն մեծագունիւ խոնարհութ͞բ և ապաշխարութ͞բ, և գոլով արդէն 'ի հասակի վաթսուն ամաց, փայլէր հրաշիւք, և հանէր զդևս, ածին առ նա զաղջիկ մի, զի հանիցէ 'ի նմանէ զդևն. զկնի հանելոյ զդևն, ն͞ք որք տարեալք էին զաղջիկն առ նա, ոչ իշխեցին դարձուցանել զնա 'ի տուն, երկնչելով, մի՛ գուցէ թշնամանիցէր զնա դևն. և նա թոյլ ետ աղջկանն մնալ ընդ նմա: Եւ քանզի ինքնահաճանութ͞բ ապաւինեցաւ յինքն, Ա͞ծ Տ͞րն մեր թոյլ ետ նմա անկանել: և քանզի մի մեղքն կոչէ զայլ մեղս, երկնչելով, զի մի՛ յայտնիցի մեղք իւր, եսպան զաղջիկն, և ընկէց զնա 'ի գետ մի. և առ 'ի կնքել զա͞մ, յուսահատեալ յողորմութենէն Ա͞յ, եզերեաց դառնալ յաշխարհ, և տալ զինքն բոլորովին գերի մոլու-

թեց

թն̃ց և մեղաց, զորս այնքան անագան էր ակնեալ. Թէպէտ յետոյ ոչ եղև պակաս ողորմութիւն ԱՅ. զի զօրացեալ նովաւ, դարձաւ յինքն, և ապաշխարելով խոստովանաբար զամս տասն, վերստացաւ զորդութիւն առաջին. և եղև աբ̃ կանոնաւորեցեալ:

Ո՞չ զարհուրիցի այնու, որ պատահեցաւ այլում միայնակեցի, զորմէ ասէ երանելի սբ̃ն Անտոնիոս. այսօր անկաւ սիւն մի մեծ: Ո՞ ոչ երկնչիցի: Ո՞ կարիցէ յուսալ 'ի սրբութեն իւր. և ասել, թէ ես եմ կրօնաւոր: Նկատեա՛, զի անկան, որք լաւագոյնք քան զքեզ էին, և ունէին զմեծագոյն առաքինութիւն, և զանէլի պարգևս ԱՅ, զորս դու ոչ ունիս: Ասէ փառաւոր սբ̃ն Հերոնիմոս, *Ո՛չ ես դու սրբագոյն քան զԴաւիթ, և ոչ իմաստնագոյն քան զՍողոմոն. և ոչ զօրեղագոյն քան զՍամփսոն ||: Արդ՝ անկան սոքա ամենեքեան. և մին յերկոտասանից Առաքելոցն Քի̃ի անկաւ, թէպէտ իցէր կրթեցեալ յայնպիսում դպրատան, կենցաղավարեալ ընդ այնպիսւոյ Վարդապետի, և ընդ այնպիսեաց աշակերտակցաց. և լուեալ զայնքան բանս, և զքարոզս, և տեսեալ զայնքան զօրութիւնս և զհրաշս: Եւ Նիկողայոս մին 'ի յեօթանց սարկաւագաց ընտրեցելոցն յառաքելոց, 'ի վր̃ որոյ իջեալ էր Հոգին սբ̃, ոպ̃ 'ի վր̃ այլոց, եղև յետոյ ոչ միայն հերետիկոս, այլև հերետիկոսապետ, և հայր հերետիկոսաց: *Յիշեա՛ զի զբնակիչն դրախտին ընկէց 'ի դրախտէն ||: Ո՞ է այն, որ ոչ երկնչիցի 'ի հնագոյն օձէն: Յիշեա՛ (ասէ սբ̃ն Հերոնիմոս,) զի նախահարքն մեր անկան, և արտաքսեցան 'ի դրախտէն. ուր կային հարուստք պարգևօքն ԱՅ, օժտեցեալք արդարութե̃ սկզբնականաւ. և կորուսին զա̃մ հպարտութե̃: Ասէ սբ̃ն Օգոստինոս, թէ ոչ իմ՛իք կերպիւ խաբիցիւր առաջին մարդն, եթէ ոչ լինէր 'ի սրտի իւրում նախ բաժանեցեալ յԱ̃յ մ̃ն հպարտութ̃. զի ճշմարիտ է ասացեալն իմաստնոյն, զի է Հոգւոյն ս̃րբոյ. Նախքան զբեկումն յառաջէ հպարտութի, և յառաջ քան զգլորումն բարձրանայ ոգի: Առակ. 16. 18. Եւ յայլում տեղւոջ ասէ. Յառաջքան զբեկման իւր, բարձրանայ սիրտ առն: 18.12.

Ապա եթէ ոչ են բաւական քեզ օրինակք մարդկան 'ի յերկրի, ահա, և ե՛ւ յերկինս, ուր գտցես զօրինակս հրեշտակաց, որք մ̃ն հպարտութ̃ և ինքնահաճութ̃ անկան յայնմանէ մեծագունէ բարձրութէ, և 'ի պատուոյ յորում ստեղծան յԱ̃յ: Եթէ ծառայից իւրոց ո՛չ հաւատայցէ, և զհրեշտակաց խոտորնագոյնս ինչ իմացաւ: Իսկ արդ զբնակեալս 'ի տունս կաւեղէնս, յորոց և մեք իսկ 'ի նմին կաւոյ եմք, եհար զնոսա ըստ օրինակի ցեցոյ: Եւ յառաւօտէ մինչև յերեկոյ ո՛չ ևս իցեն: Յոբայ. 4. 18. Երանելին ս̃րբն Գրիգորիոս խոկալով զայս բանս Յոբայ, ասէ. եթէ 'ի յայնս սակս մաքրագունեղս եգիտ զայնքան դիրտ, և զայնքան մրուր: Եթէ 'ի պատուականագունեղ բնութէն յայնմիկ հրեշտակայնոյ ոչ եղև աննկատածութի և յարատևութի, ապա զինչ արասցուք մեք, որք բնակիմք 'ի տան խեցեղինի, զի խեցին դիւրաւ բեկանի, և քակտի: Ո՞պ ոչ դողայ, և ո՞պ կարասցէ լինել ինքնահաճան հոգի մի, որ ունի զայսպիսի մարմին, որպիսի է մերս, որ յինքենէ ծնանի, և ընդ ինքեան ունի զցեց, զի մեք ինքեանքս ունիմք զարմատն աճերման մերոյ, և լցուք մաշեցեալք ո̃պ 'ի ցեցոյ: Բարեպ̃ բաղդատել ցեցոյ ասէ ս̃րբն Գրիգորիոս. քանզի ո̃պ ցեցն ծնանի 'ի զգեստուց. և ապականէ, և մաշէ զնոյն զգեստն, յորմէ ծնանի. այսպէս նաև 'ի մեզ մարմինն մեր է ո̃պ զզգեստ հոգւոյ. որ ծնանի զցեց իւր. քանզի 'ի նմանէ ծնանի փորձութի մարմնաւոր, որ տայ պատերազմ ընդ մեզ. և այսպ̃ սկսանի մարդն մաշել 'ի ցեցոյ, յորժամ փորձութ̃բ, որ ծնանի 'ի նոյն մարմնոյ, մաշի և կորնչի : Դարձեալ յոյժ բարւոք ասէ ոպ̃ 'ի ցեցոյ, զի ոպ̃ ցեցն վնասէ զգեստուց առանց շշնջման, այսպ̃ ցեցն չար յօժարութե̃ մարմնոյն մերոյ, և լուցիկն մեղաց՝ զոր ունիմք ընդ մեզ, առնէ զվնաս առանց շշնջման, և գրեթէ առանց մերոյ զգալոյ. զի բազում անգամ ոչ իմանամք, եթէ ոչ զկնի եղանելոյ իրին : Արդ եթէ ոգիքն այնոքիկ հրեշտակայինք և երկնաւորք, որք ոչ ունէին զմարմին, զի ծնանիցէր 'ի նս̃ զցեց, և յարուցանիցէր զպատերազմ ընդդէմ նց̃, և զընդդիմութի, ոչ կացին, և ոչ յարատևեցին 'ի բարիս. ապա ով է մարդն այն այնքան ինքնահաճան, որ ապաւինիցի յինքն. մինչ ունի 'ի ներքս յինքեան զպատճառն իւրոյ փորձութե̃ և գլորման : Ուսցուք ուրեմն աստուստ առ 'ի կալ միշտ այսու երկիւղիւ և զգուշութ̃բ : Եւ վայ այնմիկ, որ ոչ կայցէ միշտ այսու երկիւղիւ, զի արժանի է մեծի լալոյ, որ ոչ կայցէ հեռի յանկանելոյ : Եթէ ոչ յերկիւղին Տն կալցի փութով, վաղվաղակի կործանեսցի տուն քո : Սիրաք. 27. 4: Զայս ոչ ասեմ ես, այլ ասէ Հոգին Սբ̃ : Եթէ ոչ կացցես միշտ երկիւղիւ և զգուշութ̃բ փախչելով 'ի վտանգէ, զգուշանալով յառթէ, արտաքսելով իսկոյն զվատ խորհուրդս, և պատրաստելով զքեզ առ փորձութիւնս, շուտով անկցիս : Մի՛ ոք խաբիցի ասելով, ես ոչ զգամ զայդպիսի փորձութիւնս, և ոչ զշարժմունս, և զվտանգս խօսակցելով, և կենցաղավարելով, և հայելով. և ոչ ներապեն 'ի յիս զիր իմն այդոքիկ : Ասեմ քեզ, մի՛ հաւատար այսմիկ, զի դևն այսու կերպիւ կամի առնել զքեզ ապահով, ոպ̃ զի զկնի սակաւուց, յորժամ տեսցէ զքեզ անհոգ, ընկենուցու զքեզ յերկիր, կամ մանաւանդ 'ի դժոխս : Եւ ազդեն մեզ Սբ̃քն, թէ որքան զմեծ շնորհ և զնպաստ առնէ Տր ումեք, և հաղորդէ նմա զանելի պարգևս, այնքան մեծագունին երկիւղին պարտի կալ. քանզի և դևք այնքան առաւել հոգան և ցանկան ընկենուլ զնա. ըստ այնմ, Ամբակ. 1. 16: Եւ կերակուր նր ընտիր: Առաւել համարի դևն ընկենուլ զծառայ մի Այ, և զկրօնաւոր մի, որ ջանայ գոլ կատարեալ՝ քան զհազարս հաղաքաց մարդկանց աշխարհի, որք անցին օրինակօք, զորս աւերելոց եմք: Այսպէս ասէ սբն Հերոնիմոս 'ի տրակի, զոր գրեաց առ Եւստոքիա՝ յորդորելով զնա զգուշանալ, և ոչ անհոգանալ 'ի բարձրագոյն կացուե կուսութե.. * Մի գայցէ քեզ հպարտութի յաղագս յառաջադրութեդ, այլ երկիւղ: Բեռնեցեալ ոսկւով շրջիս, պարտիս զգուշանալ յաւազակաց: Ասպարէզ է կեանս այս մահկանացուաց, աստ պատերազմիմք, ոչ զի յայլ ուրեք պսակիցիմք: Կարծես խաղաղութի գոլ 'ի յերկրի, ուր զտատասկ բուսուցանէ, և զփուշ ‖: Նաւեմք 'ի ծովս միում, որ է յոյժ մրրկախառն, և 'ի նաւակի միում, որ է յոյժ խախուտ, այ յայսմիկ մարմնի մերում, որ է շրջապատեցեալ 'ի բազմաց թշնամեաց, որք յարուցանեն զհողմունս, և յարուցանեն զայնքան ալեկոծութիս, զորքան կարեն առ 'ի ընկղմել զմեզ առանց հանդարտելոյ երբէք. և ոչ ննջեն երբէք, այլ սպասեն ամենից առթից առ 'ի կարելոյ մտանել 'ի ներքս: Աստի փառաւոր առաքեալն սբն Պօղոս 'ի ձայն բարձր զգուշացուցանէ զմեզ ասելով. 2. Կոր. 15. 34: Զարթուն կացէք արդարք, և մի մեղանչէք: Որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի. գուցէ անկանիցի: 1. Կորն. 10. 12.

Լուայ անդամ մի պատմիլ իր մի զընկերութէ մերմէ, որ է յոյժ յարմար առ այս, զոր ասեմքս. և ասացից զայն այնու կերպիւ, որպէս լուայ: 'Ի սկզբան ընկերութե մերոյ յորժամ հայրն Պետրոս Փաւլոս, և հայրն Անտոնիոս արանձեան եկին 'ի Թագաւորութենէն փրկթականաց 'ի կատոլիկս առաքեցեալք 'ի Թագաւորէն (ասացեալ Թագաւորութենէ)'ի պարոն Յօհաննիսէ երրորդէ, ը̄ իշխանուհւոյն Մարիամայ դստերն նորա, որ դայր պատկեր ը̄ արքային Փիլիպպոսի երկրորդի, որ յայնժամ էր իշխան, մերայինքն ունէին զմեծ միտ և զէր 'ի պալատն, և խոստովանեցուցանէին գրեթէ զնոյն տիկնայս, և ըզ տիրուհիս ապարանին. և յայնժամ ոչ գոյին այնքան ծերք 'ի կարգի մերում, որքան գոն այժմ. զի ամենեքեան էին երիտասարդք. և հիմնայր աշխարհս ընդ այն, որ 'ի վարս երանելւոյ հօրն մերոյ Իգնատիոսի գնի. զի այնքան երիտասարդութիւն ը̄ այնպիսւոյ ողջախոհութեն։ 'Ի միոյ կողմանէ կային 'ի մէջ այնքան աւթից, և վտանգաց, և 'ի միւս կողմանէ բուրէր այնքան ողջախոհութեն, զորմէ բազում իրք ասացեալ լինէին յապարանին։ Ասեն՝ թէ Թագաւորն խօսելով յաւուր միում ընդ հօրն Անտոնի, ասաց ցնա, ինձ ասացան՝ թէ քահանայքն ընկերութեն ձերոյ կրէին ընդ ինքեանս զբանջար իմն, որ ունի զզօրութիւն պահելոյ զկուսութիւն։ Եւ հայրն Անտոնիոս, որ էր յոյժ զգաստ, ասաց ցԹագաւորն, թէ ճշմարիտ է այն, որ ասացաւ մեծութեան քում։ Ասէ ցնա Թագաւորն. վասն կենաց քոց ասա ինձ, թէ որպիսի բանջար է այն։ Պատասխանեալ հայրն ասէ ցնա, Տէր իմ, բանջարն զոր հայրքն ընկերութեն կրեն՝ է երկիւղն Այ Տն մերոյ. նա է որ առնէ զհրաշս զայս, և փախուցանէ զդեւս իբրև զծուխն Տոբիթայ եդեալ 'ի վ̄ր կայծականց։

Որ 'ի հաստատել զայս, է յարմար այսմիկ այն, զոր ասէ իմաստունն. Երկնայածի քն ոչ պատահին լուրիւ, այլ 'ի ծործորոցն ԱՀՏ ընդ պահեսցէ, և փրկեսցէ 'ի չարեաց ։ Սիրաք. 33. 1. Եւ յայլում տեղւոջ ասէ, Երկիւղ Տն մերժէ մեղս, և երկիւղիւ Տն ամ ոք խոտորէ 'ի չարէ ։ Սիրաք. 1. 27։ Արկեսցուք ուրեմն զանձամբ զայս ընդ մեզ միշտ. կացցուք միշտ այսու երկիւղիւ. և ծանիցուք, թէ ոչ գոյ ողջախոհութիւն, և ոչ սրբութիւն ապահով, եթէ ոչ 'ի մէջ երկիւղին Այ ։ Եւ այսպէս ասէ Ածաշունչն, զի ծերանայցեմք 'ի նմին. Պահեա՛ զերկիւղն նր, և 'ի նմին հնացի՛ր ։ Սիրաք. 2. 6։ Առ 'ի ծանուցանել մեզ, թէ այս է պատեհաւոր ոչ միայն 'ի սկզբան, այլև 'ի վախճանի ։ Ո՛չ միայն սկսանողքն, այլև հին ծառայքն 'ի տան Տն կեցցեն այսու երկիւղիւ ։ Եւ ոչ միայն յանցաւորքն, այլև արդարքն, որք ոչ արարին զայնպիսի իրս, յորոց պարտ իցէ երկնչել ։ Երկնչեն մեղաւորքն, զի անկան, և արդարքն, զի մի՛ անկցին ։ Նոքա վն չարեացն անցելոց. և սոքա վն չարեաց ապագայից ։ Երանի՛ առն, որ կայ միշտ այսու երկիւղիւ սրբով ։

ԳԼՈՒԽ. Ժ.

Յաղագս մեծագնից բարեաց, որք գան յերկիւղէն Այ ։

Ոպ զի առաւել համարեսցուք զմեծ երկիւղս զայս, և ջանասցուք միշտ պահել զայն ընդ մեզ, տեսցուք աստ զոմանս, և զմեծագոյն բարիս, որք գան 'ի նմին ։ Նախ և յառաջ այս երկիւղս Այ ոչ միայն ոչ պատճառէ զյուսահատութիւն, և զվհատութիւն, և ոչ առնէ զմարդն երկչոտ և փոքրոգի, այլ մանաւանդ առնէ առաւել զօրեղ, առաւել համարձակ, և առաւել քաջասիրտ, ոպ ասեն սրբքն զխոնարհուէ ։ Զի առնէ՝ թէ մարդ յուսահատեսցի յինքենէ, և դիցէ դիւցէ զբոլոր յոյսն 'ի յԱ՟ծ ։ Բարւոք ասէ մե՟ծն Գրիգորիոս 'ի վ՟ր այնց բանից յոբայ, Ուր է երկիւղ քո, զօրութ՟ն քո ։ Յոբ. 4։6։ Մեծաւ պատճառաւ համարեցէ զերկիւղն ը՟ զօրութե. քանզի 'ի ճանապարհի մ՟ն հակադարձ աշխարհիս ընթացեալ լինի, զի յաշխարհի աստ համարձակութին պատճառէ զզօրութի, եւ երկիւղն զվհատութին եւ զտկարութի ։ Բայց 'ի յերս անծայրին պատահի ներհակն, ըստ այնմ, զոր ասէ իմաստունն, Յերկիւղ տ՟ն յոյս զօրութե ։ Առակ. 14. 26։ Եւ պատճառն է. զի մինչ ոք յոյժ երկնչի յԱ՟յ, ոչ գտանէ զառիթ իմն երկնչելոյ յիրաց աշխարհի, այլ քամահէ զա՟մ իրս աշխարհի, եւ ոչինչ համարի զայնս. Որ երկնչի 'ի տ՟նէ, ոչինչ փոփոխեսցի, եւ ոչ պատկառեսցէ, զի նա է յոյս ն՟ր ։ Սիրաք. 34. 16։ Երկիւղն է տեսակ մի, որով ոք ստոր արկէ զինքն նմա, յորմէ երկնչի, ա՟մ յերէ միոյ, որ կարէ վնասել կերպիւ իմիք ։ Եւ նա որ երկնչի յԱ՟յ, եւ միայն զնա համարի, եւ 'ի նմին զետեղէ զբոլոր յոյսն իւր, ոչ ունի զառիթ երկնչելոյ յաշխարհէ, ոչ 'ի բռնաւորէ, ոչ 'ի մահուանէ, ոչ 'ի դիւաց, եւ ոչ 'ի դժոխոց ։ Քանզի ոչ ոք յայսցանէ կարէ վնասել նմա. եւ ոչ կարէ մերձենալ առ մազ մի ն՟ր, կամ առ հանդերձն ն՟ր առանց հրամանին Ա՟յ ։ Եւ այս է զօրութի մի այնքան մեծագոյն, մինչզի ոչ ոք 'ի մարդկանէ աշխարհիս ունի զայնպիսի զօրութին ։ Զօրութ՟ն է Տ՟ր երկիւղածաց իւրոց ։ Սաղմ. 24. 14։

Պարծեալ այս ս՟բ երկիւղս Ա՟յ ոչ պատճառէ զվիշտ, եւ ոչ զդառնութի սրտի, ոչ զնեղսրտութի, եւ ոչ զզղջումն, այլ մանաւանդ է յոյժ քաղցր, եւ ուրախ ։ Երկիւղն աշխարհական կորուսանելոյ զպատիւ, կամ զինչս. եւ երկիւղն ծառայական դժոխոց, եւ մահուան պատճառէն զտրտմութի եւ զախորութի ։ Բայց երկիւղն ս՟բ եւ որդիական, զոր ունին բարի որդիքն առ'ի ոչ վշտացուցանել և տհաճեցուցանել զսիրական հայրն իւրեանց, ուրախացուցանեն զհոգին, և սիրով վառէ զկամքն: Զի կացուցանէ յարաժամ 'ի գործս սիրոյն Այ, և տայ հայցել, և ասել. Տր մի թոյլ տար, զի ես 'ի քէն բաժանիցիմ երբէք, մանաւանդ կամիմ մեռանիլ, քան թէ վշտացուցանել զքեզ: Երկիւղ Տն փառք և պարծանք, և խնդութիւն, և պսակ ցնծութեան: Երկիւղ Տն ուրախ առնէ զսիրտ. զուարճ և զխնդութիւն, և զերկայնաւուրս մատուցանէ: Որ երկնչի 'ի Տնէ, զբարիս գտցէ 'ի վախճանի. և յաւուր կատարածի իւրոյ օրհնեսցի: Սիրաք. 1. 11: Տե՛ս, թէ որքան առատութ՟ բանից, և որքան զանազանութ՟ ըղձից բացայայտէ իմաստունն զուրախութիւն և զհրճուանսն, զոր ունի ընդ ինքեան երկիւղն Այ: Այս ոչ է երկիւղ, որ դողացուցանիցէ որպ՟ զգերիս վս՟ ահի տանջանաց. այլ է երկիւղ մի, որ ծնանի 'ի սիրոյն Այ: Ուստի որքան ոք առաւել սիրէ զնա, այնքան առաւել երկնչի 'ի վշտացուցանելոյ զնա և 'ի բարկացուցանելոյ: Որպ՟ տեսանեմք, զի առնէ բարի որդին դէպ 'ի բարի հայրն իւր. և կինն դէպ 'ի այրն իւր. որ որքան առաւել սիրէ, այնքան առաւել ջանայ, որպ՟ զի մի լիցէ 'ի տան այնպիսի իր, որ կարիցէ պատճառել նմա զզզուանութն, կամ զտհաճութն:

Եթէ առ'ի ասել միով բանիւ, զամ՟ գովութ՟ս, զնպաստաւորութիս, զնախապատուութիս, և զնախադասութիս, զորս Ամենաշնորհն տայ մարդկան, գտանեմք ասացեալ և առեալ այնոցիկ, որք երկնչէին յԱյ: Եթէ գրեթէ նովին բանիւ, որով ասի առ խոնարհս, նոյնով և ասի առ երկիւղածս Այ: Զի որպ՟ ամենաշնորհն ասէ, թէ Ած հայի, և դնէ զաչս 'ի վերայ խոնարհաց, և աղքատաց, այսպէս ասէ ևս զնոցանէ, որք երկնչին յԱյ: Աստ Տն 'ի մն երկիւղածաց իւրոց : Սիրաք. 34. 19: Եւ որպէս ասէ՝ Ած բարձրացուցանէ զխոնարհս, և լցուցանէ զնս բարութբ, այսպ ասէ և զերկիւղածացն Այ: Եւ ողորմութն նր յազգս յազգս երկիւղածաց իւրոց, ասէ սրբագունեղ Թագուհին հրեշտակաց յերգոյն իւրում. Ղուկ. 1. 50: Եւ սրբուհին Յուդիթ ասէ, Այլ որ երկիւղածն է, նա մեծ է յամենայնի: Յուդ. 16. 19. Եւ սպ ասեն սբքն, թէ խոնարհութիւնն է պահպանիչ ամենից առաքինութեանց, և թէ առանց նր ոչ լինի առաքինութի, այսպ ասեն նաև զերկիւղէն Այ. ուստի մարգարէն Եսայիաս կոչէ զերկիւղս զայս սր գանձ Տն, Երկիւղ Տն գանձ նր: Եսայ. 33. 6: Վասն զի նովաւ յոյժ բարւոք գանձին, և պահպանին առաքինութիքն: Եւ հակադարձաբար ասեն, թէ որպ նաւն, որ երթայ առանց ծանրութե, և դատարկ, ոչ է ապահով, և առանց երկիւղի, զի ամ հողմ զօրեղ բաւական է առ ՚ի շրջել զայն, և կործանել. այսպ և ոչ երթայ նա ապահով, որ շրջի առանց ծանրութե երկիւղի, որ է ծանրութիւն հոգւոյ, և բառնայ ըղ թեթևութեն մարմնոյ, պահելով զնա հաստատ, և կայուն, որպ զի հողմք յաջողութե մարդկայնոյ, և Ածայնոյ ոչ բարձրացուցանիցեն, և կործանիցեն զնա: Ուստի թէպէտ լիցէ լի ամ հարստութբ, եթէ պակասիցի ծանրութիս այս, եղիցի ՚ի վտանգի: Սբն Գրիգորիոս կոչէ զերկիւղն խարիսխ սրտի մերոյ. *Խարիսխ սրտին է ծանրութիւն երկիւղի‖: Սբն Հերոնիմոս ասէ, *Երկիւղն է պահպանիչ առաքինութեց‖: Թերթուղիանոս ասէ, *Երկիւղն է հիմն կեցութե, երկնչելով ըղ գուշանամք, զգուշանալով կեցուցանիմք, որ հոգունակն է, ճշմարտապ կարէ անկասկած լինիլ‖:

Ի փոխանակի իմաստութեն ՚ի բազում գլուխս իմաստութե ասէ զմեծագոյն գերազանցութե, և զերս յոյժ զարմանալիս իմաստութեան․ և 'ի վախճանի կնքէ զասացեալն իւր, թէ երկիւղն ԱՅ է իմաստութիւն։ Զայսն ասէ ևս սրբն Յոբ, Ահա երկիւղ տն է իմաստութիւն, և խորշելն 'ի չարէ հանճար։ Յոբ. 28. 28։ Եւ այսպէս զայն ամ, որ ինչ աստ զիմաստութէ, կարեմք ասել ևս զերկիւղէն ԱՅ։ Եւ իմաստութնն յաւելու նաև զայս, թէ երկիւղն ԱՅ է լրումն, և կատարումն իմաստութեան։ Լրումն իմաստութեան է երկնչել յայ, և լրութիւն յարմարեալ ոչ։ Սիրաք. 1. 20։ Եւ յետոյ եզրակացուցանէ այսու բանիւ, Ո՞րքան մեծ է որ գտանէ զիմաստութիւն, և զգիտութիւն, բայց ո՛չ է վեր քան զերկիւղած տն։ Երկիւղն այ 'ի վեր քան զամենեսեան զինքն դնէ բարձր։ Երանեալ է մարդ, որում պարգևեցեալ է ունել զերկիւղն այ. և որ ունի զնա, ո՞ւմ նմանեսցէ։

ԳԼՈՒԽ. ԺԱ։

Հաստատի այն որ աստուած ամենևին օրինակօք։

Ընթեռնանի 'ի հոգևոր դաշտի, թէ պատմեաց մի այր 'ի հարանց թեբայեցւոց, որ էր որդի քրմի միոյ հեաց, թէ գոլով տակաւին մանուկ, սովոր էր կալ ընդ հօր իւրում 'ի մեհենի. և բազում անգամ տեսանէր զհայրն իւր մատուցանել զզոհ կռոց իւրոց։ Անգամ մի եմուտ մանուկս այս գաղտ զկնի նր. և ետես զսատանայ բազմեալ 'ի բարձրագոյն գահոյս. և շուրջ զնովաւ զամ դժոխային խուժադուժն։ Մատեաւ առ սատանայն մի ոմն 'ի պետացն, և երկիրպագ նմա, Եհարց ցնա սատանայն, թէ ուստի գաս դու, և նա պատասխանեալ ասաց, եղէ ես յայս ինչ գաւառի, ուր շարժեցի և պատճառեցի զկռիւն, և զաղմուկ, և զտարաձայնութն, և զմեծ հեղումն արեան, և եկի պատմել քեզ։ Եհարց ցնա սատանայն, թէ զո՞րքան աւուրս ծախեցեր 'ի յայդ · ասէ ցնա, զաւուրս երեսուն ։ Յայնժամ հրամայեաց սադայէլն գան հարկանել զնա ասելով, թէ ծախեցեր զբազում աւուրս, և արարեր զսակաւ իրս ։ Յետոյ եկն մի այլ, և երկիրպագ իշխանին դժոխայնոյ, որ եհարց ցնա, և դու ուստի՞ գաս ։ և նա պատասխանեաց նմա, թէ էի ես 'ի ծովու, և շարժեցի զբազում մրրիկս · և ընկղմեցի զբազում նաւս, և բազում մարդիկ խեղդեցան · և եկի զեկուցանել քեզ ։ Եհարց ցնա սադայէլն, թէ զո՞րքան աւուրս ծախեցեր դու 'ի յայդ · պատասխանեաց նմա, թէ զաւուրս քսան ։ Ետ և զնա գան հարկանել · քանզի արարեալ էր զսակաւս 'ի բազում աւուրս ։ Մատեաւ առ նա երրորդն, և երկիրպագ նմա, առ որ ասաց սադայէլն, և դու ո՞ւր էիր · և նա ասէ, ես էի 'ի յայս ինչ քաղաքի, յորում լինէին հարսանիք, և արկի զխռովութ̃ն, և անդ մեռան բազումք, և 'ի մէջ նց̃ նաև նոյն ինքն փեսայն ։ Ասէ սադայէլն, զո՞րքան ժամանակս ծախեցեր · և նա ասէ, միայն զաւուրս տասն ։ Բայց սակայն թէպէտ արարեալ էր զայնքան չարիս, ետ և զնա գան հարկանել, ասելով, թէ 'ի մէջ տասանց աւուրց պարտ էիր առնել աւելի ։ Յայսմ միջոցի մատեաւ առ նա այլ ոմն, և երկիր եպագ չարաճճիկ իշխանին իւրում, որ եհարց ցնա, թէ ուստի՞ գաս · առ որ պատասխանեալ ասաց, գամ 'ի յանապատէ, ուր կացի զամս քառասուն, փորձելով զկրօնաւոր մի, և մարտնչելով ը̃ նմա, յայսմ գիշերի յաղթեցի զնա, և ետու գործել զմեղս պոռնկութ̃ն ։ Զայս լուեալ սադայէլն յարեաւ, և համբուրեաց զնա, և առեալ զպսակն, զոր ունէր, եդ 'ի գլուխ նր̃, և նստոյց զնա յաթոռ մերձ առ ինքն, ասելով, դու արարեր զիրս զարմանալիս ։ Զայս լուեալ ես ասացի, իրաւի մեծ է և գերաղանցագոյն կրօնն, և կարգն միայնակեցաց. և այսպ̃ ելեալ ես 'ի տանէ հօր և մօր իմոյ, եկի յանապատ, և եղէ միայնակեաց: Պարտ է գիտել աստ անցողաբար, զի ուստի այլք հանեն զարհամարհումն կրօնաւորաց, մինչ տեսանեն զոմանս 'ի նոցանէ անկեալս ը̃ մարդկայնոյ տկարութե̃, սա արտահանեաց անտի մեծաւ իրաւամբ մեծ վարկանել զկրօնաւորութին, և ընդգրկեաց զայն: Զայլ օրինակ նման սմին պատմէ ս̃բն Գրիգորիոս 'ի տրամախօսութ̃ն:

Ի վարս հարանց ս̃րց ընթեռնանի, թէ ս̃ր անապատական ոմն եղև տարեալ 'ի հրեշտակէ 'ի վանս մի կրօնաւորաց, և ետես անդ զբազմութի̃ դիւաց, որք երթային թռչելով հանգոյն ճանճից ը̃ ամ̃ անկիւնս, և տեղիս վանացն. և գնացեալ 'ի հրապարակ քաղաքին ետես, զի 'ի բոլոր քաղաքին ոչ գոյր, եթէ ոչ մի դև միայն, և այն ևս կայր դատարկ, նստեալ 'ի վ̃ր դրան քաղաքին: Իսկ հարցեալ նորա ցհրեշտակն, որ առաջնորդէր նմա, զպատճառն այնորիկ, նա պատասխանեաց, թէ 'ի քաղաքին ամենեքեան տանէին, զոր ինչ դևն կամէր. և այսպ̃ մի միայն դև բաւական էր վ̃ն ամենեցուն. բայց 'ի վանս ամենեքեան ը̃դիմանային դիւին. վ̃ն այսորիկ երթային այնքան դևք շուրջ զնոքօք առ 'ի փորձել, և ընկենուլ զն̃ս:

Պալադիոս պատմէ զսքչելի օրինակն զայն, որ ճառի ևս 'ի վարս հարանց զկրօնաւորէ միոջէ, որ բազմօք ամօք կրթեցեալ էր գործովք բարեօք. և սրբովք ներկրթութ̃ք կրօնաւորականօք. և տարեալ էր զմեծ պտուղ: Յետ այսորիկ եմուտ 'ի նա ինքնահաճանութի, և գոռոզութի. վ̃ն որոյ թոյլ ետ Ա̃ծ, զի թշուառաբար անկանիցէր 'ի յանպարկեշտ մեղս ը̃ դիւին, որ երևեցաւ նմա կերպարանօք կնոջ միոյ գեղեցկագունի, որ երթայր

ը̃դ

ոմն մոլորեալ յանապատի անդ, զոր նա ժողովեաց դիւրաբար, խօսելով երկարապէս ընդ նմա, ծիծաղելով, և կալնլով զձեռսն, և 'ի վախճանի զիջան կամելով մեղանչել ը̅ նմա, և 'ի կամիլն կատարել զգործն, 'ի չիք դարձաւ դևն 'ի գրկաց, և յաչաց նր̅, աղաղակելով մեծաձայն, զկնի որոյ լուելիք եղեն ծիծաղք բազմաց դիւաց, որք գնալով ընդ օդս ասէին ցնա. ո՛վ աբեղայ, աբեղայ, որ զքեզ համբառնայիր մինչև յերկինս, զիարդ եղեր ստորասուզեցեալ մինչև 'ի խորս։ Ուսիր այսուհետև, զի որ բարձրանայ՝ խոնարհեսցի։ Թուէր թէ զայս ասելով ծիծաղէին զնովաւ դևքն հաջելով ընդդէմ նմա։ Բայց ոչ վերջացաւ աստ թշուառութիւն նր̅, զի զկնի ծախելոյն զգիշերն զայն, և զօրն յետագայ մեծապ̅ ողբալով, և ամաչելով՝ անկաւ 'ի յուսահատութիւն. և դարձեալ յաշխարհ, արձակեաց զսանձն առ ամ̅ մոլութիւնս։

Սր̅ Յօհաննէս կլիմաքեանն պատմէ զօրինակն զայն, (զոր 'ի վերոյ յիշեցաք) զերիտասարդէ միոյ, զորմէ ընթեռնանի 'ի վարս հարանց, թէ ժամանեաց 'ի յայնպիսի բարձրագոյն առաքինութիւն, մինչ զի հրամայէր գազանաց. և տայր ծառայել 'ի վանս կրօնաւորաց. որ 'ի սրբոյն Անտոնէ համեմատեցեալ եղև նաւի միում, որ լցեալ էր հարստագունիւ գանձու. և եղեալ 'ի մէջ ծովու, որոյ ոչ գիտացեալ լինէր վախճանն։ Արդ երիտասարդս այս այսքան ջերմեռանդ, և այսպ̅ սբ̅, անկաւ յետոյ թշուառաբար։ Եւ լալով զմեղս իւր ասաց աբեղայից ոմանց, որք անցանէին ը̅ այն. տարայէք ծերոյն, հր̅ մե̅յն Անտոնի, զի աղաչեսցէ զԱծ̅ առ ինձ զտասն աւուրս ապաշխարելոյ։ Զայս լուեալ սր̅յն սկսաւ լալ դառնապ̅, և մեծաւ ցաւագնութ̅բ ասաց. մեծ սիւն եկեղեցւոյ անկաւ այսօր։ Եւ զկնի հնգից աւուրց մեռաւ աբեղայն զայն վերջացուցեալ: Սուտի նա, որ նախ հրամայեր վայրի գազանաց (ասէ սբն Յովհաննէս կլիմաքեան) յետոյ եղև 'ի դժնդակ գազանաց պարտեցեալ, և ծաղր եղեալ: Եւ որ զօրանայր նախ հացիւ երկնայնով, յետոյ ակաւ շատանալ տղմով: Եւ թէ որպիսի իցէ եղեալ անկումն նորա ոչ կամեցաւ բացայայտել խոհեմագունեղ հայրն Անտոնիոս, զի գիտէր, թէ էր պատանիկուն:

Հայր վարդապետն Աճիլա բերէ զօրինակն սբյ անապատականի միոյ. որում Այ ծանոյց զվտանգն մեծ, յորում եդեալ կայր 'ի կեանս յայս. զայս մտածելով անապատականն, եդ 'ի գլուխն իւր զգլխարկ մի կաճեղէն, և այնու ծածկեաց զերեսս իւր այնպէս, մինչ զի ոչ զայլ ինչ կարէր տեսանել, եթէ ոչ զերկիրն միայն, զոր կոխէր. և ոչ երբէք կամէր խօսիլ ը մարդոյ ումեք, և ոչ համբառնալ զաչսն 'ի վեր. և լաւ տեսանելով զվտանգն, յորում կայր: Բազումք երթային 'ի տեսուե նր 'ի խուցն, և տեսանելով զմեծ փոփոխութիւն զոր արարեալ էր, հարցանէին զպատճառն նորակերպ իրին այնորիկ. զի այնպէս վաղվաղակի եղեալ էր արտաքս զհասարակ կարգաւն: Իսկ նա ոչ զայլ ինչ պատասխանէր երբէք, եթէ ոչ զայս. Թողէք զիս կալ 'ի յիս, զի մարդ եմ: Եւ այլ ոմն 'ի նրց ասէր. վայ ինձ, զի տակաւին կարեմ վշտացուցանել զԱծ մահուչափ մեղօք:

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ։

ԳԼՈՒԽ. Ա։

Յաղագս գերազանցութե̃ առաքինութե̃ն հնազանդութե̃ ։

ԼԱՒ Է ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ քան զզոհ ընտիր, և հնազանդութի̃ քան զճարպ խոյոց ։ 1. Թագաւ. 15. 22. Յոյժ յայտնի է պատմութե̃ն, յաղագս որոյ առաջաձ բանս այս ։ Եւ եղև, զի յորժամ արքայն սաւուղ անհնազանդ եղև ԱՅ, որ հրամայեաց նմա, զի կործանիցէր զամաղէկ՝ առանց թողլոյ զիր իմն կենդանի. և նա անխայեաց իրաց բարեգունից առ՚ի պատարագել զայնս ։ Յայնժամ մարգարէն Սամուէլ ասաց նմա ՚ի կողմանէ ԱՅ, Եթէ հաճո՞յ իցէ Տն ողջակէզք և զոհ իբրև լսել ձայնի Տն ։ Զի բարեգոյն է հնազանդութի̃ն քան զպատարագ. և բարեգոյն է հնազանդել ձայնի ԱՅ, քան զճարպս զոհից և խոյոց ։ Եւ մեք հիմնեցեալք յայսմիկ, և ՚ի յայլս տեղիս ս̃րց գրուածոց, յորս յոյժ առա ջադրի հնազանդութե՟ն, և փորձութե՟ն նր՟ մեծադոյն, զոր Ած առնէ զնմանէ, յորժ դրուա տեն զնա։

Սբն Օգոստինոս 'ի զանազան տեղիս ընձեռէ, թէ վս՟ ո՞յր պատճառի Ած ետ մարդոյ զհրամանն զայն ոչ ուտելոյ 'ի ծառոյն գիտութե՟ բարւոյ և չարի. և պատասխանէ, թէ զայն արար նախ առ'ի ցուցանել, և ծանուցանել մարդկան, թէ որքան էր գերազանցութի՟ն, և զօրութի՟ն այսորիկ առաքինութե՟ հնազանդութե՟, և որքան մեծ չար է անհնազանդութի՟ն։ * Ո՟ր զի ըստ ինքեան բարին հնազանդութե՟, և ըստ ինքեան չարն անհնազանդութե՟ ցուցեալ լինիցէր ‖։ Եւ այս բարւոք ցուցաւ գործով, զի չարն և վնասն, որ հետևեցաւ զկնի մեղաց, ոչ եղև պատճառեցեալ 'ի պտղոյ ծառոյն. զի այն ոչ էր ըստ բնութե՟ իւրում չար, և վնասակար, այլ բարի. Եւ ետես Ած զամ՟, զոր արար. և ահա բարի էին յոյժ։ Ծննդ. 1. 31. զի 'ի դրախտին ոչ էր գտանելոց զիր իմն չար։ բայց անհնազանդութի՟ն և սուտնկանութի՟ն հրամանին Ա՟յ եղև չար։ Եւ այսու՟ սբն Օգոստինոս ասէ, թէ ոչ այլով իւիք կարէ ոք ցուցանել՝ թէ որքան մեծ չար է անհնազանդութի՟ն, ո՟չ տեսանելով զմեծագոյն չարիսն, որք եկին 'ի մարդն, միայն ուտելով ընդդէմ հրամանին Ա՟յ զիր մի, որ եթէ ոչ իցէր արգելեցեալ՝ ուտելն զայն ոչ իցէր չար իմն, և ոչ առնելոց էր ումեք զչար։ Յորում բարւոք յայտնին յանցանք նց՟, որք վս՟ թեթև գործոյ իրի միոյ, իշխեն անհնազանդ լինել, և սատնգանել զնովաւ։ Վս՟ զի մեղքն ոչ դոյ 'ի յիրն, այլ 'ի յանհնազանդութե՟. և նոյն է ևս յիրում թեթևագոյնում։ Սբն Օգոստինոս տայ այսմիկ զմի այլ պատճառ. քանզի գոլով մարդն ստեղծեցեալ առ'ի ծառայել Ա՟յ, վայելուչ էր՝ զի Ած առնիցէր նմա զհրաման իմն. յորում արգելուցու՟ր նմա զիր ինչ, ո̃պ զի ճանաչիցիւր, թէ ունէր զիշխող, և զՏր̃, և լինիցիւր հպատակ. քանզի եթէ ոչ լիցէր արգելեցեալ, և հրամայեցեալ նմա իր ինչ, ոչ ունիցէր զայնպիսի իր, յորում կարիցէր ճանաչել, թէ ինքն է հպատակ, և ԱԾ է Տր̃, և իշխող, որ կամի, թէ զօրութիւն հնազանդութեան լիցէր միջոց առ'ի ճանաչել, և արդիւնաւորել զԱԾ։ Եւ ասէ զբաղում բարիս և զգովութիւնս վ̃ն այսր առաքինութեան։

Մինն 'ի պատճառաց, վ̃ն որոյ մարդացաւ ԱԾ, ասէ, թէ եղև առ'ի ուսուցանել մեզ, և տպաւորել 'ի մեզ զայս առաքինութիւն հնազանդութեան, և տալ զօրինակ նր̃։ Մարդն անհնազանդ էր եղեալ մինչև ցմահ. եկն որդին ԱՅ առ'ի հնազանդիլ նաև մինչև ցմահ։ 'Ի յանհնազանդութէ ադամայ, փակեցեալ էր մեզ դուռն երկնից, և շնորհաց. իսկ 'ի հնազանդութէն ք̃սի, բացաւ մեզ, ո̃պ ասէ Առաքեալն։ Զի որպէս անհնազանդութբ̃ միոյ մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն, նոյնպէս և հնազանդութբ̃ միոյն, արդարք բազումք եղիցին։ Հռօմ 5. 19։ Եւ վարձատրութբ̃, և փառօք մարդկութեն ք̃սի, ասէ սր̃բն Օգոստինոս, կամեցաւ Տր̃ ցուցանել մեզ զզօրութի, և զարդիւնս հնազանդութե, պսակելով զմարդկութին նր̃ այնքան վեհագոյն փառօք։ Եղեւ հնազանդ մահու չափ, և մահու խաչի։ Վասն որոյ և ԱԾ զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա անուն, որ 'ի վեր է քան զամ̃ անուն։ Զի յանուն Յի̃ Քի̃ ամ̃ ծունր կրկնեսցի երկնաւորաց, և երկրաւորաց, և սանդարամետականաց։ Փիլիպ. 2. 8. Բազումք են գերազանցութիւնքն և մեծութիւնքն, զորս ասեն սր̃քն զայսմանէ առաքինութէ. բայց վ̃ն այժմոյս ասասցուք զմի միայն, որ բաւականասցի վ̃ն մեր, ի̃ է, թէ սա է յոյժ յատուկ և նախապետական առաքինուի կրօնաւորի։ Սր̃բն Թօմաս, որ յառաջանայ 'ի յիրս այնքան խստութ՟ դպրութենականաւ, ընձեռէ զայսմանէ խնդրոյ, միթէ ուխտն հնազանդութե՟ իցէ՞ առաւել նախապետականն երից ուխտից, զորս ուխտեմք 'ի կրօնի. և պատասխանէ, թէ այո։ Եւ տայ զերիս պատճառս յոյժ բարիս և օգտակարս։ Նախ՝ զի մարդն միջնորդութ՟ հնազանդութե՟ տայ՝ և մատուցանէ Այ՟ առաւել, քան թէ միջնորդութ՟ այլոց ուխտից։ Զի միջնորդութ՟ ուխտին աղքատութե՟ մատուցանէ մարդն Այ՟ զինչս իւր, և զհարստութ՟ս իւր. միջնորդութ՟ ուխտին ողջախոհութե՟ զմարմին իւր։ Բայց միջնորդութ՟ ուխտին հնազանդութե՟ մատուցանէ զկամն իւր իսկական և զդատողութին, և մատուցանէ զինքն բոլորովին Այ՟, որ է առաւել քան զայլ ամ՟ իրս զայսոսիկ։ Եւ այսմ Տէրն Հերոնիմոս ասէ. * Թողուլն զոսկիս է գործ սկսանողաց, և ոչ կատարելոց, զի զայս արար Կրատես Թեբայեցին, արար և Անթիսթենէս. բայց մատուցանել զինքն Այ՟ յատուկ քրիստոնէից է, և առաքելոց ||։ Ուստի յոյժ բարուոք խօսայ զայս Տէրն Հերոնիմոս, և ասէ, թէ Քս՟ ոչ ասաց առաքելոց, ամէն ասեմ ձեզ, զի դուք, որք թողէք զամ՟, նստջիք յերկոտասան աթոռ. այլ թէ դուք որք եկիք զինի իմ։ Այս երթալս զինի Քի՟ է իր առաւել կատարելագոյն։ Եւ Տէրն Թովմաս ասէ, թէ յայսմիկ պարունակի խրատն հնազանդութե՟. զի նա՝ որ հնազանդի, հեռանի կամաց և դատողութե՟ այլոց։ Երկրորդ պատճառն է, զի ուխտն հնազանդութե՟ պարունակէ, և պարփակէ յինքեան զայլս ուխտս կրօնի. և ինքն ոչ պարունակի, և ոչ պարփակի 'ի յայնս։ Քանզի թէպէտ կրօնաւորն պարաւանդի ուխտիւ յատկաւ պահել զողջախոհութի՟, և զաղքատութի՟։ Բայց սակայն առաքինութիքս այսոքիկ անկանին 'ի ներքոյ հնազանդութեան,

որում

թրում՝ պատկանի պահել զայսոսիկ, և զայլս բազում իրս : Եւ այս այնպիսեաւ աստիճանաւ է ճշմարիտ, մինչ զի ոմանք հին կրօնք, ոպ՟ կարգն Քարթուսեանց, և ս՟բյն Բենեդիկտոսի, 'ի դաւանութե՟ն յիշեն բացորոշաբար միայն զուխտն հնազանդութե՟ն առելով, 'Խոստանամ զհնազանդութի ըստ կանոնի ‖ : Եւ ընդ այսու խմանի ուխտն ողջախոհութե՟ն, և աղքատութե՟ն, ըստ կերպի կացուցման կամ սովորութե՟ն կրօնին : Երրորդ պատճառն է, զի որքան իր ինչ առաւել մերձենայ և հպի առ վախճանն իւր, և առաւել միաւորի ը՟ նմա, այնքան է բարեգոյն, և առաւել կատարեալ : Արդ՝ հնազանդութիւն է այն, որ առաւել միաւորէ զկրօնաւորս ընդ վախճանի կրօնի իւրեանց, զի նա է այն, որ առնէ ն՟չ, և հրամայէ, զի կրթիցին 'ի յիրս, որք կարգաւորին առ 'ի ժամանել առ վախճանն ն՟ր : Ոպ՟ մեք, որք նկատեմք 'ի բնական յառաջադիմութի մեր, և մերձաւորաց, ունիմք ըզփոյթ աղօթից և մահացուցանելոյ զմեզ · և կրթիմք 'ի խոստովանեցուցանել, և 'ի քարոզել, և 'ի յուսուցանել զքրիստոնէական վարդապետութի, և 'ի յայլ ա՟մ պաշտօնատարութիս, որք հարկաւորք են օգնելոյ հոգւոց · այսպէս և այլք կրօնք դիմեն առ վախճանս իւրեանց :

Ուստի մակաբերէ ս՟բն Թովմաս զեզրակացութի մի յոյժ նախապատուական, և է այս, թէ ուխտն հնազանդութե՟ն է առաւել էութենական կրօնի · զի այն է, որ առնէ զմարդն կրօնաւոր, և կացուցանէ 'ի կացութե՟ն կրօնի : Քանզի թէպէտ ոք պահիցէ զաղքատութի կամաւոր, և զողջախոհութի, և ուխտեալ իցէ զայն, եթէ ոչ ուխտեաց զհնազանդութի, ոչ է նա կրօնաւոր, և ոչ 'ի կացութե՟ն կրօնի · ուստի պլաոյ է, թէ ուխտիցէ զհնազանդութի · զի այս է, որ նախապատուաբար առնէ զնա կրօնաւոր , և կացուցանէ 'ի կացութե՟ կրօնի : Սրբն Բօնավէնթուրա համաձայնելով այսմիկ ասէ՝ թէ ամ՟ կատարելութե՟ կրօնաւորին կայանայ 'ի թողուլն բոլորովին ըզկամս իւր , և 'ի հետևելն հնազանդութե՟ : Եւ թէ յաղագս այսորիկ ուխտեմք զաղքատութի՟ և զողջախոհութի՟ , ոպ՟ զի թողեալք զինչս և զհեշտութի՟ մարմնոյ , և զհոգս տան , և ընտանեաց՝ իցեմք առաւել թեթևք և անհոգք առ 'ի վճարել զուխտ հնազանդութե՟ , որ է իր առաւել նախապատուական : Ասէ ևս , տակաւ՟ օգտիս թողլով զինչս և զհարստութիւնս , եթէ ոչ թողուս զընական կամս քո , և ոչ հետևիս հնազանդութե՟ : Պատմէ սուրբս ըզՓուլճէնցիոս եպիսկոպոսէ , որ եղև աբբայ մենաստանի միոյ , թէ 'ի մէջ այլոց վճռոց ասէր և զայս յաղագս հնազանդութե՟ : ''Նոքա են ճշմարիտ կրօնաւորք , որք մահացուցեալք զկամս իւրեանց , պատրաստք են զոչինչ կամիլ , և զոչինչ ոչ կամիլ , եթէ ոչ ըզխրատն և զհրամանն Աբբային պահել : Ո՛չ ասէ , թէ նա լաւ է բարի կրօնաւոր , որ լինի խարազանաբաղձ , որ զգենու զքուրձ կոշտ , որ արիաբար զօրն ողջոյն աշխատի , կամ որ է յոյժ իմաստուն , կամ մեծ քարոզատու , այլ որ է յոյժ հնազանդ , և ոչ ունի զկամս յատուկս :

Ուստի հնազանդութիւնն է առաքինութե՟ էականագոյն կրօնի , և այն է՝ որ առնէ , զի ոք լիցի կրօնաւոր : Այս է՝ ընդ որ հաճի Ա՟Ծ առաւել քան ընդ զոհս և ընդ պատարագս . յայսմիկ պարունակի աղքատութի՟ և ողջախոհութի՟ , և համայնք այլք առաքինութիւնք . զի եթէ ես դու հնազանդ , եղիցիս աղքատ , ողջախոհ , խոնարհ , լռակաց , համբերող , մահացեալ , և ստանայցես զամ՟ առաքինութիս : Եւ այս ոչ է բանադիտութի՟ , այլ է ճշմարտութի՟ յոյժ վճիտ . քանզի առաքինութիւնքն տանելն 'ի գործ ածելով զներգործութիւնս նոցա, և այսու կերպիւ Ած կամի զայնս 'ի մէնջ: Արդ՝ հնազանդութիւն տայ մեզ զգործածութիւնս զայս: Համայնք կանոնք, զորս ունիմք, և համայնք հնազանդութիւնք, որք մեզ են հրամայեցեալք, են գործածութիւնք առաքինութեանց: Թող զքեզ առաջնորդել 'ի հնազանդութեան, և գրկեա բոլորով սրտիւ զամենայն առիթս, որք քեզ պատահին, զի երբեմն կըրթեսցեն զքեզ համբերութեամբ, երբեմն խոնարհութեամբ, երբեմն աղքատութեամբ, երբեմն մահացուցմամբ, երբեմն բարեխառնութեամբ, երբեմն եղբայրսիրութեամբ. և այսու կերպիւ զարգասցիս ամենայն առաքինութեամբ այնու քայլիւ, որով զարգանայցես 'ի հնազանդութեան: Այս է, զոր ասէ հայրն մեր: 'Ի ծաղկիլ առաքինութեանս այսորիկ՝ այլք համայնքն տեսանին ծաղկեցեալք. և բերեն զպտուղս, զորս ես ցանկամ գոլ 'ի հոգիս ձեր: և է վարդապետութիւն հասարակ ամենից Սրբոց: Վասն որոյ կոչեն զառաքինութիւնս զայս մայր, և սկիզբն ամենից առաքինութեանց: Ուստի Սուրբն Օգոստինոս ասէ. * Է մեծագոյն առաքինութիւն, և ոչ թէ այսոր ասիցեմ, է ամենից սկիզբն, և մայր ամենից առաքինութեանց ‖: Եւ Սուրբն Գրիգորիոս ասէ, * Հնազանդութիւն է առաքինութիւն միայն, որ զայլս առաքինութիւնս 'ի միտս ներմուծանի, և զծնեալսն պահպանէ ‖: Եւ այսու կերպիւ մեկնեն զայն, որ յառակսն ընթեռնանի, Այր հնազանդ խօսեսցի զյաղթութիւն: Առակ. 21. 28. Զոր Սուրբն Գրիգորիոս, և Սուրբն Բեռնարդոս ընթեռնուն այսպէս, այր հնազանդ ոչ առնէ զմի, այլ զբազում յաղթութիւնս: Զամենայն առաքինութիւնս ստանայցէ, որ եղիցի բարի հնազանդ:

Արդ՝ եթէ կամիս զկրթութիւն մի կարճառօտ, և համառօտ առ 'ի առնել 'ի սակաւ ժամանակի զմեծ պտուղ, և ժամանել առ

սաաստացումն կատարելութեան, ահա ասեմ: *Այս է ճանապարհ, գնացէք ընդ այս. և մի խոտորիք ոչ յաջ, և ոչ յահեակ ||: Քանզի լինել յոյժ հնազանդ, զի այս է ճանապարհ մի յոյժ համառօտ, և զարմանալի առ այս գործ: Եւ սուրբն Հերոնիմոս ասէ, *Ո՛վ երջանիկ առատութիւն շնորհաց հնազանդութեան, յորում համառօտութիւն, և բովանդակութիւն առաքինութեանց փակեցեալ կայ. քանզի լռելի քայլէ ածէ զմարդն առ Քն ||:

Գրէ սուրբն Յովհաննէս Կլիմաքեան, թէ գնացեալ 'ի վանք մի, ետես զոմանս ծերս յոյժ ալեւորեցեալս, և յարգելիս կերպարանօք, որք հանդոյն մանկտեաց կային պատրաստք. և յօժարք առ 'ի հնազանդել, և երթալ արա մընթանալով աստ և անդ: Էին 'ի նոցանէ ոմանք, որք կային 'ի ներքոյ հնազանդութեան զամս յիսուն: Եւ ասէ. թէ հարցի զնոսա, և ասեմ, թէ զինչ մխիթարութիւն, կամ ըզպտուղ արտահանեալ էք 'ի յայսպիսւոյ մեծէ հնազանդութենէ ձերմէ, և յաշխատանաց: Եւ պատասխանէին ոմանք, թէ միջնորդութեամբ նորա ժամանեալք էին 'ի յանդունդս խոնարհութեան, որով պատեցեալք էին 'ի բազմաց պատերազմաց թշնամւոյն: Այլք ասէին, թէ այնու ճանապարհաւ ժամանեալք էին առ 'ի ոչ զգալ զանարգանս, և զանպատուութիւնս. զի հնազանդութիւն է միջոց ստանալոյ զամ առաքինութիւնս: Վասն որոյ 'ի մէջ հնոց հարցն այնց համարիւր մեծ նշան կատարելութեան գոլն հպատակ, և հնազանդ հոգևորի հօրն իւրում:

Սուրբ Տորոթէոս պատմէ զաշակերտէն իւրմէ Տօսիթէոսէ, թէ գոլով նա երկտասարդ աղնիւ, և փափկասուն, յղացաւ զահ դատաստանին, և անձուկ համարէին, զոր տալոց էր ԱԾ. և կատարելով 'ի նմին Տր զայն. զոր հայցէր մարգարէն, Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։ Սաղմ. 118. 120։ Խոցեցեալ և փղձկեալ այսու երկիւղիւ եմուտ 'ի կրօն առ 'ի բարւոք տալ զհամարս զայս զինքենէ։ Էր նա թոյլ կազմուածով. և ոչ կարէր հետևել հասարակութեան, ոչ կարէր յառնել ընդ առաւօտն, և ոչ ուտել զկերակուրս, զորս այլք ուտէին։ Եւ ոչ կարելով առնել զայս, սկսաւ խոկալ զինքենէ, և բացորոշեաց նուիրել զինքն բոլորովին հնազանդութեան, ծառայելով մեծագունեղիւ յօժարութեամբ, և հպատակութեամբ 'ի հիւրանոցի. և յայլս պաշտօնս խոնարհութեան. և մեռաւ 'ի մէջ հնգից ամաց։ Եւ յայտնեաց ԱԾ առաջին վանից, թէ երկնամարդն այն առեալ էր զվարձս Պօղոսի, և Անտոնի։ Սկսան արեղայքն գանգատիլ զայս ասելով. ուր է Տր արդարութիւն քո. զի մարդ մի, որ ոչ երբէք պահեաց, և ունէր էր փարթամութեամբ և փափկութեամբ, եդեր դու զնա հանդէտ նց, որք տաս ամ զամ բնաւն կրօնի։ Զծանրութիւն աւուր, և տօթ. Մատթ. 20. 12. Զի՞նչ յաւելաւ մեզ այսքան աշխատանօք, զորս տարաք։ Պատասխանեաց նոցա ԱԾ, թէ ոչ ճանաչէք դուք զարդիւնս, և զզօրութիւն հնազանդութեան, որով երկնամարդն այն 'ի սակաւ ժամանակի արդիւնաւորեցաւ առաւել քան զայլս որք կեցին բազում խստակրօնութեամբ։

ԳԼՈՒԽ. Բ.

Յաղագս հարկաւորութեան, զոր ունիմք առաջնութեան հնազանդութեան:

Երանելի սբն Հերոնիմոս յորդորելով զկրօնաւորս 'ի հնազանդիլ վերակացունին, առ'ի առաւել հաւանեցուցանել, ցուցանէ բազում օրինակօք զհարկաւորութիւն, որ գոյ յամ իրս, հետևելոյ և հնազանդելոյ վերակացունի միում: 'Ի քաղաքականի կացութեան տեսանեմք, զի գոյ մի կայսր, մի թագաւոր, մի դատաւոր վերակացոյն միոյ գաւառի: Յորժամ հիմնեցաւ Հռոմ, ոչ կարաց ունիլ թագաւոր զերկուս եղբարս 'ի միասին, այլ մինն սպան զմիւսն: Յակոբ և Եսաւ կռուով տակաւին յորովայնի մօր իւրեանց պատերազմէին, և բռնադատէր մինն զմիւսն ելանել ինքն նախքան զմիւսն: Եւ 'ի դասակարգութեան եկեղեցականի տեսանեմք, զի բոլորն վերածի առ մի փոխանորդն Քրիստոսի, և յիւրաքանչիւր թեմի, և վիճակի է մի միայն Եպիսկոպոս, և Նախագահ: 'Ի յամ իրս տեսանի, թէ հարկաւոր է ենթարկութիւն և հպատակութիւն միում: Թէպէտ մեծագոյն իցէ զօր մի, միշտ գոյ մի զօրագլուխ սեռական, որում ամենեքեան հնազանդին: Եւ յիւրաքանչիւր նաւի գոյ մի միայն կառավարիչ: և եղանիւր մեծ տարաձայնութիւն և խանգարումն վտանգի, որք նաւէն, և ոչ ևս հասանիցէին 'ի նաւահանգիստ, եթէ իւրաքանչիւրոք կամիցէր կառավարել՝ և ուղղել զնաւն ըստ դատողութեան իւրում, և ոչ ունիցէին զմի ոք, որոյ կառավարութեան և ուղղութեան հնազանդիցէին ամենեքեան: Նաև 'ի դուզնաքեայ տան միում, թէպէտ իցէ աղքատագոյն խրճիթ, հարկաւոր է, զի իցէ մի ոք, որում այլք ամենեքեան հնազանդեցին, և յորժամ պակասի այս՝ ոչ կարէ պահիլ, ոչ ևս միայ տուն կամ քաղաք, և կամ թագաւորութիւն : Ամ՟ թագաւորութիւն բաժանեալ յանձին աւերի, և տուն բաժանեալ յանձին կործանի : Ղուկ. 11. 17 : Եթէ զայս տեսանեմք յամ̃ իրս, ոչ միայն 'ի ստեղծուածս բանականս, 'ի մարդիկ, և 'ի հրեշտակս, յորս գոյ կարգ միոյ դասապետութե̃ առ միւսն · այլև յանասունս, որք ունին զգլուխ և զառաջնորդ, որում հետևին : Մեղուքն ունին զգործավարս, և մին է նախապետական, և թագաւոր, որ է ճանաչեցեալ յամենեցունց, և ամենեքեան հնազանդին նմա : * Կռունկունք ևս հետևին միում կարգաւ տառի || : Զի միաւորին իբրև զօրագունդ հանգոյն տառիս այսորիկ Y, որ է՝ Իւնի յունաց, և այնպէս երթան յո և կամին երթալ, և ամենեքեան հետևին նմա : Երկինքն ևս կան 'ի ներքոյ առաջնոյ շարժելւոյն, և հետևին շարժման նր̃ : Եթէ առ'ի ոչ ձանձրացուցանել բազում օրինակօք, ասէ ս̃րն Հերոնիմոս, կամիմ, զի յայսմանէ արտահանիցէք, թէ որքան հարկաւոր է կեալն 'ի ներքոյ հնազանդութե̃ նախապահի միոյ, և ընկերութե̃ ը̃ այլոց բազմաց եղբարց կրօնաւորաց ծառայից Այ̃, որք օրինակօք իւրեանց օգնեսցեն ձեզ, և զօրացուսցեն առ վախճանն ձեր : Հայրն մեր թէպէտ կամի, զի յամ̃ առաքինութիս և 'ի շնորհս հոգևորս շքեղեսցիք զարդարանաւ · սակայն կամի, զի մանաւանդ յայսմիկ լիցիք կատարեալք մեծապէս, և ցանկայ, զի ոպ̃ յայլս կրօնս ոմանք են նշանաւորք յաղքատութե̃, ոմանք 'ի բազում ապաշխարութե̃, և 'ի խստակրօնութե̃ · ոմանք 'ի ժամասացութե̃ և ոմանք յառանձնականութե̃, այսպ̃ ևս ընկերութիւն մեր լիցի նշանաւոր յառաքինութեան հնազանդութե̃, և ամենեքեան նովաւ նշանիցիմք, և համարիցեմք զայն այնքան մեծ , որ̃ թէ 'ի նմանէ միայնոյ կախեցիւր ամ̃ բարի ընկերութե̃ մերոյ ։ Եւ̃ մեծաւ̃ իրաւամբ պահանջէ զայս 'ի մէնջ հայրն մեր ․ զի վախճան ընկերութե̃ մերոյ զկնի յառաջադիմութե̃ նորոյ իսկականի է և վ̃ մերձաւորաց՝ առ 'ի օգնել , և կեցուցանել զհոգիս յամ̃ աշխարհի ։ Եւ̃ այսպէս կրօնաւորքն ընկերութե̃ մերոյ կալոց են ուսումնադրեցեալք , և նախապատրաստեցեալք , և միշտ համեստեցեալք գնալոյ ընդ ամ̃ աշխարհ առ 'ի գործածել զպաշտօնս իւրեանց , որ̃ երկիրք թեթեւագոյնք , և հասանիլ 'ի թխկունս , ուր իցէ մեծագոյն հարկաւորութի̃ ։ Եւ̃ այս է դիտաւորութի̃ չորրորդի ուխտին , զոր ուխտեն դաւանեալքն՝ հնազանդելոյ ծայրագոյն քահանայապետին շուրջ զառաքելութի̃ , յի̃ երթալ յամ̃ կողմն աշխարհի , առ որ առաքէ ծայրագոյն քահանայապետն , եթէ իցէ գաւառ հաւատացելոց , կամ անհաւատից , կամ հերետիկոսաց , առանց գնելոյ զպատճառ իմն , և առանց հայցելոյ զթոշակ ճանապարհի ։ Եւ̃ ոչ միայն վ̃ առաքելութե̃ , առ որ առաքիմք 'ի ծայրագոյն քահանայապետէն , այլև վ̃ ամի ուր և առաքեն զմեզ վեհագոյնքն մեր , պարտիմք անմիջաբար ունել զյօժարութիս զայս՝ և զանտարբերութի̃ ։ Եւ̃ բաց յայսմանէ առնելոց եմք զորպիսի և իցէ պաշտօն , զապաստաւորութի̃ , և զայլ ամ̃ իր , որ հրամայի մեզ ։ Եւ̃ քանզի յընկերութե̃ մերում գոն բազում այլ և այլ պաշտօնք , և զբաղմունք և ապաստաւորութիւնք , և աստիճանք , մին բարձրագոյն քան զմիւսն , հարկաւոր է մեծ ընդունակութի̃ հնազանդութե̃ ։ Եւ̃ այս է զարմանալի արհեստագործութի̃ և դիտաւորութի̃ հօրն մերոյ 'ի կացուցանելն 'ի հնազանդութե̃ , և 'ի պահանջելն 'ի մէնջ ․ զի ջանայցեմք նմանաւորել զմեզ 'ի նմին , և վարկել զայն մեծ ․

զի գիտէր, թէ պատահելոց էին մեզ բազում իրք դժուարինք, և հարկ էր մեզ դնել 'ի գործս բազում կերպիւ, և շրջաբերել 'ի բազմաց ձեռաց։ Ասէր ումն հայր յընկերութէ մերմէ զիր մի, զոր յանկայր, զի ասիցէաք զնոյնն մեք ամենեքեան, և լսիցէաք։ Ես ոչ երկնչիմ, ասէր, 'ի հնազանդութէ իմեքէ. զի կամ տրամադրեցեալ, և պատրաստ ա 'ի առնել զամ, զոր հնազանդութիւն հրամայէ ինձ։ Եւ յոյժ բարւոք ասէր, և է այս ճշմարտութիւն մի յոյժ փորձառեցեալ։ Կրօնաւորն, որ է մահացեալ, յօժար և անտարբեր վն ամենից իրաց, որք նմա կարեն հրամայել, ոչ ունի ղաւխթ երկնչելոյ 'ի հնազանդութէ իմեքէ, ոչ 'ի վեհագունէ ումեքէ. և ոչ է փոյթ նմա, թէ իցէ վեհագոյն պետրոսն, կամ մարտինոսն, և ոչ իսկ հոգայ, թէ իցէ այսպիսւոյ, կամ այնպիսւոյ բնութէ։ Բարի կրօնաւորն ոչ պարտի կախիլ յայսպիսեաց իրաց, զի կախիլն յայսպիսեաց իրաց, և երկնչիլն ցուցանէ զանկատարութիւն։ Սբ Յօհան ոսկեբերանն 'ի վր այնց բանիցն սբյն Պօղոսի. Հռոմ. 13. 3. Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի, զբարիս գործեա, և ընկալցիս գովութիւն 'ի նմանէ. ապա եթէ զչար գործիցես. երկիր։ Ասէ, * զի զերկիւղն ոչ առնէ իշխանն, այլ չարութիւն ձեր ||։ Գողն և չարագործն երկնչէ յորդարութէ, և 'ի տեսանելն զդիշերապահս և զդահիճս՝ վրդովի սրտիւն, խորհելով թէ կամիցին կալնուլ զինքն։ Բայց երկիւղս այս ոչ պատճառի յիշխանէն, և ոչ 'ի դատաստանէ, այլ 'ի չարութէ իւրմէ, և 'ի յարատեւոր խղճէ մտաց։ Արդ՝ կամիս չերկնչել 'ի թագաւորէ, և 'ի դատաստանէ, կեաց բարեպէս. և ոչ միայն ոչ երկիցես, այլ մանաւանդ ունիցիս զգովութիւն 'ի նմանէ։ Արդ՝ այսպէս պատահի և 'ի կրօնի աստ, զի ահդ և երկիւղդ այդ, զոր ունիս՝ ոչ պատճառին 'ի հնազան-

դութէ , և ոչ 'ի վեհադրունէ , այլ 'ի քումմէ անկատարութէ , և 'ի յոչ մահացեալ փոյթ : Կամիս ոչ երկնչել , և ոչ բարձրամտիլ 'ի կրօնի , լեր հնազանդագոյն , և ջանա՛ լինել անտարբեր և նուիրեցեալ առ ամ̃ իրս : Որ շրջի այսու կերպիւ , զմայլեսցի բազում խաղաղութ̃բ , և բազում անդորրութ̃բ . և եղիցի կրօնն
քզ̃ ն̃ր դրախտ 'ի յերկրի աստ :

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս առաջնոյ աստիճանի հնազանդութեան :

ԽՕսելով հայրն մեր զհնազանդութէ յերրորդում մասին կայուցման՝ ասէ : Է իր մի յոյժ վայելուչ , և յոյժ հարկաւոր առ'ի առնել զպտուղ , զի ամենեքեան ունիցիմք զամբողջ հնազանդութի : Եւ ասէ , թէ ոչ միայն լինելոց է հնազանդութեն 'ի կատարման գործոց արտաքուստ , կատարելով զայն՝ որ հրամայի , որ է առաջին աստիճանն հնազանդութե ; այլ և պարտի գոլ հնազանդութի կամաց ; և սրտի , համակերպելով զկամս մեր ընդ կամաց վեհադրունին , ունելով ըզնոյն կամիլ , և ոչ կամիլ ընդ նմա , որ է երկրորդ աստիճան հնազանդութե : Եւ ոչ է դադարելոց աստ հնազանդութեն . այլ անցանելոց եւս յառաջ , և համակերպել եւս ըզդատողութի մեր ընդ դատողութե վեհադրունին , մինչ զի թուեսցի մեզ նոյնն , որ թուի վեհադրունին , և ենթադատեսցուք , թէ այն՝ զոր նա ենթադատէ և հրամայէ , է բարի հրամայեցեալ , և այս է երրորդ աստիճանն հնազանդութե : Յորժամ եղիցի համակերպութիս այս 'ի գործս , 'ի կամս , և յիմացականութե , յայնժամ եղիցի ամբողջ , և կատարեալ հնազանդութիւն . և 'ի պակասել միոյ 'ի սոցանէ , ոչ եղիցի ամբողջ և կատարեալ :

Արդ՝ սկսելով յառաջնոյ աստիճանէ, պիտոյ է, զի լիցիմք յոյժ հոգածուք և յօժարք 'ի կատարել զհնազանդութիւն : Սրբն Բարսեղ հարցանէ, թէ որքան հոգացողութե, և փոյթունակութե պարտիմք առնել զիրս հնազանդութե : Եւ պատասխանէ, թէ նովիմբ հոգացողութե, որով ոք սիրէ զկեանս իւր, և առնէ զիրս հարկաւորս առ 'ի պահպանել զայն․ նաև այնու, որով ոք երթայ առ 'ի ուտել ունելով զքաղց մեծ․ և այնքան առաւել, որքան առաւել պատուական և գերազանց է կեանքն յաւիտենական, որ ստանի հնազանդութե, քան զկեանս ժամանակաւորս : Երանելի սրբն Բեռնարդոս ասէ․ * Հաւատարիմ հնազանդն ոչ գիտէ յապաղել, փախչի 'ի վաղարկութէ, ոչ գիտէ յամել, կանխէ քան զբան հրամայողին, պատրաստէ զաչսն առ 'ի տեսանել, զունկն առ 'ի լսել, զլեզուն առ բանս, զձեռսն առ գործս, զոտսն 'ի ճանապարհ, և զինքն բոլորովին ժողովէ՝ առ 'ի ժողովել յինքեան զկամս հրամայողին ||:

Երանելի հայրն մեր խօսելով զհրամանակատարութէ, և զյօժարականութէ, զոր պարտիմք 'ի գործածել 'ի հնազանդութե, ասէ, թէ հարկ է մեզ գոլ այնպէս պատրաստ առ հնչումն զանգակին, և առ ձայն մեծաւորին, որպ թէ ելանիցէր 'ի Քէ, թողլով անկատար զամ տառ, և զայլ ինչ սկսեցեալս 'ի մէնջ : Եւ աստ են երկու իրք․ Նախ՝ յորժամ լսեմք զձայնն զանգակի, կամ վեհագունին, համարելոց եմք զայն ձայն Այ : Եւ է յոյժ բարի խոկումն վասն ժամուն այնորիկ բանն երից թագաւորաց մոգուց, որք յորժամ տեսին զաստղն, ասացին, * Նշանս այս է մեծի արքայի, երթիցուք, և մատուսցուք նմա զընծայս, զոսկի, զկնդրուկ, և զմուռ ||: Այսպէս՝ յորժամ լսի ձայնն զանգակին, կամ մեծաւորին, է յոյժ բարի ասելն իսկոյն. Այս է ձայն ԱՅ, երթիցուք վաղվաղակի 'ի հնազանդիլ նմա: Երկրորդ իրն է, զի թողուցումք զտառն սկսեցեալ: Կասիանոս ընծեռելով զկրակութեց անապատականաց, որք էին 'ի գործաւորութիս. ոմանք 'ի գրել զջերմեռանդութիս իւրեանց. ոմանք 'ի խոկմունս, ոմանք 'ի յօրինակել զգրեանս, ոմանք 'ի թարգմանել, և 'ի մեկնել, ոմանք առ 'ի տանել զայլս ձեռագործս, ասէ, թէ խաղոյն 'ի լսելն զձայն զանգակին, կամ վեհագունին, ելանէին 'ի խցից իւրեանց. և իւրաքանչիւրն ջանայր լինել առաջին հնազանդօղ, և էր այնպիսի փոյթ նց. մինչ զի որ գրէր՝ թողոյր զտառն անկատար, զոր 'ի նմին կիտում սկսեալ էր գրել. զի համարէին առաւել զհնազանդութեն, քան զայլ ամ մնացեալն: Եւ ոչ միայն նախադասէին զհնազանդութիւն քան զձեռագործս, զորս առնէին, այլև քան զընթերցմունս, քան զաղօթս, քան զառանձնութիւնս, և քան զայլ ամ գործս: Եւ այսպէս թողուին զամ, առ 'ի ոչ տուգանել զհնազանդութք, որպէս թէ լուեալք լինէին զձայնն ԱՅ: Սրբն Բենեդիկտոս դնէ զայս վարդապետութիս 'ի կանոնի իւրում. և հայրն մեր էառ անտի:

Տն մեր առ 'ի ծանուցանել մեզ, թէ որքան հաճի ընդ հնազանդութիս այս յօժարական, թողլով զտառն սկսեցեալ անկատար, կամեցաւ ինքն հաստատել բազում անգամ հրաշիւք, ոպ արար ընդ միայնակեցի միում, որ լսելով զձայն զանգակին վն հնազանդութե իւրոյ՝ մինչդեռ գրէր, եթող անկատար զտառն, զոր սկսեալ էր գրել, և յորժամ դարձաւ, եգիտ աւարտեցեալ զտառն, և գրեցեալ ոսկւով զայն մասն, զոր թողեալ էր անկատար: Եւ այլ ումն, որում երևեցաւ ՅՍ 'ի կերպ գեղեցկագունի մանկան յոյժ փայլուն, ընդ լսելն զհնչումն զան֊

գա֊

դակին մի երեկոյեան ժամուն, խնկոյն թողեալ զՅս՟, գնաց կատարել զհնազանդութիւն իւր, և յորժամ դարձաւ 'ի խուցն 'ի յաւարտիլ ժամուն, եգիտ անդ զմանուկն, որ ասաց ցնա․ վասն զի գնացեր, սակս որոյ զիս գտեր աստ, և եթէ ոչ էիր գնացեալ, ես երթայի աստի։

Պատմէ Ռուսպրոքիոս զայլմէ ումեքէ, թէ վն՟ հնազանդութեն՟ եթող զՅս՟ մանկահասակ, և յետոյ եգիտ զնա երիտասարդ, որ ասաց ցնա, այսքան աճեցայ 'ի հոգւոջ քում, վասն յօժարակամ հնազանդութեն՟ քոյ։ Եւ հակադարձաբար․ քանզի դևն ոչ կարէ առնել, զի բոլորովին թողուցումք զհնազանդութիւն, ջանայ, զի մի՛ լիցեմք յօժարք և զգաստք 'ի հնազանդութեն՟, առ 'ի ունիլ 'ի նմին զմասն իմն․ և բառնալ զոնեայ զտակաւին գործն, զոր առնես 'ի հնչեցմանէ զանգակին, մինչև յառնիցես 'ի վեր։ Կամի բառնալ զծաղիկն, և զսկիզբն գործոց մերոց․ ջանայ՝ զի կայցես տակաւին մի յանկողնոջ, զկնի որոյ լռեալ ըզհնչումն զանգակին առ 'ի յառնել․ զի աւարտիցի տառն սկսեցեալ, մինչ գրես, և երբեմն եղերիցի յղացումն բանի, պատճառանօք, զի մի մոռանայցես։ Բայց մեք պարտիմք տալ Այ՟ զմր՟ գործս ամբողջաբար, սկզբամբ իւրով․ և ծաղկամբ հանդերձ․ որով առաւել է նմա հաճոյական, քան զայլն առանց ծաղկան, և տերևաթափ։

Առաւել քան զայս պահանջէ հայրն մեր 'ի մէնջ՝ շուրջ զայսու արտաքին հնազանդութ՟․ քանզի կամի, թէ այսպ՟ առնիցեմք ոչ միայն 'ի հարկանման զանգակին, և առ ձայնն վեհագունին․ այլև իմանալով զնշանն, և զնշանակութիւն կամաց նր՟։ Ամենեքեան (ասէ) տրամադրեցին մեծապէս առ 'ի պահել զհնազանդութի, և առ 'ի նշանաւորիլ 'ի նմին ոչ միայն 'ի յիրս պարաւանդութեն՟, այլև 'ի յայլ իրս, թէպէտ ոչ տեսանիցի, եթէ ոչ նշան միայն կամացն վեհագունին առանց բացայայտ հրամանի:

Մեծն Ալբերտոս ընձեռելով զհնազանդութէ ասէ. * Ճշմարիտ հնազանդն ոչ երբէք սպասէ հրամանի, այլ միայն զկամս առաջնորդին գիտացեալ, կամ հաւատացեալ, ջերմաբար կատարէ ||: Այս բաւական է (ասէ) փոխանակ պատուիրանի և հրամանի, ըստ օրինակի Քնի փրկչին մերոյ, և ուսուցչի, որ զկամս Հօրն երկնաւորի ընկալաւ փոխանակ հրամանի մեռանելոյ վասն մարդկան, մինչ եւտես, թէ այն էր կամքն և բարեհաճութն Հօրն իւրոյ յաւիտենականի:

Պատմէ Կասիանոս զհնոց միայնակեցաց, թէ էր այնքան մեծ հնազանդութիւն նց, մինչ զի ոչ միայն հնազանդէին ձայնի վեհագունին, այլև ամենից նշանաց կամաց նորա: մինչ զի թուէր, թէ նախագուշակէին կերպիւ իմիք զկամս վեհագունին, և յառաջագէտք նորա լինէին, առնելով զայն, զոր կամէր նա, և նախքան զհրամայելն նր: Այս է, զոր ասէ սբն Բեռնարդոս, թէ բարի հնազանդն, * Հրամայէ հրամայողին ||: Կանխէ, և յաղ թէ ձեռին նր, որ հրամայէ, առնելով զայն, զոր նա կամի, և նախքան թէ հրամայիցէ:

Ասէր հայրն մեր, թէ երեք են եղանակք հնազանդելոյ: Մին է, յորժամ հրամայի ինձ զօրութբ հնազանդութե, և է բարի: Երկրորդն է, յորժամ ինձ հրամայի առնել զայս, կամ զայն, և այս է բարեգոյն. զի ցուցանէ զմեծագոյն հպատակութին, և զյօժարութին, որ առնէ լսել պատուիրանաւ քան զնա, որ սպասէ, զի հրամայեսցի զօրութբ սբյ հնազանդութե: Երրորդ եղանակն է, յորժամ ես իմանամ զնշան իմն կամաց վեհագունին, և առնեմ զայս կամ զայն իր, թէպէտ ոչ հրամայէ, և ոչ պատուիրէ ինձ բացայայտաբար:

Ասէ՝ թէ հնազանդութիւն այս է առաւել կատարելագոյն, և հաճոյ Այ ։ Զի որպէս յաշխարհի ծառայն՝ որ իմանալով զփոքրագոյն նշան կամաց Տն, ջանայ կատարել, առաւել հաճոյանայ, և հաճեցուցանէ զնա, քանթէ միւսն այն, որում պիտոյանայ ասել ամ ինչ բացայայտաբար ։ Ընդունելի է Թագաւորի պաշտօնեայ իմաստուն ։ Առակ. 14. 35։ Այսպէս պատահի առս և 'ի հնազանդութեան ։ Նա՝ որ շարժի, և գործէ միայն նշանակութ կամաց վեհագունին, է բարեգոյն և կատարելագոյն հնազանդ, և առաւել հաճոյանայ մեծաւորին, և հանգուցանէ զսիրտ նորա և Այ ։ Եւ է վարդապետութե սրյն Թովմայի, որ ընձեռելով զհնազանդութե ասէ, թէ ո՛ր պիտեաւ կերպիւ և իցէ, եթէ ոք իմանայցէ, և ճանաչիցէ զկամս վեհագունին, այն է պատուէր և հրաման ընկերային, և թէ յայնժամ լինի ճանաչել զյօժարութիւն հնազանդութե հպատակին ։ Եւ այսպ ջանալոց եմք, զի առ այս տարածեսցի մեր հնազանդութի · զի երբեմն, և բազում անգամ պատահի, զի վեհագոյնն ոչ կամի հրամայել զինչ բացայայտաբար, զի կամի վարիլ համեմաբար առ 'ի ոչ նուաճել զհպատակն, կամ վն ոչ գիտելոյ, թէ որպիսաբար իցէ ընդունելի հրամանն իւր, և յայնժամ 'ի ճանաչելն զկամս վեհագունին, եղիցի մեծ պակասութ ոչ ընդառաջ ելանելն և մատուցանելն զինքն այնմիկ հնազանդութե ։ Ած խնդրէր զանձն ոք առ 'ի առաքել յեղէմ քարոզել, և ասաց. Զո՞ առաքեցից, և ո՞ երթիցէ ։ Եսայ. 6. 8. Զայս լուեալ Եսայեայ, և գիտելով զկամս Այ, որ կամէր, զի մատուցանիցի իւր, մատուցաւ իսկոյն ասելով · Ահաւասիկ եմ, առաքեա զիս ։ Այսպ կամի խրատուքն, զի մատուցանիցեմք մեք զմեզ, յորժամ բանիւք իմ իւք, կամ նշանաւ յայտնէ մեզ զկամս իւր վեհագոյնն մեր։

Կարեմք առբերել զբազում օրինակս, որք յոյժ բարեպէս ուսուցանեն մեզ զարագութիւն, և զյօժարութիւն, որովք պարտիմք վարիլ 'ի հնազանդութեան : 'Ի մէջ նոցին յոյժ բարի է այն, զոր ճառէ ածաշունչն զՍամուէլ մարգարէն, թէ մինչ էր մանուկ, ծառայէր 'ի տաճարին Հեղեայ քահանային ոպս զլուսարար : Կայր նա 'ի քուն 'ի գիշերի միում 'ի տաճարին, և ԱԾ կոչեաց զնա՝ ասելով. Սամուէլ, Սամուէլ, առ'ի յայտնել նմա զպատիժ մի, զոր տալոց էր Հեղեայ քահանային : Զարթեաւ Սամուէլ այնու ձայնիւ. և քանզի ոչ հասկանայր զբարբառոյն զայն. զի մինչև ցայնժամն ոչ էր խօսեալ Տր ընդ նմա երբէք. և ոչ էր յայտնեալ նմա զէր իմն. կարծեաց՝ թէ Հեղի քահանայն իցէր կոչեալ զնա : և յարուցեալ իսկոյն գնաց առ նա ասելով, Ահաւասիկ եմ, զի՞ կոչեցեր զիս : Հրամայեաց նմա Հեղի երթալ և ննջել ասելով, Ո՛չ կոչեցի զքեզ որդեակ, դարձիր և ննջեա : Դարձաւ Սամուէլ 'ի ննջել, և ԱԾ դարձեալ կոչեաց զնա երկրորդ անգամ. և նա զարթուցեալ կարծեաց՝ թէ Հեղի կոչեաց զնա, զի ոչ այլ ոք գոյր, որ կոչեսցէր զնա, և ընթացեալ գնաց առ նա, որպէս առաջին անգամն : Խորհեցաւ Հեղի, թէ մանուկն զերազ տեսանէ, վն որոյ դարձեալ հրամայեաց նմա, զի երթեալ ննջեսցէ : Դարձաւ Սամուէլ 'ի ննջել, և ԱԾ կոչեաց զնա դարձեալ երրորդ անգամ, և նա զարթուցեալ գնաց իսկոյն առ վեհագոյնն իւր Հեղի, կարծելով, թէ նա կոչէր զնա, և ասէ, Ահաւասիկ եմ, զի՞ կոչեցեր զիս : Յայնժամ իմացաւ Հեղի, թէ ԱԾ էր այն, որ կոչէր զնա առ'ի յայտնել նմա զէր իմն. և ասաց ցնա, դարձիր որդեակ, և 'ի քուն լեր, և եթէ միւսանգամ լուիցես զկոչումն, լե՛ր հանդիստ, և ասա·

Խօսեաց Տ՟ր, զի լսէ ծառայ քո : Դարձաւ Սամուէլ 'ի ննջել. և Ա՟ծ դարձեալ կոչեաց զնա, Սամուէլ, Սամուէլ : Եւ նա յարուցեալ այնու ձայնիւ ; և ո՟պ կրթեցեալ էր, պատասխանեաց, խօսեա՛ց Տ՟ր, զի լսէ ծառայ քո : Յայնժամ Ա՟ծ խօսեցաւ, և յայտնեաց նմա, զոր կամէր յայտնել : Արդ՝ նկատեսցուք աստ 'ի հնազանդութիւն սամուէլի. զի թէպէտ այնքանիցս եղև վարկպարազի զարթուցեալ 'ի քնոյ, և նոյն ինքն հեղի ասաց նմա, թէ ես ոչ կոչեցի զքեզ, ե՛րթ, և ննջեա՛, և թէպէտ հաւատայր, թէ այլ ոչ ոք կայր անդ կոչող զնա, եթէ ոչ հեղի. և նոյն հեղին ասէր, թէ ո՛չ կոչեցի զքեզ. բայց սակայն դարձեալ յարուցեալ երրորդ անգամ գնաց առ նա, առ'ի տեսանել և գիտել զայն, զոր հրամայել կամէր : Ահա յօժարութե՟ ուրեմն, և արագութե՟ պարտիմք ընթանալ և հնազանդիլ վեհագունին :

Ես յոյժ բարի օրինակն այն, զոր պատմէ Ա՟ծաշունչն զյօժարական հնազանդութե՟ն Աբրահամու, յորժամ Ա՟ծ հրամայեաց նմա, զի զոհիցէր զմիածին որդին իւր զիսահակ. Եւ յարեաւ Աբրահամ գիշերի. Ասէ, թէ ո՛չ ես սպասեաց առաւօտու, այլ գիշերոյն վաղվաղակի նախ քան զլինիլ տուընջեան 'ի նոյն կէտի, յորում հրամայեցաւ նմա, գնաց 'ի կատարել զհնազանդութիւն, որ էր այնքան դժուարին : Եւ ասէ Ա՟ծաշունչն, թէ եթող զծառայս 'ի ստորոտ լերինն, և ո՛չ կամեցաւ զնոսա տանիլ ընդ ինքեան, ո՟պ զի ոչ ոք իցէր, որ արգելուցուր զկատարումն հնազանդութե՟ն իւրոյ.

* * *

ԳԼՈՒԽ.

ԳԼՈՒԽ. Դ։

Յաղագս Երկրորդ աստիճանի հնազանդութեան։

Երկրորդ աստիճանն հնազանդութեան կայանայ 'ի համակերպելն ուրուք զկամս իւր ընդ կամաց վեհագունին. և 'ի յոչ ունելն զայլ կամք, և ոչ զայլ կամիլ, և զոչ կամիլ, եթէ ոչ զայն, զոր կամի, կամ ոչ կամի վեհագոյնն։ Այս է իր մի ուղղագոյն և հասարակագոյն, զոր 'ի կրօնի ունիմք. քանզի այսու յառաջադրութեամբ մտանեմք ամենեքեան 'ի կրօն։ Եւ այս է առաջին սկիզբն, որ որպէս հիմն ասի, և առաջադրի ամենից այնոցիկ իսկոյն, որք կամին մտանել 'ի կրօնն։ Նկատեա՛, զի դու ո՛չ գաս 'ի առնել զկամս քո, այլ զկամս այլոց։ Եւ ամենեքեան ասեն, արդէն գիտեմք։ Արդ՝ որպէս մեք ասեմք, և ասացաք մեզ, այսպէս է իրաւի։ Եւ այս է դուռն կրօնաւոր, և կեալ ընդ հնազանդութեամբ։ Ասէ Տէր Յօհաննէս կլիմաքեան, թէ * Հնազանդութիւն է գերեզման սեփական կամաց, և արթնութիւն խոնարհութեան ||։ 'Ի մտանելն մեր 'ի կրօն, պարտիմք համարել, թէ երթամք թաղել զկամս մեր. և այնուհետև պարտիմք կատարել յամենայն իրս զկամս վեհագունին։

Հայրն մեր յաւէլ ասել, թէ պարտիմք գոլ տրամադրեցեալք առ այս, թէև հրամայեսցին մեզ իրք դժուարագոյնք, և ներհակք ըղ դայութեց։ Եւ մանաւանդ առ այս մասնաւորաբար՝ ասէ, թէ պարտիմք ցուցանել ըղ յօժարութեան, յորժամ պատուէրին մեզ այնք, զի յայնմիկ ճանաչի ճշմարիտ հնազանդութիւն, ըստ որում ծանուցանեն հասարակաբար Տեարքն։ Յորժամ հրամայի մեզ իր ինչ ըստ ըղձից, և ըստ յօժարութեան մերում, և ըստ կամաց, ոչ կարէ ճանաչել հնազանդութիւն, զի առ այս քարշէ զմեզ մանաւանդ խիղճն, և հակումն մեր, քան թէ կամն Այ, և հնազանդութիւն: Բայց յորժամ հրամայեցեալն է դժուարին, և ներհակ մերում զգայութեան, և միտմանց մերում. և զայն ընդգրկեմք բազում յօժարութեամբ, յայնժամ (ասեն) յոյժ բարւոք ճանաչի հնազանդութիւն: Ուստի է յոյժ բարի, և յոյժ գովելի այն, զոր տեսանեմք ՚ի յոմանս կրօնաւորս, որոց մինչ աւանդի այնպիսի պաշտօն, կամ գործառնութիւն, ընդ որ նոքա հաճին յոյժ գլին, սկսանին կալ կարծողութեամբ, նեղարտութեամբ, և արտացանութեամբ սրբով, և ասեն, չգիտեմ, եթէ արդիւնաւորիմ ես այսու, թէ ոչ. քանզի թուի ինձ, թէ առնեմ ես զկամս իմ, և զայն առաջադրեն վեհագունին մի և երկու անգամ: Եւ հակադարձաբար՝ յորժամ հրամայի ինչ իր իմն, առ որ նոքա ոչ յօժարին, այլ մանաւանդ ունին զդժուարութիւն, և զընդդիմութիւն. յայնժամ մխիթարին յոյժ. զի թուի ինքեանց, թէ այնու շատացեալք ոչ առնեն զկամս իւրեանց և ոչ խնդրեն զինքեանս, այլ զտաբար զԱծ: Այս է բարեգոյն կերպ յառաջանալոյ, և յոյժ ապահով: Սբն Գրիգորիոս ասէ * Պարտի հնազանդութիւն ՚ի յընդդիմութեան ունիլ զիր իմն ՚ի յիւրմէ. և ՚ի յաջողութեան զոչինչ պարտի ամենևին ունիլ ՚ի յիւրմէ ||: Այսինքն, յորժամ հրամայեն մեզ իրք բարձունք, և պատուելիք, ոչ պարտի գոլ անդ իր իմն մեր, այլ պարտիմք առնել զտաբար վասն այսորիկ միայն, զի հրամայեցեալք են մեզ, և զի է կամն Այ: Բայց յորժամ հրամայեն մեզ իրք դժուարինք, անարգք, և ցածունք. սոյնպէս (ասէ) պարտի գոլ իր իմն մեր, զի առ այսպիսիս պարտիմք յօժարիլ, և առնել բազում յօժարութեամբ, և կամաւ: Եւ որ առնէ զայս, կարէ բարւոք հաւատալ. և հաւաստի գոլ, թէ նաև 'ի յայլս հնազանդութիւնս, որք են ըստ յօժարութեան իւրում, արասցէ զկամն ԱՅ, և ոչ զիւրն։ Բայց որ ոչ հնազանդի յօժարութբ, և կամաւ 'ի յիւրս անարգս, ցածունս, և աշխատալիս, յորս զգայ զդժուարութիւն, և զընդդիմութիւն, կարէ երկնչիլ այնպիսին, թէ նաև յայլս իւրս՝ զորս առնէ, որք են ըստ հաճութեան, և ըստ յօժարութեան իւրում, ոչ առնէ զկամն ԱՅ, այլ զկամն իւր։ Եւ այս է մի նշան յայնց, որք են առ'ի ճանաչել, թէ երբ խնդրէ ոք զինքն յայնս իւրս, զորս առնէ. և երբ խնդրէ զուտաբար զկամն ԱՅ։ Ուստի հետևի, թէ նա, որ ցանկայ, և ջանայ, զի վեհագոյնն հրամայիցէ նմա զայնպիսի ինչ, որ հաճոյ թուէր ինքեան, և այնու զի ջանիցի ըստ կամաց նորա, և միայն վասն այսորիկ է յօժար, և ոչ վն այլոյ. ոչ է հնազանդ։ Բարուոք ասէ հայրն մեր. թէ է մեծ խաբէութին. և իր իմացութեան մթացելոյ ինքնասիրութբ, խոկալն, թէ պահիցի հնազանդութին յայնժամ, յորժամ հպատակն ջանայ քարշել զվեհագոյնն առ այն, զոր ինքն կամի։ Եւ բերէ զայնս բանս Սրյն Բեռնարտոսի, * Որ ոք ջանայցէ յայտնապէս, կամ ծածկաբար, զի զոր ունի 'ի կամս իւր, զայն նմա հրամայիցէ վեհագոյնն, նա զինքն պատրէ, և եթէ այսպիսիս զինքն որպէս զհնազանդ փաղաքշիցէ, ոչինչ է, զի ոչ ինքն նախագահին, այլ նախագահն նմա հնազանդի ‖։

Յոյժ հասարակ, և ծանօթ ամենեցուն է կէտս այս. բայց ոչ կամիմ թէ հասարակ գոլն սորա լիցէ պատճառ, զի թեթևաբար անցանիցեմք զնովաւ. վն զի է յոյժ հարկաւոր, և առաւել նախապետական յայսմիկ նիւթոջ։ Մինն 'ի մէջ իրաց երկիւղալեաց է այս, յորմէ առաւել պարտի երկնչիլ կրօնաւորն։ Մեծապէս պարտիս երկնչիլ, զի մի

վեհամեծագոյնն յանձնեց . քեզ զիր իմն , թէ զպաշտօն , կամ զգործառութի ինչ , որում ցանկացեալ լիցես դու . և զոր ջանացեր ունիլ , և ցուցեր նմա զկամս կերպարան վասն այլոյ իրի , զոր քեզ եցոյց . և ցանկայր՝ զի առաւել զայն առնիցէիր : Թերևս դու կարծիցես , թէ արարեալ լիցես զիր իմն , և բեռնաւորեալ լիցես զքեզ գործովք բարեօք յաղագս բազում աշխատելոյն քո , բայց գտցես զքեզ խաբեցեալ , և յոյժ թափուր յարդեանց առաջի ԱՅ . զի առնէիր զկամն քո , և ոչ զկամն ԱՅ : Ուստի կարէ ԱԾ պատասխանել քեզ զայն , զոր Եսայի ասէ , Զի՞ է . զի պահեցաք մեք , և դու ոչ տեսեր , խոնարհեցուցաք զանձինս մեր , և դու ոչ գիտացեր : Զի յաւուրս պահոց ձերոց գտանին կամք ձեր կատարեալք :

Եսայ. 58. 3.

Սրբն Բեռնարդոս առ այս տեղիս Եսայեայ՝ ասէ , * Մեծ չար է կամն քո , զի առնէ , թէ բարին քո ոչ լիցէ բարի ձո քո ‖ : Եւ յայլում տեղւոջ բացատրելով յոյժ բարւոք զայս իր ասէ , յորժամ Քն փրկիչն մեր երևեցաւ Սրբյն Պօղոսի , 'ի վայր ընկէց զնա 'ի ձիոյն , և դարձոյց զնա առ ինքն . և անկան յաչաց հոգւոյ նորին կեղևանքն , և այնու լուսովն առեցելով 'ի յերկնից՝ ասաց , Տր , զիս զի՞նչ կամիս առնել : Այս է (ասէ Սրբն Բեռնարդոս) նշան կատարեալ դարձման մերոյ , և հրաժարելոյ ճշմարտաբար յաշխարհէ , և բացորոշելոյ հետևիլ Քսի . յորժամ կարիցէ ոք ասել ընդ Սրբյ առաքելոյն Պօղոսի , Տէր , զի՞նչ կամիս , զի արարից : Ով բան կարճառօտ , բայց լի իմացուածովք , է կենդանանակ , և զօրեղ , և արժանի մեծ համարելոյ : Ո՜հ թէ որպէս սակաւք գտանին աստանօր (ասէ սրբն) որք ժամանիցեն առ այն կատարելութեն հնազանդութեն , թողլով զկամս իւրեանց , և ոչ երբէք ոտնիցեն , կամ ցանկանայցեն , և

բաղ

բաղձայցեն, զի լինիցի յիրի իմք այն, զոր ինքեանք կամին. այլ միայն այն, զոր Ած կամի, ասելով միշտ ընդ առաքելոյն, Տէր զի՞նչ կամիս, զի արարից. և ընդ արքունւոյ մարգարէին, **Պատրաստ է սիրտ իմ Ած, պատրաստ է սիրտ իմ**։ Սղմ. 56. 8։ Յետոյ ասէ սբն Բեռնարդոս. * Ոհ զի բազում մարդիկ կամին հետևիլ այնմիկ լուրի աւետարանականի, քան թէ նոր առաքելոյն ‖։ Եհարց փրկիչն աշխարհի ցկոյրն, և ասէ, **Զի՞նչ կամիս, զի արարից քեզ**։ Ո՜հ թէ որքան մեծ է Տր իմ ողորմութն քո, և զո՜րքան մարդասիրութն՝ ի գործ ածես ընդ մեզ։ Ե՞րբ արդեօք տէր ոք եհարց ցծառայն իւր, և կամեցաւ քննել զկամս նր առ՚ի առնել զայն, զոր նա կամի։ Ուստի ասէ սբն Բեռնարդոս, Իրաւի կոյր էր նա, զի ոչ խորհեցաւ, և ոչ սարսեցաւ, զի ոչ աղաղակեաց ասելով, քաւ լիցի այս Տէր. մանաւանդ դու ասա ինձ, զի արարից՝ զոր դու կամիս, զի որպէս վայելէ, այսպէս է արժանի ամենեքին, զի ոչ կամս իմ՚իքէն, այլ քոյդ կամս լինէին խնդրեցի, և եղիցի։ Բազում կրօնաւորք այսպս առնեն (ասէ) աստանօր. ցորս պիտոյ է հարցանել, զի՞նչ կամիս, զի արարից քեզ։ Պիտոյ է, զի մեծաւորն նկատիցէ և որոնիցէ, թէ զի՞նչ է հաճոյ այսմ ումեք. և զի՞նչ անմ, զոր արասցէ կամաւորապէս՝ առ՚ի հրամայել նմա զայն, որում յօժարի, և որ հաճոյ է նմա։ Պարտ էր նոցա հակադարձաբար առնել, քն պարտ էր նոցա քննել զկամն վեհագունին, և պարտ էր, զի ջանայցեն գիտել, թէ առ որպիսի իր յօժարի նա, որովհետև վասն այնորիկ են եկեալք առ կրօնն, այլ ոչ վասն այսորիկ, զի վեհագոյնն երթիցէ զհետ կամաց նց, և հրամայեսցէ նց զայն, զոր նոքա կամին, զի այս ոչ է հնազանդութն, և ոչ կրօն։

ԳԼՈՒԽ. Ե:

Յաղագս երրորդի աստիճանի հնազանդութեան:

Երրորդ աստիճանն հնազանդութեան կայանայ 'ի համակերպելն զդատողութիւն, և զիմացականութիւն մեր՝ ընդ դատողութեան վեհագունին, ունելով ընդ նմա ոչ միայն զնոյն կամիլ, այլև զնոյն իմանալ, և հարկ է, զի թուիցի մեզ, թէ այն, զոր հրամայէ նա, է բարւոք հրամայեցեալ, և ստորադրել զդատողութիւն մեր, նորին դատողութեան. նաև առնուլ զայն 'ի նմանէ որպէս զբնական կանոն: Առ 'ի ճանաչել զհարկաւորութիւն այսորիկ աստիճանի հնազանդութեան, բաւական էր այն, զոր ասացաք 'ի սկզբանն, զի եթէ ոչ լիցի այս, հնազանդութիւն ոչ եղիցի կատարեալ, և ոչ ամբողջ: Ասեն սուրբքն, թէ հնազանդութիւն է կատարելագունեղ ողջակէզ, յորում մարդ բոլորովին ամբողջ առանց բաժանելոյ, և անջատելոյ զինքն յինքենէ. և առանց պահելոյ զիր իմն վասն իւր, մատուցանէ ստեղծողին իւրում, և Տեառն հրովն սիրոյ 'ի ձեռն պաշտօնէից նորա: Այս է տարբերութիւն, որ կայր 'ի հին օրէնս 'ի մէջ ողջակիզի, և այլոց զոհից, զի 'ի յայլս պատարագս մասն ինչ այրիւր 'ի պատիւ Աստուծոյ, և մասն ինչ պահիւր վասն ապրելեաց քահանայից. և պաշտօնէից տաճարին. բայց ողջակէզն բոլորն այրիւր 'ի պատիւ Աստուծոյ առանց պահելոյ զմասն ինչ նորին: Եթէ ուրեմն դու ոչ հնազանդիս իմացականութեամբ, այն ոչ եղիցի ողջակէզ, և ոչ ամբողջ, և կատարեալ հնազանդութիւն. քանզի թողուս զմատուցումն առաւել նախապատուականին, և զառաւել պատուական մասն քո, որ է իմացականութիւնդ, և դատողութիւնդ: Ուստի ասէր հայրն մեր, թէ նոքա, որք հնազանդելն միայն կամաւ, և ոչ դատողութ՟բ, տակաւին ոչ են 'ի կրօնի, եթէ ոչ միով

ոտամբ միայն ։

Սորանելն ս՟բն Բեռնարդոս 'ի բացատրելն, թէ զինչ, կամ որպիսի պարտի գոլ հնազանդ դու 'ի իմացականին, հետևի պատմել զդարձումն ս՟բյն Պօղոսի, և զայն հպեցուցանէ առ այս ։ Յորժամ ս՟բն Պօղոս զարհուրեալ լուսովն երկնայնով, դարձաւ և ասաց ։ Տէր զինչ կամիս, զի արարից ․ Տ՟րն պատասխանեաց ․ Մուտ 'ի քաղաքդ, և պատմեսցի քեզ, զինչ քեզ պարտ իցէ առնել ։ Գործ․ 9․ 7․ Ասէ ս՟բն Բեռնարդոս, այսու դիտաւորութ՟բ, և զի՟ այսր վախճանի եղև մուտն քո 'ի կրօն, և ոչ առանց բարձրագունի և Ա՟ծայնոյ խորհրդոյ ։ Եդ 'ի քեզ Ա՟ծ զերկիւղ և զահ քոյդ փրկութեն ․ և ետ քեզ զցանկումն մեծ ծառայելոյ Ա՟ծութեն իւրում ։ և յաղագս այսորիկ ներշնչեաց քեզ մտանել 'ի յայս քաղաքս, և 'ի յայս դպրատունս առաքինութ՟եց ․ աստ ասացի քեզ այն, զոր Ա՟ծ կամի 'ի քէն, զի առնիցես առ 'ի հաճոյանալ նմա ։ Յառաջ երթայ պատմութ՟ն ս՟բյն Պօղոսի, և ասէ, թէ մտեալ ս՟բն Պօղոս 'ի քաղաքն, Աչօք բացօք ոչ զոք տեսանէր, ձեռնակալեալ տանէալ նոքա մուծին 'ի Դամասկոս ։ Եւ ասէ ս՟բն Բեռնարդոս, * Արդարև եղբարք, կատարեալ դարձման կերպ այս է ‖ ։ այս է օրինակ, և եղանակ հնազանդութե, որ լինելոց է 'ի կրօնաւորն ։ Եւ յայտնի կայանայ կատարելութ՟ն ն՟ր, զի դու աչօք բացօք ոչ տեսցես, և ոչ դատեսցես զեր իմն, այլ թողցես զքեզ ածել և առաջնորդել 'ի քոյոց վեհագունից՝ դնելով ըզքեզ բոլորովին 'ի ձեռն ն՟ց ։ Զգոյշ լեր, զի մի բացցեն աչք քո 'ի մտաս քոյ, ո՟րպ բացան աչքն ադամայ ։ Ասէ Ա՟ծաշունչն զնախահարց մերոց, թէ զկնի մեղանչելոյն բացան աչք ն՟ց, և ծանեան, զի էին մերկք, և ամա

չեցին

ձեցին մեծապէս խուրեանք յինքեանց ։ Զի՞ է այս , թերեւս նախքան զմեղս ո՞չ էին մերկ , կամ ո՞չ ունէին բաց զաչս ։ յայտ է այս , զի Ած ոչ ստեղծ զնոսա կոյրս ։ Այլ ոչ յիշէին զմերկութիւն իւրեանց , և ոչ զմտաւ ածէին , զի էին այնու սրբով պարզամտութբ և մաքրութբ սկզբնականի արդարութեան , որպէս հրեշտակս ՚ի յերկրի ։ Արդ՝ մեք պարզամտութեան այնմիկ և կատարելուե , զոր կորուսին նոքա անհնազանդութբ , պարտիմք ջանալ մեք հասանել միով հնազանդութբ յայսմիկ դրախտի կրօնիս ։ Զի մի ունիցիմք բաց զաչս առ ՚ի տեսանել զպակասութիւնս և զթերութիւնս այլոց · և թէեւս այլ ոք բանայցէ զպակասութիւնս , զթերութիւնս , և զմերկութիւն իւր , ոչ պարտիմք հայիլ ՚ի յայնս , և ոչ խոկալ զայնցանէ , եւս առաւել յայնս , որք պատկանին առ իւս հնազանդութե ։

Սրբն Յօհաննէս կլիմաքեան ընձեռելով զհոգունակութե , և զփութոյ , զոր պարտիմք ունիլ , ասէ , եթէ գայցեն ՚ի մեզ խորհուրդք , կամ դատողութիք ընդդէմ հնազանդութե , պարտիմք առնել այնպէս , որպ յորժամ գան ՚ի մեզ խորհուրդք հայհոյութե ընդդէմ Այ , և ընդդէմ հաւատոյ , և այլ խորհուրդք տգեղք և անհամեստք · և ոչ իւիք կերպիւ զանգի առ նց , այլ մանաւանդ առնուլ ՚ի նոցանէ զառիթ ամաչելոյ , և մեծապէս խոնարհելոյ ։ Սրբն Հերոնիմոս գրելով առ միայնակեաց մի , կամ կրթելով զնա , թէ որպ էր կենցաղավարելոց ՚ի կրօնի , ՚ի մէջ այլոց խրատ աւանդէ նմա մեծապէս զայս · * Մի դատիցես զվճիռս մեծաւորաց քոց , որոյ պաշտօնն է հնազանդիլ նց , և նոյն զայնս , որք հրամայեցան , ըստ ասացելոյն Մովսէսի , Լուր Իէլ , և լուեա՛ ‖ ։ Եւ սրբն Բարսեղ յորդորելով առ այս , ասէ · Եւ յաշխարհի իսկ , յորժամ ոք կամի ուսանիլ զարհեստ ինչ մեքենական առ՛ի շահի; զապրելն իւր, ծառայէ ուսուցչին իւրում ոպ՟ նորավարժ, և կայ հայելով 'ի ձեռս նր՟, և հնազանդելով յամ՟ի, զոր ասէ նա, առանց ընդդիմանալոյ, կամ դատելոյ զիր իմն, և ոչ հարցանէ զպատճառն այնորիկ, զոր նա հրամայէ. և այսու կերպիւ եղանի բարի արհեստաւոր: Ընթեռնումք զՊիթագորայէ, թէ հրամայէր աշակերտաց իւրոց, զի յորժամ ինքն ասիցէր նց՟ զիր մի, ոչ խնդրիցէին, և ոչ քննիցէին զայլ իր. և նոքա պահեցին զայն այնպէս անխափան, մինչ զի 'ի յասելն նց՟ միայն՝ թէ ˙ Նա ասաց ‖, այս բաւական էր վասն ամ՟ի: Արդ՝ որքան առաւել բանաւոր իմն է, զի առնիցեմք ևս մեք ը՟ նմա, որ է առաւել քան ըզպիթագորա, որովհետև կայ փոխանակ Քն՟ Տն՟ մերոյ. և տեսանելով զիր մի, թէ է հնազանդութ՟ն, ոչ է պիտոյ զայլ իր ենթալծել ընդ մերոյ դատողութե՟, և այնու հաւատալ, թէ այն իրն է վայելուչ:

Եւսեբիոս կեսարացին պատմէ զլակեդեմոնացւոց, թէ ունէին զօրէն մի յոյժ բարեգոյն, և էր այս, զի ոչ ոք երիտասարդ, որ նորապ՟ սկսանէր կառավարել, իշխիցէր վիճաբանել, եթէ օրէնքն էին բարի, կամ վատ, և ոչ խնդրել, կամ գտնել 'ի նոսին զանպատեհս, այլ ենթալծիցէին զդատողութս իւրեանց, և հայիցէին որպէս 'ի յիր տուեցեալ յԱյ՟. և բաւական համարիցէին, զի զայն ետուն նց՟ նախնիքն և մեծագոյնքն իւրեանց, և եթէ առ ոմանս ծերագոյնս պատահեալ իցէր անպատեհ իմն, յաղագս փոփոխուե՟ ժամանակի, զա՛ն ոչ առաջադրէին երիտասարդ կառավարչաց, այլ ընձեռէին ընդ ծեր կառավարիչսն, ոպ՟ զի նոքա տեսանիցէին զայն, որ էր պատշաճաւոր, առ՛ի չ տալ զառիթ երիտասարդաց կործանելոյ զպատկառանս և զհաւրկիսն օրինացն, զի է մեծ վնաս(ասէին) վն իրին հրապարակի : Արդ՝ եթէ փիլիսոփայքն այնք հեթանոսք կամէին, զի այնքան պատկառեսցէին յօրինացն տուեցելոց 'ի մեծագունից իւրեանց . և այնքան հարկաւոր թուէր նոցա պատկառանքն այն : Առաւել ըստ իրաւանց պարտիմք մեք քրիստոնեայքս և կրօնաւորքս յարգել զկարգս և զհրամանս նախագահից մերոց հոգևորաց, հիմնեցեալս՝ ոչ միայն բանականութե̃ բնականաւ, որպիսիք էին փիլիսոփայիցն այնոցիկ, այլև լուսով հաւատոյ, և շնորհիւ աւետարանին :

Հայրն մեր յայնմիկ զարմանալի տրակ̃, զոր գրեաց զհնազանդութէ, բարւոք ցուցանէ, զի եթէ ոչ գոյ հնազանդութիս այս դատողութե̃ մեծաւորին, անկարելի է, թէ հնազանդիցի կամքն առ 'ի կատարել զայն՝ որ պարտի լինել, և տեսակաւորէ զվնասս բազումս, և զանպատեհութիս, որք ծագին 'ի պակասութէ հնազանդութեան այսորիկ :

ԳԼՈՒԽ. Զ:

Յաղագս կարգէրց Հնազանդութեան :

Երանելի հայրն մեր Իգնատիոս ասէր, թէ որպէս 'ի զինուորեալ եկեղեցւոջ Ած̃ Տր̃ն մեր եբաց զերկուս ճանապարհս մարդկան առ 'ի փրկել . զմին հասարակ, որ է պահումն հրամանաց, և զմիւսն, որ առակցի ամս, է խրատն աւետարանական, որ և է յատուկ կրօնաւորաց : Այսպէս և 'ի նոյն կրօնի են երկու տեսակք հնազանդութե̃ . մին անկատար և հասարակ . և միւսն կատարեալ, և բացեալ, յորում փայլի զօրութիւն հնազանդութե̃, և կատարեալ առաքինութի̃ւն առն կրօնաւորի : Հնազանդութի̃ն անկատար (ասէ) ունի զաչս, բայց 'ի վնաս իւր : Կատարեալն է կոյր . բայց յայսմիկ կուրութե՟ կայանայ իմաստուն ։ Մինն ունի զդատողութի՟ն յայնմիկ, որ հրամայի ինքեան․ և միւսն ոչ ունի ։ Նա միտէ առաւել առ մի կողմն, քան թէ առ միւսն ։ Բայց սա ոչ յօժարի ոչ 'ի մին, և ոչ 'ի միւսն․ զի կայ միշտ ուղիղ ը՟դ մէջն կշռոյ, համբերաբար տրամադրեցեալ և պատրաստ առ ամ՟ իր, որ հրամայեսցի ինքեան ։ Առաջինն հնազանդի գործով, և կատարելով, բայց ընդդիմանայ սրտիւ, և այսպ՟ ոչ արդիւնաւորի զանուն հնազանդութե՟ ։ Երկրորդն կատարէ զայն, որ հրամայի, և ենթադրէ զդատողութե՟ և զկամս իւր՝ կամաց և դատողութե՟ վեհագունին․ համարելով բարի զայն ամ՟, որ կարգաւորի 'ի վեհագունէն․ և ոչ որոնէ ըզ պատճառն հնազանդելոյ․ և հետևի ամ՟ի, որ ինչ հանդիպի, մանաւանդ հնազանդի այսու ևեթ նկատմամբ, թէ այն է հնազանդութի՟ն կուրակերպ ։ Այս է, որ կոչի կոյր հնազանդութի՟ն, որ է յոյժ 'ի կիրարկեցեալ, և աւանդեցեալ 'ի սր՟ց հարց, և 'ի յուսուցչաց հոգևոր կենաց ։ Ո՛չ ասի կոյր վ՟ն այսորիկ, զի կամիցիմք հնազանդիլ ամենից իրաց, որք մեզ հրամային, թէ և իցեն մեղք, զի այս իցէր սխալանք․ և զայս բացայայտէ բացորոշաբար հայրն մեր 'ի կայուցմունս ։ այլ վասն այսորիկ կոչի կոյր, զի յամ՟ իրս, յորս ոչ իցէ մեղք, հնազանդելոց եմք պարզամտաբար, և զտանպ՟ առանց ներխուզելոյ և որոնելոյ ըզ պատճառն այնորիկ, որ մեզ հրամայի, ենթադրելով, թէ այն՝ որ մեզ հրամայի, է ա՟բ, և ըստ կամացն Ա՟Յ․ և շատանալով միայն այսու պատճառաւ, զի է հնազանդութի՟ն, և մեզ հրամայէ վեհագոյնն ։ Ուստի Կասիանոս կոչէ զհնազանդութի՟ն զայս ։ *առանց քննութե՟, առանց հետազօտութե՟ ‖ ։ Զի ոչ ես վիճաբանելոյ, ոչ հարցանելոյ, ոչ ևս քննելոյ դու, թէ ընդէ՞ր, կամ յ՞որ աղատղադած հրամայի քեզ այս , այլ հնազանդիլ պարտիս պարզամտաբար , որ քեզ հրամայի : Ս՟բն Յովհաննէս կլիմաքեան ասէ ; * Հնազանդութիւն է առանց քննութեան անհետախոյզ շարժումն , կամաւոր մահ , կեանք զուրկ 'ի հետաքրքրութէ , յետադրուն ընտրողութեն || : Ս՟բն Բարսեղ ընձեռելով , թէ ո՞չ Ք՟ս փրկիչն մեր յանձնեաց ս՟բյն Պետրոսի արածել զոչխարս իւր , և նովաւ յանձնեաց զնոյնն ամենից վեհագունից , Արածեա զոչխարս իմ : Ասէ , թէ ո՞չ ոչխարքն հնազանդին հովուին իւրեանց , և երթան ընդ այն ճանապարհ , ընդ որ նա կամի : Այսպէս եւ կրօնաւորն հնազանդել պարտի վեհագունին իւրում , և գնալ ընդ այն ճանապարհ , ընդ որ նա կամի , բազում զուարթութբ և պարզամտութբ , ո՞չ բարի ոչխար առանց քննելոյ՝ և քննելոյ զայն , որ ինքեան է հրամայեցեալ :

Ս՟բն Բեռնարդոս յոյժ բարւոք խօսի զայսմանէ հնազանդութեան կարգէ , և ասէ , թէ այս է կատարեալ հնազանդութիւն . * Իսկ կատարեալ հնազանդութիւն մանաւանդ 'ի նմա , որ նորայն սկսանի , է անընտրողական : Այսինքն ոչ ընտրել , թէ զինչ , կամ վ՟ս էր հրամայի , այլ առ այս միայն ջանալ , զի հաւատարմաբար և խոնարհութբ եղիցի այն որ 'ի վեհագունէն հրամայի || : Յոյժ ի՞մաստակար եղև նախահարցն մերոց , յորժամ կամեցան ներխուզել , և քննել զպատճառն այնորիկ , որ հրամայեցեալ էր նց : Զի ընդ այն եմուտ դեն , և յաղթեաց նց : Եւ այս եղև սկիզբն ամենից չարեաց նց , և մերոց : Ասէ ցնա , Զի՞ է , զի ասաց ԱԾ , թէ յամ ծառոց , որ իցեն 'ի ներքս 'ի դրախտի այդր՝ մի ուտիցէք : Պատասխանեաց Եւայ . Զի մի գուցէ մեռանիցիք : Ասացեալ էր նց ԱԾ բացարձակաբար , թէ ուտելով 'ի ծառոյ անտի մեռանելոց էք . Զի յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ , մահու մեռանիցիք :

Այլ Եւայ սկսաւ երկբայիլ, զի թուէր նմա, թէ այն վճիռն Այ ոչ էր բացարձակ, այլ պայմանականք․ որ եղեւ յայտնի տրամադրութե խաբեցեալ գոլոյ, եւ եղեւ իսկ։ Քանզի դեւն ասաց ցնա, Ո՛չ եթէ մահու մեռանիցէք, այլ թէ եղիջիք իբրեւ զԱծս ճանաչել զբարի եւ զչար։ Եւ վն այսորիկ (ասէ դեւն) հրամայեաց ձեզ ԱԾ ոչ ուտել անտի, ո͞պ զի մի՛ գիտիցէք զայնքան, զորքան գիտէ նա։ Իսկ Եւայ քարշեցեալ ըղձիւ բարձրանալոյ եւ գոլոյ աւելի քան զայն, որ էրն, եկեր ինքն, եւ ետ ուտել եւս Ադամայ։ *Քննեաց, եկեր, եւ անհնազանդ եղեւ, եւ 'ի դրախտէն արտաքսեցաւ ‖ (ասէ Կասիանոս)։ Մեռան իսկոյն մահուամբ հոգեւորաւ, մեղան մահացու մեղօք․ եւ յետոյ մեռան եւս մարմնաւոր մահուամբ։ Եւ ո͞պ դիւին բարւոք պատահեցաւ այնու ճանապարհաւ, եւ յաջողա͞ ըստ կամաց իւրոց պարտեաց զնա, նովիմբ ճանապարհաւ յարձակի հանապազ եւ 'ի վ͞ր մեր։ Ուստի ս͞բ առաքեալն Պօղոս ազդարարէ, եւ զեկուցանէ մեզ զայսմանէ ասելով, 2. Կորնթ. 11. 3. Բայց երկնչիմ, գուցէ որպէս օձն խաբեաց զԵւայ խորամանկութեան իւրով, ապականեսցին միտք ձեր 'ի միամտութենէն, որ 'ի Քս։ Զգո՛յշ լեր յօձէն, եւ մի՛ զբուռն հարկաներ զգլխոյն, զի մի՛ խածանիցէ զքեզ, այլ զբուռն հար զայնմանէ գլխոյ, որ հրամայի քեզ, կատարելով զայն առանց քննելոյ, եւ ներխուժելոյ զընդէ՛րն, եւ զվասն զի՛յն․ եւ այսու կերպիւ հնազանդութիւն եղիցի քեզ գաւազան եւ կանոն այնր իրին, զոր առնելոց ես։ Ասէ ս͞րն Բեռնարդոս, թէ մանաւանդ 'ի սկզբանն է հարկաւոր սովորել զհնազանդութի այսու կերպիւ կուրօրէն, եւ առանց ներխուժման իմիք․ **Նորավարժն իմաստուն եւ խոհեմ, անկարելի է, թէ երկարա͞պ կարիցէ կալ 'ի խցի, կամ մնալ 'ի ժողովում ‖ Այսինքն է (բարոյականաբար խօսելով․

զով,) անկարելի է, թէ կարիցէ երկարաբար կալ 'ի կրօնի նա, որ իսկոյն կամի 'ի սկզբան լինել խոնարհագոյն, և գիտել զպատճառն ամենից իրաց : Ապա զինչ է տանելոյ, կամ զիա՛րդ կառավարելոյ է զինքն . ' Յիմար լիցի, զի լիցէ իմաստուն : Ոչ լինելն ընտրող յայսմիկ, լիցի ա̃մ ընտրողութիւն իւր . և ոչ լինելն իմաստուն յայսմիկ մասին, լիցէ իւր ա̃մ իմաստութի̃ն ‖ : Ոչ ունիլն զընտրողութի̃ն 'ի յիրս հնազանդութե̃, պարտի լինել իւր ա̃մ ընտրողութի̃ն : զի ընտրելն և խորհիլն զպատճառս, վս̃ էր, և ո՞ր աղագաւ, է յատուկ գործ վեհագունին . իսկ բարւոյ հպատակին ո՛չ այլ ինչ պատկանի, եթէ ոչ ընդգրկել բազում խոնարհութ̃բ, պարզամտութ̃բ, և յուսացողութ̃բ զայն, զոր վեհագոյնն հրամայէ նմա . որպէս նոյն սր̃բ Բեռնարդոս ասէ, ' Ընտրելն է վեհագունից, և հնազանդելն հպատակաց ‖ :

Փառաւոր մ̃ր առաքեալն Պօղոս բարւոք նկատէ առ այս առաջարկութիւս զկոյր հնազանդութի̃ն նահապետին Աբրահամու 'ի զոհելն զորդին իւր Իսահակ : Ա̃ծ խոստացեալ էր նմա բազմացուցանել զծնունդս նր̃ ո̃պ զաստեղս երկնից, և իբրև զաւազ ծովու, և առնել զնա հայր բազմաց ազգաց, և ո՛չ ունէր զայլ որդի բաց յԻսահակայ, յորում պարտ էր լնանիլ խոստումն այս, և ոչ յուսայր ունիլ զայլ որդիս . զի արդէն ինքն էր ծեր, նաև կինն իւր : Եւ եթէ նաև կարիցէր ունիլ զայլ որդիս, սակայն Ա̃ծ խոստացեալ էր բազմացուցանել Իսահակաւ . Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ : Ծննդ . 21 . 12 : Եւ այսու ա̃մի հրամայեաց նմա Ա̃ծ, զի զոհիցէր զայն միածինն, և զայնքան տենչացեալն զԻսահակ . սակայն Աբրահամ ո՛չ երկբայեցաւ 'ի հնազանդելն . նաև ո՛չ առ չնմանումն խոստման արարեցելոյ նմա յԱ̃յ, այլ կուրակերպ հնազանդութ̃բ սկսաւ կատարել զայն, զոր Ա̃ծ հրամայէր նմա, և էառ զսուրն առ՚ի զենուլ, Որ անյուսն յուսով հաւատաց լինել հայր ազգաց բազմաց: Հռոմ. 4. 18: Ոչ ընդդէմ յուսոյ բնականի, ունեցաւ զայս: Յոյսն գերբնական յաղթեաց բնականին անյուսութեան, որովհետև տեսանէր, զի զոհելով զնա՝ մնայր առանց որդւոյ. բայց սակայն ոչ երկբայեցաւ զխոստմանէն Այ. այլ էր հաւաստի, թէ լցուցանելոց էր Ած զխոստումն՝ յարուցանելով յետոյ զորդին, և կամ այլով կերպիւ, զոր ինքն ոչ ըմբռնէր, և ոչ գիտէր: Ո՛չ երկմտեաց անհաւատութեամբ, ասէ փառաւոր Սր առաքեալն, Հռոմ. 4. 20: Այլ զօրացաւ հաւատով, ետ փառս Այ: Եւ հաստատեցաւ ՚ի միտս իւր, թէ որ խոստացաւն, կարօղ է առնել: Եւ այնքան հաճեցաւ Ած ընդ հնազանդութիւն այս, մինչ զի իսկոյն խոստացաւ, թէ ՚ի նմանէ ծնանելոց էր Քս, և թէ այնու կերպիւ բազմանալոց էր զաւակն նր, որպէս աստեղս երկնից. Յանձն իմ երդուայ ասէ Տր. փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ, և ոչ խնայեցեր յորդւոյ քո սիրելւոյ վասն իմ. այո, օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ. և իբրև զաւազ առ ափն ծովու. և ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց: Եւ օրհնեսցին ՚ի զաւակի քում ամ ազգք երկրի, փոխանակ զի լուար ձայնի իմում: Ծննդոց. 22. 16: Ասէ ուրեմն Հերոնիմոս, տես թէ որքան հաճի Ած ընդ կոյր հնազանդութիւն Աբրահամու. որովհետև այսպէս վարձատրէ և հատուցանէ. ‘ Որ ՚ի միածինն ոչ խնայէ ՚ի յերկրի, զաստեղս փոխանակ որդւոց թուել հրամայի ՚ի յերկինս ||: Ուստի այնքան մեծ համարեցան հնագոյն Հարքն այնպիսի զկոյր հնազանդութիւն զայս, առ՚ի կրթել սովաւ, և ՚ի գործածել զայս, մինչ զի ունիմք զգրեանս լի օրինակօք սորա, որոց բազումք հաստատեցան հրաշիւք, որպէս զի ծանիցուք, թէ որքան հաճի Այ՟ ը՟ այսպիսի կերպ հնազանդութեան ։

Հայրն մեր հետևելով վարդապետութեանս այսմիկ, որ է հասարակ մեզ, բացայայտէ զայս երկու նմանութ՟ս յոյժ բնականաւ, և օգտակարաւ, և ասէ. իւրաքանչիւրոք այնոցիկ որք կեան ընդ հնազանդութ՟բ, համարեսցի, թէ առաջնորդի յածայնոյ նախախնամութենէ 'ի ձեռն վերակացուին, ոպ՟ զմարմին մի մեռեալ. որ թոյլ տայ տանիլ ու՟ ուրեք, և շօշափիլ յամ՟է կամեցողէ ։ Այսու նմանութ՟բ վարիւր երանելին մեր Ֆրանչիսկոս, և վերակրկնէր բազումանգամ կրօնաւորաց իւրոց ասելով ։ Արդէն մեռեալ եմք աշխարհի և կեայն Նր՟ ։ «Քանզի մեռայք, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քսի՟, յԱծ՟» ։ Կողոս. 3. 3 ։ Այս կրօնաւոր գոլս, է գոլ մեռեալ աշխարհի. և վասն այսորիկ մուտն 'ի կրօն կոչի մահ քաղաքական ։ Կառավարեսցուք զմեզ ուրեմն որպէս զմեռեալս ։ Նշան մեռեալ մարդոյ է ո՛չ տեսանել, ո՛չ պատասխանել, ո՛չ զգալ, և ո՛չ տրտնջել ։ Մի՛ ունիցիմք ուրեմն զաչս տեսանելոյ և դատելոյ զիրս վերակացուին, մի՛ պատասխանեսցուք այնմիկ, զոր հրամայէ հնազանդութիւնն. մի՛ դանդաղեսցուք զայնու, որ մեզ հրամայի ը՟դէմ հաճոյից մերոց ։ Վասն մարմնոյ մեռելոյ խնդրի անարգագոյն իրն տան առ 'ի զգեցուցանել. և առ 'ի թաղել՝ խնդրի պատատակալ հնագոյն, և պատառատուն. այսպ՟ կրօնաւորն պարտի կամիլ զզգեստ հնագոյն, և անարգագոյն ։ Իւրաքանչիւրոք պարտի հաւատալ, թէ վատթար իրքն տան լինելոց են վասն իւր, եթէ զգեստ լիցէ, կամ կերակուր, կամ բնակարան, նաև այլ իմ իր. և եթէ ոչ ունի զայս, այլ մանաւանդ տհաճի, ո՛չ է մեռեալ, և ոչ մահացուցեալ ։

Դարձեալ ասէ Հայրն մեր, թէ պարտիմք թողուլ զմեզ առաջնորդիլ և կառավարիլ յածայնոյ

այնոյ նախատեսութե̃ 'ի ձեռն վեհագունին, որպ̃ ցուպ մի 'ի ձեռին ծեր մարդոյ միոյ, որ յո՛ և ուր կամիցի 'ի գործ ածել զայն, այնպէս վարի ։ Զի որպ̃ ցուպն երթայ, յո՛ և տանիցի, և ուր դնիցի, անդ կայ, և ո՛չ շարժի ինքնին, եթէ ոչ 'ի նմանէ . որ զնա ուղղ, . այսպէս և կրօնաւորն ոչ պարտի ունել զշարժումն յատուկ . այլ պարտի թողուլ տալ ուղղել և կառավարել 'ի վեհագունէն, և յո՛ և առաջնորդի, անդ պարտի գնալ, և ուրե դնիցեն, անդ կացուցանելոց է զնա, թէ 'ի տղմի իցէ, կամ 'ի ցամաքի, թէ 'ի բարձունս իցէ, կամ 'ի խոնարհ տեղի առանց ը̃դդիմութե̃ և առանց հակառակութե̃ իմիք ։ Եթէ ցուպն այն՝ որ պարտի տալ քեզ զօգնութի̃ և զդիւրութի̃ առ 'ի քայլել, ը̃դդիմանայցէր քեզ, և ո՛չ կամիցէր դադարել անդ, ուր դու կամիս, այլ փոխանակ օգնելոյ քեզ . տայցէր քեզ զարգելումն և զվրդովումն, որ դարև դու 'ի բաց ընկենուցուիր զայն ։ Այսպէս ևս յորժամ վեհագոյնն կամի 'ի գործ ածել զքեզ, և դնել յայս ինչ, կամ յայն ինչ տեղւոջ, և գործոջ, և դու ը̃դդիմանաս ձեռացն վեհագունին, և ունիս զշարժումն հակառակ հրամանին, և կամաց նորա, կամ դատողութե̃, փոխանակ օգնելոյ նմա, աղմկեսցես զնա, և եղիցիս ծանրութի̃ մեծաւորաց . և տայցես նշ̃ զառիթ ; զի առ 'ի թեթեւանալ 'ի քէն, արտաքսիցեն զքեզ, և ընկենուցուն յայլ ուրեք, և զվիճակ արկանելով 'ի վր̃ քո շրջեցուսցեն զքեզ տանէ 'ի տուն, զի ո՛չ ես դու բարի ցուպ, և ոչ կարեն 'ի գործածել զքեզ, և վարել ըստ հաճոյից իւրեանց ։ Անուանի ցուպն 'ի ձեռս՝ նաև վասն զբօսանաց, և սփոփման, և վս̃ 'ի գործ ածելոյ զայն ըստ հաճոյից, և շարժելոյ զնա ըստ կամաց ։ Ն. յապ̃ լինելոց է և կրօնաւորն 'ի ձեռս վեհագունին որպ̃ հաճոյական իր մի, որում

կարէ

կարիցէ վեհագոյնն հրամայել, և առնել ըզ նմանէ, զոր ինչ և կամի, և պարծիլ ը̄ հարիւրապետին · Ունիմ ընդ ինեւ զինուորս, ասեմ սմա, Երթ, և Երթայ · և այլում, Եկ, և գայ · և ծառայի իմում, Արա զայս, և առնէ · Մատթէի 8· 9։

Սր̄ն Բարսեղ բերէ զայլ նմանութ̄ի յաղագս այսորիկ, և ասէ։ Զի ոպ̄ արհեստագործն, որ կերտէ, կամ առնէ զիր իմ̄, կամ զգործ ինչ, 'ի գործ ածէ զգործիսն արհեստին իւրոյ ըստ կամաց իւրոց, և ոչ եղև երբէք այնպիսի գործի, որ ոչ հնազանդեցիւր յոյժ դիւրաբար արհեստագործին, ոպ̄ զի 'ի գործածիցէր զայն ը̄ կամաց իւրոց։ Այսպ̄ և ես կրօնաւորն պարտի ջանալ լինել ոպ̄ գործի շահաւէտ 'ի կրօնի, ոպ̄ զի վեհագոյնն 'ի գործ ածիցէ զնա, ոպ̄ բարւոք թուիցի ինքեան և պատշաճաւոր վս̄ հոգևոր շինութե̄, և ոչ պարտի ընդդիմանալ նմա կերպիւ իւիք առ այն, զոր կամիցի առնել զնմանէ։ Եւ ևս զի ոպ̄ գործին ոչ ընտրէ զայն, յորում պարտի ինքն 'ի գործածիլ, այսպէս և ոչ կրօնաւորն պարտի ընտրել · այլ պարտի թողուլ զինքն 'ի դատողութե̄ արհեստագործին, որ է վեհագոյնն։ Ասէ և ևս Սր̄ն Բարսեղ, զի որպէս գործին ոչ շարժի, մինչ բացակայ է արհեստագործն, զի ինքնին ոչ կարէ շարժիլ, այլ միայն ունի զշարժումն զայն, զոր տայ նմա արհեստագործն · այսպէս և կրօնաւորն ոչ պարտի ձեռնամուխ լինել զիմէքէ, և ոչ առնել զգործառնութի̄ իմ̄ առանց դատողութե̄, և հրամանի վեհագունին։ Եւ ոչ 'ի վր̄ գուզնաքեայ իրի կարէ ունիլ զիշխողութի, նաև ոչ 'ի վր̄ կէտի միոյ ժամանակի։ Այլ միշտ և յա̄մ իրս պարտի շարժիլ, և կառավարիլ 'ի մեծաւորէն։ Այս է կերպ, և օրինակ հնազանդութե̄, զոր 'ի կրօնի եմք ունելոց։

Զմտաւ ածեմ ես, զի հայր ոմն յոյժ հոգեւոր, որ, եղեալ էր երկար ժամանակաւ վեհագոյն յընկերութե մերում, ասէր, թէ կացի ես ՚ի նմին զամս հնգետասան առանց ճանաչելոյ, թէ ախտոյ լիցէր տալ զպատճառ իրի ուրուք շուրջ զհնազանդութ՛. և թուի անել զանիրաւութի հպատակն, ՚ի տալն ըզպատճառ այնր իրին, որ հրամայիւր, զի շըրջէին այնքանեաւ պարզամտութ՛, և համակերպմամբ, մինչզի ոչ ոք էր՝ որ տրամաբանէցէր ՚ի վր իրին, որ հրամայիւր ՚ի վեհագունէն, այլ ՚ի լսելն, թէ էր հնազանդութե, ենթադրէին զդատողութիս իւրեանց ասելով· իրս այս է նորագոյն, ուրեմն է բարեգոյն. նա պարտի գիտել զվէրն: Զայս պարտիմք ջանալ յառաջացուցանել, և որ առաւել հինաւուրց է, այսու պարտի նշանել և առաւել հարկաւոր մեզ՝ այս թուիլ. և զայլ ոչինչ հոգալ: Զի առ ՚ի ենթադատել և քննել զհնազանդութիս, և զհրամանս՝ վեհագոյնքն ունին զիշխանութ՛:

Ընթեռնումք զհօրէն մերմէ երանելւոյն Իգնատիոսէ, թէ գոլով սեռական վեհագոյն ընկերութե մերոյ, ասաց բազում անգամ, զի եթէ պապն հրամայիցէր ինձ ՚ի նաւահանգստեան ոստեայ, որ է մերձ հռօմայ, մտանել ՚ի նախկին նաւակն, զոր գտանիցէի առ ՚ի նաւել, թէպէտ նաւակն այն լիցէր առանց առագաստի, առանց ղեկի, առանց թիոց, և առանց այլոց իրաց հարկաւորաց վր նաւելոյ, և ապրելոյ, պատրաստ էի անել զայն, և հնազանդիլ ոչ միայն խաղաղութբ սրտի, այլև ուրախութբ և հաճութբ հոգւոյ իմոյ: Զայս լուեալ ոմն մարդ մեծայարգ, սկսաւ զարմանալ, և ասել ցնա, թէ ո՞չ է այդ խոհեմութի: Առ որ նա պատասխանեալ ասէ, տէր՝ ոչ պահանջի այնքան խոհեմութի ՚ի նմանէ որ հնազանդի, և կատարէ, որքան պահանջի 'ի նմանէ, որ հրամայէ, և պատուիրէ:

ԳԼՈՒԽ. Է:

Յաղագս հնազանդութեան, զոր պարտիմք ունել 'ի մեր հոգևորս:

ՈՉ միայն պարտիմք ենթադրել, և մերանչանել զդատողութիւն և զթուեցելոյն մեր 'ի յիրս, որք թուէին համանկերպ մարմնոյ և արեան մերում, այլև յայնս իրս՝ որք են ներհակք, և ը̄ բնութեան իւրեանց հոգևորք, և սուրբք: Մի ոք խորհեսցի, թէ յայսմիկ ունիցի զհրաման անմեղադիր լինելոյ, եթէ հեռանայցէ 'ի կամաց, և 'ի դատողութենէ վեհագունին: Այլ մանաւանդ գիտասցէ ամ̄ ոք, թէ անդ է առաւել հարկաւոր հնազանդութիւն այս. քանզի որքան իրքն հոգևորք են բարձրագոյնք, այնքան մեծագոյն է վտանգն, և անկումն, եթէ ոչ ունիցիմք ընդ մեզ զառաջնորդ բարի: Եւ է այնքան ճշմարիտ այս, մինչ զի ասէ Կասիանոս, թէ ոչ այլով մոլութ̄ այնքան դևն քարշէ զմիայնակեացն 'ի գահավիժումն, և 'ի կործանումն, որքան յորդորելով զնա, զի քամահեսցէ զխրատն ծերոց, և հաւատայցէ բնական դատողութեան, եղերման, և գիտութեան իւրում: Կասիանոս, և սուրբ Յովհաննէս կլիմաքեան բերեն զբազում օրինակս միայնակեցաց, որք էին յոյժ հոգևորք, և յոյժ աղօթասէրք, նաև էին առուրբք և ծերք, որք հաւատալով բնական դատողութեան իւրեանց, և կամելով կառավարել, և ուղղել նովաւ, մեծապէս պատրեցան 'ի գլխէն: Հաւանեցոյց դևն զծեր ոմն զոհել զորդին իւր, որ կայր ընդ նմա 'ի վանսն, և եւս հաւատալ նմա, թէ զայն առնելով եղանիցի իբր երկրորդ Աբրահամ: Եւ զայն կատարիցէր իրաւի , եթէ տղայն տեսանելով զնա սրել զդանակն , և պատրաստել զպարան վզ̃ կապելոյ զնա , ոչ փախիցէր : Յորդորեաց ևս զայլ ոմն գահավիժել զինքն , և հաւատացոյց , թէ եղանիւր մարտիրոս , և խակոյն վերանայցէր 'ի յերկինս : Պատմէ կասիանոս զհերոնէս միայնակեցէ , թէ էր մարդ այնքան ժուժկալ , մինչզի և 'ի հանդիսաւոր տօնի յարութեն Քրի , յորժամ այլք աբեղայք ժողովէին յեկեղեցին , և սփռէին զինքեանս ուտելով զեր իմն աւելի , նա ոչ կամէր ելանել 'ի խցէ իւրմէ , ոչ բեկէր զժուժկալութն իւր , և ոչ յաւելոյր ժուժկալութե իւրում գոնեայ պակասիկ մի բանջար · զի կերակուր իւր էր միշտ հաց և ջուր , և այն ևս չափով : 'Ի յայսմիկ միայնակեցի այսու ամ̃ի ծնաւ հպարտութն և գոռոզութն այնքան մեծագոյն , մինչ զի դեռ հաւանեցոյց նմա , թէ էր այնքան մեծ սբ̃ , մինչ զի վասն նորա ոչ գոյր իր իմն կասկածելի 'ի կեանս յայս , և եթէ անկանիցիւր 'ի հոր մի , ոչ պատահիցիւր նմա վնաս ինչ , այլ հրեշտակք ընկալնուցուին զնա 'ի վր̃ ձեռաց իւրեանց , այն̃ զի մի պատահիցիւր նմա չար ինչ : Եւ այսպ̃ 'ի գիշերի միում ընկէց զինքն 'ի խորագոյն հոր մի , առ 'ի փորձ առնուլ զզօրութե իւրմէ , և զմեծագունից արդեանց իւրոց · բայց վիրաւորեցեալ չարաչար , մեռաւ յերրորդում աւուր : Լուեալ աբեղայքն զթնդիւնն , ընթացան առ հորն , և մեծաւ աշխատանօք հանին զնա անտի կիսամահ , բայց սակայն , թէպէտ տեսանէր զվնասն աչօք իւրովք , զոր առեալ էր , և ամենեքեան յորդորէին զնա , զի զղջանայցէր , ոչ եղև հնար , զի հաւատայցէր , թէ պատրանք դիւական էր այն : Ուստի վճարեաց զկեանս իւր թշուառաբար : Որպէս զի այսու ծանիցուք զմեծ վտանգն' որ գոյ 'ի յուսալն մարդոյ 'ի բնական դատողութե՟ իւր , և 'ի ոչ համակերպելն զինքն այլոց , և 'ի ոչ ենթադրելն զինքն ն՟ց ։ Թէպէտ յոյժ ծեր իցէ, և հոգևոր ։ Ուստի ասաց մեծաւ խրատամբ ս՟րբ ոմն , թէ որ ոք հաւատայ ինքեան , ոչ ունի զպխոյս գլխոյն , զի փորձեսցէ զնա , զի ինքն է դև վանն իւր ։

Ասէ ս՟րբ Ոսկեբերանն , թէ նա՝ որ ապաւինի 'ի դատողութե՟ իւր , թէպէտ իցէ յոյժ հոգևոր , կայ 'ի մեծի վտանգի մոլորելոյ առաւել քան զնա , որ է նորավարժ , և ունի առաջնորդ և կառավար զայլ ոք ։ Եւ համաբաղդատէ զառաջինն նաւապետի միոյ , որ յուսալով 'ի յարհեստն իւր , կամի նաւել 'ի խորս ծովու այնպիսի նաւաւ , որ ոչ ունի ղեկ , և ոչ զառագաստ ․ և զերկրորդն նմանեցուցանէ առն միում , որ ոչ գիտելով զարհեստ նաւավարութե՟ , յանձնէ զինքն նաւավարի միում իմաստնոյ , որոյ նաւն է կարգաւորեցեալ յոյժ բարեպէս ։

Մի ոք խաբեսցի ուրեմն , և կարծիցէ , թէ 'ի յիւրս հոգևորս , որ գոն , 'ի պահելն , յաղօթելն , և 'ի յայլս ապաշխարանս և 'ի ճգնութիւս կարիցէ 'ի բաց կալ 'ի հնազանդութե՟ ․ և կառավարել բնականաւ դատողութ՟բ իւրով ․ քանզի ո՟պ բարուք ծանուցանէ Կասիանոս , թէ ո՟պ անհնազանդութի՟ է կալն դատարկ և ծոյլ ընդդէմ կամաց վեհագունին , այսպ՟ ևս անհնազանդութի՟ է աշխատիլն ըստ կամաց իւրոց ընդդէմ կամաց վեհագունին ։ Եւ ս՟րբն Բարսեղ ասէ ․ * Զայս հաստատաբար գիտեմ , զի մի ամենևին առնիցես զիր իմն առանց կամացն ն՟ր , զի զորինչ առանց գիտութե՟ ն՟ր առնես , գողութի՟ և սրբապղծութի՟ է այն , և քեզ մահս ․ զի թէպէտ դու զայն՝ զոր առնես , բարի կարծես , սակայն զոչինչ օգուտ անտի ունիցես ։ Քանզի եթէ բարի է այն , զոր առնես , զմ՟ մինն աւանդգաղտ, քան թէ յայտնի կամիս առնել ‖ Այնքան ցանկայ մեծամեծորն բարեաց և օգտի քոյ, որքան դու ինքն: Ասա նմա զայդ, և նա տացէ քեզ զհրաման առնել, և այսպէս արասցես հանդերձ օրհնութեամբ և պտղով: Իսկ ոչ առնելդ այդ ոչ միայն ոչ օգտէ քեզ, այլ և առաւել վնասեսցէ: Զգոյշ լեր, զի մի՛ ասիցի քեզ այն, զոր Եսայի ասէ. Ա. 13.

Ս՛է նա մատուցանէր զգուշաբար ընթերցանոյն:

Սրբն Գրիգորիոս և սրբն Բեռնարդոս ասեն, մեծաւորն ոչ է հրամայելոց քեզ զեր ինչ վատթար. և յայնմ իրի, որ լիցէ մեղք, յայտ է, թէ հպատակին ոչ պարտի հնազանդիլ: Բայց յորժամ հնազանդութեան հրամայէ քեզ ոչ առնել զեր ինչ բարի, ոչ պարտիս առնել զայն իրն բարի: Ո՛չ էր չար, այլ էր բարի ծառն գիտութեան, զոր Աստուած արգել նախահարցն մերոց. բայց վասն զի այնու հնազանդութեամբ արդիւնաւորիցեն առաւել, և ճանաչիցեն զհպատակութիւն և զերախտիսն՝ յառաջագոյն որոց էին պարտապանք ստեղծողին և Տեառն իւրեանց, կամեցաւ Աստուած արգելուլ զնոսա, և հրամայել, զի մի՛ ուտիցեն զայն, զոր պատեհաւոր և արժանաւոր կարէին ուտել, եթէ ոչ լինէր արգելեալ: Արդ՝ այսպէս և վեհագոյնքն արգելուն երբեմն զոմանս իրս, որք ըստ բնութեան իւրեանց են բարիք. և զայս առնեն կամ վասն այսորիկ, զի ոչ վայելէ հպատակին վասն այնր ժամանակի, կամ առ ի փորձել զառաքինութիւն և զհնազանդութիւն նոցա:

Նոյն:

Սրբն Բարսեղ առաւելցէ այսմիկ զայլ իր մի յաւելուլ, և ասէ, թէ ճշմարիտ և կատարեալ հնազանդութիւն ոչ ճանաչի այնքան 'ի յոչ առնելն զչար, որքան ճանաչի 'ի թողուլն առնել զեր ինչ, որ ըստ բնութեան իւրում է բարի և ոչ, յորժամ հրամայի ոչ առնել զայն: Եւ պատճառ սորին է, զի չարն

Թէև ոչ արգելանիցիւր 'ի հնազանդութենէ, թողլոց էր զայն հպատակն, զի է չար ։ Բայց այն՝ որ ըստ բնութեան իւրում է բարի և ո̃ր, թողուլ զայն վասն այսորիկ միայն, զի հրամայեցաւ թողուլ ․ և այսմ փայլեսցի առաւել առաքինութիւն հնազանդութեան ․ քանզի եթէ ոչ լինէր հնազանդութիւն միջոց, ո՛չ թողուցուր բարի թողուլն զբարին ։ Իսկ հակադարձաբար, յորժամ ոք ոչ համակերպի, և ոչ ստորադրէ զինքն 'ի յիրս հոգևորս, որք ըստ բնութեան իւրեանց բարիք են և ո̃ղք, ցուցանէ առաւել զկամս իւր, և զխոտոր դատողութիւն իւրոյ ։ Քանզի 'ի յայսպիսի իրս գոյ բերկրութիւն և հեշտութիւն ինձ, որ նուաղեցուցանէ զոք 'ի լռակեցութեան, 'ի պարկեշտութեան, 'ի բարեխառնութեան, կամ 'ի յայլս իրս պատկանեալս առ հնազանդութիւն ․ բայց 'ի յայսպիսիս որք են ընդդէմ մարմնոյ մերում, և հեշտութեան ո՛չ գոյ այլ բերկրութիւն, եթէ ոչ առնել ըստ յատուկ կամս, և հետևիլ յատկի դատողութեան իւրում, որ է անհնազանդութիւն և խստութիւն կամաց ։ Աստի պատահի, զի 'ի յայնս իրս, յորս ոք կարծէ հաճոյանալ Աստուծոյ, առնելով զգործս աւելորդս, և կատարելութեան, ցուցանէ զանկատարութիւն իւր, և առաւել անհաճոյանայ Աստուծոյ, և վեհագունից ։ Աստուած ազատեսցէ զքեզ 'ի ձիոյ խստապարանոցէ, որ ոչ հնազանդելով դանդանաւանդի, առնէ զորինչ կամի, և յանկարծակի կամ հարկանէ զքեզ յանկիւն մի որմոյ, և կամ դահավէժ առնէ զքեզ ընդ ինքեան ։ Պարտի բարի ձին գոլ քաղցրաբարոյ, և կակղաբերան, որ բարեաւ ընդունիցի զսանձ և զդանդանաւանդն ․ և իցէ հլու 'ի կառավարելն և 'ի ուղղելն ։ Այսպէս և կրօնաւորն պարտի գոլ քաղցրաբարոյ և կակուղ դատողութեամբ, որ կալնուցու բարւոք զսանձն հնազանդութեան, և թոյլ տայցէ կառավարել, և առաջնորդել 'ի յայս և 'ի և 'ի յայն կողմն ։ 'Ի յեկեղեցական պատմութե ճառի զայնմանէ մեծագունէ ծառայէն ԱՅ, որ Սիմէոն սիւնակեաց կոչիւր, որ և կայր և ապաշխարէր 'ի գագաթան բարձրագունի սեան միոյ, որոյ բարձրութին էր քառասուն կանգուն, ուր կրէր զմեծագոյն ցուրտ 'ի ձմեռան, և զմեծագոյն տապ 'ի յամարան. և էր այնքան մեծ ապաշխարութե և պահեցողութի նր, մինչ զի ոմանք երկմտէին, եթէ նա իցէր մարդ, զի ոչ թուէր թէ մարմինն մարդկային կարիցէր առնել. կամ կրել զայն, զոր նա կրէր և առնէր. և մանաւանդ տեսանելով, թէ յամենայն տարւոջ զքառասնորդական պահսն պահէր ոչ ուտելով զհաց՝ և ոչ ըմպելով զջուր ։ Արդ՝ զայս տեսեալ սր հարքն անապատի. արարին զժողով յաղագս այսորիկ, թէ զինչ արդեօք պարտէին առնել. և խորհեցան առաքել առ նա զպատգամաւոր մի այսու բանիւ ։ Ո՛րպիսի կերպ կենաց է քոյդ կերպ՝ այդքան նորագիւտ և անսովոր, որով դու վարիս ։ Զինչ կամիս առնել, զի դու թողեր զվարս 'ի գործ ածեցելս 'ի սրբոց, և առեր զվարս այդքան օտարական, և նորագիւտ. և այդքան անսովոր ։ Հարքն արարին զժողով, և հրամայեցին քեզ, զի դու իջանիցես իսկոյն 'ի սեանէ յայդմանէ, և հետեւիցես հասարակ ճանապարհին, որում հետեւին այլք միայնակեացք, և թողուցուս զնորութիւնդ զայդ ։ Արդ՝ զկնի պատուիրելոյն զայս պատգամաւորին սր հարքն, զեկուցին նմա համանգամայն, և ասացին զայս, եթէ Սիմէոն լսելով զպատգամս զայս, հնազանդիցի, և իսկոյն յօժարաբար և ուրախութ կամիցի իջանել 'ի սեանէ անտի, ասիցէ նմա, թէ հրամայեցին հարքն մնալ անդ, և յարատեւել յայնմիկ նորագոյն, և խստագոյն կացութե. քանզի հնազանդութի իւր եղանիցի բաւական վկայութի, ութ, թէ լինէր այն ճանապարհ ԱՅ ։ Բայց եթէ ընդդիմանալով ոչ կամիցէր իջանել 'ի սեանէ անտի, և ոչ հնազանդէր, յայնժամ իջուցանիցէր զնա բռնութ̃ ։ Արդ՝ գնացեալ պատգամաւորն առ սի̃ն այսու պատգամաւ, և հազիւ էր վճարեալ զպատգամն զայն, զոր առեալ էր 'ի հարանց անտի, նա հաւանեցաւ իջանել իսկոյն, և մինչ եդ զոտն իւր իջանել, և հնազանդել, յայնժամ պատգամաւորն զեկոյց նմա զերկրորդ պատգամն ասելով ցնա . * Զօրասցիր և քաջա̄ գործեա ըզգործն քո, զի յԱՅ է կացութիւն քո կացուցեալ ‖ ։ Արդ՝ աստ երկու իրք են բարւոք նկատելիք ։ 'ի միոյ կողմանէ մեծ հնազանդութիւն սի̃ն, և համակերպու̃ն դատողութե̃ իւրոյ 'ի յիրս այնքան բարիս և սր̃ս, զորս նա հաճոյ յԱՅ ։ Իսկ 'ի միւսոյ կողմանէ, թէ որքան մեծ համարէին սր̃ հարքն այնք զհնազանդութիւն, և զհամակերպութիւն, որովհետև համարեցան զհնազանդութիւն բաւական նշան ենթադատելոյ, թէ լինէր այն բան ԱՅ ։ Իսկ եթէ ոչ հնազանդիցէր, և ոչ համակերպիցէր զինքն կամաց նց̃ , նշան բաւական համարէին ոչ գոլոյ բարի ։

Յոյժ բարի է նշանս այս, զոր հաստատակաբար խոստովանահարք, և հոգևոր հարք 'ի գործ ածեն 'ի բազում իրս առ'ի ճանաչել, եթէ շարժին 'ի բարւոյ ոգւոյ, թէ ոչ ։ Խոստովանորդին է յոյժ ըղձունակ հաղորդելոյ յաճախապէս, և խոստովանահայրն ասէ նմա, զի մի հաղորդեսցի այնքան ստէպ ։ Ցանկայ ապաշխարելոյ, պահելոյ, խարազանաբաղխ լինելոյ, և տանելոյ զկամար երկաթեայ . այլ ոք կամի ննջել 'ի վր̃ գետնոյ, և այլ ոք կամի ննջել սակաւ . և առնել զայլս նմանս սոցին ։ Արդ՝ իրաւի յոյժ բարի իմն է և գովելի ցանկութիւն առաւել ապաշխարելոյ, և մահացուցանելոյ զինքն ։ Բայց 'ի մէջ երկուց ծայրից անկասկածելին է այն, որ յօժարի մանաւանդ ընդդէմ ինքեան, քան թէ վ՟ն կամաց իւրոց · զի ՚ի բնութէ ինքնասիրութե պարտ է երկնչել · և համարել զնա կասկածելի : Բայց այն որ բարեգոյն է ՚ի համայնս իւր յայտնել, և առանց կասկածանաց, է այս՝ զի անձն հաստատուն տացէ զհամար վեհագունին, կամ խոստովանահօրն զամենից զայնցանէ, զորս առնէ, և զհամայնից զայնցանէ, որոց ցանկայ · և եթէ յօժարիցի առ այն, զոր նա վճռեսցէ · այսու առաւել հաճոյանայցէ Այ, և առաւել արդիւնաւորեսցի : Եւ ծանիր զա՟ծաբանութիս զայս, որ է յոյժ բարի, և յոյժ հաւաստի : Եթէ ոք ունի զգործունեայ ցանկութիւն առնելոյ զապաշխարութի ինչ, կամ զմահացուցումն, և զայս ծանուցանէ վեհագունին · և վեհագոյնն հրամայէ նմա ոչ առնել զգործս այնպիսիս, և նա հնազանդի նմա, և ոչ առնէ, յայնժամ ոչ միայն ոչ կորուսանէ զարդիւնս, և զշահն այնց գործոց, այլ մանաւանդ աճեցուցանէ՝ և բազմապատկէ · զի ՚ի միոյ կողմանէ շահի զզօրութի, և զարդիւնս գործոյն այնպիսեաց, զորս ցանկայր առնել խոստովանորդին : և ՚ի միւսոյ կողմանէ շահի զզօրութի և զարդիւնս հնազանդութե, թողլով առնել զայն վ՟ն հնազանդութե : Եւ երբեմն եղիցի առաւել մեծագոյն արդիւնս այս, քան զառաջինն վ՟ն անձնուրացութե և համակերպութե կամաց և դատողութե իւրոյ, զի թողու զայն, որում այնքան ցանկայր առ ՚ի հնազանդել, և առնել զկամս Այ բացայայտեցեալ ՚ի ձեռն վեհագունին : Ա՟ծաբանութիս այս ուսուցեալ եղև սրբուհւոյն Պրիձիտայի ՚ի յերկնից : Սրբուհիս այս յոյժ ըղձաձայնէր մեծապէս ապաշխարել · և հայրն հոգևոր · որ զնա կառավարէր, երբեմ զմասն ինչ յապաշխարութե նր · զի այսմ վայելէր

առող

առողջութեան նորա մարմնաւորի ։ Իսկ նա թէպէտ հնազանդեցաւ, սակայն զգայր զդժուարութիւն երկնչելով՝ թէ հոգին իւր կրեսցէ վնաս իմն յառաքինութեան ։ Երեւեցաւ նմա ամենասուրբ կոյսն, և ասէ ցնա ։ Տե՛ս դուստր իմ․ եթէ երկու մարդիկ ցանկան պահել զօր մի վասն ջերմեռանդութեան իւրեանց ։ Եւ մին ՚ի նոցանէ, որ կայ յազատութեան իւրում, պահէ ըղձիւ, ընդունի զմի հատուցումն վասն այնր պահեցողութեան միայն ։ Բայց եթէ միւսն ոչ պահիցէ յաղագս գոլոյն իւրոյ ընդ հնազանդութեամբ, զի մեծաւորն հրամայեաց նմա ոչ պահել, ընդունի զհատուցումն երկպատիկ ։ Զմի հատուցումն առնու վասն ցանկութեանն պահելոյ յօժարաբար, և զմիւս ևս առնու վասն հնազանդելոյն, և ուրանալոյն զկամս իւր ։

Զայս ծանեան նաև հեթանոս փիլիսոփայքն, և մեծ համարեցան զայս կերպ հնազանդութեան և համակերպութեան ։ Պատմէ պլուտարքոս զաջեսիլաոսէ, որ էր հուչակաւոր զօրագլուխ լակեդեմոնացւոց, թէ կալով նա յոյժ զբաղեցեալ ՚ի պատերազմի ընդդէմ թշնամեաց հայրենեաց իւրոց, պատահեցին նմա իրքն յոյժ յաջողութեամբ, և յաղթութեամբ մեծաւ ։ Էհաս յաւուր միում պատգամ ՚ի ծերակուտէ իւրմէ, որ հրամայէր նմա, զի յետս դառնայցէր ․ և նա կալով ՚ի պատերազմի մեծաւ յաղթութեամբ ընդդէմ ոսոխաց, իսկոյն չոգաւ յետս ։ Եւ ասէ պլուտարքոս, թէ ստացաւ զմեծագոյն պատիւ, և զհամբաւ այսու առաւել քան զայն ամենայն, զոր ստացեալ էր յամենայն կեանս իւր ։

Բայց թողցուք ՚ի բաց զօրինակս օտարականս, որովհետև ունիմք զիսկականս ։ Ո՞ է նա, որ ոչ հիանայցէ ընդ մեծագոյն հնազանդութեան հօրն մերոյ Ֆրանչիսկոսի Քսավերացւոյ, զոր մեծաւ խրատուամբ այնքան մեծ համարէր երա նելի հայրն մեր տ՟րն Իգնատիոս, զի ունելով Ֆրանչիսկոս զատացումն և զդարձումն նորագոյն աշխարհի միոյ 'ի ձեռին իւրում, կոչելով զնա հայրն մեր 'ի հռօմ միայնով տառիւ այբեւբենի, զոր եդ 'ի վախճանի թղթոյն առընթեր ստորագրութե՟ իւրոյ, որ կամէր նշանակել, Ե՛կ ։ յոյժ բարւոք հաւատայր երանելի Հայրն մեր, թէ իսկոյն թողլոց էր զայնպիսի գեղեցկագոյն գործառութիւն, և գալոց դէպ 'ի հռօմ գրեթէ 'ի վերջնոյ մասանէ արեւելից․ և առանց երկբայութե՟ առնելոց էր զայն, եթէ նախքան զժամանելն թղթոյն առ նա՝ ոչ իցէր գնացեալ յերկինս առ 'ի վայելել զվարձն աշխատանաց իւրոց ։

ԳԼՈՒԽ․ Ը։

Հաստատի օրինակօք այն, որ ասացաւ ։

Ասի զաբբայ Նիստերիոնէ, թէ յայնմ աւուր, յորում եմուտ 'ի կրօնս, արար ը՟ն իւրեան ինքեան զայս դաշինս, թէ * Ես և էշն մի եմք ‖ ։ Այսուհետև կալոց եմ որպէս էշտանն, զի * էշն զորինչ բառնան նմա, զայն տանի առանց յապաղման ‖․ Զի զորինչ բառնան նմա, զայն կրէ առանց ասելոյ վ՟ճ էր, կամ որոյ աղագաւ․ և առանց ասելոյ՝ այս բազումէ, կամ սակաւ․ ոչ ընդդիմանայ իրի իմիք, և ոչ ունի զդատողութիւն ինչ ընդդէմ ումեք․ և թէպէտ բաղխիցի մահակաւ, ոչ զգայ զանարգանս, և ոչ հրաժարի յաշխատանաց, և գոլով կենդանի խոնարհ, և տրուպ, է յամենեցուն անարգեցեալ, և սակաւ յարդիւ շատանայ ։ Դարձեալ․ զի ոպ՟ անասունն ոչ երթայ՝ ուր ինքն կամի․ և ոչ հանգչի երբ կամի, և ոչ առնէ զայն՝ զոր կամի․ այլ 'ի յա՟մ իւս ամենեւին հնազանդի նմա, որ զնա ուղղէ․ Այսպէս պարտի առնել եւ կրօնաւորն ։

ւորն։ և ոպ՟ անասունն ո՛չ ուտէ վն՟ իւր, և ո՛չ հանգչի վն՟ իւր, այլ ամ՟ ինչ է առ՚ի առաւել ծառայել Տն՟ իւրում. այսպէս և կրօնաւորն ո՛չ պարտի ուտել վն՟ իւր, ո՛չ ննջել, և ո՛չ հանգչիլ վն՟ իւր, այլ զամ՟ ինչ պարտի առնել վասն առաւելաբար ծառայելոյ Տն՟ ԱԾ՟, և կրօնին։ Որպէս զանասուն համարեցայ առաջի քո, և ես յամ՟ ժամ ընդ քեզ եմ։ Ասէր մարգարէն Դաւիթ։ Սաղմ. 72. 18։ Արդ՝ լե՛ր և դու ոպ՟ զանասուն՚ի կրօնի, և այնուհետև մեծապ՟ զարգասցիս՚ի նմա։

Պատմէ Սիմէօն մետափրաստէսն, և յիշէ սուրիոս ՚ի վարս որբուհւոյն Մելանեայ հռոմայեցւոյ զօրինակ մի, զոր (ասէ) սովոր էր պատմել կրօնաւորուհեաց իւրոց այսպէս։ Գնաց երիտասարդ մի առ ծերագոյն անապատական հայր մի, և ասաց ցնա, թէ կամիմ կալ ընդ քեզ՝ լինելով աշակերտ քո։ Եւ ծերն կամելով ցուցանել նմա, թէ որպիսաբար պարտ էր կալ, եթէ կամէր գոլ կրօնաւոր, և աշակերտ իւր, հրամայեաց նմա հարուածել, ձաղել, և աքացել զարձան մի, որ կայր անդ։ Եւ երիտասարդն արար զայն. և զկնի առնելոյն զայն, եհարց ծերն ցնա, եթէ արձանն այն գանգատեալ էր, կամ ը՟դիմացեալ էր նմա։ Պատասխանեաց երիտասարդն, թէ ոչ։ Ասէ ցնա ծերն, դարձիր միւսանգամ ձաղեա՛ զնա ոպ՟ յառաջն, և բաց յայսմանէ ասա՛ և նմա զբազում անարգանս, և զբանս նախատանաց։ Եւ կատարեալ երիտասարդն զհրաման ծերոյն երկիցս, և երիցս, դարձեալ եհարց ցնա ծերն, եթէ արձանն այն խոժոռեալ էր, կամ վշտացեալ. պատասխանեաց երիտասարդն, թէ ոչ. զի գոլով արձան. ոչ լսէր, և ոչ խօսէր։ Յայնժամ ասաց ցնա ծերն. արդ՝ եթէ դու կարես տանիլ, զի ես արարից քեզ զայն, զոր արարեր արձանին այնմիկ առանց ընդդիմա-

նա_

նալոյ, և առանց հակառակութեան, և վշտանալոյ, մնաս խաղաղութեամբ առիս՝ առ'ի գոլ աշակերտ իմ, ապա թէ ոչ դարձիր 'ի տուն քո · զի ոչ ես դու ընդունակ գոլոյ կրօնաւոր ։

Ընթեռնանի զսրբուհւոյն Ճելթրուտայ, թէ ունէր զմայրապետ, որ էր մեծ սուրբ · բայց էր խիստ բնութեամբ, և տայր զպատասխանի անհաճոյական ։ Սրբուհին Ճելթրուտա աղաչէր զԱստուած, զի բառնայցէր 'ի մայրապետէն զվատթար բնութիւն զայն · և Տէր պատասխանեաց նմա ։ Ընդէ՞ր կամի դու, զի բառնայցեմ 'ի նմանէ զայն, որովհետև ունի նա այնու զառիթ պահելոյ զինքն խոնարհութեամբ, զի մինչ տեսանէ զինքն անկեալ 'ի յանկատարութիւն անհամբերութեան, սկսի խոնարհիլ · և ճանաչէ զըեկանաւորութիւն իւր ։ Դարձեալ՝ զի՞նչ արդիւնս հնազանդութեան ունիցէիք դուք անձնեքեան, եթէ բարի իցէր նա բնութեամբ ։ Ես թողում 'ի նմա զպակասաւորութիւն, որ զի կրթիցիք դուք, և ստանիցիք զհնազանդութիւն ։

Այլ օրինակ նման սմին պատմէ պլօսիոս զնոյնոյ սրբուհւոյն, թէ յաճախ միում աղօթելով նա վասն պակասաւորութեան անձին ուրուք, որ կառավարէր զժողովարան մի, երևեցաւ Տէր նմա, և ասէ ։ Ես վասն առատութեան գթութեան, քաղցրութեան, և սիրոյ աստուածայնոյ, որով ընտրեցի զժողովս զայս, թոյլ տամ, զի ունիցին զամենայն պակասաւորութիւնս նաև նոքա, որք կառավարեն զժողովս զայն, որպէս զի այսու ճանապարհաւ աճիցեն առ դիւնք ժողովոյն ։ Քանզի է առաւել մեծագոյն առաքինութիւն ենթարկել զինքն ումեք, որոյ պակասաւորութիւնքն ճանաչին, քան թէ ենթարկել այնմիկ, որոյ գործքն երևին կատարեալք ։ Ես թոյլ տամ, զի վեհագոյնքն ունիցին զպակասաւորութիւնս ումանս, և գոլով

պարաալտարապեալք 'ի բազում հոգս , և 'ի զբաղմունս , զանցանիցեն զնոքօք , ոպ՟ զի առաւելաբար խոնարհիցեն : Քանզի արդիւնքն հպատակին աճի և յաւելանոյ այնքան պակասաւորութե՟ կառավարողին , որքան աճի առաքինութե՟ արդիւնքն նր՟ , որ կառավարէ , և ուղղէ , որպէս վայել է : Յայսոսիկ բանին Տն՟ ծանեաւ սրբուհին Ճելթրուտա զառատագունեղ գութն խնամութե՟ Ա՟ծայնոյ , որ այնքան գաղտնաբար տրամադրէ զփրկութ՟ն , և զդեղն ծառայից իւրոց , թոյլ տալով նց՟ ունիլ զպակասաւորութիւնս՝ առ 'ի տանել զնս՟ առաւել կատարեալս :

Ի վարս սբյն՟ Անտոնի գրէ սբն՟ Աթանասիոս զհնոց միայնակեցաց , որք նուիրէին զինքեանս հնազանդութե՟ այնքան առաքինութ՟ · մինչզի ունէին զվեհապետս խստաբարոյս , և զցասմնոտս , որք ոչ հաճիցէին ընդ այնս՝ զորս առնէին , այլ յանդիմանիցէին : Ոպ՟ առնէր աբբայն պախումէս ընդ թէոդոսիոսի աշակերտին իւրում , առ 'ի մաքրել զնա 'ի փոշեաց սնափառութե՟ : Եւ որքան առաւել խստաբարոյք , և դառնացօղք էին վեհագոյնքն , այնքան առաւել հնազանդք էին նոքա : 'Ի մէջ այլոց մի կերպ կրօնաւորաբար կեցղյ՟ հնոց հարցն այնոցիկ՝ էր այս , զի երկու աշակերտք կային ընդ կրթութե՟ , և կառավարութե՟ հօր միոյ ծերագունի , որում և ծառայէին յա՟մ իրս , ոպ՟ ծառայ մի ծառայէ տն՟ իւրում : Ուստի որպէս տրն՟ յա՟մ սխալանս ունի զառիթ յանդիմանելոյ , և պատժելոյ զծառայն՝ վս՟ ոչ առնելոյ զիրս ըս՟ կամաց նր՟ · այսպ՟ և հարքն այնոքիկ ունէին զնոյն առիթ · և այսպէս երբեմն վս՟ խստութե՟ բնութե՟ իւրեանց · և երբեմն առ 'ի կրթել զնս՟ յառաքինութե՟՝ սովորք էին խստաբար վարիլ ընդ աշակերտաց իւրեանց : Ասէ սբն՟ Յօհաննէս կլիմաքեան , թէ մինչև ցամս երեսուն փորձէին զնմ զանազան աշխատանօք, վշտօք, և անարգութբ:

Պատմէ Կասիանոս զազնիւ, և զհարուստ կնոջէ միոյ, որ կայր յաղեքսանդրեայ քաղաքին՝ յոյժ կրօնաւորաբար, որ և այնքան բերկրէր չարչարանօք, մինչ զի ոչ շատանայր տանելով կամաւորապ զչարչարանս, և զվիշտս, որք գային նմա, այլև երթայր որոնելով, և ջանալով, զի գտցէին ինքեան նորագոյն առիթք առ'ի մարզել առաւելաբար 'ի համբերութե, և 'ի մահացուցանել զինքն: Ուստի այսու ցանկութբ գնաց առ'ի գտանել զսբն Աթանասիոս եպիսկոպոսն, և աղաչեաց զնա, զի տայցէր նմա զմի 'ի յայրեաց անտի, զորս պահէր եկեղեցին, զի կամէր պահել զնա 'ի տան իւրում: Սբն Աթանասիոս գովեաց զբարի փափաքն նր. և հրամայեաց տալ նմա զմինն, որ իցէր բարեգոյն աղախին Այ, բարեբարոյ, և հանդարտ բնութբ: Էած զնա 'ի տուն, ուր ծառայէր, և գգուէր զնա մեծապ: Բայց տեսանելով զհանդարտութին, և զբարեբարոյութի նր, նաև զբարի շարժումն, որ միշտ շնորհակալ լինէր զնմանէ, և գովէր զնա վս բարերարութե, և ծառայութե, զոր ընկալնոյր 'ի նմանէ, դարձաւ առ եպիսկոպոսն, և գանգատեաց նմա մեծապ, զի խնդրեալ էր 'ի նմանէ զկին մի, որում ինքն կամէր ծառայել առ'ի կրթիլ և շահիլ, և ոչ կամեցաւ տալ: Սբն Աթանասիոս ոչ իմանալով բարւոք զբաղձանս նր. և խոկայր թէ վս անհոգութե և վս անփոյթ լինելոյ ոչ էին տուեալ նմա զկին ըստ բարի, կամեցաւ տեղեկանալ, և ետես, զի տուեալ էին զբարեգոյն կին մի քան զամենեսեան, յայնժամ իմացաւ սբն զվախճանն, և զշարժառիթն խնդրոյ նր, և ասէ ցնա, թէ հոգալոց եմ զայլ կին: Եւ հրամայեաց, զի տայցէին նմա զկին մի, որ իցէր յոյժ չարաբարոյ, քարոյ, և առանց առաքինութեան ուրուք 'ի մէջ այլոց ամենից : Ընտրեցին ուրեմն զկին մի յոյժ ապաշնորհ, ապերախտ, մեղամաղձոտ, բարկացօղ. կռուասէր, բարբանջօղ, և այլն : Տարաւ բարի կինն զնա 'ի տուն իւր, և սկսաւ ծառայել նմա սիրով և խոնարհութ՟բ առաւել քան զաղախնայն, և փ՟ո ամենից այսոցիկ՝ ոչ զայլ ինչ հատուցումն ընկալնոյր, և ոչ զայլ երախտագիտութի՟, եթէ ոչ զաղաղակ, զանարգաբանուի՟, զանէծս, և յամ՟ իրս դժգոհայր, և ասէր, թէ ոչ էր տարեալ անդ առ 'ի գգուել, այլ առ 'ի տանջել. և երբեմն ցասնոյր այնքան, մինչ զի համբառնայր զձեռն 'ի վ՟ր ն՟ր : Այսու ամ՟ն կայր հանդարտ բարի կինն այն համբերելով, և երկպատկելով և եռապատկելով զբարերարութ՟ն և զծառայութ՟ն. և որքան առաւել զանարգանս ընդունէր, այնքան զմեծագոյն ծառայութ՟իս և զբարերարութ՟իս նմա առնէր : Եւ այսու կրթութ՟բ զգայր զմեծ օգնութ՟ի և զշահ հոգւոյ իւրոյ : Գնացեալ մատոյց զշնորհակալութ՟իս եպիսկոպոսին, վ՟ս լցուցանելոյ զփափաքն իւր, տալով նմա զայնպիսի վարդապետ համբերութ՟ե, որով շահեցիւր միշտ : Եւ վարելով այսոքիւք և այլովք սրբովք կրթութեամբք մեռաւ 'ի Տ՟ր :

Սովոր էր պատմել աբբայն պիմէն զայն, որ պատահեալ էր ինքեան ընդ աբբայ Յովսէփայ, գոլով նա նորավարժ : Աբբայն յովսէփ ունէր 'ի վանս զթզենի մի յոյժ գեղեցիկ, և առաքէր զպիմէն յամ՟ առաւօտու ուտել զթուզ, որ նկատելով 'ի ժուժկալութ՟ին, զոր միայնակեացքն պահէին, էր այն իր արտաքոյ կարգի : Հրամայեաց նմա նաև յաւուրն ուրբաթու, բայց նա ոչ իշխեաց ուտել յայնժամ, վասն ոչ բեկանելոյ զծոմն այնր աւուր, որ էր այնքան յարգեցեալ, և ընդհանուր ծոմապահութ՟ն : Վերախայթելով յետոյ զինքն խիղճմտանաց իւրոց մտ̃ ոչ հնազանդելոյն, գնաց առ նա, և ասաց ցնա․ Թո՛ղ ինձ հայր, զի կամիմ հարցանել քեզ զիր մի․ ո՞յր աղագաւ հրամայեցեր ինձ զի ուտիցէի յա̃մուր աւուր զթուղն, որովհետև պահեմք մեք զժուժկալութի̃, մա̃նաւորաբար յաւուրն ուրբաթու ։ Ծանիր, զի 'ի միոյ կողմանէ ամօթալի եմ այսօր, զի ո՛չ կամեցայ ուտել այսօր զթուղ, որովհետև սովորք եմք ամենեքեան յայսմիկ աւուր պահել, և 'ի միւս կողմանէ ամաչեմ և խղճահարիմ մտ̃ ոչ հնազանդելոյս քեզ, որովհետև գիտեմ ես, զի ո՛չ հրամայեցեր ինձ զայն առանց պատճառի ։ Պատասխանեաց նմա սր̃ ծերունին և ասէ, որդեակ իմ, հայրքն մեր առաջինք յանապատին ո՛չ հրամայէին աբեղայից 'ի սկզբան զիրս յարմարս, և դիւրաբար առնելիս, այլ հրամայէին զայնպիսի իրս, որք 'ի սկզբան թուէին անպատեհք, և խելագարութիւն առ 'ի փորձել զնս̃, և առ 'ի տեսանել, եթէ էին համակերպեցեալք դատողութբ̃, և կամաւ ։ Իսկ յորժամ տեսանէին, թէ առնէին զայն առանց դիմադարձութե̃, և առանց երկմտութե̃, այնուհետև ոչ ևս հրամայէին նց̃, եթէ ոչ զիրս հարկաւորս, և վայելուչս ։

Պատմի 'ի վարս հարանց սրբոց, թէ մի ոմն 'ի հնոց սրբոցն այնոցիկ ետես չորս կարգս արդարոց 'ի յերկինս ։ Առաջինն էր մարդկանց հիւանդաց, որք 'ի հիւանդութե̃ իւրեանց ունէին զմեծ համբերութի̃ն գոհանալով զԱյ̃ ։ Երկրորդ կարգն վեհագոյն քան զայս էր նոցա, որք ժողովէին և ընդունէին զաղքատս և զպանդուխտս, ծառայէին հիւանդաց, և առնէին զգործս ողորմածութե̃, և սիրոյ ։ Երրորդն էր այնոցիկ, որք թողեալք զա̃մ իրս աշխարհի՝ կեային յանապատի բազում աղքատութբ̃, և ժուժկալութբ̃ պարա_ պարապեալք 'ի յաղօթս ։ Եւ չորրորդ կարգն վերնագոյն քան զայսոսիկ էր նց, որք վասն սիրոյ Յի Քի կեային հնազանդութբ, և էին հպատակք կամացն այլոց 'ի յամ իրս ։ Եւ ետես, զի սոքա կային ունելով զշղթայս, և զանուրս ոսկեղէնս, և զաւելի փառս քան զայլսն ։ Զարմացեալ ընդ տեսիլս այս սբ ծերն՝ եհարց, թէ ո՞յր աղագաւ ունէին նոքա զաւելի փառս քան զմիայնակեացսն, և քան զայլս ։ Եւ նա պատասխանեցաւ ասելով, թէ պատճառն էր, զի միայնակեացք յառանձնութե իւրեանց, և նոքա, որք պարապէին 'ի գործս սիրոյ, հեռանէին կամաց իւրեանց ։ Բայց հնազանդութեին ոչ, այլ մանաւանդ հնազանդքն պատարագէին զկամս իւրեանց Այ ։ Եւ այդ կամքն մեծ համարի 'ի մարդն, այսպէս եւ պատարագելն զայն Այ է մեծ, և արդիւնաւոր առաջի Այ ։ Եւ անուրն այն պատուական էր ոսկեղէն ․ զի եդին զպարանոցս իւրեանց 'ի ներքոյ հնազանդութե ։

Իսմին նման այն, որ պատմի զպամբոյ աբբայէն, թէ գնաց 'ի տես չորից միայնակեցաց անապատին, որք էին յոյժ նշանաւորք առաքինութբ ․ զի առաջինն էր նշանաւոր մանաւանդ 'ի պահս՝ և 'ի ժուժկալութե, յորում կրթիւր ։ Երկրորդն աղքատութբ ։ Երրորդն սիրով դէպ 'ի մերձաւորսն ։ Իսկ չորրորդն զամս քսան և երկուս կեցեալ էր 'ի ներքոյ հնազանդութե ։ Եւ սբ աբբայն պամբոյ նախապատուեաց զայս յետինս առաջնոց երեցն ։ Զի զառաքինութիւն զայն, որ էր 'ի նս, պահեալք էին կամօք իւրեանց ․ բայց սա թողլով բոլորովին զկամս իւր, եղեալ էր ծառայ այլոց ։ Եւ յաւել ասել սբ աբբայն, թէ նք որք կան ընդ հնազանդութբ, եթէ յարատեւիցեն 'ի նմին իսպառ, կարեն ճշմարտապէս կոչիլ մարտիրոսք ։

ԳԼՈՒԽ Թ.

Յաղագս թէ ուստի ծնանի ունիլ 'ի մեզ դատողութիւնս ընդդէմ հնազանդութեան. և յաղագս միջոցաց, զորս կարեմք 'ի գործածել ընդդէմ նորա:

Արմատն, յորմէ ծնանի զի գան 'ի միտս դատողութիւնք և պատճառք ընդդէմ իրաց, զորս հրամայէ հնազանդութիւն, է բնութիւն ոչ մաքրացուցեալ: Բայց կարէ ասել ոք, թուի թէ այսպէս լիցէր այս, որպէս թէ հարցանիցէաք, թէ ուստի ծնանի գոլն ուրուք հպարտ, և պատասխանիցէր ոք, թէ ծնանի 'ի պակասութենէ խոնարհութեան: Յայտնի իմն է, զի եթէ ես մաքրացուցանիցէի զդատողութիւն իմ, ունիցէի զպարզամտութիւն 'ի հնազանդութեան, և ոչ գայցէին 'ի միտս իմ դատողութիւնք ընդդէմ հնազանդութեան: Արդ՝ ես ոչ ասեմ զայս, այլ զայն զոր ասեմ է այս, թէ 'ի յոչ մաքրացեալ գոլոյն մերմէ 'ի կիրս մեր, և 'ի յիղձս. և 'ի յոյժ բարեկամ գոլոյն մերմէ օգտից մերոց, և 'ի կատարելոյ զընական կամս մեր, և 'ի յոչ գոլոյն մեր անտարբեր, և համակերպեցեալ ընդ ամենից այնոցիկ, որք մեզ հրամային, գայ դատողութիւն 'ի միտս մեր: Աստուստ ծնանի, զի յորժամ մեզ հրամայի իր ինչ, և այն է ընդդէմ կամաց մերոց, և ախորժման, ընդ առաջ ելանեն մեզ բազում պատճառք, և դատողութիւնք ընդդէմ նմա: Եթէ լիցէ ոք, որ ոչ կամիցի հաւատալ այսմիկ, մտցէ 'ի ներքս իւր փոքր ինչ, հայեսցի, և նկատեսցէ բարւոք, թէ երբ արդեօք հասարակաբար սովորք են զարթնուլ 'ի մեզ դատողութիւնք, և ընդդիմաբանութիւնք ընդդէմ հնազանդութեան. և գտցէ, թէ այս պատահի նմա յայնժամ, յորժամ հրամայի նմա իրն այն՝ առ որ ունի զընդդիմուն̃. յորժամ ոչ շնորհի այն, զոր կամի, յորժամ մաղձացուցանեն զնա, և մերձեցուցանեն զձեռս յայն տեղին, ուր է ցաւն. յայնժամ գան բազմադիմի պատճառք վերերեւոյթք ընդդէմ այնմիկ, որ հրամայի իւրեան։ Բայց յորժամ հրամայի նմա այն, ընդ որ հաճի ինքն, և է համեղ 'ի քիմս իւր, ոչ գան նմա դատողութիւնք, և ոչ պատճառք ներհակք. մանաւանդ թուի, թէ իցէ յոյժ յարմար, և բարւոք խոկացեալ քան զա̃մ իւր աշխարհի։

Սր̃ն Հերոնիմոս 'ի վր̃ այնց բանից մարգարէին Յովսեայ, 7. 11. Եւ էր Եփրեմ իբրեւ աղաւնի անմիտ, որոյ ո՛չ իցէ սիրտ։ Հարցանէ՝ ո՛յր աղագաւ եփրեմ ոչ նմանեցուցանի այլոց թռչնոց, այլ աղաւնւոյ։ Եւ պատասխանէ, զի այլք թռչունք ջատագովեն զձագս իւրեանց նաև վտանգաւ կենաց իւրեանց. և յորժամ տեսանեն զուրուրս, կամ զբազէս. և կամ զօձս մերձենալ առ բոյնս իւրեանց, երթան թռչտելով, շրջագայելով, աղաղակելով առ 'ի պատսպարել ըստ կարեաց իւրեանց զձագս իւրեանց. և մինչ ոչ կարեն օգնել նց̃, ցուցանեն զցաւս իւրեանց ձայնիւ ցաւողեաւ, և գանգատականաւ։ * Միայն աղաւնին է այն, որ 'ի բաց բարձեալ զձագս իւր յայլոց՝ ո՛չ ցաւի, և ո՛չ խնդրէ զնոսա ‖։ Վս̃ այսորիկ եփրեմ նմանի աղաւնւոյ։ Ուստի Քս̃ Տր̃ն մեր ասէ մեզ հետևիլ աղաւնւոյ, զի յորժամ բարձցին 'ի մէնջ ձագքն մեր, այ̃ այնք իրք, զորս սիրեմք, և առ որս ըղձաձկիմք, լիցեմք իբրև զաղաւնի, ո՛չ ընդդիմանալով, ոչ տրտնջելով, և ո՛չ ցաւելով։ Զի յանմեռ կրից մերոց, և 'ի դժուարութ̃է, և 'ի ընդդիմութ̃է յայնմիկ, որ է ընդդէմ կամաց մերոց, ծնանին, և յառաջագային 'ի մեզ դատողութիւնք։ Եւ այսմ̃ նախապետական միջոցն, զոր կարեմք գտանել 'ի կողմանէ մերմէ ընդդէմ այսմ փորձութեան է ջանալ մահացուցանել զմեզ, և ոչ ունել զյատուկ կամս, այլ գոլ յոյժ անտարբեր, և համակերպեցեալ առ այն ամ՟, զոր վեհագոյնն մեզ հրամայէ, և կամի 'ի մէնջ, և ոչ հոգայցեմք, եթէ մեզ հրամայեսցի մանաւանդ այս ինչ, կամ այն ինչ իրն:

Վ՟ այսորիկ հին սբ՟ հարքն այնոքիկ որպէս բարի վարդապետք հոգւոյ յոյժ կրթէին զհպատակս իւրեանց հրամայելով նց՟ զիրս, որք երևէին արտաքոյ պատեհաւորութեան առ'ի փորձել զնոցին հնազանդութիւն, և բեկել զյատկական կամս նոցա, և զդատողութիւն: Ուստի անպատեհաւորութիւն այն էր յոյժ պատեհաւոր: Վ՟ զի առաւել հարկաւոր է, զի դու զքեզ մահացուցանիցես, և բեկանիցես զկամս քո, և զբնական դատողութիւն, և թողուցուս զքեզ շրջել և վերաշրջել 'ի ձեռն հնազանդութեան, քանթէ շահել զիր իմն առնելով զայն այլ կերպիւ: Բազում անգամ վեհագոյնն կամի կորուսանել զայս ինչ, և զայն ինչ իրն առ'ի շահել զքեզ՝ և օգտել քեզ. և ոչ է կորուստ այս՝ այլ շահ: Յորժամ ձի մի է կամակոր, երբեմն շրջեցուցանեն զնա փոյթ ը՟ փոյթ, երբեմն հանդարտաբար, երբեմն շուրջանակի, երբեմն 'ի մէջ բոլորակի դարձուցանեն զնա հակադարձաբար, և 'ի վազելն յանկարծ դադարեցուցանեն զնա, որպէս զի այսպէս սովորեսցի հնազանդիլ սանձին, և մի հետևեսցի բնական շարժման իւրում, և թափոյն: Այսպէս առնեն բարի վարդապետքն հոգւոյ: Այսպէս ընթեռնումք, թէ առնէր մեծն Անտոնիոս ը՟ աշակերտաւն իւրում պօղայ: Հրամայէր կարել զհանդերձ, և իսկոյն տայր քակել: տայր հիւսել զափիրթ, յետոյ իսկոյն տայր քակել, զոր հիւսեալ էր: Նոյն ընթեռնումք զերանելւոյն Սբ՟յն Փրանչիսկոսէ, թէ 'ի մէջ ճանապարհին կամէր, զի ընկերն իւր եղբայր Մաֆէոսն այն-

քան

ւքան շրջիցիւր շուրջանակի, մինչ զի նուաղեալ և ուշաթափեալ անկանիցիւր յերկիր։ Եւ այլոց ոմանց՝ որք կամէին մտանել 'ի կրօնն նր̃, հրամայեաց զի տնկիցեն զեղէգն՝ կամ զքաղամն շրջուն, իք արմատն 'ի վեր, և տերեն 'ի վայր առ 'ի զփորձ առնուլ զհնազանդութէ նր̃, և արմատախլել 'ի նոցանէ զա̃մ յատուկ զգացողու̃ն, և առնել, զի մի՛ մնայցէր 'ի նմ̃ հետ բնական դատողութե̇, և կամաց։ Եւ երանի թէ և ես աստանօր վարիցէին այսու կրթութբ̃. քանզի եթէ սովորիցի ոք քակել զայն, որ բարուք է արարեցեալ, ո՛չ խոժոռի յանդիմանեցեալ վասն իրին վատթարաբար արարեցելոյ։

Բայց քանզի մահացուցանելութիս այս՝ և համակերպութիս ամբողջ՝ պահանջէ զմեծ կատարելութի̇, և մինչ ոչ ժամանեմք առ այս, կարեմք 'ի գործ ածել զնոյն ոչ մահացուցեալ բնութն մեր, ճանաչելով զայն, և զա̃մ ինչ ընձեռելով նմա։ Եւ այս եղիցի բարի միջոց առ 'ի դարմանել, զի դատողութիքն և պատճառքն, որք ընդ առաջ ելանեն ընդդէմ հնազանդութե̃, ոչ վնասիցեն քեզ. զի ճանաչելով թէ այս է պակասաւորութի̇ և անկատարութի̇ քո, ոչինչ համարեսցիս զնա։ Հիւանդ մի, որ ճանաչէ զհիւանդութի̇ իւր, բարուք գիտէ, թէ թէպէտ ունիցի զծարաւ, ո՛չ վայելէ ինքեան ըմպել. և թէպէտ դեղն դառնացուցանէ, սակայն է օգուտ. և տալով առնուլ զարիւն, ցաւի. սակայն գիտէ. զի այն վայելէ ինքեան. ուստի ո՛չ հաւատայ ախորժանաց իւրոց, և ո՛չ հաւատայ ինքեան, այլ հպատակի բժշկին, հետևելով դատողութե̃ նր̃, և համարելով զայն բարեգոյն վասն իւր։ Ճանաչելն, թէ է հիւանդ, օգնէ ոչ հաւատալոյ ինքեան, այլ հետևելոյ դատողութե̃ բժշկին։ Նոյնպէս ևս մեք եմք հիւանդք, և լի ինքնասիրութբ̃ և ապականարգ կրիւք · ոչ գիտեմք ախորժել՝ եթէ ոչ զայն, որ հաճոյ է մեզ, և տհաճիմք ընդ այն, որ մեզ օգուտ է, և զզուիմք ՚ի նմանէ : ՚Ի գործ ածցուք զդեղն զոր ՚ի գործածէ հիւանդն, որ կամի բուժիլ : Մի՛ հաւատասցուք մեք մեզ, այլ հաւատասցուք վեհագունին, որ զմեզ դարմանէ, և ուղղէ · և համարեսցուք բարի, զոր նա հրամայէ և պատուիրէ : Մի՛ համարեսցուք իր ինչ զդատողութս, որք գան ՚ի միտս, այլ համարեսցուք զայնս կամակորութի հիւանդի : Այսու կերպիւ ոչ միայն ոչ հաւանեն քեզ դատողութիքն, և պատճառքն որք գան ընդդէմ հնազանդութե, այլ մանաւանդ արտահանիցես զպտուղ, և առաւել հաստատեսցես զքեզ ՚ի հնազանդութե · զի իսկոյն դարձցիս ՚ի քեզ, ասելով, ո՜հ թէ որքան մեծ է հիւանդութի իմ, զի զզուիմ յայնմանէ, որ է բարի և օգուտ ինձ · ոչ է պիտոյ ինձ այլ նշան առ ՚ի ճանաչել, թէ այն է, որ ինձ վայելէ · և բարին զիս զզուեցուցանէ, և դժուարութիւն ինձ պատահի վն այսորիկ, զի ես եմ հիւանդ, և ունիմ աճեր և տապականեցեալ զճաշակն իմ : Այս է մեծ դեղ ընդդէմ ամենից դատողութեց, որք գան ՚ի միտս մեր, ոչ միայն ընդդէմ հնազանդութե, այլև ընդդէմ եղբարց մերոց, դարձուցանելով զնոյն դատողութիւն ընդդէմ քեզ ինքեանդ ասելով · ես եմ այն, որ կամ ՚ի կուրութե և ՚ի սխալանս, զի այն՝ որ է բարի, ինձ թուի վատթար · որքան է ուշիմութին իմ, զի կամիմ դնել զկանոն այլոց : և յորժամ տհաճոյ լինիցի քեզ բնութի եղբօրն քո, և կերպն շարժմանց նր, քեզ պարտիս ընձեռել զմեղն, ասելով · ես եմ այն · որ ունիմ զբնութի վատթար, և վասն այսորիկ զզուիմ ես յայսմանէ և յայնմանէ իրէ · ՚ի յիս է պակասութիւն, և ոչ ՚ի նմա :

Ընդդէմ ամենից փորձութեց մեծագոյն դեղ-

է

է ճանաչելն թէ այն է փորձութիւն · և վասն այսորիկ յորժամ դեւն փորձէ զմեզ, ջանայ որքան կարէ, զի փորձութիւնն նորա ոչ թուեսցի մեզ փորձութիւն, այլ երանութիւնք, որպէս զի անկանիցիմք 'ի նմին ։ Զի որպէս որսորդն յորժամ լարէ, կամ պատրաստէ զորոգայթն, ջանայ միշտ, զի մի՛ թուեսցի որոգայթ, այլ խորտեղի · զի ոչ ոք յանասնոց և 'ի թռչնոց ըմբռնեսցի, եթէ համարեսցէր որոգայթ ։ Այսպէս առնէ և մեզ դեւն ։ Քանզի և ինքն սատանայ կերպարանի 'ի հրեշտակ լուսոյ ։ 2. Կորն. 11. 14 ։ Աստուած ազատեսցէ զքեզ յայնմանէ փորձութենէ, որ ոչ թուի քեզ փորձութիւն, այլ երանութիւնք ։ Յորժամ դատողութիւնք քո այնքան յաղթահարեն զքեզ, մինչ զի հաւատացուցանեն քեզ, թէ իրն այն ոչ է կիրք, և ոչ փորձութիւն · թէ վասն այսորիկ ասես զայն բանն, զի է յայտնի, և կարէ ճանաչել զայն ամենայն ոք, յայնժամ մեծ է վտանգն քո · և դժուարին է դեղն ։ Փորձութիւնքն որք գան կերպարանօք բարեաց, են առաւել ծանր, և առաւել վնասակար փորձութիւնք ։ Յորժամ փորձութիւն գայ բացայայտաբար, կարես դու 'ի կիրարկանել զբազում միջոցս յաղթելոյ զնա, բայց յորժամ ոչ ճանաչի որպէս փորձութիւն, այլ մանաւանդ ընդունեցեալ լինի որպէս երանութիւնք, որպէս կարեմք արտաքսել զնա ։ Յորժամ ոչ ճանաչեմք զթշնամին մեր որպէս զթշնամի, այլ մանաւանդ ընդունիմք զնա՝ որպէս զբարեկամ, որպէս կարեմք զգուշանալ 'ի նմանէ ։ Սովոր էր ասել այն մեծ ծառայ Աստուծոյ · թէ ես ոչ երկնչիմ 'ի պակասութենէց, զորս ճանաչեմ, և ատեմ զայնս, այլ երկնչիմ յայնցանէ, զորս ոչ ճանաչեմ, կամ ոչ համարիմ, և ոչ հերքեմ ։

Արդ՝ դառնալով առ կէտն մեր, ասեմ, թէ եղիցի մեծագոյն դեղ, եթէ յորժամ գան 'ի միտս մեր պատճառք, և դատողութիւնք ընդդէմ հնազանդութեան , վերաշրջել զայնս ընդդէմ մեզ ինքեանց , համառօտելով . Թէ տկարութիւն , և ոչ մանկացուցեալ գոլն այն է պակասութիւն մեր , և այսպէս ոչ ինչ համարիլ զնոսա : Եւ ունիմք զբաղում պատճառս այսպէս ունելոյ . քանզի այնպիսի է մարմինն մեր , և հեշտասիրութիւն , մինչ զի խելոյն հարկէ և գտանէ զբաղում պատճառս վերբերեալս վասն այնր իրին , ընդ որ հաճի . և որով կատարի կամքն իւր . և այս նաև ՚ի բազում անպատեհ իրս : Նոյնքան կուրացուցանեն զմեզ անձնասիրութիւն մեր , և կիրքն , մինչ զի համառօտացուցանեն մեզ դիւրաբար . և տան մեզ դատել զիրս այլազգ , քան զոր է ըստ ճշմարտութեան : Զի որպէս մարդոյն այնմիկ , որ ունի զմեծ ծարաւ , թուի ջուրն առաւել բարեգոյն , առաւել քաղցր , առաւել համեղագոյն քան զամենայն իրս աշխարհի , զի դատէ ըստ տրամադրութեան զոր ունի . այսպէս և նա , որ ունի զկիրս ինչ կենդանի . և զըղձաձկութիւն ապակարգ , ներկայացուցանէ ինքեան զիրն յոյժ տարբեր յայնմանէ , որ է . և դատէ ներհակ ճշմարտութեան : Եւ որովհետև մարդ ճանաչէ յինքեան զանկարգ ըղձն երկրաւոր . և ունիլ կենդանի զկիրսն , ոչ պարտի համառօտել դիւրաւ դատողութեան իւրում . այլ մանաւանդ պարտի հայիլ յինքն որպէս ՚ի հիւանդ ոք , և ՚ի թշնամի , առ ՚ի զգուշանալ ՚ի նմանէ :

Ոչ պարտիմք շատանալ ոչ թողուլ զմեզ շարժիլ այսու դատողութեամբ , այլև պարտիմք ջանալ մնալ առաւել շահեցեալ ՚ի փորձութենէ . առաւել ամաչեցեալ , և խոնարհեալ առելով . Որպիսի ինչ է այս , զի եմ ես այնքան հպարտ , մինչ զի անցանեն ընդ միտս իմ դատողութիւնք ընդդէմ վեհագունին իմում : Ես որ եկեալ եմ ՚ի կրօնս յայս՝ առ ՚ի գոլ յետնագոյն այլոց ամենից , կամիմ նախադասել զիս նմա , որ է գլուխ իմ , և վեհագոյն ամենից :

նից ։ Ես ոչ եմ եկեալ առ՚ի հրամայել, առ ՚ի ուղղել, և առ՚ի կառավարել, այլ առ՚ի հնազանդիլ. և գոլ ՚ի ներքոյ հրամանի ։ Ես ոչ եմ գտանելոց զառաջնորդն իմ, այլ նա է զիս գտանելոց ։ Այս է դեղ հաստատուն և յոյժ օգտակար՝ առ՚ի արտահանել զշահ յամենից փորձութեանց ։ ՚Ի նոյն հպարտութէ, և ՚ի սնափառութէ, որք գան ՚ի մեզ, առնլոց եմք զաուխթ առ՚ի առաւել խոնարհիլ ։ Զի որպէս դեղն ջանայ առնել զթոյն ՚ի դեղթափէ, կամելով հպարտացուցանել զմեզ առաքինութ․, նաև ներգործութ․ նոյնոյ խոնարհութէ․ այսպէս և մեք պարտիմք ՚ի թունից առնել դեղթափ, խոնարհելով առաւելապէս հպարտութ․ որ գայ ՚ի միտս մեր, և ասել․ Ես որ եմ այսքան վատաշուճէր, և անկատար, որքան եմս, գալոց է ինձ հպարտութի ։ Զիարդ կարեմ կամիլ գոլ մեծ վարկեցեալ, կամ սնապարծիլ ես վն այնորիկ, զոր առնեմ չարաչ ։ Ասա բարուոք կարէ տեսանիլ, թէ ո՛ եմ ես ։ Այս է զարմանալի հակադէմ խորափիտ ընդդէմ հնարագիտութե, և խորամանկութե դիւէին ։ Փրկութի ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամ ատելեաց մերոց ։ Ղուկ․ 1․69 ։ Ջանացուք արտահանել զշահ յայնց իրաց, յորս, և որովք ջանայ նա կորուսանել զմեզ ։

Օայլս բազում իրս կարեմք ՚ի գործ ածել՝ առ՚ի ոչ հաւատալ պատճառաց, և դատողութեց մերոց, և ոչ համարիլ զնս, այլ ունիլ զայնս երկբայելիս ։ Դաւ՝ զի ասեն հասարակաւոր ամ իմաստունք, թէ է ճշմարիտ խոհեմութի ոչ հաւատալն բնականի խոհեմութե իւրում․ ապա որքան ևս առաւել զայս արտացէ ՚ի յիրս իւր․ յորս ոք է դատախազ ։ Յայտ է այս, և է նախկին սկիզբն բարոյականի փիլիսոփայութե ։ * Ոչ ոք է ուղիղ դատաւոր իւրոյ ինքեան ‖ ։ ՚Ի յիրս յատուկս հասարակաւոր մարդիկ ոչ կարեն լինել բարի և ուղիղ դա-

դատաւորք, վր̄ կրից, և ինքնասիրութեն, որ կուրացուցանէ զմ̄տ. ուստի ոչ վայելէ մեզ համառօտ դատողութ̄ մերում, այլ հետևիլ դատողութե̄ վեհագունին. և զայս համարեսցուք բարի։

Երկրորդ կարէ օգնել մեզ վասն այսորիկ պատկերակերպել, թէ հպատակն նկատէ 'ի յոմանս պատճառս մասնաւորս, որք պատահին նմա. և վեհագոյնն նկատէ առ այսորիկ, և առ այլս բազումս իրս, զորս հպատակն ոչ գիտէ. և ոչ կարէ գիտել։ Եւ թէպէտ նկատելով առ այնս պատճառս մասնաւորս միայն, թերևս բարեգոյն իցէ այն, զոր դու ենթադատես լինել քեզ. բայց սակայն նկատելով միահամուռ զամ̄ պատճառս, զորս վեհագոյնն գիտէ. ոչ է այն բարեգոյն։ Ուստի ոչ միայն 'ի ճանապարհի կրօնի, և կատարելութե, այլ և 'ի յօրինի խոհեմութե՝ է մեծ անընտրողութի և հպարտութի, եթէ կամիցի ոք դատել և վճռահատել զայն, զոր հրամայէ վեհագոյնն՝ միով, կամ երկու պատճառաւ, որք պատահին նմա, որոց և տալոց է վեհագոյնն զբաղում քննութի. նաև ունի զայլս, որոց վր̄ յարմար է առնել զայլ ինչ։ Սրն Օգոստինոս առբերէ զգեղեցիկ նմանակերպութի մի գլխոյ, որ է վեհագոյն մասն մարդոյ, և ասէ. Հոգին հոգևորէ, որ կենակցէ, և կենդանացուցանէ զբոլոր մարմինն մեր, բայց 'ի գլխոջ փայլին համայնք հինգ զգայութիք, որ տեսանելն, լսելն, հոտոտելն, ճաշակելն, և շօշափելն։ 'Ի յայլ անդամս գոյ միայն զգայութին շօշափողականին, և վր̄ այսորիկ համայնք անդամք են հպատակք գլխոյն. և նա կայ 'ի վր̄ ամենից ոպ̄ վեհագոյն առ'ի ուղղել, և կառավարել զնս̄։ Արդ՝ այսպ̄ և 'ի վեհագունում, ոպ̄ 'ի գլխոջ փայլին համայնք հինգ զգայութիք, և 'ի քեզ մի միայն, ոպ̄ 'ի յանդամում միում։

Դու մերձենաս առ մի պատճառ միայն մասնաւոր, և վեհագոյնն մերձենայ առ ա̄մ ։ Ուստի տեսանէ և գիտէ զայն ա̄մ, որ է յայնմ գլխոջ․ և այսպէս խրատունքն կամի, զի անդամքն ենթարկեսցին գլխոյն ։ Եւ յաշխարհիս սովոր է ասել, թէ առաւել գիտէ տխմարն 'ի տան իւրում, քան զխոհեմն 'ի տան այլոց ։ Ապա որքան առաւել գիտասցէ խոհեմն 'ի տան իւրում, քան թէ տխմարն 'ի տան այլոց ։ Մի՛ դատիր ընդդէմ դատաւորին․ զի ըստ որում արժան է, դատէ, ասէ իմաստունն․ Սիրաք․ 8․ 17․ Տես թէ որպիսի անընտրողութիւն է կամիլն դատել զայն, զոր ոչ գիտես, թէ ընդ որ ճանապարհ երթայ, կամ յորմէ ճանապարհէ գայ․ արդ՝ ոչ կարես գիտել, և ոչ է բարի, թէ գիտիցես ։

Երրորդ՝ օգնեսցէ առ'ի համակերպել զգացողութիւն մեր, և առ'ի ստորադրել զմեզ դատողութեան վեհագունին, խոկալն, թէ վեհագոյնն հայի առ հասարակ բարին բոլորին տանն, և բոլորի կրօնի․ իսկ դու ո̄պ մասնաւոր ունիս զաչսդ առ մասնաւոր օգուտս քո․ և բարին հասարակ և ընդհանուր պարտի նախադասիլ մասնաւորին ։ Զայս տեսանեմք եւս 'ի յիրս բնականս, որք թողուն ըզգործս իւրեանց բնականս, և զմասնաւորս, ըստ բնական յօժարութեան իւրեանց վ̄ս բարւոյն հասարակի, և ընդհանրոյ, ո̄պ ջուրն որ բնականաբար միտէ 'ի վայր, երբեմն ելանէ 'ի վեր, զի մի՛ տացի տեղի թափուր, (ո̄պ ասեն փիլիսոփայքն) վ̄ս կատարելութեան տիեզերի ։ Այս̄պ իւրաքանչիւր մասնաւոր թողլոց է զօգուտն իւր և զյօժարութիւն առ'ի վճարել բարւոյն հասարակի, առ որ նկատէ վեհագոյնն ։

Չորրորդ օգնէ եւս ոչ հաւատալն դատողութեան մերում, զորմէ զփորձ առաք 'ի մեզ ինքեանս ։ Քանիցս անգամ հաւատացաք զիրթին, և ընկալաք զայն որպէս զճշմարիտ, և ըզյայտնի ճշմարտութիւն․ և ստորասացաք որպէս զհաւաստի, յորում յետոյ յայտնապէս խաբեցեալք եղաք․ և փոխեցաք զենթադատութիւն մեր․ և յետոյ ամաչեցաք վասն հաւատալոյ մեր զայն, զոր հաւատացաք, և վասն ենթադատելոյ մեր զայն, զոր ենթադատեցաք։ Եթէ մարդ մի խաբիցէր զքեզ երկիցս, և երիցս, ոչ ևս հաւատայցէիր նմա ։ Ընդէ՞ր ուրեմն հաւատաս դու յատուկ դատողութեան քում, որ զքեզ խաբեաց բազում անգամ ։ Եւ այսպիսի փորձառութիւնս այս, որով անձն մեր զփորձ էառ զդիւրութիւն իւրմէ, և խաբեցաւ այլ անգամ, սովոր է լինել պատճառ, զի 'ի յիրս յայնս, յորս մանկահասակքն դիւրաւ բացորոշեն, ծերքն յառաջանան առաւել զգուշութեամբ, և նկատմամբ, որպէս մարդիկք բազմաժամանակեայք, խոհեմք, և հմուտք ։

ԳԼՈՒԽ Ժ.

Պարզաբանին երեք պատճառք, զորս տայ մեզ առաքեալն Պօղոս վասն հնազանդութեան ։

ՈՒնկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա ։ Զի նոքա տքնին վասն անձանց ձերոց, որպէս թէ համար տալոց իցեն ընդ ձեր, զի խնդութեամբ արասցեն զայն․ և մի յոգւոց հանելով․ զի այն ոչ օգուտ ձեր է ։ Եբր․ 13․ 17։

Այս առաքեալն Պօղոս զերիս պատճառս տայ 'ի բանս յայսոսիկ, առ 'ի յորդորել զմեզ, զի հնազանդեսցուք առաջնորդաց մերոց, որք որովհետև են բանք և պատճառք հզօրագոյնք․ և ասացեալք բերանով առաքելոյն Պօղոսի, ոչ կարէ լինել, թէ ոչ իցեն յոյժ բարիք և օգտակարք ։ Նախ ասէ հնազանդել առաջնորդաց մերոց, և առնել զայն ամ՟, զոր մեզ հրամայեն, և այսոքիկ միշտ խմանելն 'ի յայնա, ուր ոչ գոյ մեղք, ոպ՟ պարզաբանեցաւ. և այսու հնամամք շրջիմք միշտ յայնս ամս. զորս առեմք: Հպատակ լերուք ուրեմն նոցա, զի նոքա տքնին, ոպ՟ թէ համարս տալոց իցեն Այ վասն հոգւոց ձերոց: 'Ի մէջ այլոց անդորրութեանց, և մխիթարութեանց՝ մեծագոյն անդորրութիւն, և մեծագոյն մխիթարութիւն մեր, որք կամք 'ի կրօնի, է գոլ անկասկած, զի առնելով զհնազանդութիւն, շրջիմք բարւոք: Առաջնորդն է այն, որ կարէ սխալել 'ի հրամանելն զայս, կամ զայն իրն, բայց դու ես հաստատ, զի ըստ այնմ, զոր քեզ հրամայէ՝ ոչ սխալես: զի 'ի քէն միայն խնդրեսցէ Ած զհամար, եթէ արարեր զայն, որ քեզ հրամայեցաւ, և այսու յոյժ բաւականաբար կարես արդարացուցանել զքեզ առաջի Այ: Ո՛չ պարտաւանդիս դու տալ ըզհամարս, եթէ էր բարի իրն այն, կամ եթէ առաւել բարեգոյն լինիցիւր առնելով զայն միւս իրն. զի այս ոչ պատկանի քեզ, և ոչ հարցանի քեզ, այլ մեծաւորին: Յորժամ դու առնես զիւրն յաղագս հնազանդութեան, Ած բառնայ զխալն զայն 'ի գրոյ քումմէ: և դնէ 'ի գիրն մեծաւորին: Ուստի ասէ Ս՟ն Հերոնիմոս. * Ո՛վ ծայրագոյն ազատութիւն, որով հաղիւ կարէ մարդ մեղանչել||: Վասն որոյ այսու գրեթէ ասէ, թէ հնազանդութիւն առնէ զմարդ անմեղանչական: Յատկապէս է մեծ մխիթարութիւն վն՟ մեր, որք պարապիմք 'ի պաշտօնս մերձաւորաց, զի հաւատաբար հաւատամք, թէ առնեմք յայսմիկ զկամս Այ: Եթէ մնացեալք իցեմք յաշխարհի, թէև իցեմք յոյժ բարիք, և ունիցեմք զմեծ ցանկութիւն հաճոյանալոյ Այ, միշտ կայցեմք այրելով 'ի մէջ երկուց հրոցն այնոցիկ, թ՟ եթէ իցէ մեծագոյն ծառայութիւն Այ.

Այ, և առաւել հաճի նա ընդ պարտաւորիլն իմ 'ի յօգուտ մերձաւորաց, կամ միայն 'ի յօգուտն իմ։ Բայց 'ի կրօնի աստ եմք ազատք յայսմանէ դժուարութե․ զի ներկայացուցումն մեր է վն պարտաւորելոյ մեր 'ի յօգնել մերձաւորաց, և յաղագս այսորիկ կոչեաց զմեզ Ած յընկերութն կարգին մերոյ, և նա է, որ դնէ զմեզ յայսմիկ պաշտօնի։ Ուստի եմք հաւաստիք, թէ յայսմիկ հաճոյանամք մեծութե նր։ Բայց նա որ արտաքոյ կրօնի է, եթէ առնիցեր զպաշտօնս զայս, ոչ իշխիցեր խոստովանիլ, թէ արարեալ իցեր ըստ հաճութե Այ, կամ ոչ․ և իցեր յերկիւղի, եթէ այնու ճանապարհաւ կորնչելոց էր, կամ ոչ։ Իսկ այժմ խոստովանի անկասկածաբար, և է հաւաստի, թէ յայսմիկ ծառայէ Այ։ Զի ոչ եդաւ 'ի պաշտօնի խոստովանահօր, կամ քարոզողի, և կամ մեծաւորի ինքնին կամաւ իւրով։ Եթէ ունիս զբնաւորութն, և զընդունակութն վն այնպիսւոյ պաշտօնի կամ ոչ, մեծաւորն որ զքեզ եդ 'ի նմին՝ տացէ զհամար Այ։ Զի նոքա տքնին որպէս թէ համար տալոց իցեն վասն հոգւոց ձերոց։

Համաձայնի այսմիկ յոյժ բարեաւ սրբն Յովհաննէս կլիմաքեան, որ ընձեռելով զհնազանդութե, 'ի մէջ այլոց գովասանութեց զորս տայ՝ ասէ, թէ հնազանդութին է անմեղադրելութի առաջի Այ։ Եթէ հարցանիցի ինձ, ընդէ՞ր արարեր զիրս զայս, պատասխանեցից ես, Տր․ զի այսպէս հրամայեցաւ ինձ, և զայս պատասխանի տուեալ այ՝ մնայցեմ անմեղադրելի առաջի նր։ Հնազանդութին է նաւորդութի, և ճանապարհ ապահով, զի եղանի ննջելով, ասէ սրբն Յովհաննէս կլիմաքեան։ Զի որպէս նա որ կայ 'ի նաւի, նաև ննջելով երթայ զճանապարհ․ և ո՛չ է հարկաւոր ունիլ զհոգս, կամ խոկալ զնմանէ, զի ունի զնաւավար։ Այսպէս և կրօնաւորին որ կեայ ընդ հնազանդութ՟ 'ի քուն լինելով, իբ՟ առանց աշխատանաց, և խոկալս զայնմանէ, զոր առնելոց է, առնէ զճանապարհ դէպ 'ի յերկինս, և դէպ 'ի կատարելութիւն․ քանզի ոքնին վասն նորա առաջնորդքն, որք են նաւավարք, և կառավարիչք այսորիկ նաւու։ Ո՛չ է փոքր ևս, այլ մեծագոյն անցանել ընդ ծով աշխարհիս 'ի գիրկս, և 'ի վ՟ր ուսոց այլոց։ Արդ՝ այս է շնորհն այն, զոր Ած՟ տայ կրօնաւորին, որ կեայ 'ի ներքոյ հնազանդութե, և դնէ զամ՟ հոգս 'ի վ՟ր ուսոց մեծաւորին, և ինքն կայ 'ի նաւահանգստեան, և առանց խոկալոյ, թէ իցէ առաւել բարի այս, կամ այն, և կամ այլ միւս իրն։

Ի մէջ այլոց պատճառաց միոյն է այս, վասն որոյ առաքինի մարդիկ չարժին կեալ 'ի ներքոյ հնազանդութե, և լինել կրօնաւոր, աղ՟ զի ազատեսցին 'ի յանթիւ տատանմանց մտաց, և 'ի նեղպարտութէ, զոր ունին յաշխարհի, և առ 'ի ծառայել Այ՟, և հաճոյանալ նմա։ Քանզի թէպէտ իրքն այնք․ յորս պարապին յաշխարհի իցեն որք և բարիք, սակայն ոչ գիտեն եթէ իցեն կոչեցեալք յԱյ՟ առ այնս․ քանզի ոչ է գործ ամենեցուն առնել զայն ամ՟, որ է բարի, մանաւանդ զայն բարին որ գերազանցէ քան զոյժն մեր, որպէս է ուսուցանել այլոց․ և հոգալ զայլս։ Ուստի մին մեծ վարդապետ ասէ, թէ մանաւանդ կամիմ ժողովել զշիւղս 'ի յերկրէ վասն հնազանդութե, քան թէ պարապել առ այլ գործս մեծագոյնս յատուկ կամաւ իմով։ Քանզի 'ի յայնս, զորս վասն հնազանդութե առնէ, է ապահով․ և հաւաստեաւ գիտէ, զի առնէ զկամս Այ՟․ բայց 'ի յայլս ոչ կարէ գիտել։ Հնազանդութիւն ոչ միայն առնէ զմարդ անկասկած, և ազատէ 'ի բազմաց տարակուսանաց 'ի սպաշտօնս մերոց մերձաւորաց, և 'ի

սպառապարապիլն առ այնս, այլ և 'ի յիրս մասնաւորս մերոց օգտից հոգևորաց · քանզի եթէ ես կայցէի յաշխարհի · և ցանկանայցէի ծառայել Ա՟յ, ունիցէի զերկմտութ՟ն, և իցէի 'ի մէջ տարակուսութ՟ե, եթէ ուտիցէի աւելի, կամ ուտիցէի սակաւ, եթէ ննջիցէի աւելի, կամ ննջիցէի պակաս · եթէ ապաշխարիցէի յուժգին, կամ սակաւ, եթէ աղօթիցէի բազում, կամ սակաւ : Բայց աստ 'ի կրօնի համայնք տարակուսանք են դիւրեցեալք · զի ուտեմ զայն, զոր տան ինձ · ննջեմ այնքան, որքան ժամանակ է տուեցեալ ինձ · առնեմ զայնքանս ապաշխարանս, որքան տրի ինձ : Համայնք այսոքիկ են աստ 'ի կրօնի այնքան նկատեցեալք, և կշռեցեալք 'ի յառաջնորդաց, մինչ զի ես կամ յոյժ անկասկած, և հաւաստի, զի հետևելով կարգի հնազանդութ՟ե, առնեմ զկամս Ա՟յ : Այս է կեանք մի յոյժ անդորր և հանդիստ՝ ոչ միայն 'ի յիրս հոգևորս, այլև 'ի ժամանակաւորս · քանզի որպ՟ մինչ ոք 'ի նաւի բարւոք նախահոգացելոյ կայ, զոչինչ հոգայ, այսպ՟ կրօնաւորն 'ի կրօնի ոչ ունի զպիտոյս իւրոց հարկաւորաց : Զի վեհագոյնն ոչ միայն հոգայ 'ի վ՟ր հոգւոց մերոց, այլև 'ի վ՟ր մարմնոց մերոց : Ոչ է հարկաւոր, թէ դու հոգայցես զայն, զոր ուտելոց ես, կամ զոր զգենլոց ես, որպ՟ զի այսու կերպիւ իցես դու առաւել ազատ և թեթևացեալ, և բոլորովին պարապիցիս 'ի ծառայութ՟ե Ա՟յ : Եւ այս է այնքան մեծ վարկեցեալ · և այնքան մեծապէս ցանկացեալ, մինչ զի ասէ Կասիանոս զաբբայ Յօհաննիսէ, թէ գոլով սա նախ զամս երեսուն 'ի վանս 'ի մէջ կրօնաւորական ժողովոյ, խորհեցաւ թողուլ զվանսն, և ընտրել զառանձնակեցութին առ 'ի պարապիլ առաւելաբար 'ի հայեցողականութ՟ե · և այնպէս արար, զի յայնժամ ժամանակի կարէր ոք առնել այնպ՟ :

Եկաց անապատական վարուք զամս քան յառանձնութեան , այնքան այցելութ̃բ , և զգուշանօք յԱյ̃ . և այնքան բարձրագոյն , և յարակայական զմայլմամբ , մինչ զի մոռանայր զմարմինն իւր . և զզայարանս իւր ոչ եւս առնէին զպաշտօնս իւրեանց , և յերեկոյին ոչ զմտաւ ածէր՝ թէ յաւուրն յայնմիկ կերեալ էր զիր ինչ , կամ ոչ , կամ յանցեալ աւուր : Եւ թէպէտ կայր 'ի յայսպիսի բարձրագոյն աստիճանի զմայլեցողութեան . և այնքան բարւոք անցուցանէր զինքն առանձնական վարուք , սակայն բացորոշեաց թողուլ զկեանս այնպ̃ առանձնական , և դառնալ միանգամ 'ի վանս առ 'ի կեալ 'ի ժողովս կրօնաւորաց ընդ հնազանդութ̃բ , և արար այնպէս : Եւ պատճառն որ շարժեաց զնա՝ եղև այս , զի թէպէտ 'ի վանս ոչ լինէ այնքան վերացումն մտաց , կամ զմայլեցողութիւն , որքան է 'ի յառանձնութեան , բայց սակայն պակասութ̃ն նոցին (ասէ) լնանի 'ի վանս այնու աղքատութ̃բ , և հանդարտութ̃բ , որով զմայլի կրօնաւոր մի , որ ազատ է յամենից հոգացողութեանց , և 'ի փոյթունակութեանց զայնցանէ , որք պէտք են վն̃ վաղուեան աւուր . բայց առաւել հատուցանի ամենից այսոցիկ այնու , զորմէ խօսիմք , այ̃ կամօք մարդոյ ապահով , զի հաճի Ած̃ ընդ այն , զոր առնէ . և ոչ կարէ առնել , որ լինէ առաւել բարեգոյն քան զայն , զոր առնէ հնազանդելով :

Իսկ մեզ՝ որք եմք 'ի կրօնի , և կեամք՝ ընդ հնազանդութ̃բ , ետ Ած̃ զմի այլ Մովսէս , ոպ̃ ազգւոյն իէլի , որ ելցէ 'ի վր̃ լերինն , և յայտնեսցէ մեզ զկամս Այ̃ : Եւ այսպէս կարեմք առնել զայն , զոր ասէին որդիքն իէլի , յորժամ ունէին զտարակուսութ̃ն ինչ , կամ զդժուարութ̃ն , Երթիցուք առ տեսանողն : 1. Թագ. 7. 9: այ̃ երթիցուք առ 'ի խրատել , և հարցանել զնա , որ տեսանէ : Տեսանող կոչէին զմարգարէսն, զի նոքա տեսանէին, և իմանային զկամս Այ, և յայտնէին զայն ժողովրդեանն: Արդ՝ զայս բարիս ունիմք եւ մեք, որք 'ի յամ տարակուսութե, և դժուարութե մերում կարեմք ասել. երթիցուք առ նա, որ տեսանէ, երթիցուք առ նա, զոր ԱԾ ետ մեզ ոպ զմարգարէ. և եդ զնա փոխանակ իւր առ 'ի յայտնել մեզ զկամս իւր միջնորդութբ նր: Եւ այսպ վայելեմք զօրհնութիւն զայն, կամ զերանութիւն, զոր մարգարէն Բարուք ասէ 'ի բերանոյ ժողովրդեանն Այ. Երանի է մեզ Իէլ, զի հաճոյքն այ ծանօթ մեզ են. Բար. 4. 4: Երջանիկ, և երանելիք են կրօնաւորքն, որք իմանան, և գիտեն, թէ զինչ իցէ կամքն Այ, և զինչ կամի 'ի նոցանէ. և որով հաճեցուցանեն զնա, և տան զմեծագոյն հաճութին ածայնոյ մեծվայելչութեն նր:

Երկրորդ պատճառն առաքելոյն Պօղոսի է, Զի խնդութբ զայս առնիցեն, և ոչ յոգւոց հանելով: Եբր հնազանդեցարուք առաջնորդաց ձերոց, ոպ զի նոքա տացեն ուրախութբ զբեռն պաշտօնի իւրեանց, զոր ունին, և մի յոգւոց հանիցեն վասն այնորիկ: Ցաւակցի առաքեալն առաջնորդաց, տեսանելով զբեռն, զոր տանին 'ի վերայ թիկանց: Վասն այսորիկ յորդորէ զմեզ, զի դիւրաւ հնազանդիցիմք նոցա, որպէս զի թեթեւացուցանիցեմք զբեռն նոցա: Որովհետեւ առաջնորդն ունի զմեծ վիշտ, և զաշխատանս տանելով զբեռն 'ի վերայ ուսոց իւրոց, և տալոց է զհամարս Այ վասն ամի. զոր առնէ, և զոր առնես դու. մի ծանրացուցաներ 'ի վերայ բեռին նորա, որ է այնքան ծանր. և մի յաւելուր զայլ բեռն, որ է ցուցանել նմա զդժուարութիւն 'ի հնազանդիլ քոյ նմա, և ոչ թողուլ զնա, զի կառավարիցէ զքեզ: Մեծ վիշտ, և մեծ աշխատանք

է

է վ՟ն առաջնորդին, զի հպատակն ոչ իցէ մահացեալ· և ոչ կարասցէ առնել նմա, զոր կամի առնել· և ոչ իշխեսցէ հրամայել զայն, որ բարի թուի, և վայելէ· այլ կամիցի կալ երկբայ, և երկիւղիւ· մտադեօք ընդունիցի զհրամանն իւր ո՟պ զբարի, թէ ոչ: Միթէ դարձուսցէ՞ զբանն, թէ ոչ: Միթէ առածիցէ՞ զանպատեհ պատճառ իմն 'ի յայնս իրս, որք ոչ են ըստ հաճոյից իւրոց, ո՟պ զի առնիցէ նմա զայնպիսի իր, որ իցէ ըստ հաճոյից իւրոց առ 'ի կատարել: Մեծ վնաս է հրամայել այսպիսեացս, ո՟պ շարժելն զանդամ մի ցաւագար: Ունիս հիւանդ զոտն, կամ զբազուկդ, և ունիս պէտս շարժելոյ զայն, և շօշափելոյ· ո՛հ թէ զո՛րքան վնաս, զո՛րքան աշխատանս, զձանձրութի՛ւն, և զցաւ ես զգալոց: Արդ՝ ո՞րն է պատճառն այսքան ցաւոյ, և նեղուե՟: Պատճառն է, զի հիւանդ է, վ՟ն այսորիկ ոտքն ո՛չ շարժին բարւոք, այլ մեծաւ դժուարութ՟բ: Այնքան մեծ է ցաւն, զոր զգաս 'ի յոտն՝ յորժամ շարժես զայն, մինչ զի ոչ իշխես փոխել զքայլ մի, թէպէտ մեծա՟պ հարկաւոր իցէ քայլելդ, և թողուս կորնչել իրաւութ՟եդ առ 'ի ոչ կրել զայնքան ցաւ: և այնքան մեծ է ցաւն, զոր զգաս շօշափելով զհիւանդ բազուկդ, մինչ զի և ո՛չ իշխես մերձեցուցանել զձեռնդ 'ի բերան քո առ 'ի ուտել: Արդ՝ իւրաքանչիւրոք 'ի մէնջ է անդամ կրօնի, զի բոլորն է մարմին մի, ո՟պ ասէ ս՟րբն Պօղոս զեկեղեցւոյն: Ուրեմն եթէ դու ես հիւանդ անդամ, և ոչ մահացեալ, զմեծ վնաս հասուցանես կրօնին, և առաջնորդին 'ի ժամանակի հրամայելոյն քեզ, և շօշափելոյն զքեզ: Այնքան մեծ է ցաւն, զոր կրէ առաջնորդն, մինչ տեսանէ, թէ հպատակն առնէ զիրս դժուարութ՟բ և ակամայ, մինչ զի թէպէտ իցէ հարկաւորութ՟ն առնելոյ զիր մի, կամ ոչ առնելոյ զգործ, կամ զպաշտօն իմն, բաղձիցս ոչ իշխել հրամայել նմա յաղագս մեծի ցաւոյն. զոր զգայ 'ի շարժելն զբազուկն, կամ զոտն հիւանդացեալ:

Ոյժ բարի է իրս այս վն նց, որք կարծեն, թէ լիցէ իր քաղցր և համեղ գոլն մեծաւոր, և ունիլ զհպատակս, և զորդիս հոգևորս առ'ի հրամայել նց: Նաև ածաշունչն զռեբեկայ, թէ ցանկայր մեծապէս ունելոյ զորդիս, և Այ պարգևեաց նմա: Բայց յոր ժամ զգաց զցաւսն ծննդեանն, մինչ յարգանդի իւրում կռուէին երկու մանկունքն Յակոբ, և Եսաւ վն ելանելոյ մինն յառաջագոյն քան զմիւսն, զղջացաւ Ռեբեկա ասելով, Եթէ այսպէս լինիցի ինձ, զինչ պիտոյ էր յղանալ: Այսպ պատահի մեծաւորաց, յորժամ տեսանեն, թէ ոմն առնէ զիրս ակամայ, ոմն տրտնջէ, և ոմն գանգատէ: Յայն ժամ մեծաւորն զգայ զցաւս, և յոգւոց հանէ 'ի ներքոյ բեռինն՝ զոր կրէ ասելով. Ո՜հ երանի թէ եղեալ իցէի 'ի յանկեան միում տան, և զայլ ոչինչ ունիցէի խոկալոյ, եթէ ոչ զայն, որ ինձ հրամայիցիւր: Ա՞յս է ունիլ զորդիս: Ա՞յս է գոլ մեծաւոր, և ունիլ զհպատակս: Եթէ այսպիսաբար էր պատահելոց իրակութեն ունելոյ զհպատակս, բարեգոյն էր ոչ ունիլն զայնս:

Ոչ ոք գիտէ, թէ որքան մեծ է ցաւս այս, եթէ ոչ նա՝ որ զփորձ էառ: Սովոր է ասել հասարակաբար, թէ որպ զի ոք իցէ բարի մեծաւոր, և գիտիցէ բարւոք հրամայել, պիտոյ է, թէ նախ եղեալ իցէ բարի փոքրաւոր, այ բարի հպատակ. և գիտացեալ իցէ փորձառութբ, թէ զի՞նչ իցէ հնազանդութիւն, որպէս զի կարիցէ ճշմարտութբ ասել զնմանէ այն, զոր առաքեալն ասէ զՔսէ: Քանզի [illegible]. որ [illegible], այս [illegible] է մղց : Եբր. 4. 15. Իրաւի ըստ իրաւանց ասի այս : Բայց ասեմ ես զայլ ևս մի, յորում ենթադատեսցեն (ըստ որում հաւատամ ես) ամենեքեան, թէ ունիցիմ ես զբաւական պատճառ զայս ասելոյ. և է այս. զի որպէս առ'ի գոլ ումեք բարի առաջնորդ, և առ'ի գիտել, թէ ոպ̄ է հրամայելոյ, օգտէ մեծապէս, զի եղեալ իցէ բարի հպատակ, և փորձառութբ̄ գիտացեալ իցէ, զինչ իցէ հնազանդիլն. այսպէս ևս առ'ի գոլ բարի հպատակ, և բարի հնազանդօղ, յոյժ օգտակար է, թէ առեալ իցէ զպաշտօն վեհագունի՛, և հրամանատուի. քանզի այսպիսիս փորձառութբ̄ գիտասցէ զդժուարութի՛, և զմեծագոյն ցաւն, որ գոյ 'ի հրամայելն, յորժամ ոչ զիջանին, և ոչ հնազանդին բարւոք հպատակքն. և ոչ կամիցի տալ զցաւս զայս վեհագունին : Վ̄ն այսորիկ ո՛չ է հարկաւոր թէ եղեալ իցէ մեծաւոր, կամ առաջնորդ, զի բաւական է, թէ ընկալեալ իցէ զհոգս հրամայելոյ ընկերի ումեք : Քանիցս անգամ ոչ կամեցար հրամայել, զի ոչ իշխեցեր հրամայել. և քանիցս անգամ առաւել տհաճեցար հրամայելով զիր մի այլոց, քան թէ դու ինքնին առնիցէիր զայն : Արդ՝ իւրաքանչիւրոք աստ տեսցէ զցաւն, զոր զգայ վեհագոյնն, և զվիշտս, զոր կրէ, յորժամ հպատակն ցուցանէ զդժուարութի յայնմիկ, որ հրամայի նմա : Այսպիսիքս առնեն, զի մեծաւորին յոգւոց հանիցէ, և հառաչիցէ, և բեկլիցի 'ի ներքոյ բեռին պաշտօնի իւրոյ. Նաև ցանկանայցէ մանաւանդ առնել ինքն զա̄մ, եթէ է կարելի, քան թէ հրամայել այլոց : Մեծագոյն ցաւն վեհագունին ո՛չ է յառաւել վիշտն իւր, այլ վիշտն հպատակին : Զի գոլով վեհագոյնն հայր, ո՛չ կարէ ոչ զգալ զցաւն հնազանդութ̄ որդւոց իւրոց : Թափանցէ ցաւն մինչև 'ի հոգին վեհագունին, տեսանելով զանկատարութի՛ նց̃, և զպակաս առաքինութեն, զի որք պարտ էին առնել առաջել յօժարութ̃ զիւրս ցածունս, և խոնարհս, յորս զգան զմեծագոյն ընդդիմութի, սակայն 'ի յայնս վերակրկնեն ամենեքեան զանհնազանդութի, և զպատճառանս, և վասն այնոցիկ պատահին բազումք իրք անպատեհք: Ասէ Թովմաս գեմպացին, թէ գաղջ և պղերգկրօնաւորն իսկոյն հիւանդանայ, և կայ ոչ տրամադրեցեալ վս̃ այնր իրին, զոր ոչ կամի, ոչ երբեք պակասին նմա պատճառք առ 'ի ոչ առնել զայն, ընդ որ ոչ հաճի: Ոչ կարեմք առնել զայն, զոր ոչ կամիմք: Եւ զայն՝ զոր կամիմք, իսկոյն կարեմք, թէպէտ իցէ յոյժ աշխատալի: Եւ զայս տեսաց սբ̃ Ոսկեբերանն: * Մեծ է ոյժն կամաց մերոց, որ առնէ, զի կարիցեմք զայն՝ զոր կամիմք, և ոչ կարել զայն, զոր ոչ կամիմք ‖: Այս է մեծ ցաւն վեհագունին, այս է որ թափանցէ 'ի սիրտ նր̃, զ̃ հոգևոր հիւանդութին հպատակաց, անկատարութին, և ոչ մաքրացեալ գոլն նց̃:

Հնազանդեցարուք ուրեմն մեծաւորաց ձերոց, և լերուք հպատակք նց̃, և խոնարհք, և մի տայք նց̃ զցաւս զայս, ոպ̃ զի մի յոգւոց հանիցեն, և աշխատիցին 'ի ներքոյ բեռին: Զի այս ոչ է օգուտ ձեզ: Եւ այս է երրորդ պատճառն առաքելոյն: Զգոյշ լերուք, զի և ոչ ձեզ է ըմբռն այս, և վայելուչ. զի նաև դուք յոգւոց հանիցէք, և բեկեցիք 'ի ներքոյ բեռին. և ունիցիք զկեանս ձեր անհաճոյս ձեզ, ոպ̃ բարուք զփորձառուն նոքա, որք այսու կերպիւ շրջին: Զգոյշ լերուք, զի մի լքանիցեն զձեզ ոպ̃ զանդամս հիւանդս, և անպէտս, և իրքն ոչ առնիցին: Այս ոչ է վայելուչ, և ոչ օգուտ ձեզ. վս̃ որոյ զգուշացարուք, զի մի զկնջանիցին 'ի յանկատարութե ձեր, և լքեսցեն զձեզ՝ զի առ նիցէք զկամս ձեր, այլ ո՛չ զա՛յն, որ է յոյժ անհարկու, որ՟ ասացաք 'ի վերոյ ։

ԳԼՈՒԽ. ԺԱ.

Յաղագս միջոցի միոյ, որ է յոյժ զօրեղ և նախապէտական վասն ստանալոյ զկատարելութե՟ առաքինութե՟ն հնազանդութե՟, որ է հնազանդիլ վերահասուին, որպէս Քսի՟ տն՟ մերում ։

Մինն 'ի յառաւել, և 'ի գործունեայ միջոցաց առ 'ի ստանալ զկատարելութի այսորիկ առաքինութե՟, կամ առաւել գլխաւորն և գործունեայն է նկատել զԱծ՟ 'ի վեհագունում. և համարել, թէ Ած՟ է՝ որ մեզ հրամայէ, և թէ ոչ հնազանդիմք մարդկան, այլ Այ՟ ։ Զայս միջոցս առաջադրէ մեզ, և վերակրկնէ առաքեալն 'ի բազում տեղիս, և գրելով առ Եփեսացիսն, ասէ ։ Ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց՝ ահիւ և դողութե՟, և միամտութե՟ որպէս Քսի՟ ։ Եփես. 6. 6. Հրամայէ հպատակաց, զի հնազանդք լիցին նաև իւրեանց տ՟րանց ժամանակաւորաց, և հեթանոսաց իբրև Քսի՟ Տն՟ մերում ։ Սբն՟ Բարսեղ յոյժ բարւոք ծանուցանէ աստ և ասէ, զի եթէ սբ՟ առաքեալն Պօղոս հրամայէ, զի հնազանդեսցիմք կարողացն Ծի, որպէս Քսի՝ այնոցիկ, որոց կեանքն յայնմ ժամանակի բոլորն էր անօրէնութի ։ Որում և համաձայնի սբ՟ առաքեալն Պետրոս՝ ասելով, Ո՛չ միայն բարերարացն ։ և հեզոց, այլև կամակորացն ։ 1. Պետր. 2. 18 ։ Ապա որքան ևս առաւել պատեհաւոր է, զի մեք կրօնաւորքս հնազանդեսցիմք մեծաւորաց հոգևորաց, և կրօնաւորաց՝ որ՟ Քսի, որք յամ՟ իրս ցանկան առնել զկամս Այ՟ ։ Եւ դառնայ իսկոյն ասէ, Մի՛ առ աչօք ծառայել իբրև մարդահաճոյք, այլ որպէս ծառայք Քսի առնել զկամս ԱՅ : Սրտի մտօք ծառայել որպէս ԱՅ, և ո՛չ իբրեւ մարդկան : Եւ գրելով առ Կողոսացիս 3. 23. դարձեալ կրկնէ ասելով, Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք՝ իբրեւ Տն, և ո՛չ իբրեւ մարդկան : Գիտասջիք, զի 'ի Տնէ ընդունիցիք զհատուցումն :

Ծայրն մեր հիմնեցեալ յայսմ վարդապետութե, յանձնէ մեզ մեծապէս զմիջոցս զայս, և ստիպէ զմեզ առ այս, կրկնելով բազմապատ 'ի կացուցմունս : 'Ի տեղւոջ միում ասէ, է յոյժ օգուտ առ 'ի առնել զպտուղ, և է յոյժ հարկաւոր, զի ամենեքեան վարեսցին հնազանդութբ, ճանաչելով զվեհագոյնն որպիսի և իցէ, 'ի տեղի Քսի Տն մերոյ : Եւ յայլում տեղւոջ ասէ. Նմանապէս է յոյժ հարկաւոր, զի ամենեքեան հնազանդեսցին ոչ միայն մեծաւորին ընկերութե մերոյ, կամ տանն, այլև պաշտօնէից ենթակարգեցելոց, որք 'ի մեծաւորէ ունին զիշխանութի, և սովորեսցին ոչ հայիլ առ նա՝ որում հնազանդին, այլ առ նա, որում 'ի յամ իրս պարտին հնազանդիլ, որ է Քս Տրն մեր : Եւ 'ի վեցերորդում մասին, ուր առաւել յատկապէս ընձեռէ զայսմանէ առաքինութե հնազանդութե, դնէ զայս ոճ զհիմն, և ասէ : Եթէ կամիս ստանալ զկատարելութին առաքինութես այսորիկ, պիտոյ է, զի ջանասցես ունիլ միշտ առաջի աչաց քոց զՔս Տրն մեր, որոյ վասն հնազանդիս մարդոյ : Այժմ և գործունէութին այսր միջոցիս տեսցի բարբառք ստոյգ : Եթէ նոյն ինքն Քս երեւեսցիւր քեզ անձամբ իւրով ակներեւութաբար, և հրամայեսցէր քեզ, զի առնիցէիր դու զայս, կամ զայն իրս, որպիսեաւ յօժարութբ հնազանդեսցէիր նմա, որպիսեաւ կամաւ և ուրախութբ, որպիսեաւ համակերպութբ, և անապրելով զդատողութն քո : Մի՞ հարթեսցիր 'ի քեզ խորհուրդ-

առ 'ի

տա՛ն ՚ի դատել, ոչ ընտրել, և ոչ երկմտել եթէ լինէր բարի, կամ չար · այլ կուրակերպ առանց ուսումնասիրութե իմիք ընդգրկեցէք զայն վն այնր պատճառին, որ է ՚ի վեր քան զմիտ պատճառ, ասելով, Ած է՝ որ հրամայէ ինձ · Ած է՝ որ կամի զայս, այս է բարեգոյն, և համարեցէք զքեզ յոյժ երջանիկ · զի նա որ է Ած՝ կամի ՚ի գործ ածել զքեզ · և որքան առաւել դժուարին իցէր՝ և խստագոյն իւր քեզ հրամայեցեալ, այնքան առաւել մեծագոյն շնորհ, և այնելութե՛ն վարկեցէք ։ Արդ՝ այս է միջոցն, զոր այժմ առաջադրեմք ։ Եւ առաջադրէ զայս մծն Բարսեղ, ով զի համառօտեսցուք զայս այնպէս, ով վայել է, և ասէ · ՚Զի ոչ կարծեօք իմովք, այլ առաջնորդութե Աստուծոյն ասաւեց մատեայ առ ՚ի ներածել զձեզ ՚ի նմանակերպունս յոյս || ։ Այսինքն · մի՛ կարծեր, թէ այս իցէ նկատումն, կամ ջերմեռանդութիւն իմ, այլ է ճշմարտութիւն բացորոշաբար բացայայտեցեալ յԱւետարանի · զի նոյն ինքն Քս ասէ, Որ ձեզ լսէ, ինձ լսէ ։ Ղուկ. 10. 16. Յաղագս այսորիկ՝ և այսու իմացուածով մեկնեն սրբքն զբանս զայս, և ասեն, թէ Քս ոչ ասաց վն առաքելոց միայն, այլև վասն ամենից այլոց նախադասից ։ Ուստի Կասիանոս, և համայնք սր միայնակեացքն այնք կամեցան ՚ի գործ ածել զվարդապետութիւն զայս, և կալնուլ զհրամանս առաջնորդաց որպէս զհրամանս Այ · զի նոյն ինքն Քս այսպ ասէ, և հրամայէ մեզ բացայայտաբար · զի ոչ հայեսցիմք յանձն մեծաւորին, այլ զԱծ ՚ի նմին · Թէև մեծաւորն ոչ իցէ այնպիսի, որպիսի պարտէր գոլ ։ Յաթոռն Մովսիսի նստան դպիրքն և փարիսեցիք ։ Զամ ինչ՝ զոր ասիցեն ձեզ՝ արարէք, և պահեցէք · բայց ըստ գործոց նոցա մի՛ առնէք ։ Մատթ. 23. 2. Ուստի զայն, զոր նկատելոց եմք ՚ի հնազանդութե, է Ած, որ եթէ կամիջի յայտնել մեզ զկամս իւր ինքնին, կամ միջնորդութ հրեշտակի, կամ միջնորդութ մարդոյ, կամ պետրոսի, կամ յօհաննիսի, մի և նոյն է: Նոյնով կերպիւ առնլոց եմք զմինն և զմիւսն: զի Ած է այն, որ հրամայէ, և մեծամեծորն յանուն նր: Ուստի սրն Բեռնարդոս առաջբերէ զբանս սբյն Բենեդիկտոսի, որ ասէ այսպ· *Հնազանդութիւն, որ մեծաւորաց տրի, Այ տրի, զի նա ասաց, որ ձեզ լսէ, ինձ լսէ: Ուստի զոր ինչ հրամայէ մարդփոխանորդ Այ, և ոչ գիտիցի հակառակեալ այն գոլ անհաճոյ Այ, առանց այլայլութե ընդունելի է, որպէս թէ հրամայեալ իցէր զայն Ած: Զինչ փոյթ է քեզ, թէ ինքն Ած 'ի ձեռն պաշտօնէից իւրոց, ք կամ 'ի ձեռն մարդկան, և կամ 'ի ձեռն հրեշտակաց ծանուցանիցէ զբարեհաճութն իւր մարդկան ‖: Եւ 'ի նոյն տեղւոջ սբն Բեռնարդոս առաջբերէ զվճիռն և զվկայութիւն զայն հասարակ և ասէ: * Եթէ Ած, կամ մարդ փոխանորդ նր զորինչ պատուիրեսցէ՝ հանդէտ ջանիւ, և հանդէտ պատկառանօք պարտի կատարիլ, միայն թէ մարդն ոչ հրամայիցէ ընդդէմ Այ ‖: Ոչ եմք սպասելոց հրաշից, և ոչ եմք ակնունելոց, զի գայցէ նոյն ինքն Ած անձամբ իւրով առ 'ի խօսիլ ընդ մեզ, և հրամայել զայն, զոր առնելոց եմք. զի արդէն էանց ժամանակն այն, յորում պիտոյ էր՝ զի Ած իջեալ ինքնին խօսիցէր ընդ մեզ, և ուսուցանիցէր մեզ, որպէս արար իսկ: 'Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն, ասէ սրն Պօղոս. Եբրայ. 1. 2: Եւ առաքեալն և աւետարանիչն սբն Յօհաննէս ասէ, Միածինն որդի՝ որ է 'ի ծոց հօր, նա պատմեաց: Յօհան. 1. 18: Ուստի պարտիմք գիտել, թէ կամի Ած, զի այժմ կեայցեմք հաւատով, և ունիցիմք զմեծաւորն 'ի տեղի իւր:

Աւէ

Ասէ ս՟րն Օգոստինոս, թէ զայս կամէր նշանակել ԱԾ՝ առնելով ընդ կոռնելիոսի հարիւրապետին, որ պատմի 'ի գործս առաքելոց: Կոռնելիոս այս էր հեթանոս, բայց երկիւղած յԱՅ. և կրթիւր բարեգործութ՟բ, ողորմածութ՟բ, և աղօթիւք: Կամեցաւ Տ՟ր դարձուցանել զնա, և ուսուցանել նմա զճշմարտութ՟ն հաւատոյն մերոյ. յաղագս որոյ առաքեաց զհրեշտակ մի, որ ասաց նմա՝ Կոռնելիէ, աղօթք քո և ողորմութիք ելեն ընդունելիք առաջի ԱՅ. վ՟ն որոյ առաքեա՛ կոչել զՊետրոս, որ իջևանի յայս ինչ տեղւոջ. նա ասասցէ քեզ, թէ զինչ պարտական է քեզ առնել: Ասէ ս՟րն Օգոստինոս, " Մի թէ ոչ կարէր ուսուցանել զնա հրեշտակն ‖: Պատասխանէ ս՟րն, առաքեաց զնա առ Պետրոս, և ոչ կամեցաւ ուսուցանել ինքնին, և ոչ միջնորդութ՟բ հրեշտակի, այլ միջնորդութ՟բ մարդոյ միոյ. զի ԱԾ կամի պատուել զմարդն. և կամի զի հնազանդեսցուք մարդոյ, և ենթարկեսցուք նմա, մանաւանդ զկնի մարդ եղանելոյն ն՟ր, որ ստորադրեաց զինքն մարդոյ, և հնազանդեցաւ մարդկան վասն մեր. Եւ էր նոցա հնազանդ: Ղուկ. 2. 51: Զայսմ ծանուցանեն ս՟րքն 'ի դարձմանն ս՟բյ առաքելոյն Պօղոսի. զի երևելով նմա Ք՟ս ինքնին. և հարցանելով նա ցՏ՟ր, և ասելով. Տ՟ր զի՞նչ կամիս, զի արարից, ոչ կամեցաւ Ք՟ս յայտնել ինքնին զկամս իւր. այլ առաքեաց զնա առ մարդ մի, զի նա յայտնիցէր նմա, Մո՛ւտ 'ի քաղաքդ, և պատմեսցի քեզ, զինչ քեզ պարտ իցէ առնել: Գործ. 9. 7: Ուստի աղաղակէ ս՟րն Բեռնարդոս ասելով: " Ո՛ իմաստութի՛, որ խրատէի զ՟մ ինչ համեղաբար տրամադրես, զի զնա ընդ որում դու խօսիս, առ 'ի կրթիլ ը՟ կամաց քոց՝ առաքես առ մարդ. ո՟պ զի օգուտն կենաց ընկերակցութե՟ն գովիցի ‖: Այո՛ այսպ՟ է, ասէ Բեռնարդոս:

Զի ԱԾ կամի պատուել զմարդն. և կամելով տալ նմա զիշխողութի, կամի զի ունիցիմք զմարդն փոխանակ իւր, և ընդունիլ զձայնն առաջնորդին, որպ թէ իցէր ձայն ԱՅ:

Բայց չեմք պակասագոյնք մեք քան զնոսա, ընդ որս ԱԾ խօսեցաւ ինքնին, մանաւանդ՝ զի որպ վն հաւատալոյ մեր զայն, զոր ոչ տեսաք, առաւել արդիւնաւորիմք, քան թէ տեսանիցէաք, որպէս ասաց Քս ցսբն Թովմաս: Արդ զի տեսեր զիս, և հաւատացեր, երանի որոց ոչ իցէ տեսեալ, և հաւատասցեն: Յօհ. 20. 29: Այսպ յայսմիկ հնազանդութե, որով հնազանդիմք վեհագունին որպ ԱՅ, չզջիմք կերպիւ հաւատոյ, զի հաւատամք, թէ զամ ինչ զոր վեհագոյնն պատուիրէ, և հրամայէ, է պատուէր և հրաման ԱՅ, և կամք նր. և կերպիւ իւիք արդիւնաւորիմք առաւել. Եւ առաւել վն հաճոյ թուելոյն մեզ հնազանդիլն նմա, որպ նոյն ինքեան Քսի. որպ տեսն մեքն զողորմութեն. նաև ասէ նոյն ինքն Քս, Ամէն ասեմ ձեզ, որովհետև արարէք միում եղբարցս այսոցիկ փոքրկանց, ինձ արարէք: Մատթ. 25. 40: Այնպ վճարէ ԱԾ վն ողորմութեն արարեցելոյ աղքատի միում, որպէս թէ արարեալ իցէր ինքեան: Ծանուցանեն եւ այլք ոմանք, թէ կերպիւ իւիք տայ առաւել նա, որ առնէ զողորմութիւն աղքատի միում վն սիրոյն Քսի, քան թէ տայցէր զայն ինքեան Քսի. որպ առնէ ոք առաւել, և ցուցանէ առաւել զսէր բարեկամին իւրոյ, ընդունելով վն սիրոյ նր, և գգուելով զծառայ մի նր, քան թէ ընդունիցէր, և գգուէիցէր զնոյն ինքն բարեկամն: Զի այս ոչ երևիցիւր մեծ իմն. զի արժանաւորութեն, և նկատումն անձին արդիւնաւորի զայն: Բայց եթէ տարածիցի սէրն այնքան, մինչ զի վն սիրոյ նր ընկալցի զամ ոք որպիսի և իցէ այն, և ընձեռիցէ ըն նմա այնքան բարեպէս, րեա՟մ, որքան ընդ բարեկամին, այս է առաւել սէր : Արդ՝ այսպէս է և 'ի հնազանդութե՟ն : Եւ այսմ՟ ասէ ս՟րն Բոնավէնթուրա · է բարձրագոյն աստիճան հնազանդութե՟ն հնազանդել այնմիկ, զոր անմիջաբար հրամայէ, և պատուիրէ Ա՟Ծ · բայց կերպիւ իւիք առաւել մեծ աստիճան է հնազանդել մարդոյ վասն Ա՟Յ : Եւ երբեմն եղիցի առաւել մեծագոյն արդիւնք, և հատուցումն · զի հնազանդելով ոք մարդոյ վասն Ա՟Յ, առաւել խոնարհի սիրոն, առաւել ուրանայ զկամս իւր, և առաւել համակերպէ զինքն կամացն Ա՟Յ : Ով՟ առաւել առնէ ոք հնազանդելով միում 'ի ծառայից թագաւորին վ՟ս սիրոյ թագաւորին, քան թէ հնազանդելով նոյնոյ ինքեան թագաւորին : Եթէ գայցեր Ա՟Ծ 'ի հրամայել քեզ ինքնին, զինչ մեծ իմն լիցեր, եթէ հնազանդիցեիր նմա յօժարաբար, և համակերպութե՟ : Բայց եթէ վասն սիրոյ նորա հնազանդիցիս մարդոյ միում, որ է որպէս զքեզ · և ենթադրիցես զքեզ նմա ամբողջ համակերպութե՟, այս լիցեր մեծապէս հաճելի, և մեծ համ[illegible]րելի ։

ԳԼՈՒԽ · ԺԲ :

Յաղագս թէ այս ներքին հնազանդելոյ [illegible] որպէս [illegible] է հարկաւոր վասն ստանալոյ զկատարելութի՟ հնազանդութե՟ :

Այս միջոցս ոչ նկատելոյ յանձն վեհագունին ում՟ մարդոյ, այլ հայիլ 'ի նա որում 'ի մարդոյ հնազանդիմք, որ է Ք՟Ս Տ՟րն մեր, ոչ միայն օգնէ, և օգտակար է բարւոք հնազանդելոյ, և առաւել մեծակատարելութ՟, այլ և է բացարձակաբար և բացորոշա՟մ հարկաւոր առ 'ի ստանալ զաառաքինութիւն հնազանդութ̃ե, մինչ զի որ ոչ համարի՝ թէ Ա̃Ծ է այն, որ նմա հրամայէ, և կամի 'ի նմանէ զայս ինչ իր․ և ոչ հնազանդիցի այսու նկատմամբ, ո՛չ միայն ոչ եղիցի կատարեալ 'ի հնազանդութ̃ե, այլև ո՛չ եղիցի բարի հնազանդ․ և միշտ եղիցի պակասաւոր յայսմ առաքինութ̃ե ։ Եւ զայս ցուցից գործադրաբար, և շօշափեցուցից ձեռամբ վասն գոլոյն սորա կէտ յոյժ գոյացական ։ Եթէ դու նկատիցես զանձն վեհագունից որպէս զմարդ, նկատիցես դու մարդդ զմարդ, զի դու ես ես մարդ ։ Եւ թէպէտ վեհագոյնն իցէ յոյժ ոք, յոյժ խոհեմ, և յոյժ իմաստուն, առաւել, սակայն է մարդ, և ո՛չ կարէ գիտել զա̃մ ինչ, և ո՛չ զա̃մ պատճառս, որք են յա̃մ իրս․ ուստի կարէ խաբել՝ և սխալել յամենայն իրս ։ Դարձեալ՝ եթէ հայիս 'ի նա ոպ̃ 'ի մարդ, կարես ասել ես, թէ 'ի վախճանի ոպ̃ մարդ կարէ ունիլ ըղ մասնաւոր ըղձաձկութիւն իւր, և զնկատմունս, որք շարժեն զնա առածել 'ի մի կողմն, քան թէ առ միւսն․ և այս առնէ, զի նա ո՛չ տեսցէ զիրս քո բարեօք աչօք, ոպ̃ զայլոցն ։ Եւ յառաւ̃ յորժամ իցեն, որք քեզ հրամայեն, են դժուարինք, և ներհակք զգացողութ̃ե քում․ անձնասիրութիւն որ է մեծագոյն դրդիչ, հնարիցէ զպատճառս յոյժ սրագոյնս, և նրբագոյնս 'ի նպաստաւորութիւն քո․ և գտցէ զբազում պատասխանիս, և զլուծումն այնց՝ որք ասին ընդդէմ քեզ ։ Եւ այսպէս ո՛չ կարասցես հանդուցանել երբէք զկամս և զիմացականութիւն քո․ զի ո՛չ պակասեսցին քեզ առ 'ի հակադրել պատճառանց մարդկայնոց՝ զայլս պատճառս մարդկայինս ։ Վա̃ որոյ եթէ ոչ նկատիցես յանձն վեհագունին ոպ̃ 'ի մարդ, որ է ենթակայ սխալանաց, և թշուառութ̃եց, այլ նկատիցես 'ի նա, որում հնազանդիս 'ի յանձին մար

դոյ՝

գոյ՛ զՔս Տրն մեր, որ է ծայրագոյն իմաստութիւն, անչափ բարութիւն, անհուն սէր, զոր գիտես, թէ ոչ կարէ խաբել, և ոչ կամի զքեզ խաբել, յայնժամ զուգաւորեսցին համայնք դժուարութիւնք, և համայնք պատճառանք, և դատողութիւնք, և մնայ մարդն յոյժ ամբողջապէս վերահասու ։ Քանզի պատճառս այս, զի թէ Ած կամի զայս, Ած հրամայէ զայս ; և այս է կամքն Այ, ոչ ունի զպատասխանատուութիւն․ և ոչ զլուծումն ։ Ըստ որ ասէր մարգարէն դաւիթ․ Լռեալ եղէ, և ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր ։ Սաղմ․ 38․ 10։ Ո՛չ գանգատեցի Տր 'ի վիշտս իմ, այլ որպէս համր լռեցի, և ոչ բացի զբերան իմ․ քանզի գիտեմ, զի դու առաքեցեր ինձ զայնս ։ Ո՛հ եթէ վարիցեաք և մեք այսու կերպիւ, որպիսեաւ ոգւով շրջեցեաք․ որպիսեաւ յօժարութեամբ հնազանդիցեաք, և կատարելութեամբ ։ Իսկոյն թողուցումք զտառն սկսեցեալ 'ի լսելն զձայն մեծաւորին, զմտաւ ածելով թէ է ձայն Քի․ և թուեսցի մեզ մեծ անարգութիւն, և գռեհկութիւն յամենայնն, և ասելն, այժմ եկից ։ Ո՛հ թէ որպէս համակերպիցեաք զկամս մեր ընդ կամաց վեհագունին․ և որպէս վերանշանիցեաք զդատողութիւն մեր․ և համայնք դժուարութիւնք դիւրանայցեն այսու ։

Աստուստ իմացի լուծումն տարակուսութեան միոյ, որ է պատեհաւոր առաջադրութեան մերում, որ է այս ։ Ուստի յառաջագայի այս, զի գոլով ոք երկար ժամանակաւ 'ի կրօնի, և հնազանդելով յամում ուրուք, բայց սակայն չեւս ունի զունակութիւն հնազանդութեան․ և ոչ ստացեալ է զառաքինութիւն զայս․ գոլով հասարակ վարդապետութեան ամենից փիլիսոփայից, և Աստուածաբանից, թէ ունակութիւնք առաքինութեանց տանին ներգործութիւնք, և կիրառութիւնք նց ։ Պատճառն սորին, և լուծումն տարակուսութե, է այս. զի ունակութիւնքն սահմանին ներգործութբք, որք լիցեն նմանք այնմ առաքինութե, վա՟ որոյ եղանին տեսական պատճառօք այնր առաքինութե: Արդ՝ հնազանդութիս այս, զորմէ ընձեռեմք, է առաքինութիւն կրօնաւորական, և տեսակ առաքինութե կրօնի, (ոպ՟ ասեն ածաբանք) որ նկատէ յԱծ, 'ի պաշտումն, և 'ի պատիւ ածային մեծութե նր՟. Եւ քանզի նա՝ որ հնազանդի, եթէ ոչ նկատէ զԱծ զատապէս 'ի յանձն վեհագունի. և ոչ հնազանդի վասն այսորիկ, զի այն է կամքն Այ՟, այլ հնազանդի՝ կամ առ 'ի հաճեցուցանել զվեհագոյնն. կամ զի է պարաւանդեցեալ լինի իմիք, կամ վա՟ ահի տուայաշխարանաց, և յանդիմանութե, կամ զի հրամայի ինքեան այն որ ասացաւ. կամ զի ասացին նմա մարդավարուբ՟. և կամ վասն այլոց նկատմանց նմանեացոցին, այսոքիկ ոչ են ներգործութիւնք այսորիկ առաքինութեան հնազանդութեան կրօնաւորականի, զի պակասի նմա տեսակաւոր պատճառն, և կրօնաւորական հնազանդութիւն. վասն այսորիկ ոչ առանայ զառաքինութիւն հնազանդութեան, և ոչ առանայցէ զնմ՟ աճուրս կենաց իւրոց: Ա յապետաբար յառաջանալով կարէ առանալ զհնազանդութիւն քաղաքավարական, ոպ՟ սովոր է գոլ 'ի մէջ զինուորաց, 'ի նաւի միում, և յայլս ժողովս, և 'ի հասարակութիս. բայց այս ոչ եղիցի ճշմարիտ առաքինութի կրօնաւորական:

Վասն որոյ ասէր հայրն մեր, թէ ոչ պարտիմք հնազանդիլ վեհագունին վա՟ այսորիկ, զի է յոյժ խոհեմ, զի է յոյժ բարի, զի է օժտակացեալ այլովք պարգևօք. այլ հնազանդիլ վա՟ այսորիկ, զի ունի զփոխանորդութի, և զիշխանութի Այ՟ Տն՟ մերոյ: Քանզի եթէ դու հետևեաս յայսմանէ, և հայիս յայդոսիկ

սիկ պատճառս մարդկայինս, կորնչի (ասէր) ոյժն հնազանդութեան: Այդ ոչ եղիցի առաքինութիւն հնազանդութեան. և ոչ ներգործութիւն կրօնի, զի այսու կերպիւ նաև արտաքոյ կրօնի յաշխարհի հնազանդիցէիր, և հետևիցէիր դատողութեան մարդոյ միոյ խոհեմի, և իմաստնագունի, կամ մեծի ներհմտացելոյ: Այս է կեալ ընդ մարդկան, այլ ոչ ընդ ԱՅ: Որքան առաւել հայիցիս յայսոսիկ պատճառս մարդկայինս, և որքան առաւել առաջնորդեսցես զքեզ նոքօք, այնքան առաւել հեռանայցես յիրացն ածայնոց, և 'ի ճշմարիտ առաքինութենէ հնազանդութեան. և կորուսցես 'ի հնազանդիլ ոպ̄ մարդոյ, այլ ոչ ԱՅ: Եւ հետևելով այսմ իրի հայրն մեր յաւել ասել. ո՛չ իւիք կերպիւ հայելոց եմք, եթէ նա՝ որ հրամայէ մեզ, է խոհական, կամ վեհագոյն սանն, կամ է այս ոք, և կամ այլ ոք. որովհետև ոչ հնազանդիմք վն̄ նց̄, այլ վն̄ ԱՅ միայն: Եւ կամի՝ զի նմանիմք խոնարհութ̄բ, յօժարութ̄բ, և համակերպութ̄բ հնազանդեսցիմք պաշտօնէից ստորակարգեցելոց, որպէս հնազանդիմք վեհագոյն մեծաւորին:

Առ այս կատարելութեան էր ժամանեալ հնազանդութեան երանելին մր̄ հօրն Ֆրանչիսկոսի, որ ասէր. 'ի մէջ այլոց շնորհաց, զորս գթութիւն ԱՅ բարեբարոյաբար ինձ շնորհեաց, կամեցաւ շնորհել և զայս, զի հնազանդիցիմ այնպէս յօժարաբար նորավարժի միում, որ նորապէս իցէ զգեցեալ զկրօնաւորական ըզգեստ, եթէ տուեալ լինիցէր ինձ նա վերատեսուչ, ոպ̄ հնազանդէի եղբօր ծերագունի, և խոհեմագունի: Բարւոք էր իմացեալ, թէ որպէս էր հնազանդելոց. զի ոչ նկատէր յանձն մեծաւորին, այլ զԱԾ 'ի նմին. որում հնազանդէր: Նաև ասէր ս̄րն Ֆրանչիսկոս. թէ որքան պակասաւորի որակութե̄, և պակատարելի իշխանութե է վեհագոյնն՝ որում հնազանդիմքս, այնքան առաւել կատարեալ. և հաճոյ ԱՅ է հնազանդութիւն այն կերպիւ իւրով։ Եւ այս է այն, զոր սովոր եմք ասել հասարակաբար, թէ յորժամ ոք բարւոք հնազանդի խոհականի միում, ւեղանապետի, լուսաւորի, և այլոց պաշտօնէից ստորակարգեցելոց, ցուցանէ առաւել զհնազանդութիւն իւր, քան թէ յորժամ հնազանդի կառավարչին. և որ հնազանդի կառավարչին, առաւել է՝ քան զհնազանդիլն գաւառապետին, և սեռական մեծաւորին։ Եւ պատճառ սորին է, զի այնպիսի հնազանդութիւն է առաւել զտաբար վս ԱՅ։ Ի հնազանդութե վերնագոյն մեծաւորին կարէ լինել, թէ շարժիցէ զքեզ պատկառանքն, և իշխանութիւն անձին նորա, կամ ցանկութիւն առնելոյ նմա զիր իմն հաճելի, և հաճեցուցանելոյ զնա։ Բայց յորժամ հնազանդիս դու պաշտօնէի միում ստորակարգեցելոյ, թուէր թէ ոչ իցէ այլ իր՝ որ զքեզ շարժիցէ, զի հնազանդիցիս, եթէ ոչ ԱԾ միայն։

Յարակցէ այսմիկ հայրն մեր՝ թէ որ ոչ է ամբողջաբար հնազանդող պաշտօնէի ստորակարգեցելոյ, նաև ոչ լինի հնազանդող այլոց մեծաւորաց. քանզի ճշմարիտ հնազանդութիւն, որպէս ասացաւ, ոչ նկատէ յանձն, որում հնազանդի, այլ յԱԾ, որում, և վս որոյ յանձն իւր հնազանդի։ Եւ այսպիսւոյս պակասի տեսական պատճառն ճշմարիտ հնազանդութե. զի եթէ հնազանդի վասն ԱՅ. հնազանդիցի ևս պաշտօնէից ստորակարգեցելոց, որք ունին զնոյն փոխանորդութիւն ԱՅ, որպէս ունին մեծաւորքն. ուստի որով հետև ոչ հնազանդի սոցա, նշան է, թէ յորժամ հնազանդի այլոց մեծաւորաց, ոչ հնազանդի վասն ԱՅ, այլ վասն մարդկային նկատմանց. և այսպէս հնազանդութիւն իւր ոչ եղիցի կատարեալ, և կրօնաւորական:

ԳԼՈՒԽ. ԺԳ:

Յաղագս այլոց բարեաց, որք գոն 'ի հնազանդութե՟ մեծաւորին, որպէս Քսի:

ՈՂՋ յայնցանէ, որք ասացան, գոն և այլք մեծագոյնք բարիք յայսմիկ հնազանդութե՟ նկատելոյ 'ի մեծաւորն, և հնազանդելոյ նմա, առ՟ Քսի, այլ ոչ որպէս մարդոյ: Եւ առաջին բարին է այս, զի ստանամք զոյժ, և զհամարձակութի՟ մեծ, և կարեմք առնել զայն ամ՟, որ մեզ հրամայի, նաև լինի մեզ բարի, զոր առնեմք: Զի այս է զանազանութի՟ 'ի մէջ նոցա, զոր հրամայէ ԱԾ. և զոր հրամայեն մարդիկ. զի բազմիցս հրամայեն մեզ մարդիկ զայն, զոր մեք ոչ կարեմք առնել. և ոչ կարեն տալ մեզ զոյժ, և զկարողութի՟ վա՟ առնելոյ զայն. բայց ԱԾ ոչ երբէք հրամայէ մեզ, եթէ ոչ զայն, զոր կարեմք առնել. նաև տայ զկարողութի՟, և զոյժ առնելոյ, և կատարելոյ զայն, զոր մեզ հրամայէ: Եւ աստ 'ի կրօնի ունիմք մեք ըղ մեծ հարկաւորութի՟ մասնաւորի կարողութե՟ այսորիկ, և յուսացողութե՟ առ ԱԾ: Զի կոչեցեալք եմք առ իրս մեծագոյնս, և դժուարինս. ուստի առ 'ի ոչ վհատիլ, և նուաղիլ 'ի յայնս, մեծապ՟ օգնէ և զօրացուցանէ, նաև տայ զհամարձակութի՟ խոկալն, թէ ԱԾ հրամայէ մեզ: Եւ որովհետև ինքն եդ զմեզ 'ի պաշտօնի յայնմիկ, և 'ի սպասաւորութե՟, տացէ մեզ զօգնութի՟ վասն առնելոյ զայն, զոր մեզ հրամայէ: Եւ այսպէս նոքա, որք երթան յառաքելութե՟ 'ի հնդաստան, և ձեռնամուխ լինին զայլոց իրաց մեծաց, 'ի մէջ վշտաց, և վտանգաց զորս կրեն 'ի ծո-

'ի ծովու, կամ 'ի ցամաքի, թէ 'ի հոգեւորս, և թէ 'ի մարմնաւորս, այս է մեծ մխիթարութիւն ոգ̃ : Դու Տր̃ եդեր զիս յոյսմիկ, և դու հան զիս բարեաց̃ : Քո եմ ես, և կեցո՛ զիս : Սաղմ. 118. 94: Նաև որ ոսկեբերանն, թէ զայս կամեցաւ նշանակել Քս̃ փրկիչն մեր, յորժամ առաքելով զաշակերտսն իւր քարոզել, և դարձուցանել զաշխարհս, ասաց ցնս̃ · Ահաւասիկ ես առաքեմ զձեզ · Զի թէպէտ լինէք տկարք դուք, և թշնամիք ձեր զօրեղք, և հալածանքն մեծ, ոչ պարտիք երկնչիլ, և զարհուրիլ · և ոչ յուսահատիլ · զի հրամանաւ և պատուիրանաւ իմով երթայք դուք հնազանդելով ինձ : Ես եմ, որ առաքեմ զձեզ · և ես եմ, որ ազատեցից զձեզ յամենից չարեաց, վնասուց, և վտանգից, որք ձեզ կացեն պատահել · և տաց ձեզ զյաղթութիւն ընդդէմ ամենից թշնամեաց ձերոց : Այս եղև մխիթարութիւն աշակերտացն յամ̃ վիշտս, և 'ի վտանգս իւրեանց · և նոյնս պարտէ գոլ մխիթարիչ մեր յամ̃ գործառնութիւնս մեր, և յամ̃ իրս, զորս մեզ հրամայէ հնազանդութիւն · և ասել, Ած̃ առաքէ զիս, և նա փրկեսցէ զիս · Ած̃ հրամայէ ինձ զայս, և նա տացէ ինձ զկարողութիւն կատարելոյ : Հրամայեաց Ած̃ ամբակումայ մարգարէին, զի զկերակուրն, զոր պատրաստեալ էր վն̃ հնձողաց, տանիցէր 'ի Բաբիլոն առ Դանիէլ, որ կայր 'ի գբի առիւծուց · և նա ոչ գիտէր · թէ ուր իցէր բաբիլոն : Տր̃ զԲաբիլոն իմ չէ տեսեալ, և զգուբն ոչ գիտեմ, ուր իցէ : Դան. 14. 34: Կալեալ հրեշտակն զհերէ վրայ գլխոյ նր̃ · և կացոյց զնա 'ի վր̃ գբոյն : Զոր առնելով Ած̃ կամեցաւ ծանուցանել մեզ զդիւրութիւն, և զյօժարութիւն, որով փրկէ զհնազանդօղս հրամանի իւրոյ :

Դարձեալ, յայսմիկ հնազանդութե, որով ըք հնազանդի վեհագունին որպէս Քսի, այս

յորս.

յառաքինական կրթութեն առնելոյ միշտ ըզ կամս Այ․ որով ոք կարէ կալ յարաժամ վառեցեալ և բորբոքեցեալ սիրովն Այ․ և ՚ի յաղօթս յարակայականս․ քանզի յարատևելով ոք ՚ի յառնելն միշտ զկամս Այ, բերկրելն և ուրախանալն նովաւ, է յոյժ բարի, և օգտակար աղօթք․ և յոյժ բարի կերպ կալոյ միշտ ՚ի ներկայութեն Այ։

Դարձեալ, որ երթայ ը այս ճանապարհս, ոչ հոգայ՝ թէ հրամայեսցի նմա մանաւանդ այս, քան թէ այն իրն․ քանզի նա ոչ համարի բարի զայլ ինչ, եթէ ոչ առնել զայն, որ հրամայի իւրեան առնել զկամս Այ․ զի այս է կերակուրն իւր, հաճոյն իւր, սփոփումն իւր յամ էրս, զորս առնէ։

Դարձեալ՝ նա որ ՚ի յանձին մեծաւորին նշմարէ զԱծ, և համարի զինքն եղեալ ՚ի ձեռս Այ, նաև թէ Ած է այն, որ կառավարէ և ուղղէ զնա, կայցէ մեծաւ խաղաղութբ այնպիսին, առանց հոգալոյ և խոկալոյ, թէ զինչ է լինելոց զինքենէ։ Խաղաղութբ յայս և ՚ի սոյն ննջեցից, և հանգեայց։ Սաղ. 4. 9։ Զի եղեալ է զինքն ՚ի ձեռս Այ, և ասէ, Տր հովուէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցէ։ Սաղմ. 22. 1։ Զի հաւատան եմ ես, թէ ոչ այլ ինչ պատահեսցի ինձ, եթէ ոչ այն, զոր նա կամիցի․ և ոչ զայլ ինչ կամի, եթէ ոչ զայն, որ է բարի։

Ո՛չ թէ զորքանս բարիս, կամ զորքանս գանձս հոգևորս գտանիցեմք մեք, եթէ առժորիցեմք տեսանել զԱծ ՚ի վեհագունում մերում, և համարիցեմք, թէ կեամք մեք ը Այ, և ոչ ըստ մարդոյ։ Ասէր հայր ոմն յոյժ հնազանդ, թէ կայցի աւելի քան զամս քսան ՚ի կրօնի առանց ճանաչելոյ, թէ զինչ իցէ հնազանդելն այլոց ոպ Քնի, և ծառայել ոպ Այ, և ոչ մարդոյ։ Եւ դու թէ բնաւ կարծես, թէ գիտիցես զայս ընթեռլով, կամ լսելով։ Ուստի ոչ է բաւական այս, զի լսեմք, այլ պարտիմք գիտել գործածութե՛ այնու կերպիւ, զոր ասացաք, ոպ զի այսպիսաւոր ստանայցեմք զկատարելութիւն այսորիկ առաքինութե. և վայելեսցեմք զհամայնս զայսոսիկ բարիս։

ԳԼՈՒԽ. ԺԴ։

Յաղագս թէ զտրտնջելն ընդդէմ մեծաւորին Այծ անարգանք ինքեան համարի։

ՈՐ ոպ հնազանդելով վեհագունին, հնազանդիմք Այ, և պատուեմք զնա, զոր վեհագոյնն ներկայացուցանէ, և է փոխանորդ նր. այսպէս և յորժամ անպատուեմք զմեծաւորն, անպատուեմք զԱծ. զի մի և նոյն պատճառ է 'ի միում, և 'ի միւսում, ըստ բանին Քսի փրկչին մերոյ, որ ասէ, Որ յձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ։ Ղուկ. 10. 16։ Եւ սբն Պօղոս գրելով առ հռոմայեցիսն տայ զայս պատճառս, թէ ոչ գոյ իշխանութի՛ եթէ ոչ յԱյ, որ ընդդիմանայ կարգաւորութե մեծաւորաց, ընդդիմանայ կարգաւորութեն Այ։ Այսու օրինակաւ լի է Ածաշունչն։ Յորժամ որդիքն իէլի բամբասեցին զմովսէս, և զահարոն, զորս Այծ տուեալ էր նց մեծաւորս. մինչ կային յանապատի, և ոչ ունէին զուտելիս, և զղջանային վասն ելանելոյ յեգիպտոսէ, ասէ իսկոյն օրէնսդիրն։ Եւ ասէ Մովսէս, վասն լսելոյ Տն զտրտունջ ձեր, զոր դուք տրտնջէք զմէնջ. քանզի մեք ո՞վ եմք, զի ոչ զմէնջ է տրտունջն ձեր, այլ զԱյ։ Ելից. 16. 8։ Յորժամ որդիքն իէլի արհամարհեցին զսամուէլ, և հայցեցին, զի տուեալ լինիցի իւրեանց թագաւոր, ոպ ունէին այլազգիքն, ասաց Այծ ցսամուէլ. Ոչ ո՛չ եթէ զքեզ անարգեցին, այլ զիս մերժեցին թագաւորել 'ի վերայ նոցա : 1. Թագ. 8. 7: Այսու կերպիւ պարզաբանի նաև բանն Եսայեայ, որ ասէ, Թեթեւ ինչ թուի ձեզ զաշխատութիւն հասուցանել մարդկան, և զիա՛րդ հասուցանէք զաշխատութիւն Տն : Եսայ. 7. 13: Զի թուի ձեզ, թէ թեթեւ ինչ իցէ զաշխատանս հասուցանել այնց մարդկանց, զորս Ած առաքեաց առ'ի ուղղել, և կառավարել զձեզ. ոչ է թեթեւ՝ զի զայս առնելով զաշխատութիւնս հասուցանէք և Այ : Զի զայս անարգանս Ած իւր համարի : Եւ թէ որքան ատեցէ Ած զայս տրտունջս ընդդէմ մեծաւորաց, և թէ որպ իւր համարի զանարգանս զայս, տեսցի մեծադոյն, և նորանշան պատժովքն, զորս վն այսպիսի ետ կորխայ, դաթանայ, և աբիրոնի : Պատմէ մատենագիրն, թէ Ած ետ նոցա զահարկու պատիժ, զի տրտնջեցին ընդդէմ Մովսէսի, և Ահարոնի, և ասէին ապստամբել 'ի կառավարութենէ Մովսէսի : Բացաւ երկիր, և դժոխք, և եկուլ զնս կենդանւոյն կանամբք, և տամբք հանդերձ, և ընտանեօք: Եւ անկեալ հուր յերկնից այրեաց նաև զերկու հարիւր և զյիսուն արս : Զայս խոկալով ասէ սբն Թովմաս, թէ Ած պատժեաց առաւել խստաբար, և դառնապէս զայնս, որք բամբասեցին զվեհագոյնս իւրեանց՝ քան զնս, որք անմիջաբար անարգեալք էին ընդ նոյն ինքն Ած կռապաշտութբ, և պաշտելով զորթն ոսկեղէն. քանզի զնս 'ի սուր սուսերի մաշելով շատացաւ. բայց վասն սոցա անկաւ հուր յերկնից, և բացաւ երկիր, և կլանեցան կենդանւոյն 'ի դժոխս առ'ի ծանուցանել մեզ, (ասէ սբն Թովմաս) թէ որքան տհաճի Ած ընդ անարգանս, և յանպատուութիւնս, որք լինին ընդդէմ նց, զորս Ած կացուցանէ փոխանակ իւր:

Ուստի իմանիլ կարէ անցողապէս պատճառն,

ճառն, վն որոյ 'ի յածաշունչն մեղքն անհնազանդութե բաղդատի մեղացն կռապաշտութե. Զի իբրև մեղք հմայութե է ընդդիմանալն, և որպէս չարութի կռապաշտութե է ո՛չ կամելն անսալ։ 1. Թագ. 15. 23. ասաց մարգարէն Սամուէլ ցսաւուղ՝ յորժամ յանդիմանեաց զնա վասն անհնազանդութե իւրոյ։ Զայս խօսելով սբն Գրիգորիոս, և սբն Բեռնարդոս ասեն։ Տես թէ որքան մեծ չար է, և մեղք՝ անհնազանդութիւն. որովհետև հոգին սբ նմանեցուցանէ զնա կռապաշտութե, և դիւահարցութե։ Եւ՛ տան զպատճառն բաղդատութե որին. քանզի որպ մեղքն կռապաշտութե, և դիւահարցութե բառնայ զպաշտումն, և զյարգումն, որ պարտի Այ. այսպէս և անհնազանդութիւն, և անհպատակութիւն արարեցեալ մեհանդունից, բառնայ զպատիւն, և զյարգումն, որ Այ պարտի. զի կայ 'ի տեղի Այ։ Դարձեալ, զի որպ կռապաշտն թողլով զճշմարիտ Ածն, պաշտէ և պատուէ զկուռս մի փայտեայ. այսպ անհնազանդն թողլով զճշմարիտ կանոնն, որ է Ած. հետևի սուտ կանոնի, որ է յատուկ դատողութիւն իւր. և պաշտէ զպատճառն իւր մարդկային։

Բայց դառնամ այժմ առ առաջադրութիւն մեր։ Ասել անգամ ես փոքր ինչ մնաց, զի Ած սպանանիցէր զնմ որդիսն իէլի յանապատի անդ. զի բամբասեցին զմովսէս, և զահարոն. ուստի առաքեաց առ նոսա զօձս, որք վիրաւորելով սպանանէին զնս, որպէս ասէ առաքեալն Պօղոս, 1. Կոր. 10. 10։ Եւ մի՛ տրտնջիցուք, որպէս ոմանք 'ի նոցանէ տրտնջեցին, և կորեան 'ի սատակչէ անտի։ Պատժեաց Ած նա և զՄարիամ զքոյրն Մովսէսի վասն նոյնոյ պատճառի մեծագունիւ բորոտութբ, և կամեցաւ Ած, զի այնու բորիւ կայցէր մեկնեցեալ 'ի զօրաց զաւուրս եւթն, թէպէտ և աղօթեաց Մովսէս վասն նր, որ էր այնքան սիրեցեալ յԱ.յ : Եւ՛ նա որ արգել զբարկութեն Այ, զի մի անկանիցէր խակոյն 'ի վերայ ժողովրդեանն այնուրիկ կռապաշտի, ոչ կարաց ընկալնուլ 'ի նմանէ զթողութն վասն քեռն իւրոյ, առանց պատշաճաւորի վճարելութե : Աստուստ էառ սբ̃ն Բարսեղ զօրինակ տալով զպատիժ կրօնաւորին, որ արտաքէ ընդդէմ հնազանդութե, կամ ընդդէմ եղբօր իւրում : Ասէ՝ թէ պարտ է մեկնել զնա 'ի հասարակութէ ոչ միայն ըստ անձին, այլ և ըստ իրաց իւրոց, ոչ խառնելով զձեռագործն նր̃ ընդ ձեռագործաց այլոց, ոպ̃ տանի ընդ ժամանակաւորի միում, որոյ ոչ միայն անձն, այլև զգեստքն, և իրքն, և ամ̃ ենչ, զոր նա շօշափեաց, և որոց մերձեցաւ, ընկեցեալ լինին արտաքս, ոպ̃ զի մի ժանտն յենուցու այլոց · այսպ̃ և զայսպիսիս պարտ է մեկնել 'ի հասարակութէ, ոպ̃ զբանադրեցեալ, զի կայցէ միայն, և ոչ ոք աղօթիցէ ընդ նմա, ոչ ոք ուտիցէ ընդ նմա, ոչ 'ի ժամու հանդստեան, ոչ և 'ի ձեռագործս ընձեռիցէ ընդ նմա, ոպ̃ զի այսու կերպիւ ամաչեցեալ ուղղեսցի :

Պապն նախկին Նիկողայոս գրելով առ Միքայէլ կայսր, և յանդիմանելով զնա որպէս զանուղղայ, զի չարախօսեալ էր զնախագահից, առբերէ այսր աղագաւ զպատմութիւն զայն Դաւթի, որ գոլով հալածեցեալ 'ի Սաւուղայ, և յոյժ սասանեալ 'ի նմանէ, եգիտ յանձուր միում զնա յայրի միում միայն, յորում արձակապէս կարէր սպանանել զնա · բայց ոչ կամեցաւ համբառնալ զձեռն 'ի վր̃ անձին նր̃, որ էր օծեցեալ Տն̃, զի թուէիւր, թէ իցէր մեղք քրէական, թէպէտ յայլմէ կողմանէ էր այր չարաճճիկ, և մեծ թշնամի նր̃ : Բայց իշխեաց հատանել զկտոր մի 'ի քղամդէ վերարկուի նր̃ : Եւ ասէ Անտոնինոս, թէ յետոյ աշամձեցաւ դաւիթ, և փղձկեցաւ սրտիւ՛ վ՟ն առնելոյն զայն : Եւ եղեւ յետ այնորիկ՝ զղջացաւ Դաւիթ սիրտն իւր, զի եհատ զքղանցս վերկուի նորա : 1. Թագ. 24. 6: Ասէ քահանայապետս այս, թէ այսպէս պարտի առնել բարի հպատակն, որ 'ի մեծաւորն նկատէ զՔ՟ն Տ՟ն մեր, ոչ պարտի իշխել հատանել զհանդերձն վեհագունին իւրոյ սրով լեզուին իւրոյ : Եւ եթէ երբեմն վ՟ն անհոգութե՟, կամ վ՟ն բեկանաւորութե՟, կամ վասն գտանելոյ ընդ կրից ոմանց սկսիցի արտաշնչել, կամ ասել զփոքրիկ պակասաւորութի՟ իւր, կամ զպակասուն, իսկոյն պարտի դառնալ 'ի յինքն, և փղձկել ըս՟տ Դաւիթ, վասն հասուցանելոյ զձեռն առ քղանցն զգեստուց վեհագունին, թէպէտ իցէ յոյժ փոքրիկ պակասաւորութի՟, կամ սխալանք : Եւ այսմիկ յաւել ասել զհասարակ ասացուածն քահանայապետից : * Արարմունքն վեհագունից թէպէտ իցեն յանդիմանելիք, սակայն ոչ են սրով լեզուի հատանելիք || : Զի նոքա, որք առնեն զայն, և կարգադրեն, ունին զտեղի Ա՟Յ, և զփոխանորդութի՟ նր՟ : Եւ վ՟ն այսորիկ նոյն Տ՟ն ասէ : Զա՟ծս մի բամբասիցես : Ելից. 22. 28: կոչէ զնոսա Ա՟ծս, զի կամի թէ ըս՟տ զԱ՟Ծ յարգեսցին : Յաւել ասել և զայս, թէ ոչ միայն առնէ ոք զանիրաւութի՟ Ա՟Յ, և մեծաւորին, այլև առնէ զմեծ վնաս հպատակին, ընդ որում զբանս բամբասանաց զմեծաւորէն խօսի, և տրտնջէ . զի առնէ անհաւատարիմ զվեհագոյնն առ նա . և նուազեցուցանէ զբարի համբաւն, և զբարի կարծիսն, զոր նա ունէր զնմանէ : Եւ եղանի պատճառ, զի յղանայցէ յինքեան զարհամարհութի՟ իւր, կամ զդիմադարձութի՟ նմա, որով նուազի մեծա՟մ իշխանութիւն և ոյժն հնազանդութե՟, և կարէ լինել պատճառ, թէ ոչ արտահանիցէ զպտուղ իւր յայնմանէ, զոր վեհագոյնն ասէ . կամ առնէ ընդ նմա, որ է փակել զդուռն օգտի իւրոյ, զոր ունելոց էր միջնորդութ՟ մեծաւորին։ Ուստի պատեհ է մեզ յա՟մ կողմանէ, զի զգուշանայցեմք մեք յայսպիսեաց իրաց, ո՟պ զի մի՛ արգելուցուն զմեզ յայսքանեաց բարեաց, ը՟դ որում ասէ առաքեալն։ Մի՛ ոք արմատ դառնութե՟ 'ի վեր երեւեալ արգելուցու, եւ նովաւ բազումք պղծիցին։ Եբր․12․15։ Եւ հարկաւոր է կալ մեծաւ զգուշութ՟ յայսմիկ, թէպէտ իցէ 'ի յիրս թեթեւագոյնս, եւ փոքունս․ զի ոչ եղիցի թեթեւ, եւ փոքր բառնալն զսէրն 'ի վեհագունէն, զվարկումն, զհաւատարմութիւն, եւ զհամարձակութիւն, զոր նա ունէր առ վեհագոյնն։ Եւ այս ա՟մ կարէ ածանցիլ 'ի տրտնջմանէ, եւ 'ի փոքերոց բանից։ Եւ այս է այն, յորմէ առաւել պարտէ զգուշանալ 'ի բանս, ոչ միայն 'ի ծանունս, այլ նաեւ 'ի թեթեւս։

ԳԼՈՒԽ․ ԺԵ։

Յաղագս թէ ո՛ր է ընդդէմ հնազանդութե՟ առաջորդէն վեհերոյն, որ պահելի է 'ի հնազանդութե՟։

ՈՉ միայն ոչ է պակասաւորութ՟, եւ անկատարութի՟ առաջադրել մեծաւորին զկարիսն, այլ մանաւանդ է մեծագոյն կատարելութի՟, եւ լինիցի իւր մեծ պակասաւորութի՟ ոչ առաջադրել զայն 'ի դէպ ժամանակի։ Ուսնիմք վ՟ այսորիկ զկանոն, որ մեզ հրամայէ բացորոշաբար։ Զի ո՟պ աւելորդ հոգաբարձութիւն յայնմիկ, որ նկատէ 'ի մարմինն՝ է յանդիմանելի․ այսպ՟ ունիլ զպատեհաւոր հոգս պահպանելոյ վ՟ ծառայութեն Ա՟յ զառողջութի՟, եւ զոյժն մարմնաւոր, է գովելի․ եւ զայսպիսի հոգս պարտին ունիլ ամենեքեան․ եւ յորժամ իմանան, թէ իրիմն է վնասակար ն՟ց, եւ կամ հարկաւոր, ոպ̃ կերակուր, զգեստ, սենեակ, պաշտօն, գործառութի̃, այսպ̃ եւս այլ իրք, պարտին ամենեքեան զեկուցանել վեհագունին, կամ այլում անձին, որ նոցա առնչանեալ իցէ ։ Մեծաւ պատճառաւ եդ հայրն մեր զկանոնս զայս ․ քանզի թէպէտ ճշմարիտ է, թէ մեծաւորքն ունելոց են զնախապետական հոգս յաղագս իրաց հարկաւորաց վ̃ն առողջութե̃, եւ կերպի ն̃ր ․ բայց սակայն գոլով նոքա մարդիկ, եւ ոչ հրեշտակք ըստ այսմ ոչ կարեն գիտել, եթէ ոք ունիցի զպիտոյս այլոց իրաց բայց յայտնեցանէ, որք են հասարակք ․ եւ ոչ կարեն զմտաւ ածել զամ̃ մասնաւորութիս ․ ուստի պիտոյ է, զի դու օգնիցես նմա յայսմիկ իրում ։ Բայց պարտ է առաջադրել՝ ոմ̃ պատեհ է ․ զի գոյ մեծ կասկած, թէ խառնիցի յայսմիկ սէր՝ եւ դատողութի̃ յատուկ ․ ուստի առ՚ի չշարժիլ յայսմիկ առանց երկիւղի, ասէ հայրն մեր, թէ երկու իրք են նկատելիք ․ նախ՝ զի յառաջքան զառաջադրելն առանձնանայցեն առ՚ի աղօթել ․ եւ յետոյ իմանալով, թէ ում են առաջադրելոցք՝ տանիցեն զայն ։ Եւ̃ այս ոչ կամի ասել, թէ դու առնիցես զողջոյն քեզ մարխումն ոմանս, եւ յետոյ առաջադրիցես իսկոյն զայն, որ պատահի երեւակայութե̃ քում ։ Այլ աղօթքն, զոր կամի թէ առնիցես դու՝ է, զի նախ առանձնանայցես առ՚ի խոկալ, եթէ պատշաճ իցէ մեծագոյն փառացն Ա̃Յ առաջադրել զայն իրն ․ կամ արդեօք յայնմիկ խնդրես դու զքեզ ինքն ․ քանզի եթէ է այս երկրորդ իրս, ոչ պարտիս առաջադրել ․ բայց եթէ թուիցի քեզ, թէ վայելուչ է վ̃ն մեծագոյն փառացն Ա̃Յ առաջադրելդ, յայնժամ կարես առաջադրել ։

Երկրորդ իրն նկատելի՝ է այս, զի զկնի առաջադրելոյն զիրն ձայնիւ, կամ համառօտ գրուածով՝ որպէս զի մի՛ եղանիցէ ՚ի մոռաց ։

Թող

Թողցես մեծաւորին զա՟մ հոգս, համարելով բարեգոյն զայն ա՟մ, զոր նա կարգադրեսցէ առանց վերակրկնելոյ, և ոչ առնելոյ զայլիմն հայցուած, ո՛չ դու ինքնին, և ո՛չ 'ի ձեռն այլոց ուրուք անձին, թէ շնորհեսցէ զայն, որ խնդրի, և թէ ոչ: որովհետև իւրաքանչիւր ոք պարտի հաւատալ, թէ մեծաւորն գոլով տեղեկացեալ, զորինչ կարգադրեսցէ, այն եղիցի առաւել պատշաճաւոր վա՟ն ծառայութե՟ն Ա՟յ, և վասն մեծագոյն բարւոյ ն՟ր 'ի Տ՟ր: Ուստի այսպ՟ նախ, ա՟պ յետոյ առաջադրելով քոյ, և ներկայացուցանելով զիրն, պարտիս կալ յանտարբերութե՟ մեծի, ո՛չ միայն առնելոյ, կամ թողլոյ զիրն, զորմէ ընձեռի, այլև շատանայցես առաւել այնու, և համարիցիս բարեգոյն զայն, զոր մեծաւորն կարգադրեսցէ: Այս է այն, որ նախապատուաբար պիտոյ է 'ի յառաջադրելն. զի անձն առաջադրող լիցի այնքան անտարբեր յայնմիկ, զոր հայցէ, մինչզի մնայցէ այնպ՟ շատացեալ, և մխիթարեցեալ՝ եթէ շնորհիցի ինքեան իւր հայցեցեալ, որպէս եթէ ո՛չ տայցի նոյնն: Եւ այսու լաւուք ճանաչեսցի, եթէ յայսմիկ իրում. արդեօք խնդրէր ըզփառս Ա՟յ, կամ խնդրէր ինքն զինքն. քանզի եթէ խնդրէր զտաբար զկամս և զփառս Ա՟յ, ուրախասցի ա՟մ իրօք, զոր մեծաւորն կարգադրեսցէ, որովհետև արդէն գիտէ, թէ այն է կամքն Ա՟յ բացայայտեցեալ 'ի ձեռն մեծաւորին: Բայց եթէ սկսի փանփատել, և տհաճիլ, և արտնջել 'ի ներքուստ՝ յորժամ ո՛չ տայցի իւր հայցեցեալ, նշան է, թէ ոչ էր անտարբեր, և ո՛չ խնդրէր զտաբար զԱ՟ծ, այլ յայնմիկ խնդրէր զինքն, և զօգուտն իւր, զի վասն ոչ առնելոյն զայն, զոր կամէր՝ մնայ անմխիթար: Ուստի մինն 'ի յիրաց, զոր անձն ոք պարտի ջանալ արտահանել 'ի յաղօթից, զոր նախքան զառաջադրելն

առ֊

առնէ, է, զի կազդուրիցէ զինքն յանտարբերութե, ի յանհոգութե վն ամենից իրաց, որք պատասխանեսցեն ինքեան, կամ այո՛, կամ ոչ: Այս է բարի տրամադրութի, զոր կարէ ունիլ ոք յորժամ առաջադրէ. զի այսու կերպիւ այնպէս մնայցէ շատացեալ, և ուրախ՝ լսելովն ոչ: Այս է և բարի խրատ, զի յորժամ ասացաւ նմա այո՛ վն այնորիկ զոր ինքն կամի, խոկասցէ, և խորհեսցի՝ եթէ ասիցիւր ոչ, մնայցէ՞ր արդեօք այնպս շատացեալ, ոչ շատացաւ լսելովն այո: Զի այս է բարեգոյն նշան. և յայնժամ կարէ կալ հաւաստի, թէ 'ի յայն ոչ առնէ զկամս իւր, այլ զկամս Այ Տն մերոյ:

Ասեմ ուրեմն, թէ առաջադրելն այսու կերպիւ ոչ միայն ոչ է ընդդէմ կատարելութե հնազանդութե, որպէս և ոչ բառնայ զանտարբերութիւն, և զվերանշանութիւն, այլ մանաւանդ է մեծագոյն կատարելութի, և մեծագոյն մահացուցանելութի: Եւ ոչ առաջադրելն բաց 'ի գոլոյն անհնազանդութե բացայայտ ընդդէմ կանոնին ասացելոյ, է և անկատարելութի. և ոչ մահացուցանելութի յայտնի: Իմանայ ոմն, զի իր ինչ վնասէ ինքեան, կամ ունի զհարկաւորութի զիրէ ինքէ, և կայ առանց ասելոյ զնմն, և ասէ յինքեան, եթէ տան զայն ինձ, բարի է, եթէ ոչ տան, նմանապէս բարի է: Իբր երբեմն խոկայ, թէ մահացուցանելութի իցէ այն կամ ցանկութի կրելոյ զնեղութի: Բայց ոչ է այսպէս, այլ է անկատարելութի, և ցանկութի ոչ կրելոյ զնեղութի, քանզի դիւրայ առաւել դժուարութի, և զընդդիմութի 'ի յառաջադրելն, և 'ի գնալն այնու առ վեհագոյնն, քան թէ 'ի կրելն զայն, զոր կրէ. զի թուի ինքեան, թէ վեհագոյնն համարելոց իցէ զնա ոպ զմարդ մի ինքնասէր, և սիրող օգտի իւրոյ: Երբեմն է այս նշան ոչ գոլոյ մահացեալ անտարբերութ՟ : Ասէ ոմն , յանցելում աւուր առաջադրեցի վեհագունին զիր իմն , և նա պատասխանեաց ինձ այնպիսեաւ կերպիւ , և բացորոշմամբ , մինչ զի ես ելի 'ի նմանէ դիտաւորութ՟ ոչ երբեք ևս դառնալոյ առ նա առ 'ի առաջադրել նմա զիր իմն , եթէ ոչ յայն ժամ , յորժամ եղէց յոյժ ստիպեցեալ : Առ այս ասեմ , այս ա՟մ պատահի , զի ոչ երթաս առ 'ի առաջադրել անտարբերութ՟ , և ո՛չ ունիս զզօրութ՟ի ընդունելոյ զոչն , և վասն այսորիկ կամիս մանաւանդ չարչարիլ , քան թէ առաջադրել : Պարտ է նկատել աստ զխաբէութ՟ի դիւին , և զոյժն բնական կամաց մերոց , որ կամի , զի կրեսցեմք մանաւանդ զհարկաւորութ՟ի , զոր ունիմք յատուկ կամաւ , և դատողութ՟ մերով , քան թէ առաջադրել· զի երկնչիմք , թէ գուցէ ոչ տացի մեզ այն , զոր հայցեմք : Ուստի նաև վ՟ն յատուկ անձնասիրութ՟ե , և շահասիրութ՟ե մերոյ , է սխալանք , և կուրութ՟ի , զի համարիմք , թէ վեհագոյնն ասելոց իցէ ոչ : Դիցուք զիրն 'ի փորձաքարն ըստ կարծեաց քոց : Ո՞չ ապաքէն բարեգոյն իցէր , եթէ կրիցէիր զնոյնն յայնժամ , զոր կրես այժմ , ք՟ կրիցէիր յայնժամ վասն հնազանդութ՟ե , և վասն կամացն Այ՟ , քան թէ կրես վասն յատուկ կամաց քոց , ո՟պ կրես այժմ . այս է յայտնի : Եւ առաւել բարի իցէր վ՟ն քո՝ եթէ առաջադրիցէիր , զի շահիցէիր զարդիւնս պահելով զկանոնն քո , որոյ պահպանութիւն ոչ իցէր սակաւ արդիւնք վ՟ն քո : Եւ զկնի առաջադրելոյդ՝ ոչ երկնչիցէիր յիրաց անպատեհից՝ եթէ հետևիցէին , զի այնք ոչ համարիցէին քեզ , ո՟պ համարեցեալք լինին քեզ յայնժամ , յորժամ ոչ առաջադրես , այլ համարին վեհագունին և Այ՟ , որ միջնորդութ՟բ նր՟ ուղղէ և կառավարէ զքեզ : Արդ՝ առ 'ի դարմանել ամենից անպատեհութ՟եցս այսոցիկ ,

ցիկ , և առ'ի բառնալ զնմ՟ դժուարութ՟իս ՝ և զամօթն , որ 'ի նմին կարէ պատահել՝ հայրն մեր առնէ մեզ կանոն : Վասն զի որ առնէ զայն , զոր կանոն իւր հրամայէ , յորմէ՞ իրէ է երկնչելոյ կամ յորմէ՞ իրէ է ամաչելոյ : Ո՛չ կարէ եղծել չար վեհագունին , այլ բարի , որ պահէ զկանոնն իւր : Իբր՛ սովորութիւն որ շուրջ զմովաւ գոյ 'ի յընկերութե մերում հասարակ , և հանապազորդական դիտելոյ առ վեհագոյնն վ՟ն իրաց յոյժ փոքրկանց , առնէ զարարմունս զայս յոյժ դիւրին , եթէ ոչ առնէ քեզ զայս դժուարին , գոնէ քո ոչ մահացեալ :

Բոլոր կէտն այսր իրակութեան կայանայ 'ի յառաջադրելն անտարբերաբար , և վերանշանմամբ , որ պարտի պարզաբանել սակաւ մի աւելի : Ո՛չ պարտի ոք 'ի յառաջադրելն բացորոշել , թէ այն՝ զոր խնդրէ ինքն , իցէ արդէն վայելուչ ինքեան , զի այս լինիցի իւր պատճառ մնալոյ անհանդիստ , և փորձեցեալ , եթէ իրն այն ոչ պատահիցէր այնպ՟ , ոպ՟ ինքն կարծէր : Այլ մինչ պարտի առաջադրել երկայութ՟բ սպասելով բացորոշման վեհագունին անտարբերութ՟բ : և այսու կերպիւ մնայցէ հանդիստ ամ՟ իրօք , որ լինիցի պատասխանի նմա : Զի ոպ՟ յորժամ ոք երթայ 'ի հարցանել զտարակուսութե իմն վարդապետին իւրում , մնայ հանդարտ և հանդուցեալ այնու պատասխանեաւ , զոր նա տայ , զի երթայ ոպ՟ աշակերտ , և ունի զայն ոպ՟ զճշմարիտ և զհաւաստի լուծումն այնորիկ , զորմէ տարակուսէր : Նմին հանգոյն պարտի բարի հնազանդն առաջադրել վեհագունին զտարակուսանս գործածականս , որք պատահին ինքեան , և կալ պարտի տարակուսեալ ոչ բացորոշելով առ մի , կամ առ միւս կողմն , մինչև վեհագոյնն բացայայտիցէ զորինչ պարտ իցէ առնել , և զորինչ պարտի ունել որպէս

զքազբարեգոյն · և ոպ բարեգունի հետևիլ այնմիկ · և շատանալ նովաւ ։ Ուստի 'ի յաղօթսն , զոր ոք առնէ նախքան զառաջադրելն , ոչ պարտի բացորոշել , թէ այն իրն վայելուչ է առնել վն փառացն Այ · այլ պարտի բացորոշել , թէ վայելուչ է առաջադրել զայն իրն մեծաւորին , և թողցի 'ի առաջադրելն , թէ ոչ խնդրէ զինքն , այլ զԱծ · բայց սակայն հարկ է միշտ մնալ երկբայ , եթէ իրն այն ըստ ինքեան վայել է , թէ ոչ , մինչև մեծաւորն ընտրեսցէ , և բացորոշեսցէ ։

Այս իրս է յոյժ հարկաւոր խնամոյ , զի յայսմանէ կախի բարւոք առաջադրելն , և մնալն հանգիստ ամ իրօք , զոր վեհագոյնն պատասխանիցէ ։ Եւ քանզի իրս այս 'ի կիր արկանի , և 'ի գործածի միշտ 'ի կրօնի սաստ հարկաւոր է , զի սովորեսցիմք առնել զայս , ոպ վայելէ ։ զի իցէր մեծ վնաս , և մեծ ցաւ կրօնին , եթէ յետս ընկրկեսցիմք յայսմիկ · և մեծաւորն հազիւ երբէք կարիցէ բացասել զինչ հպատակաց , առանց հետևելոյ դառնութեանց , վհատութեանց , և գանգատոց 'ի նոսա , ոպ թէ իցէր մեծաւորն իւրեանց խիստ , դժնեայ , և անզիջանելի , և ոչ սիրիցէր զնս ։ Պարտիմք խոկալ և զայս , զի եթէ համբերութի ունէաք , յորժամ հայրքն մեր բնականք ոչ տային մեզ զայն ամ , զոր խնդրէաք , ոչ վարկանէաք զնս վասն այսորիկ խստաբարոյս , և ոչ կորուսանէաք զսէրն , զոր պարտ էաք ունիլ առ նս · և զայս առնէաք յայնժամ , յորժամ ոչ էաք օտարեալ զուխտ պատերազմելոյ ընդ յատուկ կամաց մերոց , և յաղթելոյ մեզ ։ Արդ զի առնեմք զուխտ հնազանդութե , յոյժ առաւել ունիմք զմեծ պատճառ պահելոյ զնոյնն առ հայրս մեր հոգևորս · 'ի հնում ժամանակի սովորք էին մեծաւորքն երբեմն կամաւ բացասել զայն , զոր հպատակքն խնդրէին 'ի նոցանէ , թէպէտ առանց անպատեհաւորութե՟ իմիք կարէին շնորհել նց՟ · այլ զայս առնէին առ'ի կրթել զնս՟ 'ի մահացուցանելութի , և ոպ՟ զի սովորեցէին համբերութ՟բ տանել զբացասումն , և հպատակքն ընդունէին բերկրութ՟բ , և խնդութ՟բ զառիթն զայն , որ մատուցանիւր նց՟ առ'ի բեկանել զյատուկ կամս իւրեանց , վս՟ մեծի ցանկութե՟ , զոր ունէին առ օգուտն իւրեանց : Բայց այժմ մեծաւորք ոչ միայն զայն ոչ կարեն բացասել , որ ոչ է անպատեհ , այլև ոչ զայն , որ է անպատեհ · զի մի՟ հեռանիցին դառնութ՟իք , և տրտունջք : Այս եղանի երբեմն պատճառ , զի մեծաւորքն զիջանիցին հպատակաց , և տայցեն նց՟ զայնս , զորս ոչ կամէին տալ առ'ի խափանել զմեծագոյն չար : Այս է իր մի , յորմէ մեծապ՟ պարտի երկնչել կրօնաւորն :

Եւ ոպ՟ զի առաջադրելս այս եղանիցի մեծաւ կատարելութե՟ , ոչ միայն անձն ոք պարտի ունել զանտարբերութի , և զվերանշանումն 'ի ներքուստ , ոպ՟ ասացաք , այլև պարտի ցուցանել զայն արտաքուստ բանիւ , և կերպիւ առաջադրելոյն , ոպ՟ զի բանքն համաձայնիցին ցանկութե՟ , և արտաքինն օգնիցէ ներքնայնոյն : Եւ այս է բարի կերպ առաջադրելոյ , որ բացայայտէ զանտարբերութիւն , և զվերանշանումն ներքին , որ կայ 'ի ներքս իւր : Եւ որքան առաւել պարզանեցից զայս , այնքան բարեգոյն եղիցի : Եւ եթէ ոք առաջադրեցէ այնու կերպիւ · մինչ զի և ոչ մեծաւորն կարիցէր ճանաչել , թէ յո՛ յօժարի առաջադրողն · բայց զկնի առաջադրելոյ զպատճառն , մեծաւորն տեսանիցէր զայն , որ վայելուչ իցէր , այս լիցէր բարեգունեղ կերպ առաջադրելոյ : Առաւել բարւոք իմասցի այս իրս այնու , զոր կամիմ ասել այժմ: Ահա կանոն մի գաւառավարին , Թէ յորժամ մեծաւոր ոք առաջադրէ զինչ 'ի ժողովն խորհրդականաց, ո՛չ զի խորհրդականքն ասիցեն զդատողութիւս իւրեանց 'ի վ̅ր ն̅ր. առաջադրեսցէ այնու կերպիւ, մինչ զի առաջադրողն ոչ ցուցանիցէ թէ յօժարի մանաւանդ առ մի կողմն, քան թէ 'ի միւսն, ո՛չ զի խորհրդականքն ասիցեն առաւել ազատաբար զդատողութիւս իւրեանց, և ոչ տեսանելով զմեծաւորն յօժարեալ առ մի կողմն, լիցէ առիթ յօժարելոյ և ն̅ց առ նոյն կողմն ։ Արդ՝ և այս է բարեգունեղ կերպ առաջադրելոյ մեծաւորին, տանել զայս բանիւք, որք իցեն այնքան պարզք, և վճիտք, մինչզի հազիւ ծանիցէ մեծաւորն, թէ առ որպիսի իր յօժարիցիս դու, ո՛չ զի այս ոչ իցէ պատճառ, զի նա զիջանիցի առ այն, զոր դու կամիս, նկատելով 'ի թուլութիւն քո, այլ տեսանիցէ զայն. որ ըստ բնութե̅ իւրում է առաւել պատշաճաւոր այնմ իրակութե̅ առանց նկատելոյ 'ի յօժարութի̅, և 'ի ցանկութի̅ քո ։

Օէրկուս գեղեցկագունեղ օրինակս ունիմք այսորիկ 'ի սրբազան աւետարանի ։ Առաջինն է կերպն, յորում փառաւորագունեղ կոյսն Մարիամ առաջադրեաց միածնի որդւոյ իւրում զհարկաւորութի̅ գինւոյն, որ գոյր 'ի հարսանիսն յայն, առ որ նոքա հրաւիրեցեալք էին ։ Գինի ոչ ունին ։ Ոչ ասէ, Տ̅ր լի՛ց զայս պակասութիւն, որովհետև կարող ես, զի մի՛ մնասցեն ամօթալի, այլ միայն ներկայացուցանէ պարզաբար զհարկաւորութիւն ասելով, Գինի ոչ ունին ։ Երկրորդ օրինակն է կերպն այն, որով Մարիամ և Մարթա առաջադրեցին Ք̅ի փրկչին մերում զհիւանդութի̅ եղբօրն իւրեանց Ղազարու ։ Ասէ սրբազան Աւետարանն, թէ առաքեցին առ նա զպատգամաւոր մի այսու կերպիւ, Տ̅ր ահաւասիկ զոր դուն սիրէիր, հիւան դարձեալ է: Յօհ. 8. 3. Ուր ասէ ս̃րն Օգոստինոս, * Ո՛չ ասեն եկ, զի միայն ծանուցանելի եղև սիրողին: Ո՛չ իշխեցին ասել, եկ և բժշկեա՛: Ո՛չ իշխեցին ասել, այդր հրամայեա՛, և աստ եղիցի, որպէս հարիւրապետն ասաց. այլ միայն ասացին, Տէ՛ր՝ ահաւասիկ զոր դուն սիրէիր, հիւանդացեալ է: Բաւական է, զի ծանիցես, քանզի ո՛չ լքցես, զոր սիրես ‖: Արդ՝ այսու կերպիւ պարտիմք և մեք առաջադրել մերոց վէհագունից, բանիւք որք իցեն այնքան պարզք և վճիտք, մինչ զի յայտնիցեն զհարկաւորութիւն, այլ ո՛չ զայն, որում ցանկամք. և ո՛չ զայն՝ առ որ յօժարիմք. և այսու կերպիւ եղանիմք ապահովք, եթէ մեծաւորն ոչ զիջանիցի առ կամս մեր, և ոչ մեք խնդրիցեմք զմեզ ինքեանս:

Զայս կերպս առաջադրելոյ տայ մեզ յայտնապէս երանելին Հայրն մեր 'ի կացուցմունս, ընձեռելով զհիւանդաց, որք զգան զխստասկարութիւն օդոյ գաւառի ուրուք: Սակս՝ թէ հիւանդն ոչ պարտի հայցել զփոփոխութիւն օդոյ, և ոչ ցուցանել զյօժարութիւն առ այն, այլ պարտի միայն առաջադրել մեծաւորին զտկարութիւն, զանտրամադրութիւն, և զանընդունակութիւն իւր, զոր զգայ 'ի գործածութեն սպասաւորութե. և զայլ ա̃մ հնացեալն թողլոց է մեծաւորին: Զի նա յետ այնորիկ տեսցէ, եթէ պատշաճ իցէ առաքել զնա յայլ տեղի, ուր գործել կարիցէ առաւել կալով առողջ. կամ եթէ լիցի առաւել փառք Ա̃յ Տ̃ն մերոյ կալովն անդ, ուր կայ, թէև զանկաւ, կամ զոչինչ արասցէ, զի թերևս այս իցէ առաւել օգուտ ինքեան: Արդ՝ եթէ յայսմիկ իրում, որ մեզ այսքան հարկաւոր թուէր, հայրն մեր պահանջէ 'ի մէնջ զայսքան անտարբերութիւն, և զվերանշանումն, որ ո՛չ միայն կամի, զի մի՛ խնդրեսցեմք զփոփոխութիւն օդոյ , այլև զի մի՛ ցուցանիցեմք զյօժարութ՟ն առ այն ․ ապա զի՞նչ լինիցի 'ի յայլս իրս , որք ոչ են այնքան հարկաւորք ։ Եւ քանզի երբեմն ո՛չ գիտեմք , կամ ոչ կարեմք առաջադրել , առանց ըմբռնելոյ մեծաւորին զայն , որում ցանկամք , և յօժարիմք ․ վ՟ն այսորիկ է յոյժ բարի , և գովելի այն , զոր ոմանք առնեն , որք զկնի առաջադրելոյ զառաբար , և պարզա՟պ , աղաչեն զմեծաւորն ճշմարտութ՟բ , զի մի՛ նկատիցէ յըղձականութ՟իս ն՟ց , այլ միայն 'ի մեծագոյն ծառայութ՟ին Այ , առնելով հաւաստի զնոյն մեծաւորն , թէ այնու ընդունելոց են զսէրն մեծագունեղ , և զմխիթարութ՟ն առնելով զկամս Այ , և եթէ ծանիցեն , թէ մեծաւորն կամիցի զիջանել ն՟ց , լինէր այն մեծ դառնութ՟ն՝ թուելով թէ առնեն զկամս իւրեանց , և ո՛չ Այ ․ նա և ոչ զհնազանդութ՟ն ։

ԳԼՈՒԽ․ ԺԶ։

Յաղագս աւելորդ հոգունակութեան վասն մարմնոյ ․
և թէ որքան պատեհ իցէ ճանաչել յայսմ
'ի հիւանդութեան ։

Ոի ոմ՟ ասէ հայրն մեր , թէ է գովելի , և պատեհաւոր հոգունակութ՟ն պահելոյ վ՟ն ծառայութ՟ե Այ զառողջութ՟ին , նաև զոյժն մարմնաւոր , այլ՟ և ասէ , թէ աւելորդ հոգացողութ՟ին զայնմանէ , որ հայի 'ի մարմինն , է յանդիմանելի ։ Եւ որովհետև ընձեռեցաք զառաջինոյն , այժմ ընձեռեսցուք և զերկրորդէն ։ 'Ի յամ՟ իրս է դժուարին յարմարել զմէջն ․ բայց շուրջ զհոգացողութ՟բ մարմնոյ մերոյ , և զառողջութ՟բ ն՟ր , գոյ դժուարութ՟ն մասնաւոր ․ զի սէրն յատուկ , կամ անձնասիրութ՟ին է մեծ հոգունակ վասն այսորիկ իրի · և այսպ̃ եղանի մեծ բժիշկ , և ասէ , Թէ այս իրս ներհակ է կրծոյն · այս միւս իրս վնասէ ստամոքսին , այս միւս գլխոյ , և այն միւսն աչաց · և ընդ պատրուակի հարկաւորութե մոռանէ յոյժ կարգաւորապ̃ հեշտասիրութեն , և զգուշելութե մարմնոյ :

Սբն Բեռնարդոս կարի բարւոք ասէ ընդդէմ այնոցիկ , որք ունին զաւելորդ հոգս առ առողջութե իւրեանց , և պատճառանօք պահելոյ զայն առնեն զտարբերութի կերակրոց , և ասէ , Թէ սոքա են աշակերտք հիպոկրատեսի , և գալենոս բժշկաց , և ոչ Քրիսի · զի ոչ կարես գտանել զտարբերութիս զայս , և զխտրութիս յաւետարանն · և ոչ յածաշունչն , այլ 'ի գիրս բժշկաց : Ասէ , Ոսպքն են քամոտք · պանիրն ծանրացուցանէ զստամոքսն · կաթն վնասէ գլխոյն · զըմպումն ջրոյ ոչ կարէ տանիլ կուրծն · եղեգքն տածեն ըզմելամաղձն · պրասքն վառեն զդեղին մաղձն · ձկունքն լճից , կամ աղմայնոյ ջրոյ ամենևին ոչ յարմարին խառնուածոյն իմոյ : Զի՞ է այս , զի 'ի յայսքան գետոցս , 'ի դաշտս , 'ի պարտէզս , և 'ի մառանս հազիւ կարէ գտանել այնպիսի իր , զոր դու ուտիցես : Ծանի՛ր աղաչեմ , զի կրօնաւոր ես դու , և ոչ բժիշկ , և ոչ պարտիս ընթադատել զխառնուածս մարմնոյ , այլ զկոչումն քո || : Եւ առբերէ Սբն Բեռնարդոս զորս պատճառս յոյժ բարիս , և յոյժ գործածականս , վասն որոց մեծապ̃ պատեհ է հետևիլ հասարակութե , և խորշիլ յեզականութենէ · * Խնայեա՛ նախ քեզ վասն հանգստութե || : Զի մեծ է անհանգստութիւն , որ հետևի այսմիկ եզականութե · զի ոչ գիտես , թէ տան քեզ , կամ ոչ տան , զոր խնդրես : ոչ գիտես , եթէ 'ի տալն զզուին , և ձանձրանան , կամ ոչ · թէպէտ տան , սակայն յամեցուցանեն : Եւ եթէ միանգամ յաջողի , բազում անգամ պակասի : Ո՛չ գիտէ ոք , թէ որքան անհանգստութն կրեալ լինի , եթէ ոչ՝ նա , որ ընդ փորձ առեալ է : Իսկ կարելն վարել ընդ հասարակութե , է մեծ հանգստութի : Երկրորդ ասէ Բեռնարդոս , * Խնայեա՛ աշխատանաց տքնաւորաց || : Տե՛ս զաշխատանս խոհակերին , և նոցա՝ որք ծառայեն սեղանոյն , զորս շրջեցուցանես այսր՝ և անդր առ՚ի շատացուցանել զքեզ : Ջանա՛ ուրեմն ոչ տալ նոցա զաշխատանս զայս : Երրորդ , * Խնայեա՛ ծանրութե տան || : Զի մեծ ծանրութն ես դու տանն յաղագս եզականութե քո , զի հասարակ , և հանապազորդական լիքն արդէն պատրաստեցեալք են վասն ամենեցուն , և են առանց տաղտկութե : Բայց հոգալն վասն կամակորութե , և մասնաւորութե քո զիրս ոչ հարկաւորս , է մեծ ձանձրութի , և զզուումն : Չորրորդ , * Խնայեա խղճի մտաց , ո՛չ ասեմ խղճի մտաց քոց , այլ այլոյ || , յթ եղբօր քո , որ նստի մերձ առ քեզ . և ուտէ զայն , որ տրեցեալ է նմա . և դայթակղի տեսանելով զքեզ , զի ոչ ուտես զիրս հասարակուե . և տաս նմա զառիթ , զի բամբասեսցէ զքեզ 'ի սրտի իւրում դատելով զքեզ ոպ զմարդ ինքնասէր , և գիրգ : Կամ եթէ ոչ դատեսցէ զքեզ հաւատալով թէ ունիցիս զկարիս զայնցանէ , զորս ուտես , սկսանի դատել , և բամբասել 'ի սրտի իւրում զմեծաւորն , և զայնոսիկ , որք պարտ էին ունիլ զհոգս վն քո , զի ո՛չ բերեն քեզ զայն իմ , որ է հարկաւոր :

Ասէ երանելին տրն Բեռնարդոս , թէ ոմանք կամին ջատագովել զինքեանս . և յենուն յօրինակն սրբոյն Պօղոսի , որ յորդորէ զաշակերտն իւր զտիմոթէոս առ 'ի ըմպել զսակաւ ինչ գինի վասն տկարութե ստամոքսին . և ասէ . Այսուհետեւ մ՛ զջուր և էթ ըմպեր , այն սակաւիկ մի գինի խառնեսջիր վասն ստամոքսի, եւ ստէպ հիւանդութեանց քոց: 1. Տիմ. 5. 23: Եւ այս պատասխանէ նախ, թէ սրբն Պօղոս ոչ առնու զայս խրատս վասն իւր, այլ տայ զայն այլում. եւ նա՝ որ էառ զայս խրատս, ոչ խնդրեաց զկանոնն զայն, այլ թարց ջանալոյ նր, եւ խնդրելոյ տուաւ նմա: Բայց դու ջանաս վն քոյ, եւ հայցես զընծայն, եւ զեզականութն. ուստի մեծապէս երկնչիմ (ասէ սրբն Բեռնարդոս) թէ խոհեմութեն մարմնոյ մտցէ 'ի քեզ գունաւորեցեալ գունով ընտրողութե. եւ լիցէ այն հեշտասիրութե, զոր դու համարիս հարկաւորութե: Երկրորդաբար նկատեսցեն (ասէ Բեռնարդոս) այսպիսիքս, թէ սրբն Պօղոս ոչ խօսի անդ ընդ կրօնաւորի ումեք, որպիսի ես դու, այլ խօսի ընդ եպիսկոպոսի միում, որպիսի էր Տիմօթէոս. որոյ կեանքն, եւ առողջութիւն կարի հարկաւոր էր 'ի սկզբան եկեղեցւոյն. ՙՏուր ինձ զիս այլ Տիմօթէոս, եւ ես կերակրեցից զնա ոսկեաւ, եւ արբուցից նմա պալասամ‖: Յետոյ ասէ սրբն Բեռնարդոս. ՙՎասն քոյ գինէ կամիմ խրատել զքեզ, զի եթէ հաճիս դու ընդ այս խրատս առաքելոյն, զոր տայ աշակերտին իւրում ըմպելոյ զգինի, հաճեայց ես ընդ սակաւն, զոր անդ առակցեաւ‖: Սրբն Հերոնիմոս 'ի թղթի, առ Եւստոքիա, յաղագս պահելոյ զկուսութն, առաջին խրատն, զոր տայ, է ոչ ըմպել զգինի. ՙՀարսն Քի փախիցէ 'ի գինւոյ, որպէս 'ի թունից‖: Բարւոք ծանիցի բանս այս, որ համապատասխանէ ասացելոյն սրբոյն Պօղոսի զգինւոյ. Յորում գոյ բղջախոհութի. Եփես. 5. 18: Իսկ առակցէ սրբն Հերոնիմոս ասելով. ՙԱյսոքիկ են նախկին զէնք դիւաց ընդդէմ երիտասարդութե: ոչ այնքան շարժէ ագահութի, ոչ փքացուցանէ հպարտութին, ոչ այնքան բեր կրեցուցանէ փառաւորելեն ‖ · Բ՝ ոչինչ այլ մոլութիւն այս զպատերազմ ընդ մանկահասակաց այնքան, որքան գինին : ՚Գինի, և մանկութիւն երկակի բորբոքիչ է վավաշոտութեան : Ընդէ՞ր առագրեմք զձէթ բոցոյ ընդէ՞ր բորբոքեցելոյ մարմնոյ զլուցկա հրեղէնս պաշտօնատրեմք ‖ :

Բայց դառնալով առ առաջադրութիւն մեր, և առ այն զոր այժմ աւանդեմք կրօնաւորաց, է այն, զոր այնքան յորդորելով առակցեն մեծն Բարսեղ, Բեռնարդոս, Բոնաւենտուրա, և այլք ոմանք, զի ջանասցուք սովորիլ շատանալ իրօք հասարակօք, որք ՚ի կիր արկանին ՚ի կրօնի · և ոչ կամիլ գոլ եզական յիրս իմիք որքան կարելի է : Եւ առ ՚ի շատանալ այսու՝ բաւական էր տեսանել, թէ այսու կերպիւ զերծանէաք ՚ի բազմաց անհանգստութեանց, ՚ի տհաճութեանց · և ՚ի բազմաց յատուկ դատողութեանց, և յայլոց անպատեհից, որպ̃ ասացաք : Եւ այսպէս թէև ոչ իցէր այլ բարի, եթէ ոչ՝ շահաւորութիւն մեր յատուկ, առ՚ի ունիլ զդիւրութիւն, և զհանգիստ ՚ի կրօնի, պարտէաք ջանալ զայս եզականութիւնս ՚ի բաց ձգել, թէև կրիցէաք զաշխատանս ոմանս : Քանզի առաւել մեծ է բարիս այս՝ քան զօգուտն զայն, որ ածանցի յեզականութէ : Բայց այն, որ առաւել պարտի զօրացուցանել զմեզ՝ է այս, զի այսու կերպիւ չլինեմք զեղբարս մեր · մեծապէս հաճեցուցանեմք ըզմեծաւորն, և հաճոյանամք յոյժ ԱԾ : Կամիմ, զի բարւոք ծանիցի այս, զի է վարդապետութիւն կարի գործածական, և յոյժ օգտակար : Մինն ՚ի մէջ մեծագունից ծառայութեանց, և պատարագաց, զոր անձն ոք առնէ ԱԾ ՚ի կրօնի · և մինն ՚ի մէջ մեծագունից, և բարեգունից ապաշխարութեանց, և մահացուցանելութեանց · և այն՝ որ առաւել հաճոյ է մեծութեանն ԱԾ, առաւել օգտաբեր·

և առաւել շինէ զեղբարս քո, է անցուցանել զժամ կենաց քո 'ի կրօնի առանց մասնաւորութե͞. և կեալ միշտ այսու հասարակութե͞, անշարժութե͞, և անբաղձութե͞ պահելով յա͞մ իւրս զխստութի հասարակ կրօնին, շատանալով միշտ իւրօք հասարակականօք, զոր ամենեքեան ունին, զոր ամենեքեան զգենուն, զոր ամենեքեան առնեն, ոչ կամելով 'ի կիրարկանել զյատկօրինութի, զբացառոցութի, և ոչ զեզականութի իմն: Եւ որովհետև առնելոյ ես զապաշխարութի իմն. և զիր իմն մահացուցանելու͞, այս եղիցի նախապետական ապաշխարութի, և մահացուցանելն զքեզ: Այսպէս ասեն ո͞րքն, և վարդապետքն իւրաց հոգևորաց, թէ այլք ապաշխարութիք պարտին միջակք լինել նկատելով առ այն, ո͞չ առ իր մի առաւել նախապետական: Քանզի յոյժ փոքրագոյն համարեսցի մեծաւորն զխարազանն քո, զքուրձն քո, եթէ յետոյ ոչ շատանաս իւրօք հասարակօք, որովք վարին այլք. և խնդրեա զզգոնումն, և զյատուկ օգուտն քո 'ի զգեստս, 'ի բնակարանս, և յայլս: Ահաւասիկ ուրեմն ապաշխարանք մի, որոյ առկս ունիս զհրաման առնելոյ զայս. և հաճին մեծաւորքն, զի առնիցես զայս. և կարես առնել զայս առանց կասկածանաց սնափառութե͞. զի ոչ թուի թէ առնիցես զապաշխարանս. և ոչ այլք իմանան թէ այսու մահացուցանես զքեզ, կամ ոչ: Եւ յայլմէ կողմանէ է այս առաւել բարեգոյն, և առաւել հաճոյ Այ͞ քան զայլ ապաշխարանս զորս կարես առնել: Այս յաչս մարդկան երևի կեանք մի զուտ, պարզ, և հասարակ. բայց առաջի Այ͞ է եզական. նաև կատարելութի մի, և սրբութի անկասկած, և կայուն:

Եւ հակադարձաբար, մինն 'ի յիրաց ձեռակարագունից, և որ յոյժ ձեռաւէ ունիմք 'ի կրօնի, նի, է սկսանիլն 'ի կիրարկանել զեղականութին, զյատկորինութին, և զբացառութին, որպիսի և իցէ պատճառանօք, և անուանակոչութբ արդարացուցեալ ըստ կարծեաց իւրոց: Եւ այս է այնքան ճշմարիտ, մինչ զի փառաւոր սրբն Բոնավենթուրա ասէ, թէ 'ի մէջ այլոց այս է մի գլխաւոր պատճառ գաղջութե, և թուլութե կրօնի: Թէպէտ իցես դու յոյժ հնագոյն կրօնաւոր, և թէպէտ իցես բազում աշխատեալ 'ի կրօնի, սակայն առնես զբազում վնաս (ասէ սրբն Բոնավենթուրա) այսու. Քանզի նոքա, որք զկնի քոյ գան 'ի կրօնն, ոչ տեսանեն զառաքինութիւնն քո ներքին, և ոչ խոկան զայն, զոր դու արարեր, և աշխատեցար՝ յառաջ քան թէ գայցէին նոքա 'ի կրօնն. այլ միայն կամ հայելով յօրինակն, զոր դու ներկայաբար տաս նոցա 'ի պահելդ զկանոնն. յորում կամին նորագոյնքն, զի հնագոյնքն լինիցին յառաջընթացք. և ուր եղեն առաջինք 'ի գալն առ կրօնն. այնուր իցեն ևս առաջինք 'ի պահել զկանոնն իւրեանց, և եղանելով առաջնորդ, տայցեն զօրինակ նց, որք նորագունին՝ ջերմեռանդութբ մտանեն 'ի ծառայել Այ. ապա թէ ոչ՝ կամ գայթակղին 'ի նոցանէ. և կամ սկսանին հետևիլ նց, թուլանալով օրինակօք նոցա:

Բարւոք իմացաւ զայս հայրն մեր: Եւ առ 'ի խափանել զմեծ վնասն, որ յայսմանէ կարէր ածանցիլ, 'ի մէջ այլոց իրաց, զորս պատուիրէ, կամի, զի հարցանիցեն զնոսա, որք մտանեն յընկերութին մեր, և կամին միաբանիլ 'ի նմին ընդ մեզ, մինն է այս: *Եթէ շատանայցեն կեալ 'ի ժողովի այնմ, ուր կան այլքն, առանց վարելոյ յատկորինութբ, կամ նախապատուութբ, և ոչ կամիցին, թէ առնիցին ինքեանց աւելի քան զայն, որ առնի նմա, որ փոքրագոյն է քան զնոսա, թողլով զնոյն հոգս մեծաւորքն Ա : Եւ պատուիրէ , զի հարցումն այս եղանիցի մասնաւորաբար անձանց իմաստնոց , և այնոցիկ , որք լինելոց են առք առաջնորդք 'ի կրօնի : Քանզի յայսպիսիսն կարէ գոլ կասկած ինչ , կամելոյ զեղականութին ինչ , և զըստապատասխանութին : Ճանաչեն սոքա զվնասն , զոր առնեն յոյժմիկ , թէպէտ իցէ յիրս փոքրկունս : Քանզի իսկոյն այն միուն , որում թուի թէ աշխատեալ իցէ բազում , և ունիցի զմեծ հարկաւորութ , կամի զնոյնն : և յետոյ այլ միւսն որ ունի զպակաս հարկաւորութի կամիցի իսկոյն զնոյնն : և յետոյ կամիցի այլ միւսն . և այսպէս սկսի թուլանալ , և տապալել կարգապահութին կրօնաւորական : Վասն որոյ սուրբ Բեռնարդոս կոչէ զայսպիսիսն բաժանող միութե , թշնամի խաղաղութե : Նաւ եր՝ եթէ ոչ կարիցէիր , կամ ոչ կամիցէիր պարապիլ 'ի յայս գործառնութիւն , քանթէ վարիլ այսու եղականութե , և բացառոցութ : Զի առաւել է այն , զոր առնես այսու , քան զայն , զոր չլինես այնու : Վասն այսորիկ նախադիտելով զզուշացուցանէ զմեզ հայրն մեր , թէ յընկերութե մերում ոչ պարտի լինել բացառութի , և ոչ եղականութի : և ոչ կարենք օգնել վասն այսորիկ հնութին , գոլն քարոզիչ , գոլն դասատու . և եղեալ գոլն յառաջիչ , կարգոյն մեծաւոր :

Եւ մանաւանդ պարտիմք մեք կալ յոյժմիկ հիման , և գիտել զայս , թէ ոչ ինչ կերպիւ կարէ ոք կորուսանել այնպէս զպատիւն իւր յընկերութե մերում , որպէս կորուսանէ նա , որ տայ զառիթ , զի այլք մեծ վարկանիցեն զնա վն հին գոլոյ , կամ իմաստութեան , կամ քարոզիչ գոլոյ , և այլն . և կամի վն այսորիկ բացառոցիլ յայլոց . և ունել զյատկորութին . և գոլ զանազանաբար ընձեռեցեալ քան զայլս ամենեսեան 'ի յիրս հասարակս որք են վասն ամենեցուն ։ Զի առաւել հնագոյն յընկերութեան մերում, և առաւել իմաստունն պարտի տալ զմեծագոյն օրինակ չլինելոյ փոյթ յանձն իւրս, և օրինակաւ իւրով պահել, և հաստատել զսահմանն կրօնաւորական, համակերպելով զինքն խոնարհագունից կրօնաւորաց ։ ՄԻ՛ ամբարտաւանիք, այլ ընդ խոնարհս ընթանիցիք ։ Հռոմ. 12. 16։ Ըստ այս պատճառս 'ի կիր արկանել զպարտութիւնս և հնութեան 'ի կրօնի ։

Գ Լ Ո Ւ Խ. ԼԷ.

Պատասխանի առ այնոսիկ, որք վասն խղճահարութեան հարցեն, թէ պարտաւորեցեալք իցեն պահել զառողջութիւն մարմնոյ ։

ՈՐԴԻ՛ քանզի իցեն, որ նախապատեհաբար, և առաւել կերպարանաւ արդարութեան ասեն է ի մեզ տալ զպատերազմ, շուրջ զկերպակութեամբ եղականութեան, է այս. զի թուէ մեզ՝ թէ ունիցիմք զպարտաւորութիւն հոգալոյ զառողջութենէ, և պահելոյ զկեանս ։ Արդ 'ի վճարել այսմիկ, ասասցուք առ զմիտս իւրս. զոր շուրջ զայսու ասեն վարդապետք. Նախ՝ ծանուցանեն, և է հասարակ վարդապետութիւն, թէ այլ է սպանանել ոք զինքն, և ջանալ կամաւ կարճեցուցանել զկեանս իւր, առնելով վասն այսորիկ զդեղ ինչ. և այս է անպատեհ, և մեղք մեծագոյն ։ Իսկ այլ է ոչ հոգալ զառողջութենէ, և զպահպանութեան կենաց իւրոց. և ոչ կամիլ երկարացուցանել զնոյնն. և ասեն՝ թէ այս ոչ է անպատեհ, այլ է պատեհաւոր. քանզի ոչ ոք է պարտաւորեցեալ առ 'ի ջանալ երկարացուցանել զկեանս իւր. և ոչ պահպանել զայն 'ի կիրարկանելով զկերակուրս փափուկս, և զիրս արտաքոյ կարգի. որ ոչ է պատշաճան-

դե

դեցեալ որք բնակելոյ յառողջարար տեղւոջ . Թէպէտ գիտիցէ, թէ յայնմիկ կելոց էր առաւել երկարաբար, և առաւել առողջ : Այսպ̃ ևս ոչ է պարաւանդեցեալ ոք ջանալոյ խնդրել զկերակուր կենսունակ, որ յարմար լիցէ խառնուածոյ իւրում. Թէև հաւատեաւ գիտիցէ, թէ այնու երկարացուցանիցէր զկեանս իւր . և ապրիցէր առաւել առողջութե̃ : Եւ այս է իր յայտնի . քանզի ներհակն սմին լիցէր դատապարտել զա̃մ պահս, զժուժկալութիւն, և զապաշխարանս եկեղեցւոյ, և կրօնից : Այլ մանաւանդ ասեն ա̃ծաբանք, և սր̃բքն, թէ խնդրելն զայսպիսի հաստատակաբար է յանդիմանելի, յակաւար 'ի կրօնաւորս : Նաև ոչ է ոք պարաւանդեցեալ, յորժամ է հիւանդ՝ խնդրել զդեղս պատուականս, և զմեծագինս առ'ի պահպանել զկեանս . և ոչ զբժիշկս ընտիրս, և գերագոյնս : Այլ մանաւանդ այս ա̃մ յանդիմանելի է 'ի կրօնաւորս, որք առնեն զդաւանութի̃ն խոնարհութե̃, և աղքատութե̃ : Բաւական է 'ի կիրարկանել զմիջոցս հասարակս, և դիւրինս, որք կարգաւորաբար են պատշաճաւորք : Քանզի գոլով կեանքն՝ և առողջութիւն մարմնոյ՝ բարի մի ժամանակաւոր, և անցաւոր, և սակաւ արժօղ բաղդատեալ կենաց՝ և առողջութե̃ հոգւոյն, Ա̃ծ ոչ կամեցաւ պարաւանդել զմեզ առ այս, առաւել քան զհոգս հասարակս : Եւ ոչ միայն 'ի պատուականաց, և յանսովոր իրաց, այլև 'ի հասարակաց, և 'ի կարգաւորականաց պակասեցուցանել զիր ինչ, է ըմբռն : Եւ այսպ̃ տեսանեմք, զի կրօնաւորքն, և ծառայքն Ա̃յ 'ի բաց բառնան զիր ինչ 'ի կերակրոց, 'ի քնոյ, և 'ի հանգստութէ̃ մարմնոյ իւրեանց . զորս այլք 'ի կիրարկանեն հասարակաբար, զորս և նոքա կարեն 'ի կիր արկանել պատեհաբար . և զայնս տամք նշ̃ ոչ միայն որպէս զիրս պատեհաւորս , այլ և որպէս զայնս , թէ և գիտիցեն նոքա , թէ հասուցանելոց են զվնաս իմն առողջութեան իւրեանց , և այնու կերպիւ ապրելոց են սակաւ ։ Զի որպէս է իր ըմբռն , և մեծ առաքինութիւն , և արդիւնք դիմադրել զինքն առ վտանգս մահու , և տալ զկեանն ժամանակաւոր , ոչ միայն վասն հոգւոյ մերձաւորին , այլև վասն ժամանակաւոր կենաց նորա . որպէս առնեն նոքա , որք դարմանեն , և ծառայեն ժանտացաւօք հիւանդացելոց . և այլոց՝ որք ունին զհիւանդութիւն առ այլս դիւրաւ փոխելիս . այսպէս եւս է ըմբռն , և արդարև մեծի առաքինութեան , առ՚ի օգնել հոգւոյ իւրում պտղով մահացուցման , մատուցանել զինքն ՚ի վտանգ իմն կենաց իւրոց , կամ յուսիցէ փոքր վնաս առողջութեան մարմնաւորի ։ Եթէ վասն շահելոյ զկտոր մի հացի վասն պահելոյ զոտունն , և վասն ունելոյ զսակաւ մի պատիւ , անցանէ ընդ ծով , և երթայ ՚ի զանազան երկիր , օր. ՚ի Ֆլանդրս , և ՚ի Հնդստան . և կրէ ընդ վատթար գիշեր , և զվատթարագոյն տիւ մեծաւ վտանգիւ առողջութեան իւրոյ , և վնասու կենաց , և զայս համարիմք պատշաճ նմա . ապա որքան եւս առաւել պատշաճ , և մեք համարելոց եմք զայս վասն հոգւոյ փրկութեան , որ է կեանք հոգևոր , առ՚ի ենթարկել զմարմինն հոգւոյն , և զիջուցանել նմա , որպէս զի մի ապստամբիցի ՚ի նմանէ , և եղիցի համաձայն նմա ։ Այս է զոր կոչեմք ապաշխարութիւն ։ Աստի եթէ զայս ՚ի բաց բառնայցեմք , լինիցիւք ՚ի բաց բառնալ զամենայն ապաշխարանս , որք ՚ի կիրառկանին յեկեղեցւոջն ԱԾՅ ։ Գործակալք , ընձեռեն ծառայութիւնքն զխնդիր մի , և ասեն , արդեօք ըմբռն իցէ ծառայի միոյ ԱԾՅ , որ ունի զկշտացաւութիւն մեծ , կամ զցաւ ստամոքսի . կամ զխոց մի . որով մեծապէս վշտագնի , ոչ կամիլ դարմանել .

նել. և ոչ 'ի կիրարկանել զդեղ իմն, այլ կամիցի կրել զայն վ՟ս սիրոյն Ք՟ի, միայն թէ ոչ լիցէ կասկած մահու, և ասեն, այս· առբերելով վասն այսորիկ զօրինակն սրբուհւոյն Ագաթայ կուսին. առ որ գնալով ս՟րբն Պետրոս կերպարանաւ ծեր մարդոյ միոյ վ՟ս դարմանելոյ զստինսն ն՟ր, զորս եւ հատանել բռնաւորին, ոչ կամեցաւ սրբուհին տալ զհաճանութիւն, թէ դարմանիցէր, ասելով. * Զդարման մարմնաւոր ո՛չ երբէք 'ի գործ ածի մարմնոյ իմում ‖: Բերեն եւ այսր աղագաւ զօրինակս բազմաց արանց հոգեւորաց, և կատարելոց, որք կամին կրել զցաւ կշտի, և ստամոքսի առանց առադրելոյ ըզդեղ իմն առ 'ի մահացուցանել զմարմինն, և ենթարկել զնա հոգւոյ. զգալ զցաւ չարչարանացն Ք՟ի՝ մասնակցելով նմա, և կան յոյժ հաճեալք, և ուրախք, և յոյժ շահեցեալք այնու ցաւով: Նաև առ 'ի ցուցանել, թէ ո՛չ է արժանի մարմինն այնքան հոգացողութե՟, զի այսքան պարտաւորիցիմք ունելոյ զփոյթ վ՟ս ն՟ր, և առնելոյ զզգուշութ՟ն առ 'ի խնամել. և պահպանել զնա, որ՟պ ամենք պատկերակերպեն ինքեանց: Ա՟ծաբանքն կերպաւորեն զդիպուածս զայս. եթէ ոք իցէ մերձ 'ի մահ, և մեռանելոց իցէ, եթէ կտրիցեն զբազուկն, կամ զոլոքն, հարցանեն ա՟ծաբանքն, եթէ հիւանդն պարտաւորի թոյլ տալ կտրել զայն, և պատասխանեն, թէ ո՛չ: Եւ բերեն առ այս զայն, զոր ասաց ո՟մն յայսպիսում դիպուածոյ. * Կեանքն մարմնոյ ո՛չ է արժանի այսքան ցաւոյ ‖: Նաև ասեն ա՟ծաբանքն, թէ ոչ ոք է պարտաւորեցեալ 'ի կիրարկանել զդեղս առ 'ի յերկարացուցանել զկեանս իւր, թէև գիտիցէ՝ թէ կարճանայցէ առանց դարմանելոյ: Որ՟պ եթէ բժիշկքն ասիցէին, թէ յա՟մ ամսոջ, կամ յա՟մ տարւոջ մաքրեցիւր դեղովք.

ղովք · կամ տայցէր այրել զտեղի մի անդամոց առ'ի բուժել, ոչ է պարտաւանդեցեալ տանելոյ զայս, թէպէտ գիտիցէ, թէ ոչ տանելով զայս՝ մեռանելոց իցէ յառաջագոյն քան զտասն ամս։ Յաւելուն աստեւ սոյն վարդապետքս · եթէ գիտիցէ ոք, թէ ըմպելով զգինի, կամ ըմպելով ձեռամբ չգինի, տակաւ իցէ ապրելոց, ոչ է պարտաւանդեցեալ 'ի ներքոյ մահացու մեղաց թողուլ զգինին, կամ զձկունն։ Արդ՝ առադրեսցուք այժմ զայս առաջադրութե մերում։ Եթէ ոմանք առ'ի զմայլել ոսկրամոլութ՟ միով, ըմպիցեն զպաղըմպելի, ուտիցեն զեր իմն համեղագոյն, և ոսկրամոլական · և զմայլեսցին այլովք իրօք նմանեօք սոցա, և ոչ ունիցին զփոյթ պահելոյ զառողջութ՟ի · և ոչ ջանան երկարացուցանել զկեանս իւրեանց, մեք ոչ դատապարտեմք զն՟ս վ՟ն այսորիկ · այլ վ՟ն ո՞յր պատճառի կրօնաւորն տանելոց է զայնքան մեծ հոգս վ՟ն առողջութե · և դնելոց զխանդարումն 'ի պահպանութե կրօնաւորականի, պատկերակերպութ՟ի, որ մտանէ 'ի գլուխ նորա, թէ այն իրն իցէ ճշմարտակոր, և այն միւսն ոչ։ Այնպէս համարեսցուք, թէ ոչ իցէ պատկերակերպութ՟ի, այլ ճշմարտութ՟ի, և դիցուք 'ի մի կշիռ զհարկաւորութ՟իդ զա դ · և զօգուտն՝ զոր տանելոց է փափկութ՟իդ այդ, (որ է անհաւատալի) և 'ի միւս կշիռն դիցուք զանհանգստութ՟ի քո, և այլոց, և զգայթագղութ՟ին, և զանվայելչութ՟ին, որք անտուստ հետևեին · և տեսցուք, թէ որպէս առաւել անհամեմատաբար ծանր է այս, քան զմիւսն։ Զայն՝ զոր տանեն աշխարհականքն, զոր թերևս տարարեր և դու յաշխարհի բազում անգամ, առ'ի բերկրել հեշտութ՟ միով, և ոսկրամոլութ՟, ոչ ապաքէն պատեհաւոր իմն է, զի դու տանիցես զայն առ'ի բերկրել վարուք կրօնաւորականօք, առ'ի հետևիլ հա-

սարտարակուսութեն , առ՚ի ոչ գայթակղեցուցանել զեղբարս քո , և ոչ տալ նոցա զչար օրինակ եղականութբ , և հեշտութբ քով :

Աստուստ երևի գոնեայ , թէ ոչ ոք պարտ ճանդի ջանալ ունել զեղականութիս զայս , և զօգուտ : Թէև առնիցի քեզ պակասագոյն քան զայն , զոր առնեն այլոց , կարես կալ անկասկած 'ի խղճահարութե . զի ոչ գոյ աւելի առնելոյ զայն . զի աւելորդն վնաս է քեզ` ոչ 'ի ժամանակի առողջութեն , նոյնպ և 'ի հիւանդութեն , թէպէտ կրիցես զինչ վնաս առողջութեն . այլ մանաւանդ արասցես յոյժ բարւոք , և եղիցի առաւել մեծ կատարելութիւն կրելն զոր ինչ . և ընդունել զայն փոխանակ ապաշխարանաց , քան զջանալն ունել զերկրորդն , և զյատուկ օգուտն քո , և գանգատել , թէ ոչ ունին մեծագոյն փոյթ զքէն , և ոչ մեծ համարին զանձն քո : Ո՞չ ծանեար , զի Ած ոչ կամի , թէ ունիցիմք զայսքան հոգս զառողջութե : 'Ի վերայ այնց բանիցն Քի : Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել , կորուսցէ զնա . և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ , գտցէ զնա : Մատ. 16. 25. Ասէ սբն Բեռնարդոս . հիփոկրատէս բժշկապետն , և հետևօղք նորա ուսուցանեն կեցուցանել զկեանս յայսմիկ աշխարհի : Եպիկուրոս ուսուցանէ յոյժ սիրել զերկրութին , որ գոյ 'ի նմին , և խնդրել զհեշտութի , և զյատուկ օգուտն մեծաւ հոգածութբ : Իսկ Քս փրկիչն մեր ուսուցանէ մեզ կորուսանել ըզկեանս , և արհամարհել զերկրութի , նաև զօգուտն մարմնոյ , համարելով զնա մարմնաւորս իբրու ոչինչ հանդէպ բարեաց հոգւոյն : Տե՛ս թէ ո՛րմ այսոցիկ վարդապետացս կամիս հետևիլ : Տե՛ս եթէ կամիս աշակերտիլ Քի , կամ հիփոկրատեսի , կամ գալենոսի : Կարեմք առադրել այսմիկ , և ասել , թէ նք որք կամին զոյապէսն իբրս ձանձրակս , և գգուա անս, և զեզականութիւն՝ ներհմտացեալ տեսանեմք, զի են միշտ հիւանդք, և տկարք, և բազում անգամ այնու միջոցիւ, որով կամին երկարացուցանել զկեանս, կարճացուցանելով կորուսանեն : Եւ հակադարձաբար այնոքիկ, որք ապաւինին յԱ՟ծ, և 'ի հնազանդութին ո՟ք, և հետևին հաստատակութե, և յարմարին ընդ ա՟մ իւր, կեան առողջք, և են պնդակազմք 'ի կրօնի :

Կասիանոս զեկուցանէ սատ զայլ կէտ մի յոյժ բարի, և ասէ ・ Թէ գոն ոմանք՝ որք կամին, զի եղանիցին ինքեանց եզականութիւնս այսպիսիկ, ոչ այնքան վ՟ս հարկաւորութե, զոր ունին, որքան վ՟ս իշխողականութե, ինքնահաւանութե, և հպարտութե : Քանզի կամին առաւել համարիլ քան զայլս ・ և իցէ տարբերութիւն իմն, զի են հին քարոզիչք, դասատուք, և վարդապետք : Ասէ Կասիանոս, այսպիսիկ ոչ երբէք են մարդիկ հոգևորք, և ոչ նշանաւորք առաքինութ՟բ : Հարքն այնք հնագոյնք, որք ա՟ղ զլոյս փայլէին յեկեղեցւոջն Ա՟Յ, և 'ի կրթութե կրօնաւորականի, տեսանեմք, (ասէ նոյն Կասիանոս) զի էին յոյժ բարեկամք հաստատակութե, և յոյժ թշնամի եզականութե, որոց պարտիմք հետևիլ :

Արդ՝ ոչ կամիմք վ՟ս այսորիկ, թէ ոք յետս ընկրկեսցի 'ի յառաջադրելոյ զպիտոյս իւր ・ զի է յայտնի իմն, թէ գոն ոմանք, որք ունին զկարիս զիւրաց մասնաւորաց, զի ոչ կարեն ունել ամենեքեան զհաւասար առողջութիւն, և ոչ զհաւասար ոյժ մարմնաւոր : Եւ այս՟ղ հարկ է, զի գիտիցեն ամենեքեան, ա՟ղ զի ոչ ոք առնուցու զառիթ յասացելոյս դատելոյ զայլս ・ այլ յորժամ տեսցէ, թէ ոք 'ի կիրարկանէ զեզականութի իւր, պարտի հաւատալ, թէ է հարկաւորութի, և ցաւակցեսցի նմա, և տկարութե՝ նորա : Ասէ ս՟ն

Բեռնարդոս, մի՛ լինիր դու ոպ՟ զոմանս, որք նախանձին ն՟ց, որոց պարտ էին լինել ցաւակիցք ։ Տեսանէ ոք զայս ոմն, և թերևս սկսի նախանձել, որում պարտ էր ցաւակցել ։ Աստուստ պատահի, զի բազմիցս երանէ նմա 'ի սրտի խորում վ՟ն այնր իրին, վ՟ն որոյ միւսն՝ թշուառական համարի զինքն վ՟ն ունելոյ ըզկարիս զայնս ։ Զի առաւել տհաճի ընդ ոչ կարելն հետևիլ հաստատակութե՟, քան ընդ հիւանդութե՟ իւր ։ Զի ոպ՟ ոչ նախանձէաք նմա, և ոչ տրտնջէաք, այլ մանաւանդ ցաւակցէաք, եթէ վասն հիւանդութե՟ նորա տրիցիւր նմա դեղ մեծագին ։ Այսպէս և, եթէ դու գիտիցէիր զայն, զոր տկարն այն կրէ եղականութե՟ հանդերձ, ոչ նախանձիցէիր, այլ ցաւակցիցէիր նմա, և շնորհակալ լինիցէիր զԱ՟յ վ՟ն ոչ ունելոյն քո զկարիս ունելոյ զաւելի, ոչ ննջելոյ աւելի ․ և ոչ աւելի զգեստուց, և աւելի հանգստութե՟ ․ այլ կարես բաւականանալ այնու, որ է հասարակ ամենեցուն ։ Եւ առէ ս՟բն Բեռնարդոս, թէ նա՝ որ նկատէ 'ի յեղականութ՟ին այլոց, և շրջէ զաչս զհետ ն՟ց, բարւոք ցուցանէ զինքն գոլ այր վատթար խորհրդոյ, և ունօղ զսիրտ յօժար առ հեշտութիւնս, և առ հանգստութիւնս ։

Եզրափակէ յետոյ ս՟բն Բեռնարդոս այնու, որով և ես կամիմ եզրափակել ։ Ոչ ասեմ զայս եղբարք իմ, ոպ՟ թէ կամիցիմ պանդատել զումեքէ շուրջ զայսու, այլ թուեցաւ ինձ հարկաւոր յորդորել զձեզ, և նախադիտել, վասն զի գոն 'ի միջի ձերում ոմանք փափուկք, և գիրգք, որոց պիտոյ է 'ի կիր արկանել զշնորհաբաշխութ՟ն իմն, կամ վասն տիոյն, և կամ վ՟ն տկարութե՟, և թուլութե՟ ։ Բայց գոհանամ զԱ՟յ Տ՟նէ մերմէ, (առէ) զի տեսանեմ զբազումս, որք ունին զմեծ փոյթ զինքեանց, և են յոյժ ցանկացօղք յառաջադիմելոյ , և յոյժ հեռիք յայսպիսի ցածուն խորհրդոց · ոչ հային 'ի թուլութ՟ն , և 'ի պիտոյս իւրեանց · և ոչ ունելով զեզականութ՟ն , մինչ ունին զայս իւրեանց 'ի վ՟ր իւրեանց եդեալ · և գանգատեն ինքեանք զինքեանց · զի թուի ինքեանց , թէ ինքեանք իցեն այնպիսիք , որք պակաս գործեն քան զայլս ամենեսեան · և ունին զամենեսեան որպէս վեհագոյնս , և բարեգոյնս , ըստ խրատու առաքելոյն , որ ասէ · Փիլիպ· 2· 3· Խոնարհութ՟բ զմիմեանս վեհագոյն համարիլ առաւել քան զանձինս :

Յաւելցէ այսմիկ զայլ իմն խրատ մեծ , և ասէ · թէ է յոյժ բարի իր՝ ոչ հայիլ առ նա , որ ունի զհարկաւորութ՟ն մասնաւորութ՟ն իւիք · և ոչ նշմարել զայսպիսի իրս · այլ գտանել զայս 'ի մի , կամ յերկուս անձինս , զորս տեսանեմք գոլ ջերմեռանդագոյնս , և բարեգոյն նպատակս բարւոյ օրինակի 'ի տան , և ջանալ հետևիլ նոցա : Իբր պատմէ զայն , որ պատահեցաւ ինքեան ընդ միում 'ի միայնակեցաց իւրոց , ընդ որ մեծապէս էր հաճեալ · գնաց առ նա կրօնաւոր մի ոչ քահանայ յառաւօտու , և անկեալ առ ոտս սրբոյն , ասէ · Վայ ինձ ով հայր , յայսմիկ գիշերի յառաւօտեան ժամու թուեցի զերեսուն առաքինութ՟ս 'ի միում եղբարց իմոց , և ոչ իսկ զմի առաքինութիւն 'ի նոցունց գտանեմ 'ի յիս :

Այս է յոյժ բարի օրինակ գիտել , և խոկալ զառաքինութ՟ս եղբարց մերոց , և այս լիցէ պտուղն այսր քարոզիս մերոյ (ասէ ս՟բն) զի մինչ հայիցիմք 'ի բարձրութ՟ս առաքինութ՟ց այլոց , այլ ոչ 'ի յանկատարելութ՟ս , և 'ի պակասաւորութ՟ս ն՟ց : Իբր հակադարձաբար նկատեսցուք 'ի մեզ ոչ զայնս՝ որք կարեն գոլ նիւթ սնափառութ՟ն , այլ զայն , որ կարէ գոլ առիթ ճշմարտի խոնարհութ՟ն : Վ՟ն զի զինչ օգուտ է քեզ . եթէ դու կարիցես աշխատիլ, և պահել աւելի քան զայն միւսն, եթէ նա վեհագոյն է քան զքեզ առաքինութբ, և ունի զմեծագոյն խոնարհութն քան զքեզ, վարի մեծագունիւ համբերութբ, և սիրով քան զքեզ: Զինչ փոյթ է, եթէ նա ոչ կարէ աշխատիլ, և պահել այնքան, որքան դու: Ասէ սուրբն Բեռնարդոս. "Այսուհետև առաւել առայն նկատեա, զոր այլք ունին, և դու ոչ ունիս: Եւ ջանա գիտել զայն, յորմէ զուրկ ես ‖: Այսպէս առնելով. պահեսցուք զմեզ 'ի խոնարհութն, և 'ի սէրն. և արասցուք զմեծագոյն պտուղ 'ի կրօնի:

ԳԼՈՒԽ. ԺԸ:

Հաստատի՝ որ առաջան, օրինակօք:

Պատմի զուարաւուդոս իշխանէն Ֆրանսիոյ, որոյ կոչումն առ կրօնն եղև հրաշիւք, թէ մտեալ սա 'ի կրօնն, թուէիւր ինքեան կարի խստագոյն կրօնն այն, և դժուարին, զի սնեալ էր մեծագունիւ փափկութբ: Աբբայն փոխարինս, որ յայնժամ էր մեծաւոր վանիցն, թոյլ տայր նմա ուտել զոմանս իրս յատուկս, և արտաքոյ կարգի, որք առաւել յարմարք էին խառնուածոյ նր̃, և զայնս հրամայէր տալ նմա, որովք ոչ միայն ոչ ստանայր զառողջութն, այլ մանաւանդ օրըստօրէ առաւել եղանիւր նիհար, և հիւանդ: Յաւուր միում պատահեցաւ, զի մինչ կայր ուարաւուդոս 'ի սեղանի ուտելով ընդ այլոց, որոց տուեալ լինիւր միայն սակաւիկ մի հաց չոր, և սակաւ մի բակլայ, թուէիւր ինքեան տեսանել զերկուս յարգելի ծերունիս, մինն ճաղատ երկու բանալեօք հանդերձ, որք կախեալ էին զպարանոցէ. և զայլ կրօնաւոր մի, որ ունէր զանօթ մի ապակի 'ի ձե-

'ի ձեռին իւրում՝, որք շրջելով ընդ բոլոր սեղանատունն, գնէին 'ի սկտեղս իւրաքանչիւրոյ կրօնաւորի զեր իմն, զոր հանէին յայնմանէ ամանոյ. և անցանելով զռաբաւդոսին, զոչինչ ետուն նմա. մանաւանդ սկսան հայել 'ի նա խստացեալ՝ և բարկացեալ դիմօք : Եւ ռաբաւդոս առեալ 'ի սկտեղէ նոցա, որք նստէին մերձ առ ինքն, ճաշակեաց զսակաւիկ մի յայնց իրացն, զորս ծերքն այնոքիկ տուեալ էին նոցա. և մինչ ճաշակեաց՝ զգաց զայնքան համեղութ՟ի, մինչզի թուէիր ինքեան, թէ ոչինչ էին՝ զորս ինքն ուտէր, հանդէպ այնորիկ. և ոչ էին այն՟մ համեղք՝ զոր կերեալ էր զա՟մ աւուրս կենաց իւրոց : Եւ տեսանելով զայն երիցս, գնաց առ աբբայն, և պատմելով զտեսիլն զայն, հայցեաց մեծաւ թախանձանօք, զի ասիցէր, թէ ո՞յք իցէին երկու ծերքն այնք, զորս տեսեալ էր: Եւ աբբայն իսկոյն ծանեաւ, թէ էին նը առաքեալն Պետրոս՝ վերատեսուչն, և նախախնամիչն տանն այնորիկ. և հոնորատոս հիմնիչն նոյնոյ տան : Եւ պատճառն՝ վ՟ն որոյ ոչ տային նմա յայնմանէ կերակրոյ, զոր բաշխէին այլոց՝ էր, զի ոչ հետևէր յա՟մ իւրս հասարակութ՟ե, այլ 'ի կիրարկանէր զօմանս եզականութիւնս : Զոր լուեալ ռաբաւդոսն՝ քաջալերեցաւ, և եդ 'ի մտի հետևել յա՟մ իւրս հասարակ խստութ՟ե, և կրթութ՟են կրօնի. և յոյժ դիւրին պատահեցաւ նմա այն, և առաւել ըմբերելի, քան որ թուէիր նմա նախ : Եւ զկնի սակաւուց ետես զնոյն տեսն, զի բաշխելով զկերակուրն զայն աբեղայից ը՟ սովորութ՟ե, տային նաև նմա. որով հոգե ն՟ր սկսաւ մխիթարիլ յոյժ, և զօրանալ. և հաստատեաց 'ի միտս իւր համբերութ՟ տանել զա՟մ աշխատանս, և զխստութիւս, որք գոն 'ի կրօնի :

Պատմէ չեսարիոս զայլ իմն օրինակ նմանն
ամին,

ումին, և ասէ, թէ 'ի կարգին չիստէրսականաց գոյր կրօնաւոր մի, որ էր կրօնաւոր ըստ զգեստուք, քան թէ գործով. որ գոլով բժիշկ, երթայր զմեծ մասն տարւոյն արտաքոյ վանից, առանց դառնալոյ 'ի վանս, եթէ ոչ 'ի գլխաւոր տօնս ումանս: Յաւուր միում 'ի տօնի տիրամօրն կալով նա 'ի դասի, և երգելով ընդ այլս, ետես զի եմուտ անդ փառաւորագունեղ կոյսն մեծաւ փայլմամբ, և շրջէր 'ի մէջ նոցա, որք երգէին. և 'ի ափոյ միոյ, զոր ունէր 'ի ձեռին, եհան դգալով միով զհեղուկ ինչ, և ետ ըմպել իւրաքանչիւր կրօնաւորի: Բայց ժամանեալ առ բժիշկն՝ եանց զնովաւ, ասելով ցնա. դու ոչ ունիս զպիտոյս ըմպելոյ յայսմանէ, զի գոլով դու բժիշկ, յոյժ դարմանես զքեզ: Սկսաւ տրտմիլ նա յոյժ. և խոկալ զպակասաւորութին իւր. և յայնուհետև փոխեաց զկեանսն զայն. զի ոչ երբէք ելանէր 'ի վանացն, եթէ ոչ հրամանաւ մեծաւորին, և մահացուցանէր զինքն յուժգին: Եւ այլում 'ի յետագայ տօնի տիրամօրն, եկն սուրբ կոյսն, որպէս յառաջնումն նմանագի առ 'ի ընծայել զնոյնն կրօնաւորաց. և ժամանեալ առ բժիշկն՝ զանցի կալաւ, և ասէ ցնա. քանզի դու ուղղեցեր ըզքեզ, և յետագրեցեր զբժշկական դեղս քո խմոյն, ահաւասիկ հեղուկն իմ. արբ և դու, ոմն և այլքն: Յետ այնորիկ այնու համեղութն եկաց յոյժ կայուն, և հաստատուն 'ի վանս, համարելով իբրև զաղբ զայլ ամենայն բերկրութիս աշխարհի. զի հեղուկն այն ըմպեալ՝ էր ջերմեռանդութիւն, որ առնէ համեղ

զամենայն ինչ:

Պատմէ նոյն Չէզարիոս, թէ գնաց 'ի վանս Քլարաւալու կղերիկոս մի յոյժ փարթամ, և փափկասուն. որ ոչ կարէր տեսանել զհացն վանից վասն գոլոյն խոշորաբար եփեցեալ. մանաւանդ՝ միայն խոկալով, թէ պարտ էր ուտել նուլ զայն, թուէր թէ նուաղեցիւր : Ի գիշերի միում երեւեալ նմա Քն Տրն մեր, ունելով 'ի ձեռին զպատառ մի այնր հացին, եւ տալով զայն նմա, ասաց՝ զի ուտիցէր : Եւ նա պատասխանեալ ասաց՝ թէ ոչ իւիք կերպիւ կարեմ ուտել զգարեղէն հացդ զայդ : Յայնժամ եթաց Քն զհացն զայն արեամբ կողին իւրոյ, եւ հրամայեաց՝ զի ուտիցէ . զոր մինչ ճաշակեաց, առաւել հաճոյ եղեւ նմա քան զմեղր, եւ այնուհետեւ ոչ հացն, այսպէս եւ այլք կերակուրք խոշորաեփք վանիցն, զորս յառաջ ոչ կարէր ուտել, երեւէին նմա կարի համեղք :

Ի ժամանակագրութեան կարգին երանելւոյ սրբոյն Փրանչիսկոսի պատմի զհռչակաւոր ժողովն, որ կոչէր ժողով սփրթեղէն . զի անձնեայքն բաժանէին 'ի միմեանց սփրթօք, յորս ժողովեէին գրեթէ հինգ հազար եղբարք . եւ անդ գտաւ նաեւ երանելին սրբն Դոմինիկոս . եւ ասէ՝ թէ գոյր անդ այնքան հաւաքումն, եւ ոգի ապաշխարութեան, որ թագաւորէր յայնժամ 'ի մէջ սրբոց կրօնաւորացն այնոցիկ, մինչ զի հարկ էր արգելուլ զնոսա : Ուստի տեղեկացեալ սրբն Փրանչիսկոս, թէ բազումք 'ի նոցանէ զգենուին ըզզրահս, եւ զկերպաս 'ի վր մերկ մարմնոյ . եւ ոմանք կրէին զկամարս երկաթիս, եւ վասն այսորիկ բազումք 'ի նոցանէ հիւանդանային, եւ արգելանէին յաղօթից, եւ 'ի ծառայելոյ կրօնի . եւ ոմանք եւս մեռանէին, հրամայեաց վն հնազանդութե . զի հանիցեն այնուքիկ, ոյք կրէին զայսպիսի իրս, առեալ զայնս բերիցեն առ նա . եւ գտան հինգ հարիւր կատորք զրահից, վերտից, եւ կամարաց երկաթեղինաց : Արդ՝ մինչ յառաջանայր կարգն այսու ջերմեռանդութե, եւ ժողովեցան նոքա առ 'ի ընձեռել զբարւոյ յառաջադրութե կարգին, եղեւ յայտնեցեալ սրբոյ հօրն Փրանխակման, թէ դեւքն առնէին զայլ ժողով մի ընդդէմ ժողովոյ նր̃ 'ի հիւանդանոցի միում, որ կայր 'ի մէջ փորթիունկուլայ, և ասէր քաղաքաց, ուր գտան աւելի քան զտասն և ութհազար դեւք : Եւ մինչ բազումք 'ի նոցանէ ասացին զզանազան կարծիս, և զխորամանկ խրատս չուրջ զկերպին պատերազմելոյ, և կործանելոյ զՖրանչիսկոս, և զկարգն, և զհետեւողս նր̃, 'ի վախճանի դեւ մի առաւել խորամանկ, և առաւել նրբամիտ եւս նց̃ զխրատ մի այսու կերպիւ : Այս ս̃ Ֆրանչիսկոսն, և հետեւողք նր̃ մեծաւ ջերմեռանդութ̃ փախչին, և մեկնին յաշխարհէ, և մեծաւ ջերմեռանդութ̃ սիրեն զԱծ̃ • պարապին յաղօթս, և տանջեն զմարմինս իւրեանց, վասն որոյ այժմ զոչինչ, կամ զսակաւ իրս կարէք առնել ընդդէմ նց̃ : Ուստի խրատ մի տամ ձեզ, զի համբերիցէք մինչև Ֆրանչիսկոս մեռանիցի • և եղբարքն բազմանայցեն, և մուծցուք 'ի կարգն նր̃ զմանկահասակս առանց նախանձայուզութ̃ կատարելութ̃ • և զծերս պատուասէրս, ազնուազարմս, փարթամս, և փափկասունս • և զմարդիկս գիտողս դպրութ̃, դատողս, և թոյլս կազմուածօք • զի նք̃ սկսանիցին պահել զպատուիրան իւրեանց • և իւրաքանչիւրոք ջանայցէ զինքն մեծ վարկանել • և աճեսցի թիւն նց̃ : Եւ այսու կերպիւ քարշեսցուք զնս̃ առ ինքնասիրութ̃, և առ իրս աշխարհականս • և առ ցանկութիւն գիտութ̃, և պատուոյ • և յայնժամ առցուք զվրէժ 'ի նոցանէ, ունելով զբազումս 'ի նոցանէ 'ի մեր կողմն : Խրատս այս թուեցաւ յոյժ բարի ամենեցուն, և ձնացին դեւքն կարի հաճեալք այսու խրատով, և յուսով:

ՎԵՐՋ:

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ ԳՐՈՑՍ

Յաղագս ուխտից էութենականաց կրօնի։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

ԹԷ կատարելութ՟ն կրօնաւորին կայանայ 'ի կատարեալ պահպանութ՟ե ուխտիցն՝ աղքատութ՟ե, ողջախոհութ՟ե, և հնազանդութ՟ե, զորս ուխտէ։ Երես. 3.
Բ. Յաղագս ո՞յր պատճառի լինին, և հաստատին այսպիսիկ 'ի ձեռն ուխտից։ 8
Գ. Յաղագս այլոց բարեաց, և օգտութ՟եց, զորս ունի ը՟ ինքեան պարաւանդեալն ուխտիւք։ 12
Դ. Յաղագս, թէ վասն ո՞յր պատճառի սրբքն երկրորդ մկրտութ՟ն, և մարտիրոսութ՟ն կոչեն զգործողութ՟ս զայս, որով ոք տայ զինքն կրօնի միջնորդութ՟բ երից ուխտիցս այսոցիկ։ 15
Ե. Յաղագս թէ ազատութ՟ն կրօնաւորաց ո՛չ 'ի բաց բառնի, և ո՛չ նուաղի ուխտիւք, այլ մանաւանդ եղանի առաւել կատարեալ։ 19
Զ. Յաղագս մեծագունից բարեաց, որք գոն 'ի կրօնի և յաղագս շնորհակալութ՟ե, որով պարաւանդիմք Ա՟յ վ՟ս քարշելոյն զմեզ առ նոյն կրօնն։ 24
Է. Հետևի նոյն նիւթն, զորմէ ընձեռեցաւ յանցելում գլխոջ։ 37

Յաղագս ուխտի Աղքատութեան ։

Գլուխ Առաջին ։

Թէ ուխտն աղքատութեան է հիմն կատարելութեան առաքինականին ։ 40

Բ. Յաղագս մեծի վարձուն, զոր Տէրն մեր տայ աղքատաց հոգւով ։ 45

Գ. Թէ [illegible] հատուցանէ աղքատացն հոգւով ոչ միայն ՚ի հանդերձեալն, այլև ՚ի կեանս յայս ։ 49

Դ. Է, [illegible] Թէ յորում իրի կայանայցէ աղքատութիւն հոգւոյ ։ 53

Ե. Յաղագս կրօնաւորաց, որք թողեալք յաշխարհի զիրս մեծագոյնս, ըղձան ունել ՚ի կրօնի զիրս փոքրագոյնս ։ 62

Զ. Յաղագս երից աստիճանացն աղքատութեան ։ 66

Է. Յաղագս ոմանց միջոցաց ժամանելոյ առ աղքատութիւն հոգւոյ, և պահպանելոյ ՚ի նմին ։ 69

Ը. Յաղագս այլ միւս միջոցի, որ յոյժ օգնեսցէ առ ՚ի ժամանել յաղքատութիւն հոգւոյ, և պահել զնոյն ։ 76

Թ. Հաստատի այն՝ որ ասացաւ, օրինակօք ։ 82

Ժ. Յաղագս թէ որպիսաբար, կամ առ որպիսի իրս պարտաւանդէ զկրօնաւորն ուխտն աղքատութեան ։ 86

ԺԱ. Բացայայտի աստ, թէ ո՞չ ընդդէմ ուխտի աղքատութեան իցէ՝ առնուլ, կամ տալ զիր ինչ առանց հրամանի մեծաւորին, թէպէտ իրն այն ոչ իցէ տան ։ 92

ԺԲ. Յաղագս դիպուածոց ոմանց մասնաւորաց ։

րաց , որք են ընդդէմ ուխտին աղքատութեան ։ 97
ԺԴ. Պատասխանեալ լինի առարկութեան միում, որով առաւել բացայայտի նիւթս այս ։ 104
ԺԵ. Յաղագս թէ ուխտն աղքատութեան պարաւանդէ առ մեզս մանկացուս , և թէ որպիսի քանակութիւն լիցէ բաւական , զի հասանիցէ առ մանկացուս մեզս ։ 109
ԺԶ. Մի՞թէ կրօնաւորն կարիցէ ընդունիլ զդրամ առ'ի բաշխել 'ի գործս բարիս առանց հրամանի վեհագունին . և ե՞րբ մեղանչեսցէ յայսմիկ ընդդէմ ուխտին աղքատութեան ։ 113
ԺԷ. Հաստատի օրինակօք ոմամբք այն , որ ասացաւ ։ 120

* * *

Յաղագս առաքինութեան Ողջախոհութեան ։

Գլուխ Առաջին ։

Յաղագս գերազանցութեան առաքինութեան ողջախոհութեան , և յաղագս աստիճանաց նորա , ընդ որս ելանելոց եմք առ կատարելութիւն նորին ։ 126
Բ. Թէ առ'ի պահպանել զողջախոհութիւն է հարկաւոր մահացուցումն , և պահպանութիւնն զգայարանաց , և մանաւանդ աչաց ։ 131
Գ. Թէ մասնաւորաբար յայսմիկ առաքինութեան ողջախոհութեան հարկ է մեծ համարել նաև զիրս փոքրագոյնս ։ 135
Դ. Թէ յատկապէս 'ի խոստովանութեան հարկ է մեծ համարել զայն ամենայն , որ լիցէ ներհակ ողջախոհութեան ։ 139

Ե. Թէ որքան սաստիկ, և վտանգաւոր լիցի կիրքն սիրոյ, և որքան պարտիմք երկնչել յայսմանէ։ 144
Զ. Յաղագս դեղոց ոմանց ընդդէմ անհաւատ փորձութեանց։ 149
Է. Թէ ապաշխարութիւն, և մահացուցումն մարմնոյ է յոյժ յատուկ և նախապետական դեղ ընդդէմ այսմ փորձութեան։ 155
Ը. Յաղագս այլոց դեղոց ընդդէմ անպարկեշտ փորձութեանց։ 163
Թ. Յաղագս երկիւղին ԱՅ։ 167
Ժ. Յաղագս մեծագունից բարեաց, որք գոն յերկիւղին ԱՅ։ 176
ԺԱ. Հաստատի այն՝ որ ասացաւ ունիմք օրինակօք։ 180

Յաղագս առաքինութեան հնազանդութեան։

Գլուխ Առաջին։

Յաղագս գերազանցութեան առաքինութեան հնազանդութեան։ 185
Բ. Յաղագս հարկաւորութեան, զոր ունիմք զառաքինութեան հնազանդութեան։ 194
Գ. Յաղագս առաջնոյ աստիճանի հնազանդութեան։ 198
Դ. Յաղագս երկրորդի աստիճանի հնազանդութեան։ 206
Ե. Յաղագս երրորդի աստիճանի հնազանդութեան։ 213
Զ. Յաղագս կուրաբար հնազանդութեան։ 215
Է. Յաղագս հնազանդութեան, զոր պարտիմք ունել ՚ի յիրս հոգևորս։ 225
Ը. Հաստատի օրինակօք այն՝ որ ասացաւ։ 234
Թ. Յաղագս թէ ուստի ծնանի ունել ՚ի մտի

ղէա

դժուարութիւն ընդդէմ հնազանդութեան. և յաղագս միջոցաց, զորս կարեմք 'ի գործ ածել ընդդէմ նց: 242
Ի. Պարզաբանին երեք պատճառք, զորս տայ մզ առաքեալն Պօղոս վասն հնազանդութեան: 252
Իա. Յաղագս միջոցի միոյ, որ է յոյժ զօրեղ, և նախապատուական վն ստանալոյ զկատարելութիւն առաքինութեան հնազանդութեան, որ է հնազանդիլ վերահասունին, ոպ Քի Տն մերում: 263
Իբ. Յաղագս թէ այս կերպ հնազանդելոյ վերահասունին, ոպ Քի, է հարկաւոր վն ստանալոյ զառաքինութիւն հնազանդութեան: 269
Իգ. Յաղագս այլոց բարեաց, որք գոն 'ի հնազանդութեան մեծաւորին ոպ Քի. 275
Իդ. Յաղագս թէ զտրտունջն ըդդէմ մեծաւորին Ած անարգանք իւրեան համարի: 278
Իե. Յաղագս թէ ոչ է ընդդէմ հնազանդութեան առաջադրել զկերպն, որ պահելի է 'ի հնազանդութեան: 283
Իզ. Յաղագս աւելորդ հոգածութեան վասն մարմնոյ. և թէ որքան պատեհ իցէ փախչել յայսմիկ 'ի յեղականութէ: 293
Իէ. Պատասխանի առ այնոսիկ, որք վասն խղճահարութեան կարծեն, թէ պարտաւորեցեալք իցեն պահել զառողջութիւն մարմնոյ: 301
Իը. Հաստատի՝ որ ասացաքն, օրինակօք: 310

ՎԵՐՋ.

Տրամ յորդորական սրբոյն Թովմայի Աքուինացւոյ առ ոմն, յորում առաջարկէ յարմար եղանակ զահաւաքաբար ստանալոյ զգիտութ͞ն · թէ զմարդկայինն, և թէ զԱծայինն ։

ՔԱնզի խնդրեցեր յինէն ո՛վ սիրելագունեղդ իմ 'ի Քս͞, Յօհաննէս, թէ որպիսաբար պարտ իցէ քեզ վարժիլ առ 'ի ստանալ զգանձն գիտութ͞ե · այնպիսի խորհուրդ 'ի վերայ այսորիկ տրի քեզ յինէն, զի 'ի ձեռն փոքրկանց վտակաց ո՛չ իսկոյն 'ի ծովն ընտրեցես մտանել · վ͞ն զի պարտ է 'ի ձեռն դիւրագունից առ դժուարագոյնս հասանիլ ։ Այս եղիցի ուրեմն ազդարարութ͞ին իմ · և կրթութ͞ի քո ։ Պատուիրեմ քեզ լինիլ ծանր 'ի խօսիլ, և ծանրաք͞մ ելանել 'ի խօսակցիլ ։ Զմաքրութ͞ե խղճի մտաց փարիլ, և 'ի պարապելոյ աղօթից ոչ կասիլ ։ Զսենեակդ յաճախակի սիրեսցես, եթէ կամիս, զի 'ի տուն գինւոյ ներմուծեալ զքեզ գտցես ։ Զքեզ սիրելի ամենեցուն ընծայեսցես, և զարարմանց այլոց մի հետախուզիցես ։ Ոչ ումեք կարի ընտանեկից զքեզ ցուցցես · վ͞ն զի կարի ընտանեկցութ͞ին ծնանի զարհամարհանս, և մատակարարէ զնիւթ յետս քաշելոյ 'ի յուսմանէ զքեզ ։ 'Ի բանս և 'ի գործս աշխարհականաց ոչ ընաւ երբէք զքեզ ներմուծցես, և 'ի բանակռուութ͞է 'ի վերայ զա͞մ փախիցես ։ Հետոց սրբոց, և բարեաց հետևիլ մի երբէք զանց առնիցես, թէ յորմէ լսիցես, մի նկատիցես, այլ որ ինչ ասիցի յիշողութ͞եդ յանձն արասցես ։ Զայնս, զորս ընթեռնուս և լսես, արա զի իմանայցես ։ Զերկբայութ͞եց զքեզ ստուգեսցես · և զորինչ կարիցես 'ի դպահարանիկն մտացդ վերադնել, ոպ͞ զջան-

կացօղ

կացող լցման անօթոյ դնել ջանայցես ։ Ըզբարձրագոյնս քան զքեզ մի՛ խնդրեցես ։ Այսոցիկ բարեաց հետևելով շաւղաց , զսաղարթս , և զպտուղս օգտակարս յայգւոջ տեառն զօրութեանց , որքան ընդերկար ապրեսցիս , յառաջ բերցես , և արտադրեսցես ։

Եթէ այսոցիկ հետամուտ լինիցիս , առ այն ժամանակ մարթասցիս , որում փափաքիս ։